





«ԱՐԵՒԻ» ԹԵՐԹՕՆԸ

8 JUL 2015 9/1

ԹՈՐԹՈՂԱՅԻ ՏԻՐԱՄԱՅՐԸ
(ՀԱՅՈՒՀԻԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ
ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԻ ՕՐՈՎ)

ՀԵՂԻՆԱԿ ԲԻԷՌ ՊԸՆՈՒԱ

ԹԱՐԳՄ. ՀՐԱՀԱՏ

Գ Ա Ն Ի Ր Է

1 9 3 9

ԹՈՐԹՈՋԱՅԻ ՏԻՐԱՄԱՅՐԸ

Ինչ կը վերաբերի կերպին որով
Սուլթանը (Հը Կրան Սէնիէօր)
կ'առաջնորդուի իր սերերուն հետ
սապնդումին մեջ, գաղտնիք մըն
է ասիկա որուն չեմ կրցած բա-
փանցել, ոչինչ կրցած եմ իմա-
նալ այդ մասին, եւ դժուար է
անոր օուրջ գրել, երբ երբեք
վեպ մը չէ որ պիտի գրենք:

Ժ. Պ. ԹԱՎԷՆԻՆԻԷ

(Սուլթանին Սէրային ներքին
կեանքին մասին նոր տեղեկութե-
րուններ, Բարիզ, 1875)

1.

— Բան մը կայ որ ինծի խորհիլ կուտայ, գոչեց
Հայր Անկլըպէր. Ինչու պարտաւոր էք այս իրիկուն
ներկայ գտնուելու Թարթուսի (Թորթոզա) մէջ. կար-
ծեմ թէ՛ տակաւին չհարցուցի ձեզի ատոր պատճառը:
Ռօշ չպատասխանեց անմիջապէս այս հարցումին:
Արդարեւ, առաւօտուն էր որ Ռօշի մեկնումը



11-1831194

որոշուած էր: Երկու օր ետք, Զատկի կիրակիին համար, որոշուած էր, շատ օրեր առաջ, յոյժ գրաւել ծրագիր մը, այո՛, Անտիոքի լիճին վրայ օձաձուկի որսորդութեան, ընկերակցութեամբ իր պաշտօնակիցներէն Պլարիի և Տիւպուրտիէնի՝ երկուքն ալ հարիւրապետներ իրեն պէս արեւելքի բանակին մասնաւոր սպասարկութեան մէջ, և որոնց իւրաքանչիւրին պաշտօնատեղին կը գտնուէր երկու յայտնի վայրեր. Գըրըգիսան և Ալէքսանտրէթ:

Արդ, Ռօշ բաւականաչափ ատեն ունեցաւ կանխաւ իմացնելու թէ՛ իրենց որսորդութեան ծրագիրը յետաձգուած է:

Այս յետաձգման լուրը հաղորդելուն նախորդ օրը, 1923 տարւոյն Մարտ 29ին, Աւագ Հինգշաբթի օրը Սէրայի պողոտային վրայ գտնուող իր վիլլային մէջ ճաշի ընդունած էր Լազարիստ կրօնաւորներէն Հայր Անկլըպէրը որ Տրիպուլիսէն եկած էր հոն, Անտիոք, խոստովանցնելու համար Գթութեան Դուստրերը և անոնց տալու համար ապաշխարհածքի քարոզ մը զատկական շաբթուան առթիւ: Հայր Անկլըպէր պարտ էր վերադառնալ յաջորդ երկուշաբթի օր իր պաշտօնատեղին միեւնոյն կրօնական պաշտօնը կատարելէն ետք Թարթուսի կաթողիկ հասարակութեան մէջ, ուր կարգադրութիւններ եղած էին — պիտի տեսնենք թէ ի՞նչ նպատակով — պատարագելու համար Զատկի օրը:

Ճաշի միջոցին Հայր Անկլըպէր գանգատեցաւ զանօրէն իր նախկին մէկ աշակերտէն, որ այժմ երիտասարդ փաստաբան էր, և Անտիոք եկած էր ժառանգութեան շատ կնճռոտ գործի մը համար և որ ինքնաբերաբար ստաջարկած էր իր շատ գեղեցիկ կառքովը տանիլ կրօնաւորը մինչև Թարթուս Լիրանան-

եան պառօյի այս նորածիլ փառքը Պէյրութ մեկնած էր յանկարծակի կերպով առանց արդարացուծի խօսք մը ընելու, այլ միայն թուղթ մը ձգած էր միսինի պաշտօնատեղին:

Ռօշ որ այդ իրիկուն միշտ զուարթաբարոյ էր, կը հանդարտեցնէր իր հրաւիրեալը ջանալով մեղմել անոր գէշ արամադրութիւնները:

— Օ՛հ, Հայր Սուրբ, մի՛ խռովիք, այդքան անփափկանկատութիւն ներելի է, երբ մտածէք որ Թուրքերէն իրենց ունեցած վախին հետեւանքով է որ կ'ուզեն հոս տեսնել մեր զինուորական մոյկերը: Գալով ձեր վաղուան ճամբորդութեան, կրնաք երեւակայել որ ես պիտի չթողում որ դուք Թարթուս երթաք Գաթուսը անցնելով ջորիի կռնակին վրայ: Ունիմ բարեկամ մը, որ վաղն առպուտուն իսկ կը մեկնի Պէյրութ, որ պիտի կրնայ ձեզի ճամբու ընկեր ըլլալ: Իմա կը հեռաձայնեմ իրեն և ա՛յն շատ գոհ պիտի ըլլայ:

— Շատ ազնիւ էք, հարիւրապետ, բայց ձեր այդ ազնուութիւնը չարասչսր գործածած պիտի չըլլա՞մ:

— Ձէ, Հայր Սուրբ, կարծեմ թէ ձեզի ալ հաճոյ պիտի ըլլայ ճամբորդել Պ. Մարչսի հետ, որովհետեւ ան է որ պիտի երթայ Պէյրութ, Բարձր Քօրի սէրութեան հնութեանց ատէնութեան Անճագի պատուիրակը (ոէլէկէ):

Հայր Անկլըպէր որ հետաքրքրութիւն ցոյց կուտար իմանալու համար հաւանական ճամբու ընկերոջ ո՞վ ըլլալը, մէկէն թթուեցուց իր դէմքը և ըսաւ.

— Հարիւր անգամ. հազար անգամ ուելի լու պիտի ըլլար ջորիով երթալ, ինչպէս կ'ըսէիք քիչ առաջ, ունիմ այնպիսի պատճառներ, որոնց մասին կարելի պիտի չըլլար համաձայնիլ, որով ինձի հա-

մար անկարելի է յարաբերութիւն ունենայ այդ հը-
շուրթեանց պաշտօնեաներուն հետ: Ու Հայր Անկլլըպէս
թաղուեցաւ լուսթեան մէջ:

Ռոջ երբեք չուզեց խզել տալու աշխատիլ անոր
լուսթիւնը, այլ ընդհակառակը վերապահութիւն ցոյց
տուաւ, ջանալով հանդարտեցնել կրօնաւորը:

— Ո՛հ, Հայր Սուրբ, չէի գիտեր որ այդպիսի
բան մը կայ. հոգ չէ, հարկաւ ուրիշ կարգադրու-
թիւն մը կ'ընենք, երանի թէ ես Իտլիպի մէջ մէկը
տեսնել երթալու ստիպուած չըլլայի վաղը:

Որքան ալ Հայր Անկլլըպէր հաւատք ունէր Ռոջին
հաճոյակատարութեանը մասին, սակայն չէր կրնար
երեւակայել որ այդ հաճոյակատարութիւնը երթար
մինչեւ իր կառքը տրամադրելը, որուն համար Հայր
Սուրբը բողոքեց, երբ յաջորդ օրը կէս օրէն քիչ
առաջ տեղեկատուութեան սպային ինքնաշարժին մօ-
տենալը տեսաւ Սէն-Վէնսանի կրօնաւորներու հաստա-
տութեան դուրսի սանդուխներուն առջեւ: Ռոջ առան-
ձին էր այդ կառքին մէջ:

— Ո՛չ, իսկապէս, հարիւրապետ, չեմ կրնար
ընդունել... հսպա Իտլիպի ձեր ժամադրութիւնը:

— Յետաձգուեցա՛ւ: Արդէն անիկա այնպիսի
գործ մըն է որ կրնայ սպասել: Օ՛հ, շուտ Հայր Սուրբ,
նստեցէք կառք:

— Ուրեմն դո՛ւք պիտի տանիք զիս անձամբ և
ձե՛ր ինքնաշարժով: Իսկապէս նշանաւոր բան է:

— Խնդրե՛մ, Հայր Սուրբ, տղայ մի՛ ըլլաք,
ելէք կառքին մէջ, կ'երդնում որ պիտի ուշանանք,
եթէ շարունակէք ձեր վարմունքը. ե՛ս ալ ստիպուած
եմ այս իրիկուան հո՛ւն՝ Թարթուս գտնուելի: Գո՛հ էք
հիմա:

— Ո՛հ, բայց այդ պարագային խնդիրը կը տար-
բերի:

Ռոջ կառքը կը քչէր արագութեամբ: Կէսօրին
կ'անցնին քովէն ջորեպաններու նրբուղիին, որ ձախ
կողմէն կը զատուի մեծ ճամբայէն, ուղղուելու համար
Իիւրսիւթի Ֆրանքներու դղեակին աւերակները, ուր-
կէ բաւական հեռացած են թողլով զանոնք իրենց ետին:
Շէյխ-Քէոյի Թիւրքմէն գիւղէն ետք երեւցաւ Քուէյրի
փոսովայրը և հեռուն՝ Որոնդէսը, վարը, դաշտին մէջ:

-- Ժամը երեքին Լաթաքիա պիտի ըլլանք, ըսաւ
Հայր Անկլլըպէր, և եթէ Տէրը կամենայ Թարթուսի
մէջ՝ կէս գիշերէն շատ առաջ:

Ռոջ կը լսէր, իսկ Հայր Անկլլըպէր ժամանակը
եկած յկատեց անդրադառնալու առջի օրուան իր և
անոր միջեւ անցած այն խօսակցութեան, որուն հե-
տեւանքը եղած էր այսօրուան մէտոին ճամբորդու-
թիւնը:

— Եթէ Պ. Մարշալին ինքնաշարժը մերժելուս
պատճառը յայտնեմ՝ ինձ իրաւունք պիտի տաք: Պէտք
է որ գիտնաք անոր պատմութիւնը:

— Եթէ պատճառը անհատական է, ըսաւ Ռոջ,
գիտնալ պիտի չուզէի երբեք:

— Գիտէք հարկաւ, ըսաւ Հայր Անկլլըպէր, թէ՛
այն քաղաքը, Թարթուս, ուր ազնուօրէն գիտ կը տա-
նիք հին Թարթուսն է:

— Գիտեմ, ըսաւ Ռոջ մեղմօրէն:

— Ներողութիւն, ըսաւ Հայր Անկլլըպէր, մոռցայ
որ մէկուկէս տարի Թարթուսի պահակազօրքին մէջ
գտնուած էք, նոյն իսկ հո՛ւն էլիսաւ Հոսիլար անուն
բարեկամի մը տան մէջ միտսին ճոշած ենք,
կարծեմ 1921ի վերջերն էր, 10 կա՛ 12 Գիկո.ին, այն
ատեն ձեզմէ ծառայութիւն մը խնդրած էի Նօթր-Տամ
տը Թարթուգի... մասին, կը յիշէ՞ք:

— Այո՛, Հայր, ըսաւ հարիւրապետը, այն տարին

Հօկտեմբերի և Նոյեմբերի միջոցին, այդ մայր եկեղեցիին մէջ կատարուած պեղումներէն ետք, այդ եկեղեցին ինկած էր այնպիսի աղտոտութեան մը մէջ, որ Թարթուսէն անցնելու ատեննիդ խռովեցաք, յօգուեցաք, ձեր խնդրանքին վրայ քանի մը մարդ ժողվելով մաքրել տուի. բայց անցեալ տարի երբ կը մեկնէի Թարթուսէն, Հայր Սուրբ, տեսայ որ ձեզի պէս անձերուն ջանքերը արդիւնաւորուելու վրայ են. բայց ի՞նչ կայ:

Լազարիոսի կ'օճաւորին աչքերը կայծակներ կ'արձակէին:

— Մօի'կ ըրէք ուրեմն թէ' ինչ պատճառով ձեր Մարշալին երախտապարտ ըլլալ չուզեցի, իր ինքնաշարժը առնելով: Ես պէտք եղած ջանքերը չխնայեցի պահպանելու համար հնուածիւնները թէ' Թուրքերու և թէ' Ֆրանսացիներու տիրապետութեան տակ, ըսաւ Հայր Անկլըպէր, և սակայն կը մոռցուի բան մը, աւելցուց լազարիոսը, ո՞րն է որ, դրամը ամէն բան չէ. բայց պէ'տք է որ ամէն բան ծառայէ իր յատկացուած նպատակին, չի բաւեր միայն հնուածիւն մը պահելը, ըսաւ բարկաճայթ շեշտով մը Հայր Անկլըպէր, երբ տեսաւ որ հարիւրապետը մտիկ կ'ընէր զսր մացած, լսեցի որ Թանգարան պիտի ընեն եղբոր այդ մայր եկեղեցիին:

— Միւզէ'ի պիտի վերածեն, հարցուց Ռոշ:

— Այո', ճիշդ է ժուանվիլի Կիյոմի մայր եկեղեցիին, Սուրբիոյ մայր եկեղեցիներուն գոհարը, Սալահէտաինի, բաղձացած անբիծ վարդը կ'ուզեն փոխել միւզէի, հաճոյ երեւնալու համար թէ' հաւատացեալներուն և թէ' անհաւատներուն, չվշտացնելու համար թէ' Ժսգը և թէ' Ահմէտը և այս ըսելով Լազարիոսը այնքան բուռն ժէպթ մը ըրաւ կ'սուքին մէջ

նստած տեղը քիչ մնաց որ պզտիկ ինքնաշարժը տապալէր:

— Ներեցէ'ք Հայր, որ ձեր ցասումը չբաժնեմ, պատասխանեց Ռոշ, կը կարծէ'ք որ վերջնական ըլլայ ձեր լսած որոշումը, եկեղեցիին միւզէ ընելու մասին:

— Աւա՛ղ, ըսաւ լազարիոսը, ե՛ս որ այնքան ջանացի որ այդ եկեղեցիին չփոխուի մզկիթի (և իմ շնորհիւս էր որ անցեալ տարի անիկա յանձնուեցաւ Բարձր Քօմիսէրութեան հնութեանց բաժնին), կ'երեւալայ անմտութիւնն ունեցայ այդքանով ուրախանալու, կարծելով որ փրկուած է եկեղեցիին, որ եօթ դար ետք պիտի յատկացուէր կրկին արարողութեանց, և ատոր տեղը հիմա սրբապիղծ կարգադրութիւն մը:

Վաղը չէ միւս օր երբ մեծ պատարագը հո'ն տեղի ունենար, որքան հիանալի բան մը պիտի ըլլար. աւելցուց հանդարտութեամբ լազարիոսը:

— Հիանալի', իսկապէս հիանալի... ըսաւ Ռոշ, որ ինքն ալ ըրած էր ինչ որ կրնար.

— Ո՛չ թէ միայն հիանալի այլ հանճարեղ պիտի ըլլար, ո՛չ թէ կիրակի, այլ վաղը, նոյն իսկ այսօրուան համար ամէն ինչ պատրաստուած է արարողութեանց կատարումին համար: Այսօր գիշերային չարչարանաց դատաստանի տեսարանին համար հո'ն արդէն մեր կ'օճաւորները պատրաստութիւն կ'ընեն այժմ. ուստի պիտի փափաքէի որ ե՛ս ալ ատենին կարենամ գտնուիլ այդ ժամադրավայրը և ժամացոյցը քաշելով նայեցաւ... մէկ ժամէն պիտի հասնինք կարծեմ, ըսաւ:

— Եթէ Տէրը կամենայ, Հայր, ըսաւ Ռոշ:

— Այո', ինձի համար յաւիտենական ուրախութիւն մըն է, որ այդ իրողութիւնը զօ՛ւք իսկ պիտի հաստատէք...

Բայց լազարիստը յանկարծ ինքզինքին եկաւ ,
ձեռքը տարաւ ճակատը և ըսաւ Ռօշին :

— Սակայն ես երբեք չհարցունցի թէ դո՛ւք ին-
չու այս իրիկուն թարթուս գտնուելու պէտք ունի՞ք :

2.

Ռօշ, ինչպէ՛ս ըսուեցաւ, ուշացուց պատասխանը
հարցման որ եղած էր իրեն այդպէս : Պիտի պատաս-
խանէր վերջապէս՝ առանց մեծ խանդավառութեան,
երբ պատահեցաւ միջադէպ մը որ այդ հարկէն ազատ
կացուց զինքը առ այժմ :

Ճամբու մէկ յեղակարծ դարձակէտին՝ ինքնաշարժ
մը երեւցաւ : Անիկա կ'երթար իրենց գացած ուղղու-
թեամբ, երբ պատահած էր անոր բախտի գէշ հար-
ւածը, որ այդ տխուր վիճակին մէջ դրած էր զայն :
Այժմ կը պառկէր անիկա՝ կէս մը դարձած, աջակողմ-
եան փոսին մէջ՝ իր ձախակողմեան անիւնները օդին
մէջ սռկախուսած, այլևս գետնին հետ ոչ մէկ շփում
չպահելով : Տեսնուած են և պիտի տեսնուին կուռքեր
աւելի յոռի դիրքերու մէջ, Բայց ստիկա այսուհան-
դերձ շուտով մեկնելու պատրաստ չէր երեւէր :

Մարդ մը, քանի մը քայլ հեռուն, կը մնար նրո-
տած հողակոյտի մը վրայ : Գլխուն ունէր գարշ գալ-
փազ մը և հագած էր նոյն գոյնով հին վերարկու մը,
զինուորի նախկին վերարկու մը հաւանօրէն : Անտար-
բեր, ամէն քանի համակերպած, կը սպասէր : Շարժա-
վարը ըլլալու էր : Եթէ ըլլար արկածահար կառքին
սեփականատէրը, անտարակոյս քիչ մը նուազ փիլի

սոփայութիւն ցոյց պիտի տար : Նոյն իսկ ոտքի չե-
լաւ, երբ Ռօշի ինքնաշարժը կանգ առաւ իր առջև :

— Օգնութեան պէտք ունի՞ս, հարցուց Հայր Անկ-
լըպէր, արարեղէն լեզուով :

Գալփազով մարդը տեղէն չերերաց : Կզակի հեզ-
նական շարժումը մը ցոյց տուաւ ազէտին առարկան :
Եւ ի՛նչ ուրիշ պատասխան տար, արդարեւ : Կարգ մը
մնասներու տակէն ելլելու համար աւելին պէտք է
քան լաւ խօսքերը : Շարժավարին քիչ մը արհամար-
հոտ ժպիտը ցոյց կուտայ թէ այդ կարգի նորոգու-
թեանց վրայ կը դառնար խնդիրը :

Այդ կեցուածքը, սակայն, շատ հաճելի չեկաւ
Ռօշի :

— Կառքը հեռուներէ՛ն կուգայ, հարցուց չոր
ձայնով մը, այս անգամ թուրքերէն լեզուով :

Անձանօթը նայեցաւ անոր խուսափուկ կերպով :
Ակներև էր թէ ոչ մէկ փափաք ունէր խոստովանու-
թեանց ճամբուն մէջ մտնելու : Բայց, միւս կողմէն,
Արեւելքի մէջ ո՞վ պիտի դիմէ վտանգին սպայի մը
կողմէ կատարուած հարցում մը անպատասխան ձը-
գելու :

— Բաւական հեռուներէն արդարև, մրինջեց :
Ռօշ բաւականացաւ ուսերը բարձրացնելով :

— Դուն գիտես, մարդուկս : Հանգիստ եղիր,
մտադրութիւն չունինք օգնելու քեզի՝ հակառակ
կամքիդ :

— Զարմանալի՛ մարդ, ըսաւ Հայր Անկլըպէր,
երբ սկսան իրենց ճամբան շարունակել : Աս կողմե-
րէն մէկը ըլլալու երեւոյթը չունի :

Հարիւրապետը ծամածուծութիւն մը ունեցաւ :

— Ի՞նք՝ չեմ գիտեր : Ինչ կը վրաբերի իր կառ-
քին, պէտք չէր անորոշ կերպով պատասխանէր ինձի

երբ հարցուցի թէ հեռու տեղէ կուգար անիկա: Չեմ գիտեր թէ ժամանակ ունեցա՞ք նշմարելու, ետեւ թ. մը կայ, նշանատախտակին վրայ:

— Թ., Թուրքիա, ըսաւ Հայր Անկլըպէր:

— Այո՛, Թուրքիա: Ուստի կրցաք դիտել թէ Թուրքերէն լեզուով է որ հարցաքննեցի զինքը: Քիչ ետք երբ ձէսը-Շուղուրէն անցնինք, ժանտաւրդիին պիտի մատնանշեմ այս ըստ իմ կարծիքիս քիչ մը չափազանց լուսկեաց մարդուկը: Ո՞վ կրնայ գիտնալ, այսպիսի ժամանակներով: Եւ յետոյ, այնպէս չէ՞, արհեստս է ատիկա վերջ ի վերջոյ:

Ճիսր-Շուղուր, ըսաւ Հայր Անկլըպէր, անկէ շատ հեռու ըլլալու չենք հիմա:

— Ոչ, հինգ կամ վեց քիլոմէթր թերեւ: Օհ, օհ, բայց անաւաստիկ ուրիշ նորութիւն մը: Եւ այս անգամ հարցը կը դառնայ մարդու մը վրայ, որ բաւականին տրամադիր կ'երեւի խօսակցութեան մըտնելու:

Շուրջ հարիւր մէթր հեռուն, ճամբուն ճիշդ մէջտեղը, դէմքը իրենց դարձուցած, կեցած էր մարդ մը որ կը շարժէր իր գլխարկը: Այդ գլխարկը գլուխը դրաւ, զայն վերցնելու համար սնթերի քաղ. քաղաքութեամբ բարեւով մը, երբ կառքը մօտեցաւ իրեն և կանգ առաւ անգամ մը ևս:

— Օհ, օհ, ըսաւ Հայր Անկլըպէր: Ահաւաստիկ պարագան ըսելու թէ այսօր հանդիպումները կը յաջորդեն իրարու, առանց իրարու նմանելու:

— Ստանայէն է, ճշմարի՛տ, մուտաց Ռօշ:

Ան աւելցուց.

— Թող կախուղիմ եթէ երբեք կը գուշակեմ թէ ո՛ւրիկէ կրնայ դուրս գալ այս ծաղիկը:

Բայց անծանօթը կը փութար ըսել, իր գլխարկը

բաց գոյն պի՞ծ թաղիքէ գլխարկներուն ամենէն վայելուչը ձեռքին մէջ բռնած.

— Արժանապատիւ Հա՛յր... հարիւրապետս: Ռօշ ընդմիջեց զայն յանկարծ.

— Որո՞նք հետ պատիւն ունիմ խօսելու, ըսաւ, իր զարմացումը ծածկելով իր ամենախիստ ձայնին տակ, և ձեռքերը պահելով դեկանիւրն փակած, իբր թէ չնշմարէր իրեն երկարած ձեռքը:

— Իրաւացի, շատ իրաւացի, ըսաւ միւսը խոնարհելով:

Եւ իբր թէ կանխու պատրաստած ըլլար զայն, սպային յանձնեց այցաքարտ մը, որուն վրայ այս վերջինը կրցաւ կարդալ.

Ե Ո Ւ Ր Ի Պ Է Շ Ա Ր Ա
Վաճառակաճ
ՄԱԼԱԹԻԱ (Թուրքիա)

Ռօշ մունջ մնաց, այցաքարտը ձեռքը: Օտարականը կը շարունակէր նայիլ իրեն իր ժպիտով:

Վաթսուէէն վաթսուէնըհինգ տարու մարդ մըն էր, միջահասակ, ճերմակ մազերով, շատ սեւ պզտիկ պետերով՝ հաւանաբար ներկուած, հագուած ճշմարիտ խնամքով մը: Իրապէս մարդ իրաւունք ունէր հարցընելու ինքզինքին թէ ի՞նչպիսի ջ. ջ. դ. ս. էր անձրեւէն փ. ս. ս. ցած ճամբուն վրայ խուսափիլ ցետի նուազագոյն արատէն՝ իր տափօտին վրայ, իր փայլուն կօշիկներուն վրայ: Պայծառ ձեռնոցներ դրած, թեւին վրայ վերարկու մը, ցոյց կուտար՝ առաւելագոյն խոր հըրդապահութեամբ՝ քիչ մը ակնաբախ այն վայելչութիւնը, որ այնքան սիրելի է Արեւելքցիներուն: Ամէն պարագայի տակ, նուազագոյն չափով զարմանալու երեւոյթը չունէր հակադրութեան առջև զոր կը ներ-

կայացնէր այդ կերպով իր անձը՝ զինքը շրջապատող անտառներու, փայտերու և հեղեղներու քիչ մը խոտադէմ դաշտանկարին հետ:

Հայր Անկլըպէրը եղաւ առաջին խօսք առնողը:

— Այ՛ շուշտ ձերն է, պարո՛ն, ինքնաշարժը զոր մեր ետին թողուցինք քիչ առաջ, ըսաւ:

— Արդարեւ, Հայր Սուրբ, արդարեւ: Մէկ անուշադրութի՛ւնը շարժավարիս, որ սովորաբարնուազ անճարակ է, պէտք է ընդունիմ: Բայց յոգնած էր բաւական երկար հանգրուանէ մը: Քիչ անգամ կառքերու կը հանդիպուի այս ճամբուն վրայ: Փոխանակ ուրեմն սպասելու որ օգնութիւնը երկինքէն իննայ վրաս, նախապատիւ սեպեցի անոր ընդառաջ երթալը, մերձաւորագոյն գիւղը հասնիլը— Ճիտ-Շուշուր, ուր կը յուսամ գտնել կառած մը:

— Արդարեւ, կառած մը կայ հոն:

— Օրհնեա՛լ է Աստուած: Արդէն իսկ համակերպած էի հետիոտն կտրել անցնելու քանիմը քիլօմէթր ճամբան որ կը բաժնէ զմեզ խնդրոյ առարկայ գիւղէն: Բայց պէտք է խոստովանիլ թէ այս գիշերուան անձրեւէն ետք այս լեռներուն վրայ քալելը հսճելի ոչինչ ունի: Ա՛յո է պատճառը որուն համար, երբ լսեցի ետեւէս ինքնաշարժի մը մօտօքը, թոյլ տուի ինքզինքիս... Հասկնալի է թէ եթէ երբեք միտքէս անցնէր թէ գործ ունէի ձեզի պէս անձնաւորութեանց հետ, ընաւ պիտի չփորձուէի...:

— Կատակ կ'ընէք, ըսաւ Ռօշ, հազիւ նուազ խիստ ձայնով մը: Եկէք մեզի հետ: Պիտի տանինք ձեզ Ճիտ-Շուշուր, Աուհամիի կառածը: Տեղոյն միակ կառածն է ատիկա: Պիտի ջանաք ձեր գործը կարգադրել:

— Որքան՛ն երախտապարտ եմ, հարիւրապետ:

— Օհ, մեծ բան չէ ըրածնիս: Աճապարեցէ՛ք: Եւ տեղ մը ըրաւ անոր՝ կառքին յետամասին մէջ, իր ճամբորդութեան պայուսակին և կրօնաւորին ծրարներուն միջև:

— Ունիք շարժավար մը, որ շատ դիւրահազօրդ չէ, ըսաւ այս վերջինը:

Օտարականը ժպտեցաւ:

— Ատիկա ընդհակառակը իր փոքրիկ մեղքն է: Բայց ես եմ որ լռութիւն պարտադրեցի իրեն: Սուրիոյ մէջ, լեզու չգտնելները շատ անպատեհութիւններ չեն ներկայացնէր վերջի վերջոյ: Ասոր հակառակ, կրնայ նոյնը չըլլալ ամէն տեղ, մասնաւորապէս այն երկրին մէջ ուրկէ կուգանք:

— Ուղղակի Մալաթիայէ՛ն կուգաք, հարցուց Ռօշ, քիչ մը մեղմացած:

— Ուղղակի, այո՛, հարիւրապետ:

— Մալաթիա, ըսաւ լազարիստը, Հուսթեան Միլիտինէն:

— Եւ որ այսօր կը վայելէ պատիւը իր մէջ ունենալու ձեր ամենէն մեծ եկեղեցականներէն մէկը, Պօտրիյար Ս.ը, իբր եպիսկոպոս, աւարտեց Պ. Պէշարա՛ զաղցր ժպիտով մը:

— Հաւատքս վկայ, իրա՛ւ է, ըսաւ Հայր Անկլըպէր, աչքերը խոշոր խոշոր բանալով: Շտորհաւորութիւննե՛րօ: Մոռցած էի ատիկա, կը խոստովանիմ:

Պ. Պէշարա շեշտեց իր ժպիտին բարեմտութիւնը:

— Լստին հայ եմ, Հայր Սուրբ, պարտք սեպեց մրմնջել իբր բացատրութիւն:

— Մալաթիոյ մէջ, ըսաւ Ռօշ, զիւր իր պաշտօնը կը պարտաւորէ՞ աւելի իրապաշտութեան, կերպսները և կաշեղէնները կը կազմեն առեւտրական գործառնութեանց գլխաւոր առարկան:

— Գլխաւորները, այո՛ւ Բայց պէտք չէ մոռնալ ոչ համեմեները և ոչ ալ գլխաւորը: Այս վերջին տեսակի գործն է որ կ'ընէ, մօտ մէկ դարէ ի վեր, Գրիգոր Պէշարա և Որդիք առեւտրական տունը, պատերազմէն առաջ, մեր ամենամեծ յաճախորդութիւնը կը գտնուէր Դամասկոսի հրապարակին վրայ: Հակառակ այժմու դժուարութեանց, մեր լաւագոյնը կ'ընենք այդ յաճախորդութիւնը վերակազմելու համար: Այդ է նպատակը այսօրուան ուղեւորութեանս:

— Դամասկոս է որ կ'երթաք: Թոյլ տուէք ինձի ըսել թէ տարօրինակ ճամբայ մը ընտրած էք՝ հոն երթալու համար:

Պ. Պէշարա աչքերը զթթեց խորհրդաւոր կերպով:

— Վերադարձից է որ միտք ունիմ հոն կանգ առնելու: Ատկէ առաջ, կայ ծրագիր մը զոր պիտի ուզէի գործադրութեան դնել, ծրագիր մը զոր կը դժուրեմ այնքան տարիներէ ի վեր:

Գլուխը հակեց, իբր թէ խոստովանելու համար ծայրայեղութիւնը իր փառասիրութեան:

— Ներկայ ըլլալ՝ Զատիկ կիրակիին Ս. Պատարագին Երուսաղէմի մէջ: Կրնամ ըսել թէ ստիկա եղած է միշտ երազս:

Հայր Անկլլպէր ունեցու հաւանութեան պզտիկ ժէսթ մը:

— Բայց, ահաւասիկ փափաք մը որմէ ամչնալու պէտք չունիք, սիրելի պարոն: Զեզի պէս մարդիկը սակաւաթիւ են այլեւս: Սխալ է ուրեմն, փախցնել անոնց ձեռքը սեղմելու սուրբը, երբ անիկա ներկայանայ:

Ատոր վրայ, ետեւ դարձած ըլլալով, ան գործը միացուց խօսքին: Ռօշ, եթէ իսկ փափաք ունեցած

ըլլար, չէր կրնար, առանց վտանգելու երեքին կեանքը, անձնատուր ըլլալ այդքան ջերմ ցոյցի մը, ճիշդ այդ պահուն իրենց ինքնաշարժը եզերելու վրայ ըլլալով բաւականին խոր անդունդ մը: Թող որ, չթուեցաւ շատ ցաւիլ ատոր համար:

— Երուսաղէ՛մ, բաւականացաւ կրկնելով: Էհ, էհ, արդէն իսկ ուրբաթ է այսօր. կորսնցնելիք շատ ժամանակ չունիք, գիտէ՛ք:

— Գլտեմ, աւա՛ղ, ըսաւ Պ. Պիշարա, առանց իր հանդարտութենէն շեղելու: Կը խորհէի այս երեկոյ Պէյրութ ըլլալ: Պէյրութէն Երուսաղէմ, կը մնայ միայն 360 քիլօմէթր, ինչ որ մեծ բան մը չէ: Անշուշտ, այս միջադէպին պատճառաւ, ամէն բան փոխուած է: Կրնամ այսու հանդերձ դեռ յոյս մը տածել, եթէ երբեք ձիւր-Շուղուրի մէջ գտնեմ մեքենագէտ մը որ քիչ թէ շատ գիտնայ իր արհեստը: Վերջպէս, Ամենազօրին կը թողու՛մ: Վստահ եմ թէ Ան հաշուի պիտի աւնէ դիտաւորութիւնս:

Ձիւր-Շուղուրի մէջ, այդ կէտերէն ետք, իսլամ թէ քրիստոնեայ, կը հաղորդուէին, իբր թէ դիպուածով, նոյն սիրալիբ եղբայրակցութեամբ: Սուհամի կառածին անձնակազմը պիտի չուզէր բացառութիւն կազմել: Գործաւոր թէ գործատէր, հանդիպակաց սրճարանին մէջ կուլ կուտային ողիի բազմաթիւ փոքր գաւաթներ: Ռօշ շատ ժամանակ չվատնեց զանոնք հոն գտնելու համար, ոչ ալ բացատրելու համար անոնց թէ ի՞նչ կը սպասուէր իրենցմէ:

— Կը ճանչնամ այս տղաքը, ըսաւ, անոնց աշխատանքի մէջ ունեցած ճարպիկութեան կը հաւատարի միայն այն դժուարութիւնը զոր կը կրենք զանոնք շարժման մղելու համար: Այժմ որ շարժած են, հան-

1831/1831



գիտա եղէք: Առ առաւելն մէկ ժամէն, մեկնելու ի վիճակի պիտի ըլլաք:

Ձեռքը գլխանոցին տանելով, սպան կը պատրաստըւէր հրաժեշտ առնելու իրենց նոր ծանօթէն: Հայր Անկլըպէր միջամտեց.

— Ահա՛ թէ ի՛նչ կը խորհիմ. պարօնը աւելի լաւ պիտի չըլլա՞յ Լաթաքիոյ մէջ սպասելով, որ կառքը պատրաստ բերուի իրեն: Սրճարան թէ պանդոկ հոն աւելի հանգստաւէտ են քան այստեղ:

— Հէ՞օ, ըրաւ Ռօչ:

— Լաթաքիա՞, ըսաւ վաճառականը: Հեռու չե՞նք դեռ այնտեղէն:

— 86 քիլօմէթր: Մէկուկէս ժամուան խնդի՛ր, առ առաւելն: Եթէ կ'օւզէք: Քանի որ ձեր ալ ճամբուն վրայ է, արդարեւ աւելի հանգիստ պիտի ըլլա՞ք հոն: Կը մնայ Տիար Սուհամիի յայտնել այն տեղը ուր պիտի իջնէք: Անմիջապէս որ ձեր կառքը ճամբայ ելած ըլլայ ձեզի միանալու համար, պիտի հաղորդէ ձեզի հեռաձայնով:

— Կ'ընդունիմ ուրեմն, կ'ընդունիմ առանց նազ ընելու, պարօննե՛ր, ըսաւ օտարականը ջերմութեամբ: Այն առաւելութեանց վրայ, որոնց մասին խօսեցաք, մոռցաք աւելցնելու զայն, որուն ամենէն աւելի արժէք կուտամ. ձեր ընկերակցութեան մէջ քանի մը ժամ աւելի անցընելու հեռապատկերը:

— Մենք է ընդհակառակը որ շատ գոհ ենք, ըսաւ լազարիստը: Ան, անտարակոյս, բոլորովին հմայուած էր օտարականին սիրուն ձեւերէն:

Քիլօմէթր 38ին, Սուրբական Պետութեան և Ալաուուիթներու երկրին սահմանագլուխը, Ռօչ ժրպտելով Հայ Անկլըպէրի, մատնանիչ ըրաւ սնոր իրենց ընկերը: Այս վերջինը կը մրափէր:

— Խեղճ մարդ, ըսաւ կրօնաւորը գարովալից, իրաւունք ունի քիչ մը հանգստանալու, Երուսաղէմ չէ հասած դեռ, գիտէ՛ք:

Հայր Անկլըպէս չէր գիտեր թէ որքան ճիշդ կը խօսէր: Երուսաղէմ: Տարաբախտ մարդը չպիտի հասնէր հոն, ինչպէս պիտի տեսնենք:

— Ո՛ւր պիտի իջեւանէր, սպասելու համար իր ինքնաշարժին:

— Հաքիմի պանդոկը, այնքան լաւ անուանակոչուած Ուղտերու հրապարակին վրայ:

— Հաքիմի պանդոկը: Կը յուսամ իրեն համար թէ ստիպուած պիտի չըլլայ հոն պառկելու, ըսաւ եկեղեցականը ծամածռութեամբ մը: Կը սիրեմ յուսալ թէ նման անսխորթութիւն մը պիտի խնայուի ձեզի ալ Թարթուսի մէջ: Աստուած իմ, որքան տխմար եմ: Դուք ոչ թէ պանդոկ մը, այլ ձեր պաշտօնակից հարիւրապետ Քաղէլլայի տունը պիտի իջեւանիք անշուշտ:

— Արդարեւ, ըսաւ Ռօչ: Իսկ դո՛ւք, Ս. Ժօզէֆի մայրուպետներուն, քով կ'ենթադրեմ:

— Այո՛, ըսաւ կրօնաւորը, ցաւի երանգով մը: Բարի աղջիկներ են անոնք, որոնք լաւ կ'ընեն ինչ որ իրենցմէ կախում ունի: Եւ քանի որ չեմ կրնար ընկել հոն ուր իջած էի անցեալ անգամ...:

— Ո՛ւր իջած էիք ուրեմն, հարցօւց հարիւրապետը, որ յայտնապէս ուրիշ բանի մասին կը մտածէր:

— Ի՛նչպէս թէ ո՛ւր, բայց Հաճիլարներուն տո՛ւնը, ինչպէս գիտէք: Ինչպէս կը յիշեցնէի ձեզի, հո՛ն է որ հաճոյքն ունեցանք միասին ճաշելու: Ի՛նչ կեղծիքի աշխարհ է անիկա որուն մէջ կ'ապրինք, սիրելի բարեկամս: Բաւական էղաւ որ Հաճիլար փաշան մեռնի, որպէսզի... Դեռ Թարթուս էիք, այն-

պէս չէ՞ երբ այդ մահը պատահեցաւ :

Սպան հաստատական նշան մը ըրաւ :

— Ինծի ալ այդպէս կը թուէր : Կ'ըսէի ուրեմն, հիացէ՛ք ծիծաղելիութեան վրայ մեր այսպէս կոչուած պատշաճութեանց : Ինծի համար անկարելի կը դառնայ Տիկ. Հաճիլար փաշայի երդիքին տակ ընակիլ, պարզապէս որովհետեւ այրէ է... : Տխմար բան է այս, բայց այսպէ՛ս է : Երբ վերջին անգամ թարթուսէն կ'անցնէի, Տիկ. Հաճիլար խոստում առաւ ինձմէ որ իրեն հետ ճաշեմ կամ ընթրեմ՝ համաձայն իմ նախընտրութեանս : Պիտի ծանուցանեմ իրեն թէ դուք ալ թարթուս էք, որպէսզի հրաւիրէ զձեզ ալ : Լուսմիտ քըս ինկաւ, ըսէ՛ք... :

Ան թեթեւօրէն իջեցուց ձայնը :

— Իմացա՞ք բան մը : Տիկինը կը խորհի վերսմուսնանալ : Ի՞նչ, ի՞նչ կայ :

Ռօշն էր որ յանկարծ կուտար իրեն արմուկի հարուած մը, նոյն ժամանակ ետեւը խուսափուկ նայւածք մը նետելով իրենց ընկերոջ վրայ : Կառքը ունեցուցնում մը, որ չկրցաւ իր երազներէն դուրս բերել ժպտուն Պ. Պիշարան, որուն մրափը դարձած էր խոր քուն մը :

— Ի՞նչ կայ, զարմացաւ Հայր Անլըպէր : Ի՞նչ ունիք, բարեկամս :

Պատասխանին թօնը իր ծայրագոյն վիճակին հասցուց իր զարմանքը :

— Ոչի՛նչ, մրմնջեց Ռօշ, ակռաները սեղմած : Բան չունիմ : Կամ, աւելի շիտակը, այո՛ւ : Այն երկրին մէջ և այն ժամանակին մէջ ուր կ'ապրինք, նախընտրելի է կարելի եղածին չափ քիչ արտասանել անձերու անուններ, եթէ կը փոփաքիք զիտնալ իմ կարծիքս :

Լաթաքիա կը հասնէին այդ պահուն :

Հաքիմ պահուկին առջև, ուր հրաժեշտ առին իրմէ, լազարիսաը և Պ. Պիշարա փոխանակեցին փխադարձ անձնուիրութեան շատ մը խօսքեր : Պէտք էր իրարու հետ թղթակցէին և եթէ օր մը Հայր Անկլըպէր անցնէր Մալաթիայէն... :

— Լատին Հայերը շատ համակրելի անձեր են, ըսաւ եկեղեցականը, երբ իրարմէ բաժնուեցան :

Ռօշ համամտութեան նշան մը ըրաւ :

Կ'ուզէր ինքզինքին ներել տալ իր քիչ մը առաջ ըրած յանդիմանութիւնը : Բայց կրօնաւորը մոռցած էր զայն արդէն իսկ : Այժմ համազրուուած էր անիկա իր առաջուան ոգորումի եռանդէն : Դարձեալ, ուրիշ բանի մասին չէր մտածեր բացի իր ամենասիրելի Մայր-եկեղեցիէն, բացի պայքարէն որուն պատրուակ պիտի ծառայէր իրեն, Ս. շաթուան այս վերջաւորութիւնը : Կը խօսէր ինքն իրեն, կը զայրանար ու անմիջապէս կը խանդավառուէր : Ռօշ երկար չժամանակի պէտք չէր ունեցած հասկնալու համար թէ անհրաժեշտ չէր այլեւս պատասխանել իրեն : Օրը կը տաժամէր արագօրէն : Պանետա գիւղաքաղաքէն դուրս ելած ատենին, արեգակի վերջին ճառագայթ մը փայլեցնել տուաւ, շիկակարմիր կրակի մը պէս : Մարաքաթի վիթխարի գղեակին սեւ սիլուէթը : Խաւարը օր կը սկսէր իջնել, կը թափանցէր Ռօշի հոգւոյն մէջ : Քանի կը մօտենար նպատակակէտին, ինքզինքը կը զգար տեսակ մը սառուցի՛ն անձկութեան մէջ մխրճուած : Մուսլ սարսուռներ՝ խառնուած ուելի եւս մուսլ նախազգացմանց, կը ցնցէին զինքը : Իր ափերը կը կարկամէին ղեկանիւնին վրայ : Միանգամայն կը վախնար և անհամբեր էր հասնելու Թարթուս :

Հաստամարմին յիշատակարանի մը ստուերը լան-
կարծ ցցուեցաւ վերջալոյսին մէջ:

— Թարթուսն է, ըսաւ Հայր Անկլըպէր:

Ս. Ժօզէֆի քօյրերու վանքին դուռը բացուեցաւ:

Ռօշ կրօնաւորին օգնեց իր ծրարները հաւա-
քելու համար:

— Վերջապէս ձեր նպատակին հասաք, ըսաւ այս
վերջինը, անոր սպառնալով մասովը: Ձեզի հարցում
մը ուղղած էի. դուք կ'ուզէք մինչեւ վերջ զայն
թողուլ անպատասխանի: Բայց պէտք չէ զիս չափէն
աւելի պարզամիտ կարծէք: Խոստովանեցէք որ Թար-
թուս երթալու ձեր միակ նպատակը ինձ ծառայե-
լն էր:

3.

Հարիւրապետ Քաղէլլա, որ 1922ի Դեկտեմբերին
Ռօշին յաջորդած էր Թարթուսի մէջ որպէս տեղեկա-
տըւութեան դիւանի սպայ, անոր նախորդը եղած էր
Անտիոքի մէջ: Անձնական պատճառներով էր որ եր-
կու մարդիկը չորս ամիս առաջ խնդրած էին իրենց
պաշտօնին փոխանակութիւնը: Քաղէլլա իր նոր պաշ-
տօնատեղիէն դժգոհ չէր երբեք: Բայց իր կինը աշ-
խարհիկ կեանքի և ընդունելութեանց վարժուած,
հետզհետէ Պէյրութի մօտենալու վրայ միայն կը խոր-
հէր: Մինչդեռ Թարթուսէն մեկնելու համար Ռօշ
աւելի մթին խորհուրդներ ունէր: Այս մասին բուն
մը գինացողները շատ հազուադէպ ըլլալու էին: Հա-

րիւրապետ Քաղէլլա անոնցմէ էր, ինչ որ մենաշնորհ
մը կրնար նկատուիլ կամ առաւելութիւն մը, որուն
համար պարծենալի էր զգուշանար:

Նստած աթոռի մը վրայ կը սպասէր դրանը առջև
իր տան, որ Ռօշինը եղած էր: Ողջագուրուեցաւ անոր
հետ, երբ իր ինքնաշարժէն վար իջաւ: Անոր ոչ մէկ
հարցում, ուղղեց ինչպէս ուէ բան չէր հարցուցած
առտուն երբ թէլէֆօնով ծանուցած էր իր գալուստը:
Ռօշ մտածած էր մէկ քանի պատմութեանց մասին,
մէկը միւսէն նուազ ճշմարտաման, այս յանկարծա-
կան ժամանակը բացատրելու համար: Ծնորհապարտ
եղաւ իր ընկերոջ խորհրդապահութեանը համար, որ
իրեն կը խնայէր ստախօսութեան մը ձանձրոյթը: Իսկ
անոր ճշմարտութիւնը ըսելը անկարելի էր: Ձեր կրօ-
նար զայն ըսել, որովհետեւ իրեն չէր պատկաներ:

Քաղէլլայի առաջին խօսքերը իրեն ծանուցին
լուր մը ո՞ր քօյրովին աննպատ չէր:

— Սենեակդ ելի՛ր, պատրաստ է ան: Սիւզան
մեկնելէ առաջ վերջին ակնարկ մը նետեց անոր վրայ:
Պէտք է ծանուցանեմ որ քեզի իբրեւ ընկերակից պի-
տի ունենաս միայն զիս: Կինս պաշտօն յանձնեց ձեզ-
մէ ներողութիւն խնդրելու իր մասին, կէս օրէն ան-
միջապէս յետոյ Պէյրութ մեկնելուն համար: Յառա-
ջիկայ երկուշաբթի օր Բարձր Քոմիտէրութեան մէջ
պարահանդէս կայ, և դուն զինք կը ճանչնաս:

— Ուշանալու վախը չունի:

— Անշուշտ: Բայց կը գտնադատի թէ վրայ-գը-
լուխ չունի: Կիրակի և երկուշաբթի տօնական օրեր
ըլլալուն, միայն վաղը ունի՞ իր դերձակին երթա-
լու և վաճառատունները այցելելու համար: Վերջա-
պէս գո՛նէ մէկ անգամ իրաւունք ունի ան: Եթէ ա-

ւելի կանուխէն իմաց տուած ըլլայիր. թերեւս նաք խընարէր քեզի հետ մնալ:

— Ձեմ հաւատար, ըսաւ Ռոյ ժպտելով: Պիտի ըսես սակայն, որ ասոր համար կը ցուիմ...:

Ուրիշ ո՛րէ պարագային այս խօսքը ճշմարտութիւնն իսկ պիտի ըլլար: Բայց այսօր այդպէս չէր: Իրենց հիւրին գալուն պատճառները գիտնալու համար Սիւզան Քաղէլլա անշուշտ իր ամուսինին չափ վերապահ պիտի չըլլար: Այս տեսակէտէն անոր հոն չըլլալը բախտաւորութիւն մըն էր:

Րոյ աւելցոց, խօսակցութեան կատարմանութեան հանգամանքը երկարածքելու էամար:

— Հայր Անկլըպէրն է որ պիտի ցաւի: Մասնէ՛, իր ծուխերէն մէկը կը պակսի:

Քաղէլլա անոր ընկերացաւ մինչև սենեակը:

— Ժամը ճին կը ճաշեմ, ըսաւ Ուզես հոս եզիր, ուզես մի ըլլարսեթէ կը փափաքես, քեզ կը սպասեմ:

— Հարկ չկայ, տակաւին չեմ գիտեր թէ ժամանակս ի՛նչպէս պիտի անցունեմ, կը հասկնամ:

Միւսը հասկնալու նշան մը ըրաւ տառնց բացաւորութիւն պահանջել ուզելու:

— Ահաւասիկ բանալիդ: Տանդ մէջ ես: Պէտք չունիմ քեզ ըսելու թէ ո՛ր կը գտնուին ելեկտրական լոյսի կոճակները: Արդէն գիտես կը կարծեմ: Վաղը ժամը քանիին կ'ուզես որ քեզ արթնցնել տամ:

— Մի՛ մտահոգուիր ատով, ես զանգակը կը զարնեմ, քեզի իմաց տալու:

Քաղէլլա բարեւեց և մեկնեցաւ, ակումբի մէջ ճատրակի խաղ մը լրացնելու պատրուակով: Ռոյ թեթեւացումի հառաչ մը արձակեց: Ուէ մէկուն ներկայութիւնը իրեն համար նեղացուցիչ էր: Երբեք այս-

չափ մինակ ըլլալու փափաքը չէր զգացած: Ժամացոյցին նայեցաւ, վեցին տասը կար: Ամբողջ ժամ մը դեռ սպասելու էր: Այս մինակութիւնը, որուն այնքան բաղձացած էր, արդէն կը սկսէր ճնշել իր վրայ: Զղածիգ յորանջում մը ունեցաւ: Նստաւ և գրեթէ անմիջապէս ոտքի ելաւ: Իր ճամբու պայուսակը հոն էր, զայն բացաւ և գոցեց, դարձեալ բացաւ: Իր սենեակը տխուր կ'երեւէր: Երբեք պիտի չկրնար հոն սպասել ժամը եօթը ըլլալուն: Զօրդադարանի հայելին մէջ խուսափուկ ակնարկ մը նետեց, խողանակի հարուած մը տուաւ իր զգեստին, գլխանոցին, իր ձիւղորի տաքատին գրպանին մէջ խոթեց ձեռքը, տեսնելու համար թէ ելեկտրական լամպարը հո՞ն էր: Սանդուխին վրայ մարդ չկար: Անկէ վար իջաւ ոտքին ծայրերուն վրայ կոխելով և դուրս ելաւ:

Դուրսը օդը շատ մեղմ էր: Անտիօք՝ իր լեռներու խոժոռ գլխապսակովը՝ տակաւին կիսովին ձմեռուան մէջ էր այս եղանակին: Նստելու թաց օրը — որ իրեն համար տասը հազար տարի առաջ ըլլալ կը թուէր, անկէ յետոյ անցած դարձածներուն պատճառով — Ռոյ ընկերակցած էր Հայր Անկլըպէրի, իրիկուան ճաշէն յետոյ, Յետոյ ուզած էր քալել միջև Որոնդէսի կամուրջը, երկու կամ երեք սիկառէթ ձխելով: Սակայն ցուրտը զինք արգելած էր այդ բանը ընելի: Հոս, ընդհակառակը, ի՛նչ գողջութիւն: Գրեթէ ժամ մը առաջ արեւը ահեռացած էր: Մէկ ժամէն լուսինը պիտի բարձրանար, բայց արդէն անոր գալը ծանուցանող հանդարտ լոյս մը կը ծփար ամէն կողմ: Իրիկնադէմի հովը իջած էր: Մովին աղճուկը՝ լռած:

Ռոյին այնպէս կը թուէր՝ երբեմն որ երբեք թարթուտի մէջ չէր եղած, ու երբեմն, ալ կը կարծէր որ անկէ երբեք չէր մեկնած: Անցաւ կառավարչատան

առջևէն, ուր լոյս մը կը պլպլար դեռ: Թերեւս Քա-
զէլլան էր, որ վերադարձած էր աշխատելու: Ճառ-
րակի խաղը, զոր պիտի լրացնէր, առասպել մըն էր
կամ գիւտը ընկերոջ մը որ կ'ուզէր իր ներկայութե-
նէն խնայել զինք: Քառուղիի մը առջև, Ռօշ վայր-
կեան մը վարանեցաւ: Հիմս ձիթատասնի մը մէջ կը
գտնուէր: Նոյն և առաջ չհասկցաւ թէ ո՛ւր էր, բայց
յանկարծ իր սիրտը սկսաւ բարբախել: Հոս էր, ապս-
հովաբար այս ծառին տակ, որ եկած էր իրիկուն մը,
ժամը 11ին, փնտռելու զոյգ մը ձեռնոց, որ հոն մոռ-
ցըւած էր, թեթև ժանեկազարդ ձեռնոց մը, որուն
վրայ արծաթաթել հիւսուած էր Ա. Հ. գլխատառերը,
որոնք կը փայլէին մութին մէջ: Ո՛րքան կ'աճապարէր
որ վաղայաջորդ օրը գար, ատոր համար ընդունելու
չնորհուորութիւններ: Զոյգ մը ձեռնոց, պարզ օպէս,
որուն բոյրը ամբողջ գիշերը թողած չէր որ քնանայ:

Իր գլխուն վրայ ճիւղերուն խաչածեւումը դադրե-
ցաւ: Ատողազարդ երկինքը երեւցաւ կրկին: Եւ յան-
կարծ, առանց գիտնալու թէ ինչո՛ւ, Ռօշ ինքզինք
զգաց գերին՝ գրեթէ միեւնոյն յուզումին: Կիսամու-
թին մէջ տեսակ մը հաստամարմին զանգուած մը կը
ցցուէր: Թորթոզայի Տիրամօր եկեղեցին իր առջևն
էր:

Արդարև, հարիւրապետը իրաւունք ունէր քիչ
մը նեղուելու, երբ կէսօրէ յետոյ հայր Անկլըպէր,
ուշաթափութեան վայրկեանի մը մէջ, — զոր իրեն
կաշելի էր ներել նկատի ունենալով 72 տարեկան ըլ-
լալը — սկսած էր բացատրելու թէ՛ այսօրուան թար-
թուսը Սաչակիրներու փառսոր քաղաքն էր: Ա. ի-
կա չգիտնալու համար, ինչպէս կ'ըսէր, պէտք էր ի-
րապէս անգրագէտ էր կամ ապուշ մը ըլլալ: Արդ, ա-
նիկա այս որակումներէն ոչ մէկուն արժանի էր: Ռօշ

կրնար ըսել միայն որ հին քարերը իր կեանքին տիակ
հաճոյքը ըլլալէ հետու էին:

Եւ սակայն, անուրանալի էր որ անիկա անգամ
մըն ալ ճանչցած էր Թորթոզայի Տիրամօր տաճարը:
Զոյն սիրտը էր: 32 տարու հարիւրապետ մը որ ա-
պրատմութեան շրջանի մը մէջ առանձնացած էր
Սուրիոյ մէկ կարեւոր դիրքին վրայ, ցոյց տուած էր
թէ՛ հպարտ է անցեալի ժառանգ թողած փառաւոր տա-
ճարի մը պահպանութիւնը ընելուն համար: Թէև ոչ
մէկ կերպով զինուորի մը առհասարակ վիճակած պարտ-
քը չէր, անիկա ըմբռնած էր որ պարտաւոր է այս
պաշտօնը մինչև վերջ կատարելու: Եւ իր լաւագոյնը
ըրած էր ատոր համար: Ունեցած չէ՞ր արդէն այն տը-
պաւորութիւնը թէ այս մայր եկեղեցին, ուշ թէ կա-
նուխ, իր կեանքին մէջ դեր մը պիտի կատարէր: Եւ
նախորդ ձմեռուան սկիզբը յաջողած էր թողուլ Թար-
թուսը Անտիօք երթալու համար, այն ատեն կարծած
էր թէ հաւատ ընծայելու չէ նախագգացումի մը, որ
այսօր աւելի քան երբեք զօրաւոր կերպով կը վերա-
ծնէր իր մէջ: Ի՞նչ վերապահուած էր արդեօք լսել
Ռօշին՝ վայրկեանէ մը: Ի՞նչ պիտի ըլլար այն յայտ-
նութիւնը որուն կը ապստէր և որմէ կը վախճար
այնքան անձկօրէն դողալով: Չէր գիտեր՝ գիտէր
միայն թէ իր ճակատագրին վճռական էջն էր որ
գրուելու վրայ էր: Ի՞նչ գործ ունէր հին եկեղեցին
այդ բանին մէջ: Չէր կրնար գուշակել աւելին: Հա-
նեց իր գլխունոցը, առաւ թաշկինակը և օրաց ջըր-
տիւքը, որ իր ճակատէն կը հոսէր:

Մայր եկեղեցին կ'օգտագործուէր իբրև հանրօ-
գուտ շինութեանց մթերանոց, երբ Ռօշ 1921 Յու-
նիսին պաշտօն ստանձնած էր Թարթուսի մէջ: Անմի-
ջապէս, անիկա ըրած էր ինչ որ իր կարելիութեան մէջն

էր, որպէսզի անիկա այս վիճակէն ազատէր: Իր փա-
գասիրութիւնը նուազ բարձր էր քան հայր Անկլըպէ-
րինը, որ արդէն երկար ատենէ ի վեր կը պայքարէր
տաճարը վերադարձնելու համար իր աղօթատեղիի
հանգամանքին: Մինչդեռ ինք բաւականացած էր, իր
տկար միջոցներով, շէնքին անեղծ պահպանութեան
համար անհրաժեշտ կարգադրութիւններով: Երեք ա-
միս յետոյ իր ջանքը խթանելու եկած էր անսպասե-
լի և զօրաւոր աջակցութիւն մը:

Հոկտեմբերին սկիզբը, Թարթուս ժամանումը
տեսած էր նշանաւոր հնագէտի մը՝ Քամիոյ Էլլար, որ
յատուկ պաշտօն ունէր Փրոսնսկան Կաճառին կողմէ:
Էլլարի նպատակն էր մայր եկեղեցին աւարկայ ընել
խորունկ ուսումնասիրութեան մը, որ երբեք չէր
կատարուած: Այս յիշատակարանը, պիտի գրէր «-
նիկա» յետոյ, իր աշխատանքի մասին խօսելով, Խա-
չակիրներու շրջանէն մնացած գեղեցկագոյնը և լա-
ւագոյն կերպով պահպանուածն է: Վեց շաբաթ նուի-
րեցի զայն հաստատելու և ուսումնասիրելու: Տաճա-
րին մէջ, մինչև երկու մէթր խորութեամբ, պեղում-
ներ կատարեցի դասին և հարաւային կողմնակի մա-
սին մէջ, խրամներ բացի և ընդերկրեայ սրահ մը գը-
տայ: Քովէտի խորաններուն և հիւսիսի աշտարակին
մէջ տեղ տեղ փորեցի: Հիւսիսի կողմնակի մասին մէջ
մինչև 4 մէթր խորութեամբ իջայ: Այս կերպով ըս-
տացուած և ուրիշ նշաններ թոյլ կուտան ենթադրել
որ կայ գետնափոր մատուռ մը: Վերջապէս մեծ
դրան վրայ հիւսուած պատը վար առի...»:

Ռօշ, առաջին օրէն իսկ անոր օգնած էր իր զօր-
ծին մէջ, բանուորներ ճարելով, գործի՝ ուղղութիւն
տալով, ի հարկին թարգմանի պաշտօն կատարելով,
մէկ խօսքով՝ շխնայելով իր աշխատանքը և ոչ ալ իր

ժամանակը: Ի փոխարէն, գիտունին առնթեր, իբ-
րև հրաօքանչ վկայ՝ ներկայ եղած էր յարութեանը
պատմութեան ամենէն անբուր հրաշքներէն մէկուն:
Մէլիսանտ՝ Թրիբուլէն, Մարկրիթ թաղուէին: Մի-
տունէն դէպի այս եկեղեցին կ'ուղարկէին իրենց հաս-
ւիրակները: Տաճարականներ և հիւրընկալ ասպետ
ներ, մոնկոլ էմիրներ՝ գիշերուան նման գեղեցիկ,
Ֆրանք իշխանուէրներ՝ աւելի գեղեցիկ քան առա-
ւօտը, իրենց թանկարժէք քարերուն վրայ կը տես-
նէին իջնելը անոր ապակիներու լոյսին: Հոս Թու-
անվիլ գետնամած աղօթած էր, Ժագ տը Վիթրի քա-
րոզած, Պիւրշար տը Մօն-Աիօն պատարագած: Հոն
էր հաստատուած փղոսկրէ և արծաթէ աթոռը՝ ա-
ղօթքի համար: Այս աթոռին վրայ թագ ստացած էին
երիտաքարդ հերոսներ՝ Պօլէմոններ, Կիպրացի Բիէռ-
ներ, Լուսինեան Ամօրիներ: Կեղրոնի սիւնին տակ,
դասին հիւսիսակողմը, կասկածելի կարմրութեամբ
այս սալաքարին վրայ եկած էր իյնալ խեղճ պզտիկ
կոմսը՝ Բէյմօ, երկու ոճրագործներու հարուածներուն
տակ, որոնք զրկուած էին Մայսօֆէն, Լերան ծերու-
նիին կողմէ: Ի՛նչ աշիւններ ողողած էին ժամանակին՝
խորանի այս շէմերը, որուն վրայ Հայր Անկլըպէր
կ'ապրէր միայն, Այգակերպութեան խորհուրդը վերա-
կենդանացնելու համար: Կարն՝ ի էր խուսափել այս
ողբերգական ծիրանի ցողին մթին խուժումէն: Ո՛վ
կրնար գիտնալ: Թորթողայի Տիրամօր անգութ ճակա-
տագիրը իր վերջին բառը չէր ըսած:

Հայր Անկլըպէր: Ռօշ, անկեղծ ըլլալու համար,
անոր վրայ մտածելէ դադրած էր քանի մը վայրկեան:
Եւ անաղբղնորակ տժգոյն լոյս մը, որ կը մաղուէր
հիւսիսային դրան վերեւի պատուհանէն, անոր լուսա-
գոյն փաստը կուտար թէ՛ կրօնաւորը իր ծրագիրը

գործադրելու համար աւելի չէր ուշացած :

Տաճարին հիւսիսի ճակատին շուրջը դառնալով , Ռօշ հասաւ մեծ դրան : Չէր խարուած : Արդարեւ , լամբար մը որ դրսէն չէր երեւնար , բայց որուն շարժուն լոյսը աւհամեմատօրէն կը խոշարցնէր և կը շարժէր սիւներուն շուքերը : Մութին մէջ երկու ստուերներ կը դիմէին դէպի չէնքը : Ասոնք անցան հարիւրապետին ճիշդ քովէն , որ անոնց քայլերուն հետեւեցաւ : Եկեղեցիին սեմին վրայ անիկա զարնուեցաւ կնոջ մը , որ անկէ դուրս կ'ելնէր : Եւրոպացի մը , կամ երկրին բնիկներէ՞ս արդեօք , անկարելի էր գիտնալ : Ինչպէս ամէն տեղի հաւատացեալ կիները , ահիկա ունէր ճակատին վրայ վեր առնուած տեսակ մը կնքուղ : Դրան փեղկին վրայ փակցուած թուղթի մը սպիտակութիւնը Ռօշի ուշադրութիւնը գրաւեց : Իր ելեկտրական լամբին պզտիկ լոյսովը վայրկեան մը զայն լուսաւորեց : Ասիկա իր գիտցած բանն էր : Հայր Անկլըպէր կը ծանուցանէր հաւատացեալներուն ժամերը , ուր անոնց տրամադրութեան տակ պիտի ըլլար , զանոնք խոստովանցնելու համար : այս իրիկուընէն իսկ , ժամը Յէն 9 և յաջորդ օրուան ամբողջ կէսօրէն ետքը : Արդարեւ , ըսելիք չկար : Սիրելի լազարիսթը իր գաղափարներուն մէջ հետեւողական էր :

Ռօշ մտաւ մայր տաճարին մէջ : Հարաւակողմի մասը աթոռներով և նստարաններով խճողուած էր : Մարդիկ և կիներ հոն կ'աղօթէին : Ուրիշներ ծնրադրած էին սալաքարերուն վրայ : Աջ կողմը , պատին դէմ , խոստովանատուն մը շտկուած էր : Տախտակները , որոնցմով շինուած էր ան , նորքնոր կը փայլէին : Ասիկա նոյն օրն իսկ շինուած ըլլալու էր տեղւոյն կահագործին կողմէ : Գետինը հոս հոն ինկած կը մնային տաշեղներ : Երբ հարիւրապետը անօր

մօտ հասաւ , մրմունջ մը լսեց : Ծանչցաւ լազարիսթին ձայնը : Տախտակի կտոր մը քաշուեցաւ աղմուկով , սև մարմին մը ստքի ելաւ և դասին նուազ լուսաւորուած կողմը գնաց . ուր ինչաւ ծուկի վրայ , ինքնամօռ հայեցողութեան մը մէջ :

Նպարավաճառի սնտուկի մը վրայ դրուած , նըստարաններու երրորդ շարքին վրայ , գէշ լամբար մը , միակը , կը ծխար հիտովին սեւցած իր ապակիին տակ : Մանչուկ մը և ծերունի մը , քայքայուող աւելով մը , կ'աշխատէին մէկտեղել պզտիկ քարերը և փօշին : Երկու երիտասարդներ այդ հաւաքուած աւելուքը կը ջանային լեցնել հինցած զամբիւղի մը մէջ , զոր լուսաւորուած վայրէն հեռու կը տանէին , մութին մէջ պարպելու փոխն ի փոխ :

Հայր Անկլըպէր այսպէս հոն հրաւիրած ըլլալու էր իր ծուխերէն ամէն տեսակի մարդիկը : Խնդճ մարդիկը հետեւեալ օրը տակաւին շատ գործ պիտի ունենային , ապահովաբար :

Յիշատակարանին ամբողջ խորքը մութին մէջ էր : Ռօշ հետզհետէ աւելի դանդաղօրէն յառաջանալով , հասաւ հիւսիս-արեւելքի խորանին առջև : Առխարխափ փտեց աչք սանդուխը որմէ վեր կ'ելնուէր նոյն կողմի աշտարակէն : Սխաւ վեր ելնել շատ մեծ զգուշութեամբ , յաճախ իր ելեկտրական լամբարը վառելով՝ ապահով ըլլալու համար : Ասիկա պտուտակի ձեւով սանդուխ մըն էր , պատին լայնութեան մէջ շինուած : Էնչար ըսած էր թէ այն սանդուխը նմաններ ունէր Մօժիւղայի , Նազարէթի և Սուրի եկեղեցիներուն մէջ : Ինչո՞ւ համար Ռօշ , այդ վայրկեանին , այս եզական վերելքը կը կատարէր : Ծառաւ չէր գիտեր : Գիտէր միայն թէ , ըստ իր ժամացոյցին , օրուն նայած էր յաճախ , ժամը հազիւ ճը

գործադրելու համար աւելի չէր ուշացած :

Տաճարին հիւսիսի ճակատին շուրջը դառնալով, Ռոջ հասաւ մեծ դրան : Չէր խարուած : Արդարեւ, լամբար մը որ գրտէն չէր երեւնար, բայց որուն շարժուն լոյսը անհամեմատօրէն կը խոշորցնէր և կը շարժէր սիւներուն շուքերը : Մութին մէջ երկու ստուերներ կը դիմէին դէպի չէնքը : Ասոնք անցան հարիւրապետին ճիշդ քովէն, որ անոնց քայլերուն հետեւեցաւ : Եկեղեցիին սեմին վրայ անիկա զարնուեցաւ կնոջ մը, որ անկէ դուրս կ'երէր : Եւրոպացի մը : Կամ երկրին բնիկներէ՞ս արդեօք, անկարելի էր գիտնալ : Ինչպէս ամէն տեղի հաւատացեալ կիները, անիկա ունէր ճակատին վրայ վեր առնուած տեսակ մը կնքուղ : Դրան փեղկին վրայ փակցուած թուղթի մը սպիտակութիւնը Ռոջի ուշադրութիւնը գրաւեց : Իր ելեկտրական լամբին պզտիկ լոյսովը վայրկեան մը զայն լուսաւորեց : Ասիկա իր գիտցած բանն էր : Հայր Անկլըպէր կը ծանուցանէր հաւատացեալներուն ժամերը, ուր անոնց արամադրութեան տակ պիտի ըլլար, զանոնք խոստովանցնելու համար : այս իրիկուընէն իսկ, ժամը Յէն Թ և յաջորդ օրուան ամբողջ կէսօրէն ետքը : Արդարեւ, ըսելիք չկար : Սիրելի լազարիսթը իր գաղափարներուն մէջ հետեւողական էր :

Ռոջ մտաւ մայր տաճարին մէջ : Հարաւակողմի մասը աթոռներով և նստարաններով խճողուած էր : Մարդիկ և կիներ հոն կ'աղօթէին : Ուրիշներ ծնրադրած էին սալաքարերուն վրայ : Աջ կողմը, պատին դէմ, խոստովանատուն մը շտկուած էր : Տախտակները, որոնցմով շինուած էր ան, նորքնոր կը փայլէին : Ասիկա նոյն օրն իսկ շինուած ըլլալու էր տեղւոյն կահագործին կողմէ : Գիտինը հոս հոն ինկած կը մնային տաշեղներ : Երբ հարիւրապետը անոր

մօտ հասաւ, մրմունջ մը լսեց : Ծանչցաւ լազարիսթին ձայնը : Տախտակի կտոր մը քաշուեցաւ աղմուկով, սև մարմին մը ոտքի ելաւ և դասին նուազ լուսաւորուած կողմը գնաց. ուր ինկաւ ծուկի վրայ, ինքնամօռ հայեցողութեան մը մէջ :

Նպարավաճառի սնտուկի մը վրայ դրուած, նրատարաններու երրորդ շարքին վրայ, գէշ լամբար մը, միակը, կը ծխար կիսովին սեւցած իր ապակիին տակ : Մանչուկ մը և ծերունի մը, քայքայուող աւելով մը, կ'աշխատէին մէկտեղել պղտիկ քարերը և փոշին : Երկու երիտասարդներ այդ հաւաքուած աւելուքը կը ջանային լեցնել հինցած զսմբիւղի մը մէջ, զոր լուսաւորուած վայրէն հեռու կը տանէին, մուսթին մէջ պարպելու փոխն ի փոխ :

Հայր Անկլըպէր այսպէս հոն հրաւիրած ըլլալու էր իր ծուխերէն ամէն տեսակի մարդիկը : Խեղճ մարդիկը հետեւեալ օրը տակաւին շատ գործ պիտի ունենային, ապահովաբար :

Յիշատակարանին ամբողջ խորքը մութին մէջ էր : Ռոջ հետզհետէ աւելի դանդաղօրէն յառաջանալով, հասաւ հիւսիս-արեւելքի խորանին առջև : Առխարխափ փտոնեց աչք սանդուխը որմէ վեր կ'երևուէր նոյն կողմի աշտարակէն : Սյուսա վեր ելնել շատ մեծ զգուշութեամբ, յաճախ իր ելեկտրական լամբարը վառելով՝ ապահով ըլլալու համար : Ասիկա պտուտակի ձեւով սանդուխ մըն էր, պատին լայնութեան մէջ շինուած : Էյլար ըսած էր թէ այն սանդուխը նմաններ ունէր Մօսկուայի, Նօգարէթի և Սուրի եկեղեցիներուն մէջ : Ինչո՞ւ համար Ռոջ, այդ վայրկեանին, այս եզակի վերելքը կը կատարէր : Շատ լաւ չէր գիտեր : Գիտէր միայն թէ, ըստ իր ժամացոյցին, օրուն նայած էր յաճախ, ժամը հազիւ ճը

25 անցած էր: Երկու կամ երեք վայրկեան պէտք էր իր ուղած տեղը հասնելու համար: Եւ դեռ կէս ժամ պիտի սպասէր: Այս կէս ժամուան մէջ անիկա պատրաստ էր ամէն բան ընելու, բացի անգործ մնալէ...

Ատողերը, ծովուն աղմուկը, պարտէզին բոյրերը: Այժմ իր ոտքին տակն էր ամբողջ Թորթոզան: Տաճարին տանիքը, որուն վրայ էր, բաւական գէշ վիճակ մը ունէր: Անոր վերանորոգման համար անհրաժեշտ վարկը յատկացուած էր հինգ ամիս առաջ, իր Անտիօք մեկնումին նախօրեակին: Անտիօքայէս անիկա հրամայած էր որ աշխատութիւնները սկսին: Անիկա տհաճութեամբ հաստատեց թէ ադ աշխատանքները կրնային աւելի առաջացած ըլլալ: Սակայն Քազէլլա չէր հետաքրքրուէր հին բաներով: Այն չէր որ պիտի կրնար գործաւորները խրախուսել: Անիկա մէկ անգամ միայն ելած էր եկեղեցիին տանիքին վրայ: Եւ ասիկա ըրած էր միայն իբրև կանխազգուշութիւն, հասկնալու համար թէ ո՞ր դրուած էին գնդացիները, նախորդ տարի, ապտամբութեան ամիսներուն ընթացքին:

Հետզհետէ ամբողջով մութը, ու աւելի կապոյտ և յստակ դարձող լոյս մը գուշակել կուտային լուսնին մօտալուստ ծագումը: Ռոշ տանիքին մէկ կողմէն միւսը գնաց: Եւ երբ կեդրոնական դրան վրայ հասաւ, կանգ առաւ: Իր դէմ ցցուած էին նոր Թարթուսի խոնարհ տուները, նախկին եպիսկոպոսական քաղաքին աւերակներուն վրայ շինուած: Աջ կողմը կ'երեւէր Տաճարականներու ամրոցին ցից զանգուածը: Յետոյ, հինգ հարիւր մէթր առդին, ծովը, հարկիւ թէ քիչ մը աւելի մթին քան երկինքը: Յետոյ, աւելի հեռուն, դէպի ձախ, աւելի մութ, Բուստ կղզին, որուն ժայռերուն վրայ ալիքներուն լաբ-

ւելը կը լսուէր, հին ամրութեանց դէմ փշրուելով: Անտիօքայէս շուրջը այգիներ էին: Ետեւի կողմը, հարկիւ թէ կը գուշակուէին քան թէ կը նշմարուէին, կաս զի բարակ քոշի մը ետին, Անտարիէ լեւները, որոնք արեւելքի կողմէն կը փակէին ամբողջ հարիզունը: Ենազայներու մլաւիւնը, ոչխարներու շփոթ մայիւնը, կիթառի քաղցր և ախուր հնչիւնները, ծովասէզի, տապկած իւղի, սմբուկի, մուշկի հոտեր, Արեւելքը որուն դէմ մարդ կ'ըմբոստանայ, զոր հասարակ ձաղրանքներով կը հեզնէ, զոր ամէն տեղ կը գատապալտեն իբրև խղճալի, զոր մարդ իր կեանքի վերջալոյսին կը յիշէ սփոստալով, արեւմտեան ազեղ քաղաքի մը սմպոմած երկինքին տակ, լաւ ծածկուած ծիծաղելի բնակարանի մը խօրը, կեդրոնական ջեռուցիչով մը, կրկնակ պատուհաններով և անհաւատարիմ հայելիներով:

Ամէն պարագայի, ասիկա պատճառ մը չէր որ կեանքին վերջ տրուէր, այսպէս, վաղանաս կերպով:

Ռոշ այս բաները կ'ըսէր գրեթէ բարձրածայն, ասիկա կամ ասոր մօտ բան մը: Այս տանիքը անշուշտ իր կարծածէն աւելի գէշ վիճակի մը մէջ էր: Կորելը էր թողուլ որ անոր վրայ այսպիսի խոշոր ճեղքեր բաց մնային:

Ասիկա գոյութիւն չունէր երբ անցեալ Դիկտեմբերին ինք մեկնած էր Թարթուսէն: Վարկերը օգտագործելու զարմանալի կերպի ֆիսանակ հին ճեղքերը փակելու, թողուլ որ նորեւրը բացուին: Այսպէս տըրտընջալով, պարտք սեպեց նայուածքով քննել խորը այն ճեղքին ուրկէ քիչ մնացած էր որ վար իյնար: Տարտամօրէն նշմարեց ատեալին սալարկները, որոնց վրայ կը շառագունէր վարի լամբարին նշողիւնը: Ծիչը իր խօրհածին պէս էր: Քսան մէթր բարձրու-

Թենէ մը անկում մը պիտի ունենար այդ տեղը: Յետոյ: Յանցանքը որո՛ւնն էր, եթէ ոչ իրեննը: Քաղէլա այդ պէս պիտի ըսէր իրեն: Թո՛ղ չերթար՝ գիշերով այսպէս պտտիլ տանիքներուն վրայ: Ամէն պտտագայի տակ, այս փոքրիկ ձախորդութիւնը ունեցած էր իր առաւելութիւնը: Պահ մը անիկա հեռացուցած էր իր ժամադրութեան անձլութիւնը:

Ժամը 7ին տասը կար: Ուշ մնայու հարց չկար այժմ:

Փորձառութենէն դաս առած, վար իջաւ աւելի ևս զգուշաւորութեամբ քան ինչ որ ունեցած էր վեր ելլելու ժամանակ: Շէնքին վորի մասը ընկղմած էր խաւարի մէջ: Հետեւեցաւ չէնքին, ինչև մեծ դուռը: Դուրսը, արագացուց քայլերը: Ապաշխարողներ դուրս կ'ելլէին եկեղեցիէն, ուրիշներ՝ կուգային: Իրապէս Հայր Անկլըպէրի գաղափարը կը յաջողէր: Իրապէս դարձեալ, շատ յուզիչ բան մը կար տեսնելով թէ այսպէս այդ ծերունիին սուրբ յամառութեամբը Թոր թողալի Տիրամայրը կը սկսէր վերապրիլ: Բայց ատիկա յուզմանց տեսակ մըն էր, որոնց հանդէպ Ռոջ յանկարծ անզգայ դարձած էր: Այլևս արթուն մարդ մը չէր, այլ մարգամեքենայ մը, քնաշրջիկ մը, որ կ'ելլէր նոր եկողներուն դէմ:

Ամբէն կարճ ճամբէն կտրելով, անիկա անցաւ եպիսկոպոսակ ևն հին քաղաքին մէջէն: Մարդիկ կը զովանային, նարտ խողալով, իրենց ծխամոյճերը ծըխելով, նստած իսլամ պղտիկ սլճարաններու առջև: Նիհար սև կատուներ կը շփուէին անոնց ոտքերուն: Մասվոճառի մը խանութին դիմաց, միտի խոշոր կարմիր շերտեր կը փայլէին: Գրեթէ անմիջապէս ետք, նեղլիկ փողոցներուն մթութիւնը սկսաւ: Քիչ յետոյ, հասաւ քառակուսի աշտարակը, որ հոս կը կազմէ

սահմանածայրը հին քաղաքին ամրութեանց, քարափին մօտ ուրկէ կ'երթան Ռուստ կողին: Այլևս տուներ չկան հիմա, այլ պարտէզներ միայն: Պատեր որոնց գագաթէն դուրս կ'ելլէին գիշերային ճիւղերու փունջեր, բուրումներով ծանրաբեռն: Քիչ մը ամէն տեղ, ճեղքելով տեգոյն խաւարը, բարակ նոճիներ վեր կը սլանային: Ժամը՝ 7ին երկու վայրկեան կայ: Հոս պատը կը թուէր բարձրանալ: Հո՛ս էր, կատարելապէս: Ադ պատը կը յանգէր ծանր և խոշոր մուտքի դրան մը, մակերեսին վրայ խոշոր գամերով: Ռոջ երկար չփառեց ուռնակը: Վեր բարձրացուց գայն, իջեցուց...

Ճիշդ այդ պահուն սոխակ մը սկսաւ երգել:

— Հարիւրապետ լաւ ճամբորդութիւն մը ըրա՞ւ: Թող հարիւրապետ միշտ քաջառողջ ըլլայ, եթէ Աստուած կ'ուզէ:

Դրան երկու թեւերէն մէկը կէս մը բացուած էր: Սեւ ձեւ մը խոնարհեցաւ Ռոջի սռջև: Բռնեց սպային ձեռքը և համբուրեց զայն:

— Թող հարիւրապետս բարեհաճի հետեւիլ ինձի:

Մարդը, ծերուկ մը, կը կրէր լամբար մը, որուն շուրջ կը դառնար արարբչի՞՞՞ ճերմակ թիթեանիկներու շուրջպար մը: Խոշոր ծաղիկներ՝ վարդագոյն, դեղին, նռնագոյն, յանկարծ լուսաւորուած լապտերէն, յետոյ կը վերադառնային խաւարին մէջ: Ծառուղին ուրկէ անցնելու վրայ էին, թէև շատ խնամով յարդարուած, կը կրէր ինքնաշարժի մը անիւներուն ձգած զոյգ ալօսները: Այս ծառուղիին ծայրը, շուրջ 30 մէթր հեռուն, կսպտորակ ելեքատրական լամբ մը կը փոխփլէր, վերնագաւթակի մը պատշգամին վրայ:

Կը գատորոշուէին այդ լոյսը, այդ պատշգամը և

այդ վերնագրերով միայն: Յետոյ, քիչ առ քիչ րտունը դէպի ուր կ'ուղղուէր սկսաւ կամաց կամաց դուրս գալ խաւարէն: Մերուկը վար դրաւ լամբարը:

— Քաթպէ', կանչեց, երկու անգամ ծափ զարնելէ ետք:

Կին մը երեցու վերնագրերովին գազաթը, պառաւ կին մը, զոնէ այնքան տարիքոտ որքան ձերունին:

— Պարոն հարիւրապետ, ի՛նչ երջանկութիւն: Եւ նոր աջահամբոյրներ:

— Թող պարոն հարիւրապետը բարեհաճի...:

Մէկ կողմ քաշուելով թոյլ տուաւ համար որ սպան ներս մտնէ, պառաւը առաւ անոր ձեռքէն իր գլխանոցը: Կը գտնուէին նրբանցքի մը մէջ, որուն ձեռքունէն հազար բիւրեղեայ երեսակներով ձեղնաջահ մը սկսաւ յանկարծ փալփիլի:

— Հրամայեցէք, հրամայեցէք, պարոն հարիւրապետ, կը կրկնէր Քաթպէ:

Յուզուէն լալով և խնդալով, պառաւը բացաւ երկրորդ դուռ մը: Նոյն ժամանակ, մտելով թեան շեշտով մը մրմնջեց անոր ականջին:

— Թող Պ. հարիւրապետը տեսնէ: Իր մեկնումէն ի վեր, ոչինչ չէ փոխուած:

Ոչինչ փոխուած ըլլալ չէր թուեր արդարեւ վերագտնելով, իբր թէ րէկ եղած ըլլար, ժէսթերը, բոլոր ժէսթերը որոնք մեքենական էին իրեն համար, Ռոշ մտաւ տան գլխաւոր սենեակը: Այս վերջինը, ինչպէս գրեթէ Սուրբոյ հարուստ տուններէն շատերը, պարսկական և թրքական գորգերու մեծ պերճութեան մը կը միացնէր եւրոպական կարասիներու փոքր թիւ մը միայն, բազմոց մը, պահարան մը, մէկ քանի շատ

գեղեցիկ Լուդուվիկոս ԺԶ թիկնաթոռներ՝ ծածկուած վենետիկեան անգին ասեղնագործութիւններով: Պատը կար մէկ նկար միայն. կնոջ դիմանկար մը հաւանաբար տանտիրուհիին դիմանկարը: Սենեակին կեդրոնը կը գրաւէր հին վառարան մը՝ կարմրերփեան դրուագումով, ուր կը հատնէին երկու երեք կնդրուկի կտորներ: Լազաւարթ բաժակ մը՝ յայտնապէս չի նական յորինուածքով, լեցուած էր չորցած վարդերով: Անոնց շափրակներուն վրայ, անփութօրէն, իբր թէ դիպուածով նետուած ըլլային հող, կը հանգչէին զոյգ մը ձեռնոցներ, սև ժանեակէ հետաքրական ձեռնոցներ՝ արծաթաթել յորինուածքով Ա. և Հ. սկզբնաւորները կրող: Ռոշ սարսուաց, տեսնելով զանոնք: Կարծես անոնք պաշտօն ունէին ըսելու իրեն. «Պէտք չէ շատ նեղանաք իրեն դէմ, որ ինքն իսկ չընդունիր զձեզ: Պաշտօն ունինք զինքը փոխարինելու»: Անվիճելիօրէն, դիպուածով չէ որ հոն էին անոնք, ուէ ուրիշ տեղէ աւելի ականբախ: Ուրե՞մն: Ուրե՞մն կարելի՞ է, Աստուած իմ, որ անցեալը վերծնի: Կրնա՞ր ըլլալ որ ոչինչ փոխուած չըլլար:

— Իսկ տիրուհի՞դ: Ո՞ւր է ան:

Պառաւ Քաթպէ խոնարհութիւն մը ըրաւ:

— Շատ պիտի չուշանայ: Խնդրեց ինձմէ չքմեղացնել զինքը Պ. Հարիւրապետին մօտ, եթէ Պ. Հարիւրապետը ժամանէր իր վերադարձէն առաջ: Խոստովանարան է:

— Խոստովանարան:

— Այո՞, Հայր Անկլըպէր, որ եկաւ տեսնելու զայն այս կէսօրէն ետք, խնդրեց իրմէ որ երթայ: Տիկինը կ'ուզէր երթալ վաղը միայն: Հայր Անկլըպէր աղաչեց որ երթայ առաջին երեկոյին իսկ, ուրիշներուն օրինակ հանդիսանալու համար, այնպէս չէ՞:

Պ. Հարիւրապետը կը հասկնամ:

— Կը հասկնամ:

Իրականութիւնն այն էր որ, շատ կը զարմանար: Ուրեմն հո՛ն էր ան, այն խոնարհ ստուերներուն մէջ, որոնց քովէն անցած էր քիչ առաջ: Չէր իսկ գուշակած ինք: Աւելի լաւ չէ՞ր այդպէս: Ի՞նչ պիտի ընէր նման տեղ մը: Պիտի մօտենա՞ր անոր: Պիտի խօսէ՞ր անոր հետ: Նախընտրելի էր հոս ըլլալ և սպասել անոր: Եւ իրենց մէկտեղուելը տեսնող առաջին վայրը թո՛ղ ըլլար հոն ուր այնքան սիրած էին զիրար:

Քաթպէ, սակայն, կը շարունակէր շուայլել իր ծառայութիւնները:

— Պ. Հարիւրապետը բանի մը պէտք ունի: Եթէ

Պ. Հարիւրապետը թոյլատրէ ինծի, պիտի թողու՞մ զինքը՝ երթալ տիկնոջ սպասելու համար: Կ'ուզե՞մ առաջինը ըլլալ իր ուրախութեանը հանդիսատես եղող՝ երբ ծանուցանեմ իրեն թէ Պ. Հարիւրապետը եկած է: Այս առաւօտ, ես էի որ ուզեցի հեռաձայնական հաղորդակցութիւնը Անտիոքի հետ: Երջանկութեանէս ականջներուս չէի հաւատար, երբ տիկինը այդ հրամանը ըրաւ ինծի: Եթէ Պ. Հարիւրապետը գիտնար թէ ի՞նչ էր անձկութիւնս այն մտածման հանդէպ թէ կրնար հոն չըլլալ Պ. Հարիւրապետը: Ժամը 10 ըլլալու էր: Պ. Հարիւրապետը շուտով եկած է:

Իրաւ էր, ժամը 10, շատ շատ 10, 15 ըլլալու էր երբ հեռախօսին զսեգակը հսչած էր: Առաջին անգամն ըլլալով, չորս ամիսէ ի վեր: Ժամ մը ետք, հարիւրապետը ջնջած իր բոլոր ժամադրութիւնները՝ կանգ կ'առնէր Սէն-Վլենտանի մայրապետներուն վանքին առջև: Ըսելիք չկար, հայր Ասկըլպէր քիչ մը իր արժէքէն աւելի հաշուած էր իր երէկուան հիւրընկալին հաճոյակատարութիւնը, երեւակայելով թէ Անտիոքը

Թարթուսէն բաժնող երկու հարիւր քիլոմէթր ճամբան կտրած էր, միմիայն իրեն ընկերանալու հաճոյքը ունենալու համար...

Հաճիլար փաշայի վիլլան, երեք կողմերէն պարտէզներով շրջապատուած, չորրորդ կողմէն եզերուած էր ծովէն, որուն կը տիրապետէր: Մեծ սրահը, ուր առաջնորդուած էր Ռօշ, կը բացուէր ընդարձակ պատըշգամի մը վրայ: Այդ պատըշգամէն, կը տեսնուէր հրաշագեղ տեսարանը Ռուստ կղզիին, Թորթոզայի ամրութիւններուն, Միջերկրականին: Անմիջապէս որ Քաթպէ առանձին թողուց զայն, հարիւրապետը եկաւ հակիլ հոն, այդ պատըշգամը որ աւելի քան մէկ տարի եղած էր իր սովորական տեղը: Ծովուն ջուերը ստափի այնպիսի տեղումութիւն մը ունէին, որ կարծես Ծիրկաթինը ամբողջապէս սուղուած էր անոնց մէջ: Այնքան պայծառ էր գիշերը, որ կարելի էր զանազանե՛լ առագաստները կղզիին ձկնորսական մակոյկներուն, որոնք մէկիկ մէկիկ կը վերադառնային իրենց նաւակայքը, դանդաղօրէն:

Կառուցուած Լիբանանի հարուստ տուններուն պէս, այս տունը ունէր կամարանկիւն դռուներու պատուհաններ՝ հանգչող մարմարեայ և ալապաստրեայ պզտիկ սիւներու վրայ: Զանազան յարկաբաժինները կը նայէին կեդրոնական սրահին վրայ: Նոյնիսկ ամառուան մէջտեղները, ընաւ շատ տաք չէր ընել հոն, ծովային զեփեռին շնորհիւ: Բաւական հին տուն մըն էր. կառուցուած շատ ամուր կերպով: Առաջին տուներէն մէկն էր զոր իր վերջին սեփականատէրը գնած էր և պատշաճեցուցած իր ճաշակին: Այն ժամանակ, ինչեալը ոչ փաշա էր և ոչ իսկ պէյ, այլ պարզապէս

Հաճիրար էֆէնտի, արեւելքցի (լրվանքին) համեստ պաշտօնեայ, կապուած կայսերական զանձուն: Ասիկա կը պատահէր Կ. Պոլիս, Երլազդի պալատին մէջ, անցեալ դարուն վերջերը: Ապտիւլ Հախտի շընորհը այլեւս պիտի չուշանար իր ստուերէն դուրս հանել այդ պզտիկ տկարակազմ մարդը, որ մինչեւ այդ ժամանակ թուած էր յառաջանալ ոտքերուն ծայրերուն վրայ միայն, զգուշութեամբ: Արդէն իսկ, պալատին աստիճանաւորները՝ ճարպիկ զգալու համար անձանօթ պաշտօնատարին մէջ վաղուան ամենազօր մրցակիցը, կը սկսէին ենթադրութիւններ ընել Սուլթանին անձնական հարստութեան վաղուան վարիչին բո՛ւն անցեալին վրայ: Ուրկէ՞ կուգար ան, Ալպանիոյ Շոթորայէն, Կ'ըսէին ոմանք, Տիարպէքիրէն, կը պնդէին ուրիշներ, հասկցող ժպիտով մը սպրդեցընելով թէ Հաճիրարը անկասկած ատենօք կը գրուէր Հաճիրեան: Այդ ենթադրութիւնը սակայն բոլորովին ձրի կը թուէր, վասնզի Հայերը սովոր չեն, երբ նոյն իսկ իրենց շահը խնդրոյ առարկայ է, ուրանալու իրենց ծագումը, որմով հպարտանալու համար գրեթէ միաձայն են: Ասոր հակառակ, հաւանական էր որ Հաճիրար փաշայի մանկամարդ կինը կամ իր պզտիկ անունը պատկանի այդ ազգութեան: Բայց հոս ալ, դրսկան ոչինչ կարելի էր ընել: Կնոջմէն 40 տարիով մեծ, Հաճիրար փաշա ամուսնացած էր անոր հետ ղէպի 1908, համիտեան ուէթիմին կործանումէն քիչ ժամանակ առաջ: Թուրքիոյ նոր տէրերուն ծառայելու քանի մը ձախող փորձերէն ետք, եկած էր բնակիլ Թարթուսի իր տունը: Անկէ ի վեր, նոյն իսկ ընդհ. պատերազմի չորս տարիներուն ընթացքին, ան չէր մեկնած երկրէն, ուր տիկ. Հաճիրար փաշա շատ բարիք ըրած էր միշտ: Ինչպէս տեսնուեցաւ, անիկա

կաթոլիկ էր: Գալով իր ամուսնոյն, որ նախորդ տարի վերջ ի վերջոյ թաղուած էր համաձայն յոյն օր թոտքս ծեսին, առանց որ յայտնի ըլլայ թէ ինչու, անիկա մարդ մըն էր որ կրնար ունեցած ըլլալ, ըստ պարագայի, գրեթէ բոլոր կրօնքները:

Իր հարստութիւնը խոշոր էր: Տասը ամիսէ ի վեր որ մեռած էր՝ 74 տարեկան յարգելի հասակին մէջ, ստոյգ չէր բոլորովին թէ՛ իր կինը կրցած էր պատրաստել վերջնական ցուցակագրութիւնը հանգուցեալին իրեն թողուցածսերուն: Տարիքին հետ հիւանդագին կերպով սճած կասկածանք մը, մղած էր զինքը, անմիջապէս որ սկսած էր հարստանալ, ծածկել իր հարստութիւնը: Կ. Պոլսոյ, Փիքր Ասիոյ, Սուրիոյ իր ստացուածքները կը ներկայացնէին մէկ փոքր մասը միայն իր շահիլ կրցածին՝ Սուլթանին անձնական խորհրդականի դերին մէջ: Ապտիւլ Համիտ ինքն իսկ մեծամուրութիւնը ունէր ծածկելու իր անձնական անհուն հարստութիւնները: Հաճիրար փաշա՝ իր դրամի գիտութեամբը, օւնէ մէկէն աւելին ըրած էր զօրացնելու համար իր տիրոջ այդ կիրքը: Գէշ օրերը երբ եկան՝ ցվերջ հաւատարմ մնաց Սուլթանին: Կարելի չէ այո՛ ըսել բացարձակ կերպով: Իրեն համար, այնպէս չէ՞, խնդիրը կը կայանար իր նաւը առաջ քշելու մէջ:

1908ին և 1909ին, երբ իթթիհատ վէ թէրաքի Միութիւնը գրաւեց իշխանութիւնը և Սուլանիկ աջսորեց Սուլթան Ապտիւլ Համիտը, կայսերական գանձուն նախկին վարիչը ի՞նչ ըրած էր ինք իսկ չկործանելու համար զէպքերէն: Ի՞նչ ծառայութիւն մատուցած էր նոր կառավարողներուն, իր հարստութեանց վերահաս բանագրումս առաջըը առնելու համար: Այդ մասին շրջան ըրած զրոյցները՝ աւելի

պատիւ կը բերէին իր ճարպիկութեան քան թէ իր հաւատարմութեանը: Ապտիւլ Համիտի գոհարեղէններուն հիանալի հաւաքածոն պահուած էր Երլազի մէկ գաղտնի սենեակին մէջ, որուն մեքենականութիւնը միակ գիտցողն էր Հաճիլար փաշա: Այդ մեքենականութիւնը երկար ժամանակ անձանօթ չմնաց: Անկեալ վեհապետին հարստութեան մեծ մասը զետեղուած էր օտար պանքաներու մէջ: Անոնց վրայ ձեռք դնել կարե նալու համար պէտք էր համոզելով մղել Ապտիւլ Համիտը գումարները կեզրոնացնել այդ դրամատանց Սելանիկի Մ. ճիւղերուն մէջ: Համաձայն լուսափակ առձեռն, Հաճիլար փաշան եղաւ որ ստանձնեց այդ բաւական պէգալի գործը: Եթէ յուսացած էր այդ կերպով փոթորիկը հեռացնել իր իսկ գլուխէն, այդ այնքան նրբամիտ մարդը գործած էր իր կեանքին մեծագոյն սխալը: Իր նախկին տիրոջ հարստութեան խնդիրը անգամ մը որ հաշուեյարդարի ենթարկուած էր, կարգը իրեն եկաւ ցնծալու: Իր բոլոր ստացուածքները ծախուեցան յօգուտ Պետութեան: Իրեն ձգեցին իր Սուրիայ տունը միայն, որ իր բազմաթիւ տուներուն ամէնէն նուազ փարթամն էր, ամէնէն հեռաւորը: 1909ին իսկ, հրաման ստացաւ հոն քաշուելու: Գալով իր շարժուն հարստութեան, առիկա տարբեր էր: Շատ նրբամիտ էր այն որ կրնար ըսել անոնց կարեւորութիւնը և կամ թէ անոնց Եւրոպայի կամ այլ տեղերու ո՛ր պանքաներուն մէջ հանգչիլը:

Ե՛րբ Ռօշ դարձած էր Արմէն (ուհի) Հաճիլարի տարփաւորը: Անոր ամուսնոյն մահէն 7 կամ 8 ամիս առաջ, հաւանօրէն: Սպան, Թարթուս ժամանած 1921

Յունիսին, բաւական ժամանակ մնացած էր առանց զանոնք ճանչնալու: Բաւականին կնճռոտ հողային կալուածատուրքի խնդրոյ մը մէջ, ուր միջամտած էր ի նպաստ Հաճիլարի, որ իր իրաւունքին մէջ էր, իրեն արժամ էր այս վերջնոյս մէկ շնորհակալութեան այցելութիւնը: Կրնար այդ ժամանակ, խնդրել արտօնութիւնը գալ այդ քաղաքավարական այցելութիւնը փոխարձակելու իր կնոջ մօտ: Նոյնիսկ այդ մտածումը չէր ունեւած սակայն: Էլիտա Հաճիլար ունէր շատ նախանձոտ ըլլալու համբաւը: Ըստանիքը, Թարթուսի մէջ ոչ ոքի հետ կը տեսակցէր: «Արջե՛ր» ըսած էր իրեն իր նախորդը անոնց ակնարկելով, երբ իր պաշտօնը փոխանցած էր Ռօշի: Ան չէր ճշտած սակայն թէ անոնց մօտ ընդունուելու համար իր ըրած երկու-երեք փորձերը յաջողութեամբ չէին պսակուած: Պատահինը՝ դժնեայ կծծի մը, աւելցուցած էր: Գալով կնոջ, գեղեցիկ ինչպէս որ է, քս՛ծը, ոչ ոք պիտի չխլէ ինձմէ այն գաղտնիքը, հսկառակ իր Ս. Նիթուշի երեւոյթին, թէ յարդի տակէն գործ կը տեսնէր»:

Տարօրինակ կապ մը եղաւ իրենցը՝ բուն և յեղակարծ՝ ինչպէս փոթորիկ մը: Երկուքն ալ սպան և տիկ. Հաճիլար, նոյն տարիքով, սենէին բաւականին զէչ նկարագիր մը: Ի՞նչ որ գեռ բնաւ չէր սիրած այդքան խանդով կը տառապէր զգալով խորհրդաւորութիւն մը կնոջ մօտ: Եթէ շատ յաճառէր գոյն հարցաքննելու, տիկինը կը յիշեցնէր իրեն թէ ի՛նչ յանձնառութիւններ ստանձնած էր սպան, երբ ինք յանձնուած էր անոր: Ի՞նչքը կը խտտանար այդ պատահարուն: Ան կուտար այն սպաւորութիւնը թէ կարող է ամէն բանի: Ի՛նչ քաղցրութեամբ, ասոր հակառակ, երբ ամէն քիչ կը սպասուէր ատոր, Արմէնի կը պատահէր

դիտել զինքը, զննել ձեռքերը իր ճակատին վրայ: Ուրիշ անգամներ, առանց պատճառը գուշակելու, արցունք կը տեսնէր անոր սաքերուն մէջ: Սպան ամենէն աւելի չարչարողը այդ արցունքներն էին, որոնք կուգային չես դիտեր ուրկէ՞:

Արմէն կը սիրէ՞ր զինքը: Ո՞վ պիտի կարենար ըսել: Ինք, սպան, ամէն պարագայի տակ, խենթ էր անով: Վերջացուցած ըլլալով Մ. Արեւելքի մէջ իր բնակութեան 18 ամիսները՝ երբ ծանօթացաւ Տիկ. Հաճիլարի, պէտք ունկցաւ իր պետերուն հանդէպ ունենալ հնարամտութեան գանձեր՝ արձակուրդով չմեկնելու իր բուն պատճառները ծածկելու համար: Երբ Հաճիլար փոշա մեռաւ, խորհեցաւ թէ վերջսպէս պիտի կարենայ գործադրել այն ծրագիրը՝ զոր միասին փայտայած էին քանիցս — ուղեւորութիւն մը այն Ֆրանսային մէջ զոր Տիկ. Հաճիլար դեռ չէր տեսած բնաւ: Բայց նախ ստիպուած էր իր ամուսնոյն ձգած ժառանգութեան փորձանալու գործը կարգադրել: Ռոյ խոնարհիլ միայն կրնար նման նկատումի մը առջև: Ա՛հ, ահաւասիկ, յետոյ . . . Երկար ժամանակ տարակոյսի մէջ չթողուց զինքը: Երբ իր մէ դուրս ուրիշներ խնդրոյ առարկայ էին, ճշմարտութիւնը ծածկել կրցող կին չէր:

Զիով պտոյտ մըն էր որ միացուցած էր զսնունք: Զիով պտոյտ մը եղաւ դարձեալ իրենց բախանման պատճառը — պատճառը, աւելի ճիշդը՝ առի՛թը, վստիկ կը թուի թէ այն օրն ուր իրար ճանչցած էին, իրենց ախար սիրոյն կործանուածը գրուած էր աստղերուն մէջ: Թարթուսէն շուրջ 15 քիլոմէթր հեռուն Անսարէ լեռներուն ճամբուն վրայ, ամայի դաշտերու ծոցին մէջ, կը կանգնին աւերակները Ֆրանք վաղեմի դղեակի մը՝ Գալաթի Եհնմուր անունով, Սաչաթ

կիրներու կարծիր դղեակը: Ռոյ՝ անգործ օրուան կէսը, յաճախ իրիկուան դէմ կ'երթար այդ կողմերը պտտելու: Օր մը հոն հանդիպեցաւ զամբիգի մը, որ կը կրէր կնոջ թամբի մը: Նախ կարծեց թէ արկած մը պատահած էր, բայց շուտով Տիկ. Հաճիլար երեւցաւ: Իր ձին վախցած էր, երբ ինք վար իջած էր, թամբին կապերը ամրացնելու համար: Ռոյ օգնեց անոր, զամբիկը բռնելու համար: Այդ էր բոլորը: Ահա՛ թէ ինչպէս սկսած էր իրենց լուռ արկածը: Մէկ ու կէս տարի առաջ էր, մէկ ու կէս տարի, որուն առաջին վեց ամիսները լեցուած էին, լափլիզու՛մ, մաայլ և հրայրեաց խանդով մը: Յետոյ, ինչ որ տեղի պիտի ունենար, պատահեցաւ: Ռոյ՝ միշտ այնքան կասկածոտ, միշտ այնքան արթուն, սկիզբը բան չէր նշմարած: Աւելի ճիշդն ըսելու համար, ուրիշ շարժառիթներու կը վերագրէր փոփոխութիւնը զոր հետըզհետէ հարկադրուած էր դիտել երիտասարդ կնոջ կեցւածքին մէջ՝ իրեն հանդէպ: Հետզհետէ նուազ յաճախ կը յաջողէր հանդիպիլ անոր և հողուադիպօրէն՝ առանձին: Օր մը հարկադրուեցաւ հասկնալ վերջսպէս: Այն բանին մէջ ուր Ռոյ յամառօղէն ուզած էր տեսնել քմահաճօյք մը, այլեւս կարելիութիւն չկար, դժբախտաբար, տեսնելու ուրիշ բան բացի կանխամտածուած վկայութենէն: Արմէնի անթեքելի ուղղամտութեան, հանդէպ ինքզինքին, հանդէպ իրեն՝ Ռոյի, և հանդէպ ուրիշի մը մանաւանդ:

Այդ ուրիշը կը կոչուէր Մէնէթրիէ, Հանրի Մէնէթրիէ: Հալչպի սպանիներու զօրագունդին մէջ տեղակալ՝ ան երեք տարիով փոքր էր Ռոյէն: Գեղեցիկ էր ան, խարտեաչ էր:

Միասին մասնակցած էին, 1920ին, Այնթապի դժուարին ճակատամարտներուն և ուրիշ նման կռիւնե-

րու: Յետոյ, իրար տեսած էին շատ հազուադիպօրէն՝ ըստ իրենց: Ռօշ շատ անգամ հրաւիրած էր իր ընկերը Թարթուս հանդիպելու, եթէ այդ կողմերէն անցնէր: Հանրի կրցաւ այցելել իրեն ի Թարթուս՝ 1922ի աշնան: Մէնէթրիէ կը վերադառնար արձակուրդէ: Կէս օրէն ետք մը կանգ առաւ հարիւրապետին տունը, առանց կանխաւ իմաց տուած ըլլալու:

— Այսուհանդերձ, կրնայի՞ր իմացնել ինծի կանխաւ, ըսաւ Ռօշ, անգամ մը որ ողջագուրումները վերջացած էին:

— Ի՞նչ կայ, կը խանգարե՞մ քեզ:

— Ո՛չ, բայց խոստացած եմ մէկուն, այս քաղաքէն տիկնոջ մը՝ ձի նստիլ իրեն հետ: Պա՛հ, պիտի յետաձգեմ այդ պտոյտը:

— Ինչո՞ւ: Եթէ ինծի փոխ տալիք ձի մը ունիս, կրնամ ընկերանալ ձեզի: Դեռ ձի նստելու անկարող չեմ, գիտե՛ս:

Օգտուելով երկու առիթներէ՝ երկուքն ալ նոյնքան խոստովանելի՝ Մէնէթրիէ վերադարձած էր Թարթուս: Հոն կը գտնուէր Հաճիլար փաշայի մահուան ժամանակ: Նոյնիսկ 48 ժամով յետաձգած էր իր մեկ նուժը, յուզարկաւորութեան ներկայ գտնուելու համար: Որովհետեւ Պէյրութ կ'երթար, հաճոյակատարութիւնն ունեցած էր յանձնառութիւն մը ստանձնելու Հաճիլարներու գործակատարին մօտ, որ հոն կը բնակէր:

Ապա, իրերը անցած էին ինչպէս սովորութիւն է մարդոց միջև որոնք չեն վախնար դէմ առ դէմ դիտելու զանոնք: Նոյնիսկ Ռօշի չէր մնացած միջոցը մեղադրելու զայն որ եղած էր իր բարեկամը: Իսք և Տիկ. Հաճիլար այնպիսի վայելուչ ընթացք մը ունէին Մէնէթրիէի ներկայութեան, որ այս վերջինը սկիզբները

զէթ, չէր հասկցած բնոյթը զիրենք միացնող կապերուն: Իր իսկ՝ Մէնէթրիէի ընթացքը անբասիր եղաւ ցվերջ: Ոչ մէկ ջոնք խնայեց, հարիւրապետին հետ բացատրութիւն մը ունենալու համար: Բայց բսխեցաւ այս վերջնոյս այդ բացատրութիւնը տալ չուզելու անայլալ որոշումին: Մէնէթրիէ մէկ վերջին տեսակցութեան մը խնդրանքին՝ չէր իսկ պատասխանած Ռօշ:

— Լաւագոյն է որ իրարու չհանդիպինք հիմա, ըսաւ Արմէնի: Այլ պաշտօնավայր մը տեղափոխուելու խնդրանքս ըրած եմ: Թո՛ղ Թարթուս գալէ ետ կենայ, որքան ժամանակ որ դեռ հոս եմ ես: Այս շնորհը կըրնաք ընել ինծի:

Շաբաթ մը ետք, Ռօշ կ'երթար Անտիոք: Վեց ամիսէ ի վեր որ հոն էր: Այլեւս որեւէ լուր չուներ Թարթուսէն: Ոչ մէկ նամակ, ոչ մէկ հեռաձայնական խօսակցութիւն: Եւ ա՛հ յանկաւոր՝, անակնկալօրէն, այս առաւօտ...:

Ժամը 7,10: Ինչո՞ւ այս յապաղումը: Ի՞նչ ըսելիք ունէր իրեն Արմէն, զինքը մինչև հոս բերել տալու համար: Ո՛հ, անտարակոյս, Մէնէթրիէի հետ ամէն ինչ վերջացած էր: Առանց առար, սյնպէս չէ՞, Արմէն պիտի չուեննար անգուց յանդգնութիւնը...: Աստուած իմ, աղմո՛ւկ պարտզէին մէջ, ձայներ, քայլեր:

— Արմէն, ի՞նչ կայ:

Ռօշ չէր կրցած, նշմարելով երիտասարդ կիներ — անոր իրեն ընծայած տեսարանը այնքան եղերական էր — զսպել այս աղաղակը:

Եթէ Ռօշ յուսացած էր բուժուած ըլլալ իր սէրէն, մէկ րոպէի մէջ հասկցաւ թէ սխալած էր: Իր ձայնը խեղդուեցաւ: Հազիւ թէ կրցաւ ըսել:

— Ի՞նչ կայ, բայց ի՞նչ կայ:

Արմէն կը մնար օտքի վրայ, կռթնած դրան զօր

փակած էր անմիջապէս: Աչքերը մեծաբաց՝ սպան կը դիտէր ան շուարուժի արտայայտութեամբ մը, որ սար սափով կը լեցնէր երիտասարդը: Չգիտնալով ի՞նչ ընելը՝ Ռոջ քալեց անոր կողմը, բռնեց անոր թեւէն և առաջնորդեց զայն դէպի բազմոց մը, ուր մանկամարդ կինը ձգեց ինքզինքը:

— Ի՞նչ պատահեցաւ, խօսեցէք, կ'աղաչեմ

Արմէն սկսաւ հեկեկալ:

Արցունք չէր թափէր, ինչ որ աւելի՛ ահաւոր էր: Ամբողջովին կը ցնցուէր կոկորդի պրկուճներով: Եւ յանկարծ, ան գրկեց սպան իր թեւերուն մէջ և սկսաւ համբուրել զայն խելայեղօրէն:

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ որ եկար: Գ.՝ եմ: Դուն բարի ես:

— Ի՞նչ կայ, կը վախցնէք զիս... կը վախցնես զիս, մրմնջեց Ռոջ զայն հրելով գրեթէ՝ ինքն ալ նըւաղելու վրայ:

Կինը դարձեալ սեղմուեցաւ իր կուրծքին:

— Ազատէ զիս: Պէ՛տք է ազատես, կը հասկնամ, պէ՛տք է: Ըրէ ամէն կարելիդ, եթէ չյաջողիս՝ կոր տուած եմ:

— Կորուսած. ի՞նչու համար, որո՞ւ պատճառաւ:

— Կորուսած... Հրէշայի՛ն բան մը: Բարին Աստուած պէտք չէր թոյլատրեր նման բաներ: Ի՞նչպէս բացատրել քեզի անմիջապէս, քանի մը բռնորով: Կորուսած. այսինքն իր և իմ միջեւ, ամէն բան պիտի վերջանայ. այլեւս երբեք, երբե՛ք պիտի չտեսնեմ զինքը:

— Ո՞վ:

Արմէն դիտեց իր խօսակիցը տեսակ մը ապշութեամբ:

— Ի՞նչպէս թէ՛ ո՞վ, բայց Ժա՛նը, ուրիշ ո՞վ

կ'ուզես որ ըլլայ:

— Ո՞ր Ժա՛նը, ըսաւ ետ քաշուելով, Մէնէթ-րի՞էն:

— Անշուշտ ինքը. ուրիշ ո՞վ կ'ուզես որ ըլլայ, կը հարցնեմ անգամ մը եւս:

— Ուրեմն միշտ կը սիրե՞ս զոյն, մրմնջեց սպան, փոխուած ձայնով մը:

Տանտիրուհին շտկուած էր բազմոցին վրայ:

— Ինչե՞ր կ'ըսես. թէ կը սիրե՞մ զինքը տակաւին: Ահա քեզի հարցում: Լաւ գիտես թէ զինքը միայն սիրած եմ կեանքիս մէջ, զինքը միայն պիտի սիրեմ:

Յանկարծ կանգ առաւ, հասկնալով թէ ի՞նչ ըսած էր: Իր նայուածքին մէջ կար պաղատանք և անձկութիւն:

— Ներողութի՛ւն, մրմնջեց ցած ձայնով:

— Ատոր մէջ գէշ բան մը չկայ, ըսաւ սպան պարզ կերպով:

Եւ աւելցուց լուռթննէ մը ետք.

— Չեմ կարծեր թէ Անտիօքէն հոս բերել տուիք զիս, ատիկա իմացնելու համար ինձի պարզապէս:

— Ներէ՛ ինձի, ազատէ զիս:

Ռոջ անմիջապէս շարժաւ սխալեց:

Ոտքի ելած էր և կը շրջադաշտէր սենն սկին մէջ: Գնաց նոյնիսկ հակել պատշգամին բազրիքին վրայ, կռնակը դարձուցած, և այդպէս մնաց քանի մը վայր կեան: Թերեւս չէր ուզեր որ Արմէն տեսնէ իր աչքերը, այդ պահուէն: Որքան որ կ'ուզես այր մարդ եղի. ինչ ալ ըլլայ դժնդակ բան է հանդիսատես ըլլալը՝ առգգայ վկայ՝ կեանքիդ ամենէն գեղեցիկ յոյսին կործանումին: Աւելի՛ յոռին. ատիկա ժխտումն էր սիրոյ մը զօր փոխադարձ կարծած էր:

Երբ վերադարձաւ կնոջ մտ, Ռոյ կհանդարտ կ'երեւէր:

— Ներն՛ լ քեզի, ըսաւ Ատիկա բան մըն է որուն միա՛կ դատաւորը ես եմ և որ, բաց աստի, այս վայրկեանիս, արուած ըլլալով այն վիճակը որուն մէջ կը տեսնեմ քեզ, քեզի համար երկրորդական կարեւորութիւն մը ունենալու է: Ազատե՛լ քեզ, կ'ըսես: Ատիկա ուրիշ հարց է: Այո՛, եթէ կրնամ: Ատոր համար ալ պէտք է գիտնամ թէ, կը կրկնեմ, ի՞նչ բանէ:

Արմէն պիտի խօսէր: Ռոյ կեցուց զայն:

— Մէկ վայրկեան, եթէ կը հաճիս: Տեղեկացնել ատաջ ինծի թէ ինչի՞ մասին է հարցը. կայ բան մը զոր կ'ուզեմ որ բացատրես ինծի:

Մատնանիշ ըրաւ սեւ ժանեակէ ձեռնոցները ծաղկամանին մէջ:

— Ի՞նչ կ'ընեն ատոնք հող, ըսաւ: Կը խոստովանիմ թէ լաւ չեմ հասկնար: Որոշած ըլլալով խօսիլ ինծի ինչպէս խօսեցար, կը գտնե՞ս թէ հող է անոնց տեղը: Երբ հոս մտայ, ուզեցիր որ անոնք ըլլան իմ նայուածքիս հանդիպող առաջին առարկաները: Թերեւս, այդ պայմաններուն տակ, բաւական քիչ պատճառ ունէիր սպասելու որ... կը լռե՞ս: Չեմ ծանրանար այս խնդրոյն վրայ: Չարմանալի՛ կերպ ամէն պարագայի տակ, թոյլ տուր որ ըսեմ, իմ ազակցութիւնս ապահովելու՝ եթէ արդարեւ պէտք ունիս ինծի:

Հիւանդ, կինը կը շարունակէր չպատասխանել: Սպան ամչցաւ հարցումներ ընելուն անոր, զայն տառապեցնելուն համար այդպէս: Բաւական տառապանք ունէր արդէն, այնպէս չէ՞: Ի՞նչ կարեւորութիւն ունէր վերջ ի վերջոյ: Ի՞նչ պէտք ունէր փնտռելու շարժա-

տիթը որ մզած էր երիտասարդ կինը այդպէս շարժելու: Պէտք չէ՞ որ յիշէր թէ կին մը, ըլլայ իսկ լաւագոյնը, կրնայ այլեւս չսիրել մարդ մը: Դժուարաւ պիտի անցնէ առիթ մը չափելու իշխանութիւնը զոր կրցած է պահել այդ մարդուն վրայ:

Սպան համակերպած ուսի ցնցում մը ունեցաւ:

— Օ՛ն, պէտք է խօսիլ: Խօսէ որ գիտնամ...:

Արմէն փնտռած էր ձեռքի պայուսակին մէջ: Առաւ հոնկէ պահարան մը զոր իրեն երկարեց:

— Ա՛ռ, ըսաւ, յուսահատ յոգնածութեամբ մը:

Աւելի պարզ պիտի ըլլայ: Կարդա՛:

Պահարանը կը կրէր Հալէպի նամակատան կնիքը և Մարտ 28 ամսաթիւը: Ռոյ անկէ դուրս հոնեց այցաքարտ մը: Հազիւ թէ ակնարկ մը նետած էր վրան, զարմացումի բացազանչութիւն մը արձակեց:

— Եուրի Պիշարա՛: Չարմանալի՛:

Խեղդուած բացազանչութիւն մը պատասխանեց իրեն:

Արմէն շտկուած էր դալկահար, աւելի՛ դալկահար՝ քան ներս մտած ժամանակը:

— Ի՞նչ, ի՞նչ կ'ըսես, կը ճանչնա՞ս զայն:

— Ոչ երկար ժամանակէ ի վեր, ըսաւ սպան, զարմացումէ զարմացում անցնելով: Իսկ դո՞ն, ի՞նչ կը նշանակէ այս այցաքարտը: Ինչո՞ւ համար կը գրէ քեզի:

Ռոյ կարծեց թէ կինը պիտի խեղդուէր: Թաշկի՛նակը կը տանէր իր բերնին: Միայն կը կրկնէր:

— Եուրի Պիշարա՛: Կը ճանչնա՞ս զայն: Ի՞նչպէս կը ճանչնաս:

— Այսօր իսկ հանդիպեցանք իրեն, հայր Անկլըպէր և ես, ըսաւ, միանգամայն յափրացած և ճշնչուած: Ահա՛ թէ ի՞նչ պարագաներու տակ: Կը տես-

նէք թէ այս ամէնը որքան բնական է, և ամէն պարագայի տակ չարդարանար...

Քանի մը բառով, ամփոփեց յետ միջօրէի դէպքերը:

— Անգամ մը եւս կը կրկնեմ, եզրակացուց, այս ամբողջ պատմութեան մէջ չկայ բան մը որ քեզ այդպէս վիճակի մը կարենայ մատնել: Օս, տեսնենք, կ'աղայեմ, ջանա՛ք թիչ մը ինքզինքիդ իշխել: Բաւ կարգիդ փորձէ...: Ի՞նչ, ի՞նչ կ'ըսեն:

Արմէն սարսափէն իր թաշկինակը խածատելու վրայ էր:

— Լաթաքիա՛, կը մըմնջէր: Փամը Յին Լաթաքիա թողուցիք զինքը: Ուրեմն, այժմ թարթուս ըլլալու է ա՛ն ևս: Միշտ, միշտ, խօսքը յարգած է: Կը տեսնես թէ կորսուած եմ: Հո՛ս, Աստուած իմ: Դո՛ւն է որ բերած ես զայն:

— Պիտի հաւանի՞ս բացատրել ինձի, աղաղակեց հարիւրապետը, լեցուած անձկութեամբ մը, որուն անդահանքի մը փոխակերպուիլը կը զգար:

Կինը նշան ըրաւ թէ անկարելի էր իրեն համար, թէ առ այժմ չէր կրնար խօսիլ:

— Կարդա՛, ըսաւ, ցոյց տալով քարտը, կարդա, և երբ կարդացած ըլլաս, պիտի գիտնաս...

Ռոչ հնազանդեցաւ: Ոչի՛նչ կար աւելի հասարակ քան այդ քանի մը բառերը: Ի՞նչ ծածուկ իմաստ կրնային ունենալ անոնք, որպէսզի կինը այսպէս սարսափէր:

- Կը խոստովանիմ թէ շատ լաւ չեմ հասկնար:
- Բարձրաձայն կարդա:
- Լաւ, կարդա՛նք ուրեմն:

«Յուրի Պիշարա իր յարգանքները կը մատուցանէ Տիկ, էլիսա Հաճիլար փաշայի: Յարգալից

յարգալից կերպով մը տեղեկացնէ տիկնոջ թէ Պ. տեղակալ Մէնէթրիէ Թարթուս պիտի գտնուի Ապրիլ մէկին, Զատկի կիրակին: Ինքն ալ հոն պիտի երթայ տեղակալին հետ խօսակցելու համար խնդրոյ մը մասին, այն պարագային ուր այդ մասին նախապէս ոչ մէկ համաձայնութիւն գոյացած ըլլայ...»: Ահաւասի՛կ: Այս է բոլորը:

Ապան կինը կը դիտէր այնպիսի աչքերով, որոնք կ'ապացուցունէին թէ հետզհետէ նուազ կը հասկնար:

— Ի՞նչ կապ կրնայ գոյութիւն ունենալ Յուրի Պիշարայի և երիտասարդ պարոնին միջև զոր կը ճանչնաս: Ի՞նչ բանի մասին անոր հետ խօսակցելու միտք ունի:

Գէշ ժպիտ մը ունեցաւ: Կինը չարչարելու պէտքը կը վերածնէր իր մէջ:

— Հասկցա՛յ՛ր: Զեր մօտուլուտ ամուսնութիւնը: Կը թուի թէ արդէն իսկ ծանուցուած է ամէնուրեք: Երբեքէք որ դեռ չեմ շնորհաւորած քեզ:

Իր հեզութիւնը պարապ տեղը կատարած եղաւ: Կինը կ'ընդհիջէր զինքը ցաւագին աղաղակով մը:

— Ա՛հ, լաւ կը տեսնես: Զե՛ր ըսեր քեզի: Գուշակեցիր:

— Ե՛ս, ըսաւ Ռոչ զարմանքով: Գուշակեցիր: Ի՞նչ գուշակեցի, խնդրեմ:

— Բայց թէ ժայի և իմ ամուսնութեանս մասին է խնդիրը: Թէ այդ ամուսնութեան է որ դէմ է թշուառականը, թէ վաղը չէ միւս օր, այս ժամուսն, եթէ երբեք հրաշք մը չպատահի, ամէն բան պիտի վերջանայ, կը հասկնաս:

Արմէն վերսկսած էր հեկեկալու:

— Արմէ՛ն, ըսաւ սպան անկարող զսպելու գուժը որ կը գրաւէր զինքը հնազանդէ: Կը վատահեցնեմ գէեզ

թէ պատրաստ եմ ընելու ամէն ձեռքէս եկածը: Ասոր համար ալ, անգամ մը ես կ'ըսեմ, պէտք է ի վիճակի դարձնես զիս... Կ'որդնում թէ բա՛ն չեմ հասկնար: Կի՛նը կը շարունակէր լալ լռութեամբ: Ռոջ նըստաւ անոր մօտ, իրեն քաշեց և մեղմովին թեւերուն մէջ տաւ զայն:

— Ո՞վ է այդ Եւրի Պիշարան, ի՞նչ է քեզի համար:

— Անիկա... հանգուցեալ ամուսնոյս գործակատարներէն մէկն էր, կրցաւ ըսել մանկամարդ կի՛նը:

— Հա՛ւ, ի՞նչու անկէ այդքան վախնալու երեւոյթը ունիս: Ի՞նչ կրնայ ընել քեզի դէմ: Եթէ կը սկսիմ քիչ մը յստակ տեսնել, իր փամանուժը ծանուցանող այս քարթը ստանալէդ ետքն է որ ուզեցիր հոս գալս:

Կի՛նը հաստատական նշան մը ըրաւ: Ռոջ զայն պարուրեց խորունկ նայուածքի մը մէջ, ուր նոյն իսկ մեղադրանք չկար այլեւս:

— Ի՞նչ ալ ըլլար, եկած պիտի ըլլայի, ըսաւ: Բայց գիտե՞ս թէ պահ մը երեւակայեցի թէ կը հեռաձայնէիր ինձի ուրիշ բանի մը համար:

Արմէն աչքերը խոնարհեցուց: Ապան բաժակին մէջէն տաճ էր ձեռնոցներէն մէկը: Կը շոյէր զայն, մինչ կը խօսէր:

Մանկամարդ կի՛նը բռնեց իր ձեռքը և համբուրեց զայն:

— Ներողութի՛ւն, մրմնջեց դարձեալ:

— Ամփոփե՛նք կացութիւնը, ըսաւ սպան երեւութապէս հանդարտ թօնով մը: Այդ Պիշարան հոս կուգայ հանդիպելու համար... նշանածիդ: Իրա՞ւ է թէ այս վերջինը կիրակի օր Թարթուս պիտի ըլլայ:

— Այո՛, մտադիր է ինքնաշարժով Հալէպէն մեկ-

նելու շարաթ երեկոյ կամ կիրակի առաւօտ շատ կանուխ: Ուրեմն հոս պիտի հասնի կիրակի երեկոյ:

— Այսինքն թէ, մինչ այն, պէտք է ամէն բան կարգադրուի Պիշարայի հետ: Այս վերջինը ի՞նչպէս իմացած է:

— Անիկա մարդ մըն է որ գիտէ ի՞նչ որ կ'ազէ գիտնալ, ըսաւ կի՛նը սարսափով:

— Այո՛, և ամէն պարագայի տակ, անիկա մարդ մըն է որ շատ կը զբաղի քու գործերովդ և արարքներովդ: Կ'անուխէն կուգայ քեզի տեսնելու, քեզ հետ խօսելու համար: Եթէ չհամաձայնիք այն խնդրոյն մասին որուն կ'ակնարկէ, կրնայ նշանածիդ ըսուած մէկ բառով քու ամուսնութիւնդ անկարելի դարձնել: Այսպէ՞ս է:

— Այո՛:

Հարիւրապետը նկատեց թէ իր խօսակցուհիին ակռաները կը կափկափէին:

— Ներէ ինձի, խորեմ, խեղճ աղջիկս: Բայց որպէսզի արդիւնաւոր կերպով զբաղիմ այս խնդրով, ինչպէս որ կը թուիս փոփոքիլ, անհրաժեշտ է այսուհանդերձ որ կարգ մը հարցումներ ընեմ քեզի: Ի՞նչ յայտնութիւններէ կրնաս վախալ այդ մարդուն կողմէ: Անոնց ծանրութիւնը չե՞ս չփոքանցեր: Այդքան ալ գարշելի՞ բան մըն է...

— Աւելի գարշելի քան մտածածդ, ըսաւ Արմէն միայն:

— Ի՞նչ, ըսաւ Ռոջ, չեմ համարձակիր երեւակայել... Այդպիսի մա՛րդ մը: Կրցած ես...

— Ի՞նչ:

— Ըլլալ իր հոմանուհին, մրմնջեց սպան: Եղբրականօրէն, Արմէն արձակեց ցաւաքին բրբիջ մը:

— Պժգալի բան մը, ըսի քեզի: Աւելի՛ պժգալի քան ինչ որ կը խորհիս: Աւա՛ղ: Եթէ միայն այդքո՛ւ ըլլար:

— Արմէ՛ն, ըսաւ Ռօշ ետ ետ քաշուելով:

Կինը ունեցաւ գրեթէ արհամարհալից նայուածք մը: Իր ձիծազը լեցուեցաւ դառնութեամբ:

— Ա՛հ, ահաւասի՛կ, կը տարակուսէի արդէն: Այլեւս չե՛ս հարցաքններ զիս, հիմա: Առաջուրնէ կը վախնա՞ս իմանալիքէդ: Իրաւունք ունիս, է՛ն: Կարծածէ՞ք աւելի հրէշային է:

Ռօշի դէմքը մոխիրի դոյնը ստացած էր:

— Պիտի ըսե՞ս ինծի թէ ինչի՞ մէջ կը կայանայ խնդիրը, եթէ խնդրեմ քեզմէ, ըսաւ ան:

— Անշո՛ւշտ, պատասխանեց Արմէն, ուսերը բարձրացնելով համակերպութեամբ: Եթէ ունիս բարութիւնը հաւանելու չափուելի ինծի համար՝ խնդրո՛յ առարկայ մարդուն հետ, արդար է որ սկիզբէն իսկ իրազեկ ըլլաս ամէն բանի:

— Ամէն բանի՛: Այսինքն թէ այն բանին որ պիտի արգիլէր անխուսափելիօրէն քու ամուսնութիւնդ, եթէ միւսը ըլլար, փոխանակ ես ըլլալու, զայն իմացօղ:

— Եւ յետո՞յ, ըսաւ Արմէն՝ պատարատ ատոր վերայ դէ՞գ դառնալու դարձեալ շատ լաւ չեմ տեսներ...

— Ես կը տեսնե՛մ, ըսաւ սպան մուսլ հեզնութեամբ մը: Տրամադիր ես ամէն միջոց ի դօրժ դիւ լու որպէսզի անիկա չիմանայ այն ինչ որ ինծի պիտի իմացնէս առանց այլ և այլի: Այսպէս է, չէ՞:

Մանկամարդ կինը դիտեց զինքը ցաւազին մեղադրանքի երեւոյթով մը:

Սպան թօնը փոխեց:

— Ես եմ որ քեզմէ ներուժ կը խնդրեմ, ըսաւ Ես ախմար ես: Չեմ կրնար ըսել թէ ուղղամիտ չեղար, և թէ ամէն բանէ առաջ յայտնեցիր ինծի թէ զի՛ս քը միայն կը սիրես, թէ զի՛նքը միայն պրտի սիրես միշտ:

Արմուկները ծունկերուն, ձեռքերուն մէջ մխրձած էր ճակատը: Չգաց Արմէնի շրթները իր ճակատին վրայ: Իրարու շայեցան անձկութեան փախտով մը:

— Իրականութիւնը այն է որ շատ, շատ դժբախտ ենք երկուքս ալ, իմ խեղճ պղտիկօ, մրմնջեց Ռօշ:

Պահ մը երկուքն ալ լռութիւն պահեցին: Արմէն գաղտնաբար կը դիտէր սպան, քիչ մը այն ձեւով որով պիտի դիտուէր ապագայ դահիճ մը: Հաւանաբար հարց կուտար ինքզինքին թէ իրեն համար եկած էր վայրկեանը, սոսկալի վայրկեանը, խօսելու. քանի որ իր խօսակիցը կը լռէր ա՛յդ էր որ կը սպասէր իրմէ անկասկած: Տրամաբանութիւնը տիրականօրէն կը մըղէր զինքը ատոր: Ամէն յագաղում, ամէն կորսուած վայրկեան, բնոյթը ունէր իր փրկութիւնը վտանգելու, թերեւս անդարմանելիօրէն: Այսուհանդերձ, ակներև էր թէ կը վարանէր խօսելու: Նման խոստովանութիւն մը չափազանց ամբարդկային էր, ուստի՛ չափազանց ահաւոր: Ոչինչ ըրած էր նման փորձութեան մը ալ փանի ըլլալու համար: Գոնէ պիտի հաւանէ՞ր ընդունելի: Մտկոյլ մը, տամուկ խուարին մէջ, անցաւ պատշգոմին ճիշդ տակէն: Լսուեցաւ աղմուկը ջուրերուն, թիակին կշռութաւոր հարուածներուն տակ: Զուրի կայլակներ կը շողային փոսփորափայլ: Խուլ մեղեքի մը լսուեցաւ: Մտկուկաժարներէն մէկն էր որ կ'սրգէր: Լուսինը՝ զէնիթին վրայ, իր արծաթեայ զարգամեաղները կը ճարմանդէր պերպէրիկ

հին ծովուն վրայ: Օ՛ գիշեր, արեւելքի քնքուշ և երկնային գիշեր: Ռօշ ձեռքը տանելով քունքերուն, գտաւ զանոնք քրտնոզող: Գիշեր՛ր՝ այնքան բարեյարմար խանդի հախար: Եթէ զի՛նքը սիրէր Արմէն, փոխանակ ուրիշ մը սիրելու, սա Պիշարան կրնար գալ ուզածը պատմել, թշուառականը: Ատիկա չէ որ պիտի կարենար քանդել իր սէրը, Ռօշ կրնար երդնու՛լ այդ մասին: Ո՞վ գիտէ, ինչո՞ւ չէ, Աստուած իմ, թերեւս այդ սէրը աւելցած իսկ պիտի ըլլար: Գուցէ կշիռին նժարին վրայ պիտի նետէր իր աստուածային ծանրութիւնը:

Յանկա՛րծ, հարիւրապետը ոտքի ելաւ: Ուղղուեցաւ դէպի դուռը:

- Ո՛ւր կ'երթաս, հարցուց կինը սարսափած:
- Առ առաւելն մէկ ժամէն պիտի վերադառնամ:
- Մէկ ժամէ՞ն, իրա՛ւ է, մը մնջեց: Երդում ըրէ թէ պիտի վերադառնաս, թէ պիտի չլքես զիս:

Ռօշ ժպտեցաւ: Յետոյ, կնոջ քովը գալով, համբոյր մը զետեղեց անոր վարձերուն վրայ:

— Լքել զքեզ, սիրելի պզտիկա: Աւա՛ղ, եթէ փափաքէի իսկ, գիտես թէ չէի կրնար:



Սպան դուրս ելաւ: Հակառակ կողմէն կտրելով քիչ առաջուան ճամբան, անցաւ մայր եկեղեցիին առջեւէն: Միշտ լուսաւորուած էր անիկա, միենոյն դողդոջուն նշոյլով: Ստուերներ դուրս կ'ելլէին հոնկէ, բայց այս ժամուն ներս մտնող չկար այլևս: Ռօշ խորհեցաւ Արմէնին: Ի՛նչ անդորրացում գըտնելու եկած էր հօգ: Յանցուոր չէր, ոչի՛նչ ըրած էր նման փորձութեան մը ենթարկուելու համար, աղաւազկած էր իրեն քիչ առաջ: Անկասկած, անկասկած:

Մեղքը զոր ունէր — եթէ մեղք կար — պէտք էր ըլլար անոնցմէ, որոնց մարդիկ չեն ներեր, բայց որոնք, Աստուծոյ դատարանին առջև, ներման արժանացած էին երկար ժամանակէ ի վեր:

«Այո՛, ըսաւ Ռօշ ինքզինքին, միայն թէ անառափ՛կ: Մէնէթրիէի աչքին, Արմէն լաւ գիտէ, խեղճը, թէ Աստուծոյ այդ ներումը անբաւական է»:

Բռնելով կառավարչական պալատին ուղղութիւնը, սպան մտաւ ձիթհիններու պուրակին մէջ: Ե. պիսկոպոսական քաղաքին հիւսիսային արեւմտեան անկեան դիմաց, կար կառած մը, ուր դեռ լոյս կը վառէր, բայց որուն միակ մեքենագէտը այդ ժամուն ըլլալու էր մօտակայ սրճարանին սարփինային տակ, իր օդին խմելու վրայ Յանկարծ, կանգ առաւ: Գործածութենէ ինկած երեք կամ չորս փորտերու մէջտեղ, տեսած էր բաւական զօրաւոր ինքնաշարժ մը:

Մօտենալով, դժուարութիւն չունեցաւ հաստատելու թէ անիւներէն մէկը բոլորովին նոր էր: Աւելի եւս մօտենալով, նշմարեց թիւը և թ. գիրը:

6.

Հարիւրապետ Քազէլլա կը վերջացնէր իր ընթրիքը: Զարմացումի ժէսթ մը ունեցաւ ան, երբ Ռօշ երեւցաւ:

— Ներողութի՛ւն, ըսաւ, բայց, իրա՛ւ, չէի սպասեր քեզի:

— Ներում խնդրելու պատճառ չունիս: Քանի մը վայրկեան միայն պիտի մնամ: Քեզի ըսելիք երկու բառ ունիմ և քեզի յերկայացնելիք խնդրանք մը:

— Պատրաստ եմ ծառայելու:

Նոյն պահուն, հեռաձայնին զանգ սկը հնչեց: Քազէլլա գնաց գործիքին մօտ:

— Պէյրուս... Սիւզանն է։ Պիտի խօսէր հետս
ժամը Գինս կեանքին մէջ անգամ մը գոնէ ճշդապահ
է, նոյնիսկ որոշուած ժամէն քիչ մը առաջ կը հե-
ռախօսէ։

— Յարգանքներ իմ կողմէս։

— Դուք անձամբ յայտնէ։ Դուք ես, Սիւզանն —
այո՛, շատ լաւ — Լաւ ճամբորդեցի՞ր — Քիչ մը յոգ-
նեցուցի՞չ։ Գիտե՞մ, գիտե՞մ, Տրիպոլիոյ և Պաթրուսի
միջև ճամբան անտանելի է։ Ուրկէ՞ կը հեռաձայնես
ինձի։ Յրանսական ճաշարանէ՞ս Բնականաբա՛ր։ Կը
կարծես թէ, առաջին երեկոյեան համար լաւագոյն
չէ՞ր որ կանուխէն քնանայիր։ Այո՛, այո՛, գիտեմ
յանկերզը։ Բարեկամներ ստիպած են զքեզ։ Յարգանք-
ներս պիտի չմատուցանես անոնց։ Այո՛, ընթրիքս
գրեթէ աւարտած եմ։ Բայց այո, հո՛ս է։ Իսչո՞ւ հոս
պիտի չըլլար։ — Լաւ, ահա ինք։

Ռոշ հեռախօսը ձեռք առաւ բուսական սրտնեղու-
թեամբ։ Քաղցիլա նայուածքը չէր հեռացնօր անոր վը-
րայէն։

— Այո՛, Սիւզան, ե՛ս եմ, ըսաւ քիչ մը բռնա-
գրօսիկ ժպիտով մը։ — Լաւ, սիրելիս, այդ տեղ
է որ կը սխալիս։ — Ի՞նչ կ'ըսե՞ս։ Եթէ գիտնայիր թէ
իրիկունը ձեր տունը պիտի անցընեմ, թերեւս չէլ՞ր
մեկներս կը հիանամ այդ «Թօրեւս»ին վրայ։ Թոյլ
առւր որ չհաւատամ։ Եւ բարեւներս Սէզարին։

— Տո՛ւր ինձի գործիքը, ըսաւ Քաղցիլա։

Ան իր յօնքերը պոստած էր։ Հիանալիօրէն կը
ճանչնար իր կինը։ Սիւզանի զուարթութիւնը իր
հրապոյրներէն մէկն էր։ Բայց այդ զուարթութիւնը
երբեմն չափը կ'անցընէր, գոնէ յաջ ամուսնոյն։

Քանի մը կարճ խօսքով՝ վերջ տուաւ խօսակ-
ցութեան։

— Ներում կը խնդրեմ այս յապազուժին համար,
Ռոշ, վասնզի անպարբիւռ երեւոյթը ունիս։ Նայինք
ի՞նչ է ըսելիքը։

Սոսելով հանդերձ, չէր դադրած դիտելէ իր ըն-
կերը։ Գոն չէր թուէր։

— Նա՛խ, ընթրած ես,

Ռոշ գլխովը ժխտական նշան մը ըրուաւ։

— Անթութիւն չեմ զգար։ Աւելի՛ ծարաւ եմ։
Այո՛, քիչ մը շամբանիս։ Կամ ուխօքի։

Ռոշ գրեթէ բնաւ խմելու սովոր չէր։ Քաղցիլա
անփոյթ մնաց։ Զգուշացաւ իր զարմանքը յայտնելէ,
երբ տեսաւ իր ընկերոջ իրարու վրայ երկու գաւաթ
ուխօքի խմելը։

— Հիմա մտիկ կ'ընեմ քեզ, ըսաւ Քաղցիլա։

— Ժամը քա՛րիէ՞ս քանի հեռաձայնը կը գործէ
Թարթուսի մէջ, հարցուց Ռոշ։

— Ճիշդ այ՛պէս ինչպէս կը գործէր երբ դուն
կը պաշտօնավարէիր հոս, պատասխանեց Քաղցիլա, որ
որոշած էր ոչ մէկ բանի մասին չզարմանայ։ Հասա-
րակութեան համար, առաւօտեան ժամը 8էն մին-
չեւ երեկոյեան ժամը 9։ Սպասարկութեան համար
(կառավարական)՝ ամբողջ գիշերը և ամբողջ օրը, ա-
ռաջաւորութեամբ ալ անշուշտ։

— Շնորհակալ եմ։ Միշտ մէկ պանդոկ միայն կայ
հոս, այ՛պէս չէ՞։

— Այո՛, Պէլլովիւ պանդոկը։ Կ'երեւակայես թէ
վեց ամսուան մէջ ամէն բան կերպարանափոխուեցա՞ւ։

— Կարելի՞ է գիտնալ, շատ խորհրդապահօրէն,
թէ ճամբորդ մը, որուն անունը պիտի տամ քեզի,
իջեւանա՞ծ է հոն։

— Ատկէ դիւրին բան չկայ։ Կ'ուզե՞ս որ մէկը
դրկեմ հոն թէ կը նախընտրես դուն անձամբ հեռա-
ձայնել։

— Ոչ, պիտի ուզէի որ դուն հեռաձայնէիր: Հարցուր միայն թէ մարդ եկած է հոն այս երեկոյս Լաւագոյն է որ իմ անունս չարտասանուի:

— Ինչպէս որ կ'ուզես: Թո՛ղ որ, պանդոկապետը նոյնինքն գաղտնապահութիւնն է: Ալլո՛ւ Դո՛ւք էք, Պ. Պաքօս:— Այո՛, ե՛ս եմ, հարիւրապետ Քաղէլլան: Տեսէ՛ք, կը սպասեմ ծրարի մը որ պիտի բերուի ինծի ճամբորդի մը կողմէ որ կուգայ... Ուրկէ՞— Լաթաքիայէն— ...Որ կուգայ Լաթաքիայէն: Ձեր այս երեկոյ եկած ուղեւորներուն մէջ չէ՞ արդեօք:— Միայն երկու ուղեւորներ: Ըսէք ինծի անոնց անունները:— Պ. Ալկուազի: Ոչ, ատիկա չէ: Միւսը... Ալլո, ի՞նչ ըսիք, Եւրի Պրշարա:— Ո՛չ ատ ալ չէ:— Օ՛հ, խընդիր չէ: Շնորհակալ եմ: Վաղը առաւօտ կրկին պիտի հեռաձայնեմ ձեզի:

Քաղէլլա ընկալուչը տեղը դրաւ:

— Գո՞հ ես, ըսաւ, կատարելապէս նմանեցաւ անտարբերութեան թօնով մը: Այդ էր մարդը որուն մասին կ'ուզէիր տեղեկութիւն քաղել:

— Այո՛:

— Լա՛ւ: Աւելի լաւ: Այդ է բոլոր ուզածդ:

— Պիտի չուզէիր սակայն որ այդ ըլլայ բոլորը, ըսաւ Ռօշ: Ո՛չ, բոլորը այդ չէ:

Ռօշ վերագտած էր իր պողարիւնութիւնը:

— Իրա՛ւ, ըսաւ Քաղէլլա: Է՛, ըսեմ քեզի անմիջապէս: Այսպէս կը նախընտրեմ զքեզ, գիտե՛ս: Ձէի սիրեր զէմքը զոր ունէիր քիչ առաջ, երբ ներս մտար:

— Վաղը կը բացակայիս, հարցուց Ռօշ առանց վեր առնելու իր ընկերոջ ըրած ակնարկութիւնը:

— Այո՛: Ո՛չ: Ի չո՛ւ: Այսինքն թէ պզտիկ ժամադրութիւն մը ունէի Սաֆիթայի մեր ընկերոջ հետ,

միշտ սա զէնքի մաքսաննգութեան խնդրոյն համար:

— Ձե՛ս կրնար երկուշաբթիի յետաձգել այդ ժամադրութիւնդ: Հաւանական է որ վաղը պէտք ունենամ քեզի հոս:

— Լա՛ւ, այդ պարագային: Ինծի պէ՛տք ունենաս: Եւ ի՞նչ բանի պատճառաւ:

Ռօշ ուղղակիօրէն չպատասխանեց: Երկու մարդերը իրար դիտեցին:

— Լա՛ւ, ահաւասի՛կ: Պահ մը առաջ կը հարցունէի քեզի թէ թարթուսի մէջ հեռաձայնի ժամերը նո՞յն են ինչպէս էին հոս եղած ժամանակս: Կ'ուզէի գիտնալ նաև թէ իշխանութիւնը զար ունին մասնաւոր սպաները, նոյնը մնացած է:

— Տղայ մի՛ ըլլար: Ինչի՞ մէջ կը կոյանայ հարցը:

— Ո՛հ, եղածը մեծ բան մը չէ, պիտի տեսնես: Վնասելու կարելիութենէն զրկել — ոչ երկար ժամանակի համար, 48 ժամ՝ շատ շատ — քաղաքացի մը, որուն կատարեալ սինլըքոր մը ըլլալը կ'երսշխաւորէմ:

Քաղէլլայի ժպիտը շեշտուեցաւ:

— Օրուան ձգտումը յայտնի է քեզի, ըսաւ շինծու ծանրութեամբ մը, բարձր շրջանակներուն մէջ մեզի հանդէպ կասկածոտ ըլլալու, մեր գործունէութեան շրջանակը հետզհետէ սահմանափակելու ձգտումը: Բայց, վերջապէ՛ս, շատ հոգ մի ընել: Պիտի ջանանք կարգադրել:

Երբ Ռօշ վերադարձաւ Տիկ. Հաճիլարի տունը, Արմէն այլեւս նոյն սրահին մէջ չէր: Քաթպէ, որ հը-

րաման ունէր տիկնոջ մօտ տանելու սպան, առաջ-
նորդեց զայն սենեակ մը, ուր Ռօշ մտած էր շատ քիչ
անգամ և երբե՛ք՝ էլ չիտա Հաճիլարի մահէն առաջ: Ա
տիկա, կազմելով վիլլային հարաւային մասը, ընդար
ձակ սրահ մըն էր, կազմուած վար առնուելովը երեք
սուրիչ սենեակներու սրմերուն, մասամբ կամ ամբող-
ջութեամբ: Այդ սրմերը փոխարինուած էին Գորա-
մանի վարագոյրներով և օթոցներով: Երկու պատու-
հաններ կը նայէին պարտէզին վրայ: Ապակեայ դուռ
մը կը բացուէր ծովահայեաց պատշգամի մը վրայ:

Այդ սարքաւորումը ներսը կը պահէր խոր և ա-
նուշ կիսաստուերի մը մէջ. որուն զովութիւնը կը
հաճոյացնէր զգայարանները, երբ ամառուան տօթը
կը հրկիղէր շրջակայքը, ծովը թէ դաշտերը:

Երբ Ռօշ ներս մտաւ, Արմէն ժպտեցաւ իրեն: Ե-
տարծուծեւով մը կիներ նշան ըրաւ Քաթպէին որ մինակ
թողու զիրենք:

— Ի՞նչ եղաւ հարցուց Արմէն մեծ ճիգով մը՝
հանդարտ երեւելու համար, երբ պսաւը հեռացաւ:

— Թարթուսի մէջ է ան պատասխանեց. սպան
պարզապէս:

Խորհած էր նախ ծածկել Արմէնէն այդ մանրա-
մասնութիւնը: Բայց ի՞նչ օգուտ ատկէ: Երիտասարդ
կինը ստոր յայտնութիւնը կրնար ունենալ ամէն բո-
պէ: Աւելի լա՛ւ էր որ իրմէ իսկ իմանար:

Կիւր բան չըսաւ: Միայն խաչակնքեց:

— Այո՛, ըսաւ սպան, եկած ըլլալու է ժամը Ցի
և Ծի միջև: Պէլլիւ պսնդիկն է: Ի՞նչ կը մրմնջես:

Տեսած էր Արմէնի շրթներուն շարժիլը:

— Ոչինչ, ըսաւ այս վերջինը, իր ամենահամա-
կերպ ձայնովը: Կը բաւականանամ շնորհակալութիւն
յայտնելով Աստուծոյ այսպիսի վայրկեանի մը իմ մօտ

ունենալու համար միակ անձը որմէ փրկութիւնը
կրնայ գտլ ինծի:

Ռօշ ինքն ալ բան չըսաւ: Ի՞նչ փրկութեան մա-
սին կը խօսէր Արմէն: Եթէ իր սիրոյն փրկութեանը
համար էր՝ անհո՛ւն շնորհակալութիւն: Արմէն կրնար
աւելի փափկանկատ ըլլալ: Այդ՝ իր եռանդը արծար-
ծելու լաւագոյն կերպը չէր:

Սենեակը, ուր կը գտնուէին, երեք սենեակներէն
ամենէն ընդարձակը, միւս երկուքը յարգարուած ըլ-
լալով մէկը իբր զարգախուց, միւսը՝ իբր լիգարան
— այդ սենեակին մէջ ուրեմն, անկողին չկար: Միայն
շատ ցած և շատ լայն բազմոց մը, որուն վերեւ դեռ
չծալլուած մեղարգելը, կուտար անոր առագաս-
տանաւի մը երեւոյթը: Կուսնալոյսը՝ արծաթեայ յոր-
ձանքներով ներս մտնելով պատշգամին մեծաբաց
դուռնէն, յարկաբաժնին մէջ կը հալէր ուրիշ լոյսի
մը մէջ՝ մանրամաղուած, փափկացած, որ կուգար
պատին մէջ բացուած խորչէ մը, և որ իբր խորան
կը ծառայէր Ս. Կոյսին մէկ տարօրինակ արձանին,
արձան մը որուն նմանը երբեք տեսած չէր Ռօշ, Ս.
Կոյս մը, որ փարթամ բարբարոսութեան մէջ կը գե-
րազանցէր ամէն ինչ զոր կարելի էր երեւակայել:
Անշուշտ, Ռօշ չէր մոռցած այդ արձանը: Սարսափ
այսուհանդերձ վերստին տեսնելով զայն, գրեթէ այն-
քան որքան երբ առաջին անգամ գտնուած էր անոր
առջև: Եւ այս անգամ սակայն, մտահոգութիւններով
զոր ունէր իր գլխուն մէջ, շատ բնական պիտի ըլ-
լար որ նշմարած չըլլար զայն: Արդ, անմիջապէս որ
անցած էր սեմէն, անմիջապէս որ դրան վարագոյրը
վար ինկած էր, սպան, տառացիօրէն, անկէ զատ ու-
րիշ բան չէր տեսած այլեւս: Արմէն, նշմարելով
ատիկա, ինքն իսկ սարսափեցած էր անտեսանելի կեր-
պով:

— Սիթ էլ-Քոպուր, Ս. Գերեզմանի Տիրամայրը, մրմնջած էր երիտասարդ կինը, այն զոր թուրքերէն կը կոչեն Գարա Թէքէի Կոյսը: Օր մը պիտի ըսեմ քեզի թերեւս...

Բայց դէպքերը սրենք ծանօթ են, վրայ եկած էին և Արմէն ոչինչ ըսած էր անոր:

— Ի՞նչ ունի՞ս, ի՞նչ բանի մասին կը մտածես, միշտ արձա՞նն է որ կը դիտես:

Ռոջ քիչ մը յանկարծակիի եկած այս սիրուն ի կարգ հրաւիրումէն, ժպտեցաւ կնոջ, քիչ մը նեղւած: Իրաւ էր, սակայն, թէ կը շարունակէր դիտել զայն, ա՛ն զոր անցեալ տարի յաճախ զուարճացած էր կոչելով միւսը: Թող որ, շատ շուտով դադրած էր, Տիկ. Հաճիլար ունեցած ըլլալով երեւոյթը շատ քիչ հաւանելու այդ անմեղ կատակին:

— Ինչի՞ կը մտածեմ, պատասխանեց Ռոջ: Բանի մը որուն ցարդ բնաւ չէի անդրադարձած: Երեւակայնէ որ կը գտնեմ թէ արձանը քեզի կը նմանի:

Ռոջ վայրկեան մը վախցաւ թէ նեղացուցած էր իր խօսակցուէին, բայց իր վախը ունայն էր: Արմէն չբողոքեց: Բաւականացաւ պատասխանելով, ծանրութեամբ.

— Կը գտնե՞ս: Գիտե՞ս թէ ատիկա ի՞նչ պիտի ապացուցանէր ուրեմն: Թէ մարդ վերջ ի վերջոյ կը նմանի այն նկարին կամ արձանին զոր շատ դիտած է:

Արմէն ընկողմանած էր բազմոցին վրայ, երբ Ռոջ մտած էր: Ան թեթեւ մը շտկուեցաւ: Ս. Կոյսին արձանին լոյսը լուսաւորեց զինքը: Առաջին ակնարկով, կը թուէր թէ մեծ երեւակայութիւն պէտք էր ազգականութեան աստիճան մը նշխարելու համար այս փայտէ եղբրական պուպրիկին և Արմէնի պայծառ դէմքին

միջև: Բաւական ժամանակ դիտելէ ետքն էր որ մարդ կը յանդէր դանելու... Բայց ի՞նչ: Ռոջ շատ պիտի դժուարէր ըսելու համար այդ: Աչքե՛րը թերեւս, այն վայրագ և ցաւագին փայլը, որ կը շողար Կոյսին աչքերուն մէջ և երբեմն կ'անցնէր, յանկարծ, կնոջ աչքերուն մէջ: Կոյսին գլուխը միայն կը զստորոչէր, և այն ալ ոչ ամբողջութեամբ, մխրճուած ըլլալով ոսկի ժանեակներով տեսակ մը կարծր օձիքի մէջ, որ կը բարձրանար մինչեւ սուտակներով դրուագւած ապառօշը: Մարմնոյն մնացեալ մասը ծածկուած էր էմիրական կանաչ թաւշեայ պարեգօտով մը, նմանապէս սուտակներով զարդարուած: «Այս քարերը իրակա՞ն են»: Այս էր քիչ մը ծիծաղելի հարցումը զոր Ռոջ չէր կրցած արգիլել ինքզինքը ընելէ, երբ առաջին անգամ ընդունուած էր այս սենեակին մէջ: «Ինչո՞ւ կ'ուզես որ իրական չըլլան», գոհացած էր պատասխանելով Տիկ. Հաճիլար, պզտիկ արհամարհալից ժպտով մը:

Ատիկա անոր ամուսնոյն մահէն շաքաթ մը ետքն էր թերեւս: Ռոջ կը տեսնէր անոր հանելը իր մատանիները — դարձեալ սուտակէ — երբ Արմէն այդպէս պատասխանած էր իրեն: Այն օրը, երիտասարդ կինը հագած էր հաղուստներ գրեթէ այն ձևով զոր հագած էր այս երեկոյ: Գրեթէ միշտ սև գոյնով շրջադեասներ հազնելու սովոր, այն շատ դժուարութիւն չէր ունեցած սուգի զգեստաւորումներ կազմելու համար: Սև մետաքսէ իր լայն պարեգօտը կը հպէր հազիւ թէ ուրուազծուած իր կոնքերուն, արծաթեայ ծանր զօտիով մը: Աճոր թեղանիքները այնքան լայն էին, որ երբ Արմէն ժեւթով մը, զոր կը սիրէր, յանկարծ բարձրացուցած էր թեւերը՝ իր ձեռքերը միացնելու համար իր ծոծրակին ետին, անոնք դարձած էին մէ-

կէն ի մէկ: Ռօշ կը յիշէր: Օգոստոսի մէջ էր, խամսինի տօթակէջ օրով մը: Վարագոյրներու քառեակ պատուարին ընդմէջէն, արեւի ճառագայթ մը, որ կը ցած էր ներս թափանցել, կը խողար երիտասարդ կնոջ շէկ վարսերուն մէջ, շատ կարճ կտրուած բաշ մը, զոր կը ցցեր գլուխի կամչոտ շարժումով մը, կզակը առաջ նետած, երբ խնդիրները չէին անցներ ճիշդ իր ուղածին պէս: Իր լազուարթ աչքերը կը շողային: Հրաջերմ ժպիտ մը՝ որ կէս մը կը բանար իր շատ սփռոյն վարդագոյնով մը, գրեթէ լեւակի գոյնին զարնօղ, շպարուած շրթները...: Տա՛սը ամիս: Քիչ ատենէն տասը ամիս պիտի ըլլար: Երբ կը խորհէր թէ այդ ժամանակէն իսկ ան կը ճանչնար Մէնէթրիէն: Ո՞վ գիտէ թէ ամէն ինչ կարգադրուած չէր անոնց միջև, այդ ժամանակէն սկսեալ, թէ անոր չէր որ կը մտածէր Արմէն այդ պօհուէն: Ռօշ ունեցաւ կզակի մկանունքներու յանկարծական պրկում մը: Կինը նկատեց այդ և ունեցաւ պաշտօնական նայլածք մը:

Ճիշդ այդ պահուն, դուրսի զանգակին աղմուկը եկաւ իրականութեան վերականջելու զանոնք:

Արագ ակնարկ մը փոխանակեցին:

— Ինքը չէ՛, մրմնջեց Ռօշ, այսպիսի ժամու մը, ինչ ալ ըլլայ, պիտի չունենայ յանդգնութիւնը,...

Տիկ. Հաճիլար ունեցաւ ժեսթ մը, որ կը նշանակէր թէ ինք նոյն կարծիքէն չէր:

Քաթակ ներս կը մտնէր՝ նամակ մը բերելով: Տիկ. Հաճիլար կարդաց զայն, և սփոփանքի հառաջանք մը արձակեց:

— Հայր Անկլըպէրէն է, ըսաւ, Ռօշի երկարելով նամակը:

Այս վերջինը կարդաց զայն իր կարգին: Երթա-

լով Ս. Ժօզէֆի մայրապետներուն վանքին իր սենեակը, Հայր Անկլըպէր գտած էր ընծան զոր Տիկ. Հաճիլար զրկած էր խորհրդապահօրէն: Կրօնաւարը չէր ուղած սպասել յաջորդ օրուան, իր երօխտագիտութիւնը յայտնելու համար անոր: «Ամէն բան լաւագոյն կերպով կ'ընթանայ մեր մայր եկեղեցիին համար, կը վերջացնէր լազարիտաւ: Ձեր շնորհիւ, ձեր աղած օրինակին շնորհիւ, կիրակի օրը ճշմարիտ յաղթանակ մը պիտի ըլլայ»:

Արմէն առած էր նամակը ու կը կարդար զայն վերստին:

— Ճշմարիտ յաղթանակ մը, ըսաւ խոհուն նայլածքով մը:

Ռօշ վեր առաւ ուսերը: Մէկ բան միայն կրնար խոստանար անոր — իր լաւագոյնը պիտի ընէր: Թող որ Արմէն գիտէր ատիկա: Այլեւս նոյնը չէր, երբ եկեղեցիէն վերադարձած էր: Ինքզինքը կը զգար պաշտպանուած: Երկու ճակատամարտներէն ըրոնց հետապատկերը ունէր իր աչքին դիմաց, շահած էր առաջինը: Երկրորդը մղելու համար, առանձին չէր այլևս:

— Ծարաւ եմ, ըսաւ Արմէն յանկարծ:

Ռօշ դիտեց զայն զարմացումով: Ա՛ն ալ, ուրեմն: Արմէն ևս, ինչպէս ինք, խմելու սովորութիւն չունէր: Ասոր հակառակ, հանգուցեալ Հաճիլար փսշտ նոյն պարագային մէջ չէր: Ան կը սիրէր ազնիւ ըմպելիները, մասնաւորապէս շանփանեայի լաւ մարջանները: Իր նկուղին մէջ ունէր բաւական կոկիկ հաւաքածոյ մը: Ան ժամանակ չէր ունեցած խմելու ամէնքը, երթալ օրթոտօք Յոյներու Ատուծոյն տալէ առաջ իր հաշիւները, որոնք բաւական խստնակ ըլլալու էին:

— Երկու բաժակներ բեր, ըսաւ Արմէն Քաթ-
պէիս, անոր տալէ ետք անհրաժեշտ հրահանգները:
Հարիւրապետն ալ պիտի խմէ ինծի հետ:

Սպան նշան ըրաւ թէ այո՛: Երբեք այդքան ծա-
րաւ չէր զգացած: Եւ յետոյ, կը գուշակէր Արմէնի
հաշիւը և չէր ուզեր հակառակիլ անոր: Այն խոստո-
վանութիւններուն, որոնց մանկամարդ կինը դեռ
չէր սկսած, յոյս կը դնէր գինիին օգնութեան վրայ,
սկսելու համար: Անոր վստահութիւնը աւելի մեծ
պիտի ըլլար, եթէ գիտնար թէ սպան ալ խմած է:

— Թերեւս գէշ պիտի չըլլայ որ որոշենք ծրա-
գիրը օրուն պիտի հետեւինք, ըսաւ, երբ Քաթպէ
շիշը և բաժակները բերելէ ետք քաջուեցաւ: Փոր-
ձանք երեւակայել այդ պարոնին ընելիքը: Ժամը
10.30էն աւելի է: Չսպասենք տեսնել զինքը այս
երեկոյ: Եթէ գալ ուզէր, ցարդ եկած պիտի ըլլար
արդէն իսկ: Հոս հասած ժամը 8ի և 9ի միջև, չէ
կրցած հեռաձայնել քեզի: Պիտի հեռաձայնէ վաղը ա-
ռաւօտ, ժամը 8ին իսկ, ժամադրութիւն մը ուզելու
համար քեզմէ: Այդ պահուն լաւագոյնն է որ քովդ
ըլլամ, գիտնալու համար ժամը օրուն մասին պիտի
համաձայնիք: Պիտի ընդունիմ զայն՝ քու տեղդ,
հասկնալի է: Այս է լսածու՛մ որուն վրայ կանգ պիտի
առնենք, կ'ենթադրեմ:

— Այո՛, ըսաւ Արմէն, քանի որ կը հաւանիս: Կը
խոստովանիմ թէ պիտի չհամարձակէի խնդրել քեզմէ
յատկաւ:

— Որոշուած է, սերեմն: Դեռ քառօրդ ժամ ալ
պիտի մնամ քու մօտդ: Անկէ ետք, աւելորդ է որ
նեղագոյնեմ քեզ իմ ներկայութեամբս: Բաւական է
որ վաղը առաւօտ, ժամը 8էն առաջ, հոս ըլլամ:
Թող որ գիտես թէ ո՛ւր եմ: Եթէ ինծի պէտք ունե-
նաս, մէկը շրկէ և կանչել տուր զիս:

Արմէն ձեռքը դրաւ սպային ձեռքին վրայ:

— Եթէ անպատեհութիւն մը չես տեսներ, ըսաւ,
չիշերը հոս պիտի անցընես: Արդարեւ, կը մոռնաս
մանրամասնութիւն մը: Այն է թէ, զիս պաշտպանե-
լու ի վիճակի ըլլալու համար, պէտք է իրազեկ ըլ-
լաս խնդիրներուն զոր տարաձայնել կը սպառնայ
մարդը: Արդ, կը վկայեմ թէ քառօրդ ժամէ աւելի
ժամանակի պէտք կայ պատմելու համար կեանքը կնոջ
մը անո՛ր պէս զոր եղած եմ ես:

Տունին մէջ տեղ մը կար պատի ժամացոյց մը,
որուն թիք-թաքը կը հասնէր իրենց որոշապէս, երբ
Արմէն կը լռէր, և երբ կը դադրէր ալիքներուն շը-
շուկը ժայռերուն վրայ: Ժամերուն հոննչը կանխելով՝
տեսակ մը պզտիկ զսպակ կը հնչէր: Ռօշ, սկիզբը,
յանկարծակիի եկած անոր կողմէ ամէն անգամ, չէր
կրնար ինքզինքը արգիլել սարսառալէ: Հիմա, այլեւս
ուշադրութիւն չէր ընել անոր: Գալով Արմէնին, ըս-
պան կարծած էր թէ անիկա ընաւ պիտի չորոշէր
խօսիլ սկսիլ:

..Արմէն զարկու մետաղեայ ծննդայի մը վրայ:
Ծերուկ սպասաւորը որ պարտէզին դուռը բացած էր
Ռօշին, եկաւ գրեթէ անմիջապէս: Արեւելքի մէջ, եթէ
ծառաները բոլորովին արթուն չեն երբեք ցերեկը,
ասոր փոխարէն բնա՛ւ բոլորովին քնացած չեն գիշերը:

— Բե՛ր շանփանեայի ուրիշ շիշ մը, հրամայեց
Արմէն: Նախ տուր ինծի պզտիկ պայուսակը որ կը
դանուի սպասադարանին վրայ: Այո՛, ատիկա:

Կինը պայուսակէն հանեց գրքոյկ մը, զոր երկա-
րեց Ռօշի:

— Անցադիրս է, ըսաւ, երբ ծերուկը դուրս ելած
էր: Կրնաք կարդալ, գաղտնի բան մը չկայ ասոր
մէջ: Արմէն Հարիճար, ծնած Կ. Պոլիս 1890ին: Այս

յիշատակութիւններէն երկուքն ալ նոյնքան սխալ ըլ-
լալու են: Ինչքինքս չնեղեցի, հարկաւ, բարեկամք Քա-
ղէլայի հետ մտնելու համար մանրամասնութեանց մէջ,
երբ երեք ամիս առաջ, Մէրսինի մէջ կարգադրելիք
ժառանգական պզտիկ խնդիր մը ունենալով, խնդրեցի
իրմէ անցազիր մը Թուրքիոյ համար: Ան գոհացաւ
հոս վերարտադրելով ամուսնական վկայագրիս վրայ
արձանագրուած ծանօթութիւնները: 1908ին էր, երբ
ամուսնացայ էլիսս Հաճիլարի հետ, որ ինծի համար
քաղաքային հանգամանք մը կազմելու հարկը ներկա-
յացաւ, բան մը որուն մինչև այն ժամանակ պէտք չէի
ունեցած: Քանի որ պէտք կար քաղաքի մը և թուա-
կանի մը, ինչու չառնել առաջին հանդիպաներդ,
երբ գիտես թէ չես հեռանար հաւանականութիւննե-
րէն: Տարիքին համար, կը խորհիմ թէ վերջ ի վերջոյ
այդ ճիշդ ըլլալու է: Քաղաքի, ոչինչ նուազ
ապահով է, ինչպէս պիտի տեսնես:

Շատ ահուելի բան է որ մարդ ոչ միայն ճանչցած
չըլլայ իր հայրն ու մայրը, այլ մանաւանդ միշտ ազ-
րած ըլլայ առանց գիտնալու թէ ի՞նչ էին անոնք,
ո՞րկէ կուգային, ի՞նչ կրնային ըրած ըլլալ կեանքին
մէջ: Մարդ այդ կերպով կը զգայ որ իր վրայ կը
ճնշեն խաւար ուժեր, որոնց դէմ անօգուտ է պայքա-
րիլ: Ինչ որ աւելի դժնդակ է կեանքիս մէջ, այն է
թէ այն շրջանակին մէջ ուր ապրած եմ մանկութեանս
առաջին տարիներուն, ամէն ոք չէր բաժնէր այդ անգի-
տութիւնը: Կար գոնէ մէկ անձ — այդ մասին գէթ
վտահ էի — որ պիտի կարենար ծննդեանս գաղտնիքը
յայտնել ինծի, եթէ ուզէր:

Ատիկա մեծաւորուհին էր այն վանքին ուր ան-
ցաւ մանկութիւնս: Մտ 15 տարի, այն տպաւորու-
թիւնը ունեցայ թէ ապրած եմ այդ կնոջ աչքերը յա-

յարած զգալով վրաս: Ինծի կը թուէր թէ ի՞նչ որ
կ'անցնէր սրտէս, չէր կրնար աննշմարելի մնալ այդ
կնոջ աչքին: Բնա՛ւ՛ գէշ վերաբերմունք, բայց բը-
նա՛ւ՛, նաև, գորովի բա՛ւ մը: Կարծես թէ շարունակ
մէջս կը խուզարկէր ան, անմիջապէս անհրաժեշտ
կարգադրութիւնը ընելու համար, առաջին արտա-
յայտութեանը այն ուժերուն զոր դրած էր իմ մէջս
ծնունդ մը, որուն գաղտնիքը գիտէր ինք:

Միաբանութիւնը, որուն վրայ ի գործ կը դըր-
ւէր այդ մեծաւորուհին գերիշխանութիւնը, Ս. Գե-
րեղմանին Տիրամօր միաբանութիւնն էր, Սեւ-Վան-
քին մէջ, որ թուրքերէն Գարա Թէքէ կը կոչուէր:
Անունը որքան ալ դժոճան ըլլայ, ոչ ի՞նչ էր այդ վան-
քին քաղաքամամբ: Այդ վանքը՝ հին ամրոց մը ապա-
հովաբար, յեցած էր ուղղորդ լերան մը կողին վրայ,
Տուրոսի ամենէն վայրենի մասին մէջ, և մերձաւոր
գոյն քաղաքը անկէ առնուազն 50 քիլոմէթր հեռու
էր: Այդ տեղէն հինգ կամ վեց մղոն հեռուն կար ու-
րիշ վանք մը, այրերու վանք մը ասիկա, որ կը հը-
նազանդէր մեր վանքին հետ միևնոյն ուխտին (—Ս.
Գերեղմանատան Տիրամօր (արաբերէն Սիթ-էլ-Քոպուր)
ուխտին, ո՛ւրիշ զոր հաստատած էր Գրիգոր անուն
Ս. ճգնաւոր մը, որ Պաղեստին ճամբորդած էր Լեւոն
Ա. կայսեր իշխանութեան օրով: Սեղանատան մէջ,
ճաշի ժամանակ, կը կարգային մեզի անոր կեանքին
պատմութիւնը: Այդպէս է նոյն իսկ որ արուեստաւ ին-
ծի առաջին անգամ լսել անունը Թորթոզայի, ուր
ճգնաւորը գացած էր ուխտի: Եթէ ըսուէր ինծի թէ
օրին մէկը... Չէի գիտեր թէ այդ երկու քաղաք-
ները կը կազմէին միա՛կ քաղաք մը, երբ ամուսնութե-
նէս վերջ եկայ բնակիլ Թարթուս:

Վերադառնալով մեր դրացի կրօնաւորներուն: Ա-

նոնցմէ է որ կուգար մեզի, պահքի օրերուն և ասնական օրերուն, արժանընտիր վարդապետը որ պաշտօն ունէր բերելու մեզի աստուածային բանին և ծէսերուն օգնութիւնը: Միակ այր մարդն է ան զոր տեսած եմ մինչև ասանկինք տարեկան ըլլալս: Տեսած: Ո՛չ, ճշգրիտ ըլլալու համար Այո՛, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսելը միակ այր մարդը որու հետ խօսած եմ: Վանքին մեծ աշտարակին վանդակապատ պատուհաններէն մէկէն, որ կը տիրապետէր մօտ 100 մէթր խորութեամբ վիհի մը, կը պատահէր ինծի երբեմն զատորոշել վարը, բոլորովին վարը, ճամբուն վրայ որ կ'եզերէր գլխու պտոյտ առող փրփրաղէզ հեղեղ մը, դանդաղ ժապաւէնը դէպի Հայէպ կամ Պաղտատ գացող կարուսանի մը: Մէկը միւսին պոչին կապուած ուղտերը ունէին երեւոյթը տարօրինակ համրիչի մը: Գացողեկող, շարժակող ուղտապանները կը թուէին խելագարած ծիծաղելի միջատներ: Լերան վրայ, որ կը գտնուէր ինծի հանդիպակաց, ճիշդ վիհին միւս կողմը, առիւծի մօրթի գոյնով կարմրորակ լե՛ռ մը, կ'ստոտտէին փոքր սև այծեր:

Շատ մեծ դժուարութիւն կը կրէի զանազանելու համար անոնց վրայ հսկող հովիւը, որուն հագուստը ունէր չրջակայ ժայռերուն գոյնը: Միայն թէ, երբեմն երբ հովը կը փչէր հիւսիսէն, պատահած է ինծի լսել քանի մը նօթեր այն սրիւղէն զոր կը հնչեցնէր:

Այն ճամբայէն, որ օձապտոյտ կը յառաջանար մեր ստեղծուն, պէտք էր երկու ժամուան վերելք մը կատարել, մինչև մեզի հասնելու համար: Վարդապետը, որուն մասին խօսեցայ, դժուարաւ կուգար, ջորիի մը վրայ նստած, մեր վանքին միակ դրան առջև, կապոյտ գոյնով ներկուած վիթխարի դուռ մը: Մտան որ կ'ընկերանար անոր, ջորիին հետ կը

վերադառնալ իրենց վանքը, մինչ դրան փեղկերէն մէկը կը բացուէր կիսովին, վարդապետին անցք տալու համար: Անիկա ունէր խոշոր մօրուք մը, զոր միշտ սպիտակ կը տեսնեմ, որքան որ յիշողութիւնս կը թոյլատրէ ինծի ըարձրանալ դէպի անցեալը: Տխրութիւն և դառն հեգնութիւն: Գոյութիւն ունին, գիտե՞ս, ինչ որ պիտի կոչեմ «ձերուկներու համար կիներ»: Ի՞նչ ողբալի-ճակատագիրս եղած է այդ դասակարգին պատկանիլ: Քիչ ետք պիտի տեսնես թէ ի՛նչ ըսել կ'ուզեմ: Մի յոգնեցնե՛ր ինքզինքդ որեւէ բան գուշակել փորձելու առայժմ: Իրողութիւնը աւելի դաժան է քան ինչ որ երեւակայութիւնդ կրնայ ըմբռնել, ըսի՛ր քեզի արդէն:

Արմէն կանգ առաւ պահ մը:

— Ուրեմն, ըսաւ, կը գտնես թէ անո՞ր կը նմանիմ: Տարօրինակ է: Կար մարդ մը որ քու կարծիքէդ էր:

Եւ որովհետև սպան կը դիտէր զինքը առանց հասկնալու, կինը ունեցաւ ուսերու թեթև ցնցում մը:

— Շատ շուտով կը մոռնաս ինչ որ կ'ըսես, ըսաւ, մտանանչելով արձանը:

Ոտքի ելած էր Արմէն: Գացած էր դէպի արձանը: Մտայլ արձանին ապառօշը վերցնելով, սկսած էր գոտել անոր վարտերը և ճակատը դանդաղօրէն, բարեպաշտիկ կերպով:

— Ի՛նչ է կարծիքդ, հարցուց ան Ռօշի:

Այս վերջինը կը լռէր, բռնելով իր շունչը: Վախի խառնուած անձկութիւն մը կը լեցնէր զինքը: Այս ամէնը արդարեւ կը սկսէր սահմանազանցել իր երեւակայութիւնը:

Արմէն վերադարձած էր իր մօտ:

— Չեմ գիտեր թէ ի՛նչ որ կը պատմեմ քեզի

օգտակար է գործին համար որով զբաղիլ յանձն առած ես: Բեզի կ'իյնայ այդ մասին որոշել, երբ ամէն բանի իրազեկ պիտի ըլլաս: Չեմ ուզեր ձանձրացնել քեզ մանրամասնութիւններով, որոնց մասին ինձմէ աւելի ծանօթութիւններ ունիս: Յիշէ սակայն որ մը, ուր դուն իսկ վախցար թէ ձանձրացուցած եմ զիս չափազանց թէքնիք խօսակցութեամբ մը: Մէկ ուկէս տարի առաջ էր: Կը ճաշէիք հոս, հայր Անկլը պէր և դուն: Ձեր միջև, իբր թէ դիպուածով, հարց կար թորթոզայի Տիրամօր մասին, եկեղեցիին ներքնամասին մէջ կատարուած պեղումներու առթիւ, և կը խօստովանիմ թէ մտիկ կ'ընէի անուշադիր կերպով, երբ, յանկա՛րծ, ուշադրութիւնս աշխնցաւ: Վիճաբանելու վրայ էիք թէ ի՞նչ բանի սահմանուած էր բուսական մասնաւոր սիւն մը, որ կը գտնուի ատեանին հիւսիսային կողմը, երկրորդը՝ երբ եկեղեցիէն ներս կը մտնես: Դուն այն կարծիքէն էի որ թէ դուռը որ կը բացուի խորանարդի ձև պատուանդանին վրայ, ուր կը հանգչի խնդրոյ առարկայ սիւնը, կը յանգէր գետնուղիի մը որ շէնքը կը կապէր բարձր քաղաքին սմբոցին: Հայր Անկլը պէր կը պաշտպանէր այն տեսակէտը թէ այդ դուռը իբր մտից դուռ կը ծառայէր հոչակաւոր բիւզանդական սրբատեղիին, ուր կուգային քրիստոնեայ աշխարհին ամէն կողմերէն ուխտաւորներ, պաշտելու համար Տիրամօր հնագոյն արձանը: Ի՞նչ կրնայիր ըսել այդ պահուն եթէ խօսք առնէիր ըսելու համար թէ հայր Անկլը պէրն էր որ իրաւունք ունէր:

— Ես իմ մասիս, պարզապէս հարցուցած պիտի ըլլայի քեզի թէ ի՞նչ բանի վրայ կը հիմնէիր կարծիքդ, ըսաւ Ռոշ ժպիտով մը ուր կը սկսէր աւելի մտատանջութիւն մտնել քան զարմացում:

— Ա՛յդ է որ ըսի ինքզինքիս ես ալ: Եւ այդ պատճառաւ է որ անձնատուր չեղայ այդ պզտիկ ցոյցին: Ամուսինս ներկայ էր և ինծի վերաբերող շարժառիթներով, չէի ուզեր խօսակցութիւնը տանիլ այդ մարզին մէջ: Այսօր, այլեւս նոյնը չէ պարագան և կրնամ վատահիլ քեզի ինչ որ պիտի ըսէի քեզի եթէ կարելի ըլլար ինծի արտայայտուել այդ օրը: Գարա թէքքէ, Տաւրոսի մեր վանքը գոյութիւն ունէր արդէն մէկ դարէ ի վեր երբ Ս. Տեղեաց մէջ զէպքերը սկսան հետզհետէ գէշ ընթանալ Ո՞չ կիրներուն համար: Պատմութիւնները զօրս կը պատմեմ անո՛նք են որոցմով մանկութիւնս օրօրուած է: Յաջորդաբար, Սուրիոյ և Պաղեստինի բերդաքաղաքները ինկան անհաւատներուն ձեռքը: Վերջին անձնատուր եղողը թորթոզայի եղաւ ճշդիւ: Իր վերջին պաշտպանները կրցան անցնիլ Կիպրոս կղզին, Հրաշալի Տիրամայրը, պղինձէ և կապօրէ սնտուկի մը մէջ, դրուած էր առագաստանաւերէն մէկուն վրայ Արդ, խնդրոյ առարկայ առօգտահանուր անջատուցաւ տորմդիկին մնացեալ մասէն փոթորիկի մը հետեւանքով: Եկաւ խրիլ տեղ մը, Գարամա՛իոյ մէկ ամայի անկիւնը, Ատալիոյ ծովածոցին մէջ: Իր մէջ գտնուողներէն բոլորը մեռած էին, ի բացառեալ մէկէս, Նէսթորիւս անուն կրօնաւոր մը, որ յետոյ սուրբերու կարգը դասուած է: Իր ուսերուն վրայ բեռցած էր սնտուկը, որ կը պարունակէր արձանը որոշած ըլլալով կորսուելի քան թէ լքել զայն: Իբր թէ հրաշքով, ծանր սնտուկը դարձած էր այնքան թեթեւ որքան լուսնային ճառագայթ մը: Գիշերը, լոյս մը կ'ելլէր անկէ: Լոյսը կը մարէր, անմիջապէս որ կրօնաւորը մտնէր ճամբու մը մէջ որ շիտակ ճամբան չէր: Անտառներուն կենդանիները՝ արջ և միեղջի-

րու, ծուկնի կուգային անոնց ճամբուն վրայ: Այսպէս չորս շաբաթ քալած ըլլալով լեռներու և ցորերու մէջէն, Նէսթօրիուս օր մը, իրիկնադէմին, հասաւ գրեթէ անմատոյց գագաթի մը վրայ: Ամրոցի երեւոյթով վանք մը կառուցուած էր հոն: Գարաթէքէն էր ատիկա: Մեր ուխտը, քիչ մը նուազ խիստ այն ժամանակ, կը թոյլատրէր ընդունիլ այր ուղեւորները, երբ դժուարութեան մէջ էին: Նէսթօրիուս գիշերուան համար պատագարան գտաւ հոն: Բայց երբ լուսածագին կ'ուզէր մեկնիլ, չկրցաւ, իր բռնին պատճառաւ: Այդ բռնը այնքան ծանր էր դարձած որ 12 հուժկու մարդիկ դժուարութիւն պիտի կրէին զայն վերցնելու: Սնտուկը բացուեցաւ: Հոնկէ հանուեցաւ՝ ոսկի ապառօջը ճակատին, սուտակով դրուաբուսած էմիրական կանաչով թաւշեայ պարեգօտը վրան, արձանը անոր օր կը յայտնէր իր կամքը՝ աւելի հեռու չերթալու: Եւ անա թէ ինչպէս, Քրիստոսի 1291 թուականին, Թորթոզայի Տիրամայրը դարձաւ, Գարա թէքէի մէջ, Սիթ-էլ-Քօպուրը, այսինքն Ս. Գերեզմանի Տիրամայրը:

— Եւ, ըսաւ Ռօշ աւելի քաղաքավարական շնչտով մը քան համոզումի շնչտով, այդ արձանն է որ քեզի կը պատկանի այսօր:

Արմէն ունեցաւ ժէսթը մէկու մը որ կը համակերպի այդքանը չպահանջելու:

— Ամէն մարդ այդ կ'ըսէ: Ես միայն մէկ բան կրնամ վկայել. Աստուածամայրը որուն կը յաւակնիս թէ կը նմանի մ այն իսկ է — այս մասին վստահ եմ — զոր Գարա թէքէի մէջ 15 տարի պաշտած է փոքրիկ աղջիկը որ դարձած է հիմա կինը զոր ունիս քու առջև: Այո՞, կը գուշակեմ ինչ որ կը մտածես, հարցու՞մը զոր չես համարձակիր ընել: Ի՞նչպէս նման

գանձ մը կրցած է գալ սոսկական անհատներու մօտ, փոխանակ մնալու իր վանքին մէջ: Է՛հ, ատիկա հարցնել՝ հարցնել պիտի ըլլ օր թէ ի՞նչու ես իսկ չեմ մնացած հոն: Համբերութիւն, համբերութիւն. պիտի չուշանաս գիտնալու ատիկա:

Եւ ամբողջ մնացեալն ալ, աւա՛ղ:
Շարունակեց, տարօրինակ կինը, խաչակնքելէ ետք:

— Քանի որ այնքան բացորոշ կերպով կը յայտնէր իր կամքը, պէտք էր, Գարա թէքէի մատուռին մէջ, գտնել իրեն արժանի նոր բնակավայր մը: Այդ տեղ է որ Նէսթօրիուս միջամտեց: Խնդրոյ առարկայ մատուռը էր սակայն գեղեցկագոյններէն մէկը Կօմակինէի, Կապուղովկիոյ և Կիլիկիոյ բոլոր մատուռներուն: Կառուցուած էր թիւզանդական մայր եկեղեցւոյ մը նախնական յատակագծին վրայ, Եղեսիոյ և Տրիպոլսոյ իշխաններուն ծառայութեան մէջ գտնուող Քրանք ճարտարագետի մը կողմէ: Նէսթօրիուս անկէ գո՛ն չեղաւ սակայն: Ինչ որ կ'ուզէր իր սիրեցեայ աքսորականին համար, որպէսզի ան լաւագոյնս կրէ աքսորի բռնը, սրբատեղի մըն էր օրինակուած անկէ որ իր սրբավայրը եղած էր Թորթոզայի մէջ: Շրջանին քարի և մարմարի ամենաճարտար վարպետները կանչուեցան իսկոյն: Ատետնին հիւսիսային կողմը, կեդրոնական սիւնին լսարիսխը վերածուեցաւ խորանարդաձեւ պատուանդանի մը, ուր կը բացուէր դուռը որ կ'առաջնորդէր արձանին համար կառուցուած ընդերկրեայ սրբատեղին: Այժմ կը հասկնաս թէ ի՞նչու, տրամաբանելով Թորթոզայի վերաբերմամբ համաձայն Գարա թէքէիի մէջ իմ սեփական աչքերովս տեսածներուս, պիտի կարենայի միջամտել քու և Հայր Անկլըպէրի վիճաբանութեան, այն օրը ուր երկուքը

հոս ճաշեցիք, և ըսել քեզի թէ դուն սխալանքի մէջ էիր, բարեկամս, և Հայր Անկլլաբերն էր որ իր սուռունք ունէր:

«Կը գտնեմ թէ անիկա (արձանը) քեզի կը նմանի», ըսիր ինծի քիչ առաջ: Եւ ես պատասխանեցի. «Ատիկա կ'ապացուցանէ թէ մարդ ի վերջոյ կը նմանի իրերուն և անձերուն զորս շատ դիտած է, որոնց մօտ երկար ժամանակ ապրած է»: Այս արձանը ինձմէ հեռու մնացած է ընդամէնը երեք տարի, որոնց ընթացքին սուտ խօսած պիտի ըլլամ եթէ ըսեմ թէ երջանիկ եղայ: Բնաւ վստահ չեմ թէ սրբապղծութիւն մը չկայ զայն պահելու մէջ սենեակս, ինչպէս կ'ընեմ ես, տալու մէջ իրեն հանապազօրեայ տեսարանը կեանքի մը, որ ուրիշ որեւէ մէկէն լաւ դիտես դուն, միշտ ալ զերծ չէ եղած մեղանշուններէ: Բայց ի'նչ, ունայն պիտի ըլլար իրմէ բան մը պահելու ջանքս: Իմ մասիս ունեցած իր ծանօթութիւնը անդրագոյն է իմ ծննդեանս իսկ, վասնզի, մեծ հաւանականութիւններ կան որ ինձմէ առաջ, ան տեսած է մօրս ծնրադրելը իր առջեւ:

Այն գաղափարը ունիմ թէ մօրս մահը շատ հեռուէն չէ հետեւած իմ աշխարհ գալուստ: Պիտի ընդունիս թէ վերապահութեան մը ստիպուած ըլլամ այն ենթադրութեանց մասին զոր ունիմ այդ խնդրոյն մէջ: Մէկ բան կ'ստկածէ դուրս է. այն է թէ անոնք որոնք գիտէին ճշմարտութիւնը, չունէին կամ կը կարծէին չունենալ զայն յայտնելու իրաւունքը: Եթէ ծնած եմ Պարս Թէքէի մէջ, ինչպէս շատ մը նշաններ կը թոյլատրեն ինծի խորհելու, այն դժբախտը որ ծնունդ տուած է ինծի, անհրաժեշտաբար կը պատկանէր այդ վանքին միաբանութեան, ուր միայն Աստուծոյ նուիրուած էակները իրաւունք ունէին մտն-

լու: Գերեզմանատունն իսկ կը գտնուէր վանքին պատերէն ներս: Ատիկա մատուռին ետեւ տեսուկ մը եղերական շրջափակ էր, զոր գիշերուան մառախուղը, երթալով ընդ առաջ առաօտուն անդունդէն բարձրացող մշուշին, երբեք չէր ուշանար ծածկելու: Պզտիկ կապտորակ խաչեր կը կրէին անունները իւրաքանչիւր կրօնաւորուհիի ինչպէս նաև անոր մահուան թուականը: Անջատ այդ խաչերէ կար խաչ մը, շատ հեռու միւսներէն, որ ո'չ մէկ արձանագրութիւն կը կրէր: Երբեք չեմ համարձակած հարցնել ոչ ոքի թէ ո՞վ թաղուած էր այդ տեղ: Բայց չեմ կրցած ալ ինքզինքս զսպել երթալ հօն ծնրադրելէ արատորոփ ելք վստահ էի թէ ոչ ոք կը նշմարէր զիս:

Հայերէն լեզուն էր որ կը գործածուէր Պարս Թէքէի մէջ, ի բացառեալ, անշուշտ, արարողութեանց և աղօթքներուն համար, որոնք կը կատարուէին լատիներէն լեզուով: Բայց եթէ շատ կ'աղօթէինք, հազուադէպորէն ուռիթ ունէինք խօսակցելու: Ինձմէ զոտ ուրիշ փոքրիկ ազգիկներ ալ կը բաժնէին վանքին կեանքը: Սահմանուած հետագային դառնալու մայրապետներ, կ'աշխատէին արդէն կրօնաւորուհիներուն հետ, զանազան գործերու մէջ: Ի'նչ ուրախութեամբ պիտի ուզէի միտալ անոնց: Բայց սրտօնութիւնը չունէի: Շատ շատ, մուտք ունէի մեծ սրահը, ուր կը ձեւուէին և կը կարուէին ուրարներ և շուրջառներ, զհայլելի կերպաներու մէջ՝ այնքան հարուստ ոսկեթալով և արծաթաթալով, որ ոտքի կը կենային: Պառաւ կրօնաւորուհի մը կանուխէ գրել և կարդալ սորվեցուցած էր ինծի: Յետոյ, ուրիշներ յաջողաբար կը զբօղէին իմ կրթութեան գոնազան առարկաներով: Շոքաթը մէկ անգամ, շաբաթ օրերը, կ'առաջնորդուէի մեծաւորուհիին քով: Առանձին կը

թողուէի անոր հետ, կամ արածեւ, գրեթէ խաւար սենեակի մը մէջ, ուր ոչ իսկ մէկ գորգ կար, ուր միակ կարասիներն էին աղօթարան մը և փայտէ մահճակալ մը, առանց ծածկոցի: Վանդակապատ պատուհանէն, կը նշմարուէր երկինքի ծաղւածեւ կտոր մը միայն, զոր ատեն ատեն կը ճեղքէր արծիւ մը: Պատին վրայ, խոնաւութենէ կրծուած նկար մը կը ներկայացնէր Մագրադիմեն անպատին մէջ:

Քանութեան ամբողջ տեւողութեան կը մնայինք ոտքի վրայ, իրարու դիմաց, քանի որ սենեակին միակ նստելու տեղն էր այդ աղօթարանը, որուն վրայ նստելու իրաւունքը չունէինք:

Հարցաքննելով զիս շարթուան ընթացքին սորաւանդներու մասին, ան երբեք չէ յանդիմանած զիս և ոչ ալ խրախուսած: Իմ միակ վարձատրութիւնս էր պատասխանել կարենալս, իմ պատիժս՝ իր դիմաց կենալս բերանաբաց:

Օր մը — կրնայի, եթէ լաւ կը հաշուեմ, 13 տարեկան եղած ըլլալ այն ժամանակ — կանչուեցայ ավանդատունը: Հոգ էր որ պահուած էր վանքին գանձը — մասունքներ, սրբազան աւօթներ, արծաթեղէններ: Գանձատան պահակ կրօնաւորուէին կը սիրէր զիս, ճաշակին համար զոր ի յայտ կը բերէի բոլոր գեղեցիկ բաներուն վերաբերմամբ: Բարեպաշտիկ կը կարծէր ժամերը զորս կ'անցընէի՝ անոնց ըմբոշխնումին մէջ համազրուուած: Մեծ ձեւակերպութիւններով բերած էին, դրացի քաղաքէն՝ հեռու ո'ր հակառակ ամէն բանի, ինչպէս ըսի. 15 փորսախ հեռուէն, անտուկ մը զոր կրօնաւորուէի բարեկամուէիս կը փոփաքէր բանալ իմ առջևս միայն, սկիզբէն իսկ ուրախ սնալով խանդավառութեանս ականատես ըլլալու գաղափարէն: Սկիզբն էր, կար-

մերփնեան հոյակապ սկիզբն էր, որ կը պարունակէր խնդրոյ առարկայ անտուկը: Անոր կեդրոնին վրայ կը փալկէր, իր ճառագայթներու լուսապսակին մէջտեղ, բիւրեղէ օսպնեակը որ սահմանուած էր Ս. Հաղորդութիւնը պարփակելու: Այդ անպատելի հայելիին է որ կը պարտիմ գիւտերուն ամենէն զարմանալին, 13 տարեկան աղջնակի մը գիւտը, զոր կը նշմարէի առաջին անգամ ըլլալով: Կարելի չէր ըսել թէ գեղեցիկ էր թէ տգեղ: Այդ բառերը դեռ իմաստ մը չունէին ինծի համար: Դժբախտաբար հեռու չէր ժամանակը ուր իրազեկ պիտի դարձուէի այդ կէտին:

Ռօշ, պահէ մը ի վեր միայն մէկ յոյս ունէր — մինչև վերջ ծածկել յուզումը որ կ'աճէր իր մէջ:

— Ի՞նչ էր անունը այդ քաղաքին, հարցուց Ռօշ, թերեւս պարզապէս բան մը ըսած ըլլալու համար, ձեր վանքէն 15 փորսախ հեռու այդ քաղաքին, Տուրոսի մէջ:

Այն տպաւորութիւնը ունեցաւ թէ՛ պատասխանելու վրայ՝ Արմէն միտքը փոխած էր յանկարծ:

— Պահ, ըսաւ անտարբերութեամբ: Ատոնք մանրամասնութիւններ են որոնց շուրջ միշտ ժամանակ կայ խօսելու դարձեալ:

— Ի՞նչ են օա Հնչակեանները, որոնց քանիցս ակնարկեցիր, հարցուց Ռօշ:

— Կան մարդիկ, ըսաւ Արմէն, որոնք կը գտնեն թէ չարիքէ մը անհրաժեշտաբար բարիք պէտք է ծնի: Այդ մարդերէն էին Հնչակեանները: Ոչինչ լսած պիտի ըլլայի այդ տալօրինակ վարդապետութեան մասին առանց այն չարիքներուն որոնցմէ ես իսկ տուսպած եմ անոր պատճառով և որոնց փոխարինութիւնը շատ լաւ չեմ զգացած երբեք:

Անոնք տեսակ մը երազատեսներ էին, որոնք կը

յաւակնէին Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրել թշուառութեանց վրայ որոնցմով հետզհետէ կը տառապէր Թուրքիոյ մէջ այն հայ ժողովուրդը, որուն կը պատկանէին Ամէն անգամ որ կրնամ պիտի խուսափիմ մտնելէ մանրամասնութեանց մէջ, զորս ինծի չափ և ինձմէ լաւ գիտես: Պարոպ տեղը չէ, այնպէս չէ, որ 1919ին զնդապետ Պրէմոնի կցորդ սպաններէն եղած ես, Կիլիկիոյ մէջ հայկական հանրապետութիւն մը հիմնելու փորձին ժամանակ: Կարճ խօսքով, այն շրջանին որուն մասին կը խօսիմ քեզի, դէպի 1904, ամբողջ Ասիական Թուրքիոյ մէջ տեղի ունեցաւ խը ոտվութեանց և ջարդերու սճում մը, իսկ Կ. Պոլսոյ մէջ, պէտք է աւելցնել, տեղի ունեցան բազմութիւ շարժումներ և մահափորձեր՝ ձեռամբ ճշդիւ մեր Հընչակեաններուն, եթէ սակայն, ատեն ատեն, կայսերական ոստիկանութիւնը գաղտնաբար ինքն ալ չկատարեց այդ մահափորձերը — մահափորձեր ուղղուած պալատականներուն դէմ և երբեմն ուղղուած դէպի աւելի բարձրերը, հրազէնի հարուածներ գիշերուան մէջ, գէշ սուրճ, յետոյ, ամենուէն պահպանուած ուրբաթ օր մը ուսմբ մը Համիտէի մզկիթին դիմաց, Սէլամլըքէն ելքին ժամանակ: Այս վերջին շահատակութիւնը մանաւանդ, պիտի չուշանար փոխադարձութեան միջոցներ յառաջացնելու: Անոնք կարծուածէն աւելի շուտ սկսան:

Մինչև այն ժամանակ, մեր շրջանը գրեթէ հանդարտ եղած էր, վալին որ կը կառավարէր նահանգը, (որմէ կախում ունէր Գարա Թէքէն) ըլլալով մէկը այն հին բարի Թուրքերէն որոնցմէ այնքան կային: Համիտիէ մզկիթին ուսմբը արժեց իրեն իր տեղը, Թերեւս նոյնինքն շնորհիւ էնթրիկանին որ յօշորած էր իրեն և որ ապացուցած էր թէ այս նա-

հանգին մէջ էր որ դաւադրութիւնը սարքուած էր և թէ հոն ապաստանած էին յետոյ դաւադիրները: Ոչ ոք վանքին մէջ կը տարակուսէր ամպերուն մասին որոնք կը կուտակուէին մեր վրայ, մեծաւորուհիէն զատ Թերեւս:

Շարք օր մըն էր: Այդ օրը, կը կարծեմ թէ ըսի արդէն, ան կը հարցաքննէր զիս շարթուան աչխատանքիս մասին: Դուռը զարնուեցաւ: Գրեթէ առանց պատասխանի սպասելու — ինչ որ արդէն պոստեցընել տուաւ մեծաւորուհիին յօնքերը — Քոյր Իրէն ներս մտաւ: Քոյր Իրէն Գարա Թէքէի մէջ կը վարէր տնտեսուհիի պաշտօնը: Ան ամէն բան եղբրականի վերածելու թերութիւնը ունէր: Բնաւ սակայն, դեռ չէի տեսած անոր վրայ աղէտի այդպիսի երեւոյթ մը:

— Ի՞նչ կայ, Քոյր Իրէն: Կը խնդրեմ, ջանացէք ինքզինքնուղ գալ:

— Մայր իմ, Գայմագամն է:

Խնդիրը կը դառնար կառավարիչին վրայ քաղաքին որուն մասին խօսեցանք... վերջապէս վանքին մերձաւորագոյն քաղաքին:

— Գայմագամը: Զորմանալի: Ի՞նչ կ'ուզէ: Ո՞ր է:

— Մայր իմ, ձգեցի զինքը դրան առջև ըսնակցելու վրայ: Հետը ունի տասնեակ մը ոստիկան-զինուորներ: Եկած եմ հարցնելու ձեզի թէ կրնամ դուռը բանալ:

— Ի՞նչ:

— Քոյր Իրէն, յիմար էք: Հաճեցէք մատուցել թալ: Դուք ձեզի գոց պիտի արտասանէք մեր ուխտին կանօնը, սպասելով որ վերադառնամ ըսելու համար ձեզի թէ պէտք է թէ ոչ պաշտօնէ հանեմ ձեզ:

Անոնք դուրս ելան, հոն թողելով զիս՝ բաւական զարմացած, բայց ոչ մտառանջ։ Շատ տարտամ կերպով միայն գիտէի թէ ի՞նչ կրնայ ըլլալ գայմագամ մը։ Ատիկա, ամէն պարագայի տակ, առաջին այր մարդն էր, յորմէ հետէ յիշողութիւնս յիշողութիւն էր, որ կը յաւակնէր Գարա Թէքքէի դուռը բռնաբարելու։ Ճանչնալով մեծաւորուհին, խնդալ սկսայ, մտածելով այն ընդունելութեան զոր այս վերջինը կը վերապահէր այդ գայմագամ ըսուածին։

Մեծապէս զարմացայ երբ երեկոյեան իմացայ թէ հող խնդալիք ոչինչ կար։ Դռնապանուհի քոյրը — պաշտօն մը որ, ըսե՛մ փակագիծի մէջ, շատ զբաղեցնող չէր Գարա Թէքքէի մէջ —, ներկայ եղած էր, երկիւղէն սարսուռով, խօսակցութեան զոր մեր Մայրը ունեցած էր, կիչէէն, գայմագամին հետ։

— Ի՞նչ կ'ուզէր գայմագամը։

— Խօսակցիլ մեծաւորուհիին հետ նոր տուրքի մը մասին, որ պիտի դրուի եղբր քրիստոնէական վանքերուն վրայ։

— Ի՞նչ պատասխանեց մեծաւորուհին։

— Թէ պիտի վճարէր ի՞նչ տուրք որ դրուէր մեր վրայ։ Պահանջեց որ տուրքին քանակը հաղորդուի իրեն նամակով։ Վերջացուց, ցաւ յայտնելով թէ Ս. Գերեզմանի Տիրամօր վանքին կանոնադրութիւնը կ'արգիլէր զինքը օսմ. բարձրաստիճան պաշտօնատարի մը հետ խօսակցել տարբեր կերպով քան դրան մը բացուածքէն։

Մամածուութիւն մը ըրի և ըսի.

— Չեմ տեսներ թէ վրդովիչ ի՞նչ կայ այդ ամենուն մէջ։ Իրամի խնդիր մըն է պարզապէս։

Պառաւ քոյրը ինքն ալ ծամածուութիւն մը ըրաւ և իմացայ իր միմնջելը.

— Արդարե՛ւ Այդ պարօնը չափազանց քաղաքավար էր, չափազանց շուտ հեռացաւ, որպէսզի գլխուն մէջ գաղափարներ ունեցած չըլլայ։ Հսուտա՛ իմ փորձառութեանս, աղջնա՛կ։ Յայտնի է որ չես գիտեր թէ ի՞նչ է գայմագամ մը։

Բնաւ մտառանջ չէի, կը կրկնեմ։ Ատիկա արգելք մը չեղաւ սակայն որ այդ գիշեր շատ տպաւորիչ երազ մը չտեսնեմ։ Սիթ-էլ-Քոպուր երեւցաւ ինծի և սկսաւ յանդիմանել զիս, ըսելով թէ կը մոռնայի զինքը բաւական երկար ժամանակէ ի վեր։ Տաւ կը զգայի մեղադրանքի մը համար որ բոլորովին ալ հիմնաւոր չէր։ Վստահ էի թէ բնաւ այդքան կրկար ժամեր չէի անցուցած սուտակներով զարգարուն կանաչ վերարկույով արձանին օտքերուն տակ։ Այստե՛հանդերձ չբողոքեցի։ Եթէ, արդարեւ, բաւական վշտանաւոր է վիճաբանիլ մեր երկրային տէրէրուն հետ, կ'ըմբռնուի թէ աւելի եւս խոհեմութիւն է չընել այդ, երբ գործդ Ս. Կոյսին հետ է, կամ, նոյն իսկ, սուրբերուն։

Եզրակացութիւնը այն եղաւ որ, յաջորդ օրը, առաւօտեան ժամերգութենէն անմիջապէս ետք, կը գտնուէի մատուռը։ Կրօնաւորուհիները իրաւունք ունէին երթալու հոն որոշ ժամերու միայն։ Բայց ես, որուն ժամանակացոյցը մեծապէս աւելի առաձգական եղած էր միշտ, կ'երթայի և կուգայի վանքին ամէն կողմերը, առանց ոչ ոքի հաչիւ տալու, գրեթէ համաձայն իմ կամքիս։

Ս. Գերեզմանի Տիրամօր սրբատեղիին դուռը՝ նրման Թարթոզայի սրբատեղիին դրան, ինչպէս ըսի արդէն, կը բացուէր կեդրոնական սիւնին պատուանդանին վրայ, ատեանին ձախ կողմը։ Վար իջայ օտքիս ծայրերուն վրայ կոխելով։ Հոն կը տիրէր խոսն-

կին բոյրը, և որովհետև պատուհան չկար, լուսու-
րութիւնը ապահովուած էր ձեղունէն կախուած իւղի
լապտերներով, որոնք բիւրեղէ գունաւոր էին՝ մանի-
շակագոյն և կանաչ: Առանց ստելու, երեք կամ
չորս տարիով աւելի տարիքոտ պիտի ըլլայի, եթէ
այժմու տարիքիս վրայ աւելցնէի դեռատի տարիքիս
բոլոր ժամերը զորս անցուցած եմ այդ պաշտուծի
վայրին մէջ: Հակառակ անոր բարբարոս և ճնշող
վեհութեան, լաւ կը զգայի ինքզինքս հոն: Իմ տունս
էի: Բաղձանքներ կ'ունենայի և կը ներկայացնէի զա-
նոնք Աստուածամօր և որովհետև համեստ բաներ կը
խնդրէի, յաճախ խնդրանքներս կ'ընդունուէին: Թէև
այդ ընդերկրեայ վայրին մէջ չկար և չէր ալ կրնար
գոյութիւն ունենալ ոչ մէկ հովի հոսանք, լապտեր-
ներուն պատրոյգները երբեմն կամարներուն վրայ
կ'արձակէին տարօրինակ ստուերներ և այն ատեն
սրբազան երկիւղով մը կը տեսնէի Տիրամօր մուայ և
ողորկ դէմքին յանկարծ արտայայտութիւն փոխելը:

Այն արտայայտութիւնը զոր ստացաւ այդ առա-
ւօտ — կ'աղօթէի իր ոտքերուն տակ շուրջ կէս ժամէ
ի վեր — ահաբեկեց զիս: Թուեցաւ ինծի թէ նոյն ժա-
մանակ լապտերները սկսած էին էին ճօճիլ: Աղմուկ
չկար անշուշտ: Ոչ մէկ աղմուկ կրնար հասնիլ հար-
կաւ մինչև այս խորութիւնը, բայց կը զգացուէր
խախտուծի պէս, ահագնամեծ ցնցուծի պէս բան մը:
Սարսափի գագաթնակէտին հասած, աւելի եւս կ'եր-
կրպագէի: Քանի մը վայրկեանի համար զգայազիրկ
եղած ըլլալու էի: Յուրա հով մը սթափեցուց զիս,
ստեղծնելով ծոճրակս: Այդ հովը կուգար սանդուխին
բաց և սեւ բերանէն: Ի՞նչ կ'անցնէր կը դառնար վե-
րը: Պէտք էր գիտնալ ամէն զնով: Ոտքի ելայ և
երերակալով սկսայ բարձրանալ մաշած սանդխամա-

տերէն: Այժմ, հովը կը հարուածէր դէմքս: Աւելի
բուռն պիտի չըլլար երբեք՝ եթէ վանքին բոլոր դուռ-
ներն ու պատուհանները բացուած ըլլային նոյն ժա-
մանակ:

— Թշուա՛ռ, ի՞նչ ընելու կուգաս: Ի՞նչ բանի կը
մտածես: Ե՛՛լու դարձիր: Աճապարե՛նք: Աճապարե՛:
Քոյր Թէոտորան էր որ ունէի աչքիս դիմաց, սար-
սափէն փոսը ինկած աչքերով քոյր Թէոտորա մը:
Հաւ կը ճանչնայի խեղճ պղտիկը: Վանքին ամենէն
դեռատի կրօնաւորուհիներէն մէկն էր: Մանուկ, խա-
ղացած էի անոր հետ, կրօնաւորուհիի քօլը սունելէն
առաջ: Հաւ կը ճանչնայի զինքը և այդ պահուն հա-
զի՛ւ թէ կը ճանչնայի զայն:

Հրելով զիս, գրեթէ գլտորելով զիս սանդուխին
վրայ որուն սեմին վրայ երեւցած էի, կը տանէր զիս:
Կը զարնուէինք խոնաւ պատերուն: Կը սայթաքէի:

— Աւելի արագ, աւելի արագ: Ս. Աստուածա-
մայր, միայն դո՛ւն կրնաս փրկել մեզ:
Կ'ուզէի խօսիլ: Ձուքը դրաւ բերնիս վրայ: Ի
րեն հետ փլած արձանին ոտքին, կը լսէի իր ակառ-
ներուն կափկափելը: Բազուկիս վրայ զգացի տաք
բան մը: Չկրցայ զսպել սարսափի աղսղակ մը:

— Արի՛ւն, Աստուած իմ:
Դարձեալ զգացի իր ազաչաւոր ձեռքը չրթուն-
քիս վրայ:
— Լռէ՛, կ'աղաչէր, օ՛հ, լռէ: Եթէ գտնես մեզ,
կորուած եմք:

Որքան ժամանակ մնացինք այդպէս: Կան վայր-
կեաններ որոնք չափ չունին: Պղտիկ քոյրը սկսած էր
խօսիլ գահազէժ ձայնով մը, որ հետզհետէ կը տկա-
րանար ամենատարօրինակ կերպով. նուազ վախի ազ-
դեցութեան տակ կարծես քան տեսակ մը տեղի:

Արցունքով և հեկեկանքով ընդմիջուած իր բացատր-
րութեանց ընթացքին, կանգ կ'առնէր, իր բոլոր
անդամներով դողալ վերսկսելու համար: Ես էի իմ
կարգիս որ ստիպուած էի հիմա պաղատիլ իրեն որ
այդքան բարձրաձայն չհեծեծէ: Եւ մը՛շտ այդ ահաւոր
գաղջ հոտու՛մբ բազուկիս վրայ:

— Քոյր Թէոտորա, անդորրէ՛ս՝ Վիրաւորուած ես:

— Ձի՛ն՝: Կարեւորութիւն չունի: Իմա բան մը
չէ: Բայց, պզտի՛կս, եթէ տեսնէի՛ր միւսները: Ինչ
ըսելու վրայ էի: Հարցում մի՛ ըներ ինծի, ի սէր Աս-
տուծոյ: Արդէն իսկ բաւական նեղութեան մէջ եմ
առանց ատոր ալ...: Ա՛հ, այո՛, յիշեցի: Երէկ կէս-
րէն ետք եկող Գայմագամն էր: Բայց այսօր, այլեւս
միայն տասնեակ մը ոստիկան-զինուորներ չէ որ կ'ըն-
կերանային անօր, այլ ամբողջ վաշտ մը, թնդանօ-
թով մը միասին...: Պոշարեցին վանքը: Վստահ եմ
թէ երէկ ամէնքն ալ հոն էին արդէն իսկ, և թէ
միայն մեկնիլ ձեւացուցած էի: Քիչ առաջ, երբ ա-
րեւը ծագեցաւ, դիրք բռնած էին մեծ դրան՝ առջև:
Գայմագամը հրամայեց մեր մեծաւորուհիին որ դուռը
բանալ տայ: Լեծաւորուհին պատասխանեց իրեն թէ
Աստուծոյ և իր հրամաններուն մէջտեղ՝ իրեն համար
վարանելու հարց չէր կրնար գոյութիւն ունենալ:
Կարծես թէ այդ պատասխանին կը սպասէին միայն:
Երկար չտեսեց. թնդանօթի Ռէկ հարուած, երկու հար-
ւած...: Մեծ դուռը կտոր կտոր եղաւ: Եւ անոր հետ՝
ճակատի մեծ պատին մէկ ամբողջ մասը: Նուազ ժա-
մանակէն քան ի՛նչ որ պէտք է պատմելու համար, ա-
նոնք վանքէն ներս մտած էին:

— Ի՛նչո՛ւ, քանի որ մեր մայրը ըսած էր իրեն
թէ կը բաւէր որ հաղորդէին տուրքին թիւը:

— Ա՛հ, եղո՛ւկ մեզի, իբր թէ հարցը դառնար

տուրքի վրայ...: Առանց ատոր, թերեւս ամէնքս ալ
կեանքին մէջ պիտի ըլլայինք դեռ: Նախ, ամէն բան
աղէկ գէշ ընթացաւ: Բացի այդ մարդիկը տեսնելու,
անոնց չիման ենթարկուելու, անոնց սոսկալի խօս-
քերը լսելու ամօթէն, կրնայինք պահել յոյսը խու-
սափելու վտանգէ մը, որուն տարածութիւնը չէինք
իսկ մտքէ անցըներ: Սպան որ կը հրամայէր զօրա-
խումբին, յարգալից փութկոտութեամբ մը կը կա-
տարէր Գայմագամին հրամանները: Լսեցի այս վերջ-
նոյս ըսելը. «Պէտք է գտնել զանոնք ամէն գնով:
Վալի՛ (կուսակալ) երբեք պիտի չներէ մեզի, եթէ
ձեռնունայն վերադառնանք: Վստահ ենք թէ երկու-
քն ալ հոս ապաստանած են: Երկար ժամանակէ ի
վեր իրազեկ եմ այս պատու վնասին խաղերուն»:
Մեր մեծաւորուհին էր որ կ'որակուէր այդ բառերով:
Ինք, մեծաւորուհին, չորս զինուորներուն մէջտեղ
որոնք կը հպէին իր վրայ՝ սուրհուտոր հրացաննե-
րով, երբեք այդքան հանդարտ չէր երեւցած աչքիս,
աւելի սառնարիւն, աւելի անտարբեր:

Հազիւ թէ կը բարեհաճէր պատասխանել հար-
ցումներուն զորս չէին դադրիր ընելէ իրեն: Քոյրով
սպառնալիքներուն, նոյնիսկ զանոնք լսելու երե-
ւոյթը չունէր: Միւսներս՝ ողորմելի լքուած հօտ,
սկսանք փախչիլ ամէն ուղղութեամբ: Այժմ, խմ-
բուած քիչ մը ամէն տեղ, հլու դարձած՝ հրացանի
կօթերով հարուածներուն պատճառաւ զորս մեզմէ
ոմանք ճաշկամ էին արդէն իսկ, կը սպասէինք՝
մուռջ և անձկալից, թէ ի՛նչ պիտի որոշուէր մեր
մասին: Ես, խեղճ տխմարս, կը շարունակէի համոզ-
ւած մնալ թէ խ՛դիրը կը դառնար միշտ տուրքի
պատմութեան շուրջ: Գայմագամը վերջացուցած էր
զետնայարկին խուզարկութիւնը: Հասած նրբանցքը

որ կը տանի դէպի խորհանոցները, վերադառնալու վրայ էր, երբ քերամենուս կորստեան համար, նըշմարեց պատին վրայ պզտիկ դուռ մը որ նոյնիսկ բանալիով գոցուած չէր, ա՛յն, գիտեա՛, որ կ'առաջ նորդէ խորշը, ուր կը պահուի մեր փայտի պաշարը: Պահ մը թուեցաւ վարանիլ, յետոյ մտաւ հոն վըճաւական կերպով: Աւա՛ղ, հրազէնի մէկ, երկու, վեց հարուածներ: Չորս ոստիկան-զինուորներ կը տապալէին սալայատակին վրայ, մինչ, նոյն վայրկեանին, երկու մարդիկ, զարմանալի ոստումով մը, յանկարծ դուրս կ'ելլէին այդ դուռէն, փոխելով իրենց սրուէնքներուն ամբողջ ուժովը, ամէն բան տապալելով իրենց ճամբուն վրայ: Յիտուս, Մարիա՛մ: Այդ բլոր մարդոց ժխորին մէջտեղ, հրացանաձգութիւնը սկսաւ այն փամանակ: Եւսան բան մը տեսած ըլլա՛ւ... Ապակիները ջարդ ու փշուր կ'ըլլային ամէն կողմ: Պատերուն ծեփը կը թռէր: Յետոյ, հեծեծ սնքներով, սեւ կերպարանքներ սկսան տապալիլ գետին, իրարու ետեւէ: Մեր քոյրերն էին, կը լսե՛ս, մեր քոյրե՛րը, զորս հրազէնի գնդակները սկսած էին հ՛ծել: Մէկը երկու մարդերէն, որոնք կրակած էին գայմադամին վրայ, ասուպի արագութեամբ անցաւ քովէս: Հրացանի կոթով հարուած մը նետեց զայն գետին, ուր սուինները վերջացուցին իր գործը: Այդ վայրկեանէն սկսեալ, զինուորները խնթեր դարձան: Եթէ նոյն իսկ իրենց սպաները ուղէին, պիտի չկարենային կասեցնել զանոնք: Բայց, փոխակազ զանոնք հանդարտեցնելու, սպաները կը գրգռէին զանոնք ըսպաննութեան: Չեմ գիտեր թէ ի՞նչպէս կրցայ փախ չիլ մինչև հոս: Կարելի չէ որ ներս մտած ըլլա՛ս տեսած չըլլան: Մէկ վայրկեանէն միւսը պիտի գան: Կը թուի թէ կը լսեմ զանոնք: Այո՛, անոնք են: Երկինք, ամէն ինչ վերջացած է:

Քոյր թէստորա կը սխալէր: Իր դահիճները պիտի չհասնէին իրեն: Անոնք այդ ընդերկրեայ սրբավայրը պիտի գային մէկ ժամ ետք միայն, այդ ստեն ուր Ս. Տէրամայրը, իր չարչարուած մարմնէն անջատելով իր անբիծ հոգին, տարած էր յանձնել զայն իր որդւոյն ձեռքը:

Ատիկա հասկցայ, երբ զգացի այդ ամբողջ գաղջարեան պաղիլը: Աւելի երկար ժամանակ չկրցայ առանձին մնալ այդ դիակին հետ: Ուշ կամ կանուխ, զինուորները պիտի իջնէին հոս: Լաւագոյն էր լոյսին մէջ գտնուիլ, հետեւաբար... Դարձեալ սկսայ սանդուխներէն վեր բարձրանալ: Մատուռը կը գտնուէր տակնուվրայութեան մը մէջ որ կը շփոթեցնէր երեւակայութիւնը: Զարդուփշուր տպակիներ, կոտորուած նստարաններ, խորանը տակնուվրայ, և հո՛ս ու հո՛ն և հո՛ն ալ դե՛ռ՝ երեք սև կերպարանքներ, երեք կրծաւորուէիներ պռակած սալայատակին վրայ, իրենց քով ունենալով արեան մտայլ լճակներ, որոնք կ'ընդարձակուէին հետզհետէ:

— Ուրկէ՞ դուրս ելաւ ասիկա:

Ա՛հ, չէ՛ր յապաղած: Հազիւ թէ դրան սեմը անցած էի, կը գտնուէի ձեռքը երկու զինուորներու, դաժան և լիրբ անբաններ, որոնք կը հօտէին ջրտինք և կաշի, ինչպէս նաև անհամ և բարկ ուրիշ հոտ մը— արեան հոտը: Կը պրկէին բազուկս, կը ցնցէին զիս. և հոս ու հոն կը քաշկռտէին, տեղատարափով մը վրան-բաց բառերու, որոնց վրայ զաղափար չէի կրնար ունենալ:

— Պիտի լսե՛ս, աղտոտ պզտիկ իժ թէ...

Երկու էին, ըսի արդէն: Այդ էր որ փրկեց զիս, գէթ առ այժմ: Մեր ըրած աղմուկը մեր մօտ բերաւ ենթատպայ մը: Հայտնիանքները սկսան տեղալ աջ ու ձախ:

— Այդպէ՞ս է որ կը հնազանդիք հրամաններուն : Ալ չափը անցուցիք : Ձեր տասնեակներուն միացէ՛ք և շուտով :

Գայմազամը, որուն մօտ տարաւ զիս ենթասպան՝ դատան արամադրութեան մը մէջ կը գտնուէր : Պէտք է յիշել թէ գնդակ մը ծակած էր իր թեւը : Ձինւոր մը խուզարկելու վրայ էր երկու Հնչակեանները, որոնց դիակները՝ անուելիօրէն բզկտուած, դրուած էին գետինը, քովէ քով, մեծ դրան սեմին վրայ :

— Բան չկայ, Ձերդ Վսեմութիւն, ըսաւ զինուորը շտկուելով :

— Ա՛տ էր պակաս : Կը տարակուսէի արդէն : Վալին է որ աղմուկ պիտի ընէ, ինք որ այնքան կրկնած էր ինծի ողջ ողջ բռնել զանոնք : Ձեմ շնորհաւորեր քեզ, Իզդէթ պէյ : Կրնայի՞ր լաւագոյն կերպով հրամաններ տալ սա տիմար զինուորներուդ :

Այդպէս յանդիմանուող սպան խոնարհեցաւ շփոթած :

— Ամէն մարդ քիչ շատ գլուխը կորսնցուց, Ձերդ Վսեմութիւն : Կարծուեցաւ թէ սպաննուած էիք :

— Իրողութիւնը այն է թէ ատոր մեծ բան մը չէր մնացած . . . Իե՞ս ի՞նչ կայ : Այս ի՞նչ է :

«Այո՛» ես էի, որ, հրմշտկուելով ենթասպային կողմէ, ողբալի երեւում մը կ'ունենայի գայմազամին առջև :

— Օ՛, օ՛ :

Ուրիշ բան չըսաւ նախ :

Կը քննէր զիս զարմացումով : Յետոյ ժպտեցաւ մտքենական ժպիտով մը : Իր առողջ մնացած ձեռքով, ունեցաւ մեքենական ժէսթ մը, իբր թէ ոլորելու համար իր պզտիկ շագանակագոյն պիտը :

— Խնամէ՛ զայն, եթէ վիրաւորուած է, հրամայեց վերջապէս ենթասպային :

Տա՛ր զայն և հսկէ՛ որ ոչինչ պատահի իրեն : Իւրձեալ կը խօսինք իր մասին այս երեկոյ :

Վիրաւորուած չէի : Վրաս գտնուողը խեղճ քոյր Թէոտորայի արիւնն էր :

Ուրիշ մարմին մը տարածուած էր մուտքի դրան առջև : Իե՞ս չէի նշմարած զայն : Մեր մեծաւորուհիին դիակը . . . Առաջին ինկողը եղած էր անիկա :

Գայմազամը, անցնելով անոր մօտէն, կից մը տըլաւ իրեն :

— Ասիկա նետեցէ՛ք բորենիներուն և շնագայլերուն, հրամայեց : Պառաւ խլո՛ւրդ : Ապաստան տալ այդ գարշաճճիներս՛ն . . . Ամէն բանի պատասխանատուն ինքն է :

Տիկ. Հաճիլօր խօսած էր նոյն շեշտով, առանց սեէ երեւութական յուզման, միշտ նոյն հաւատար և խուլ ձայնով :

Ան պահ մը ինքնամփոփուեցաւ, յետոյ ըսաւ ժպիտով մը .

— Անշուշտ հետագային ճանչցայ յոռեգոյն վայր կեաններ : Բայց արական սեռին հետ այդ առաջին շփումս, այնպէս չէ՞, կարծեմ թէ շատ նշանաւոր չէ՛ եղած . . . :

Արմէն ունեցաւ գլխու հետաքրքրական ճօճում մը : Տխուր ժպիտը որ ուրուաքծուած էր իր շրթներուն, ջնջուած էր :

— Կը ճանչնա՞ս Աֆիօն-Գարահիսարը, հարցուց ան :

— Անցած եմ հոնկէ մէկ անգամ, այն ալ գիշերով, պատասխանեց Ռօշ զարմօցած : Կը նշանակէ թէ անկէ պահած պատկերս շատ անորոշ է : Կը յիշեմ գի-

նեպոյն երկինքի մը վրայ ցցուած վիթխարի քառակուսի ապառաժ մը: Այդ է բոլորը: Յաջորդ օրը, արեւածագին, արդէն իսկ անկէ 30 քիլօմէթր հեռու էինք:

— Աֆիօն-Գարահիսար, կրկնեց տիկ. Հաճիլար, այսինքն՝ աֆիօնի սև բերդը: Ես ալ միայն երկու օրեր մնացած եմ հոն, բայց երկու օրեր որոնք, կը խնդրեմ որ հաւատաս ինձի, բնաւ պիտի չելլեն մտքէս: Իրենց զաւաթները լեցուն էին: Գարահալ լեցուցին զանոնք:

— Քառակուսի ապառաժը, որուն մասին կը խօսիս, ըսաւ, ա՛յն է որուն վրայ հաստատուած է միջնաբերդը: Մենք ալ Աֆիօն-Գարահիսար հասանք գիշերը: Գիտէի թէ հոն կանգ պիտի առնէինք, նահանգին կուսակալը հոն ժամադրուած ըլլալով գայմազամին հետ, արշաւանքին արդիւնքը իմանալու համար: Թէև այս վերջինը լաւ բան մը չէր ակնկալելու իր պետին հետ այդ տեսակցութենէն, կ'աճապարէր սակայն: Երեք օր, հազիւ թէ երեք օր ճամբայ ըրինք, կտրել անցնելու համար 40 փարսախ տարածութիւնը, որ Աֆիօն-Գարահիսարը կը բաժնէր մեր վանքէն: Հասկնալի՛ է, վաշտը օր այնքան յաջող կերպով կատարած էր գործը որ յայտնի է զեզի, չէր ընկերանար մեզի, իր շնորհաւորութեան բաժինը ընդունելու համար: Այդ պարօնները վերադարձած էին իրենց զօրակայանները գլխահակ: Կ'ընկերանար մեզի տասնեակ մը ոստիկան-զինուորներու խումբ մը միայն: Սպան, որ կը հրամայէր այդ պահակախումբին, իզգէթ պէյ անունով տեղակալ մըն էր և ես վստահուած էի իր պահպանութեան: 25 տարեկան մը ըլլալու էր: Գտած էր ինձի համար ջորի մը, որուն վրայ բաւական լաւ հեծած էի: Աչքերը անդին

կը դարձնէր, երբ կը դիտէր զինքը: Այդ աչքօրուն մէջ կը գուշակէի քաղցրութիւն, գուլթ և թերեւս ուրիշ բան ալ: «Ինչու ես մինակս կը տօրուիմ ձեզի հետ» հարցուցած էի անոր: Ուսերը բարձրացուցած էր: «Եթէ իսկ գիտնայի՛ զեզի յայտնելու իրաւունքը չունէի, խեղճ պզտիկս», պատասխանած էր ինձի: Ինձի յայտնելու իրաւունքը: Ոչ, այդ չէր: Իրականութեան մէջ, յայտնելու քաջութիւնն էր որ կը պակսէր իրեն: Թո՛ղ որ, ինչո՞ւ ջանալ աւելին խլել իրմէ, քանի որ, առաջին վայրկեանին իսկ հասկցա՛մ էի:

«Ի՞նչ պէտք է ընել սա պզտիկը», այս էր հարցումը զոր վրաս հսկելու պաշտօն ունեցող ենթասպան եկած էր ընելու գայմազամին:

Մարդիկ ունին շատ տարօրինակ մեծամոլութիւնը իրենց գաղտնիքները վստահելու մտերմաբար իրենց դասակարգէն վար եզող մարդոց: Կը հարցնեմ զեզի. գայմազամը ի՞նչ պէտք ունէր յայտնելու այդ խոնարհ ենթասպային իմ մասիս իր ունեցած ծրագիրները:

— Իր մասին պիտի խօսակցինք այս երեկոյ: Մի՛նչ այն, զբող է իրմով: Թող ոչ մէկ պակաս լինունայ: Եւ մանաւանդ թո՛ղ ոչ ոք ինքզինքին թոյլ տայ նուազագոյն ժէսթը անոր հանդէպ: Թերեւս պիտի ծառայէ ինձի դարմանել փորձելու այն բոլոր ախտաբաններուն կողմէ գործուած սխալը: Պէտք չէ, հետեւաբար, աւրուի ան:

Այդպէս խօսելով, դիտած էր զիս: Ժպտած էր, և, իբ առողջ մնացած բազուկով քաշելով զիս իր կուրծքին վրայ, զարմանալի համբոյր մը դրոշմած էր շրթներուս:

Երեկոյեան կանգ առինք Ագչէհիբի լիճին ափը:

Այդ լիճը կը գտնուի ծովէն մօտ 1000 մէթր բարձր-
 րութեան վրայ, և անկէ աւելի ճկնառատ լիճ չեմ
 ճանչնար: Ամբողջապէս շրջապատուած է կարմրորակ
 բարձր լեռներով: Սօւզակներ (թռչուն) շարուած էին
 անոր սփերուն, անշարժ և նման գորշ ու պիժ պղտիկ
 մանչուկներու բանակի մը: Երբ մեր կարաւանը երեւ-
 ցաւ, անոնք թռան, և սկսան պտուտքիլ ախուր կան-
 չերով ջուրերուն վերեւ, զօր իրենց տոտիկները կ'ա-
 կօսէին: Առաջին աստղերը սկսած էին ծակծկել եր-
 կինքը: Յուրտ էր. բայց չէի խորհիր տրտնջալ ատոր
 համար և ոչ ալ որեւէ բանի համար: Արագակարգ նս-
 րութիւնը տեսարաններուն որոնք չէին դադրեր ըն-
 ծայուելէ ինձի առաւօտունէ ի վեր՝ կը յափշտակէին
 զիս: Եւ ըսե՛լ թէ պիտի կարենայի կեանքս վերջացը-
 շել վանքին չորս պատերուն մէջտեղ: Օրուան ըն-
 թացքին քանիցս խորհած էի ամօթ նկատել ընթաց-
 քս — մեր վանքը տակնուվրայ եղած, մեր կրօնաւու-
 րուհիները գլխատուած և պղծուած, մեր մայրը մե-
 ռսած: Չէ՛ի յաջողած՝ ամչնալու ջանքերուս մէջ: Դա-
 լով ինձի գլխուս վերեւ տակախուած վտանգները
 աւելի կը հետաքրքրէին քան թէ կը սարսափեցնէին
 զիս: Կը նախընտրէի զանոնք դիմագրաւել առանց
 կանխաւ գիտնալու թէ ի՛նչ են: Եւ սակայն, ոչ ա-
 պերախտ մըն էի և ոչ ալ՝ հերոսուհի մը: Ոչ: Պար-
 զապէս փոքրիկ էակ մը, որուն առջև կեանքի վա-
 րագոյրը կը բացուէր յանկարծ: Կ'ըսեմ եղածը: Եղե-
 լութիւնները կը պատմեմ ինչպէս որ պատահեցան
 անոնք, կամ, աւելի ճիշդը, ինչպէս որ զգացի զս-
 նոնք: Ծածկել իրողութիւնները՝ աւելորդ է, արուած
 ըլլալով ինչ որ կը սպասէ ինձի: Անտիոքէն մինչեւ
 հոս բերել չտուի զքեզ, որպէսզի սուտեր լսես, այն-
 պէս չէ՛:

Մեր շուրջը, մեր ճամբարին ծուխերը կը բարձ-
 րանային, նեղ և յստակ, ամայի երկինքին մէջ: Բնաւ
 Ասիայէն զատ ուրիշ նրկրամաս չեմ ճանչցած: Ուրեմն,
 լսած ըլլալուս համար է միայն որ կ'ըսեմ թէ ուրիշ
 ոչ մէկ անող կատարները աւելի կոյս, աւելի պայծառ են
 քան հոս: Ամէն պարագայի մէջ, միշտ պիտի յիշեմ
 սառուցիկ անբծութեան տպաւորութիւնը զոր թողուց
 վրաս այդ գիշերը, առաջին գիշերը զոր կ'անցընէի
 վանքէն դուրս: Եղերքներու ջուրը սառած էր: Հա-
 մաստեղութիւնները ունէին փայլը եղեամով թրջուած
 խաղողի ողկոյցներուն: Ոչ մէկ աղմուկ, ի բացառեալ,
 ատեն ատեն, խուլ ճողփիւնէն թռչունի մը որ կը
 սուզուէր ջուրերուն մէջ:

Վրանը, որ ապաստան պիտի տար գայմագամի՛,
 չանգնուած էր մէկ կողմ, լաւ պատսպարուած գոգի
 մը խորը: Նստած կը ծխէր գայմագամը, երբ ենթաս-
 պան իր մօտ տարաւ զիս: Իր բազուկին վիշակապը
 պահ մը առաջ նորոգած էին:

— Ի՞նչ են ձեր հրահանգները, Ձերդ վօսմու-
 թիւն, հարցուց ենթասպան, խոնարհելով:

— Հրահանգներս, հէ՛օ հրահանգներ՛ս...

Կը թուէր վարանիլ: Պայքար մը, յայտնօրէն, կը
 մղուէր իր մէջ, պայքար մը, որուն շարժառիթը և
 դիմն էի ես:

— Տա՛ր զայն, հրամայեց: Թո՛ղ պառկի ուրիշ
 տեղ մը, ո՛ւր որ կ'ուզես, տեղ մը ուր ապաստով ըլլայ
 ան, բայց ոչ հոս:

Եւ երբ ենթասպան դարձեալ խոնարհութիւն մը
 ընելով կը պատրաստուէր հեռանալու՝ առանց բոլո-
 րովին կարենալ ծածկելու իր զարմացումը, գայմա-
 գամը աւելցուց, իր ընթացքը բաց ստրելու պէտքը

զգալովը, ինչ որ այն առաւօտ արդէն իսկ այնքան զարմացուցած էր զիս :

— Ես ինքզինքս կը ճանչնամ, կը հասկնամ : Վստահ չեմ թէ ի՞նչ պիտի պատահի եթէ անիկա քովս անցնէ այս գիշերը : Արդ, ներկայ պարագաներուն մէջ շահ չունիմ տալիք ընծայիս արժէքը նուազեցնելու մէջ : Այո՛, տար զայն, աւելի լաւ է որ տանիս զայն :

Քիչ մը մտահոգ անշուշտ թէ ո՛ւր պիտի տեղաւորէր զիս, ենթասպան հայրաբար կը տունէր զիս թեւէս բռնած դէպի էր պզտիկ ճամբարը : Սիւրւէթ մը անկուեցաւ մեր առջև : Իզգէթ պէյն էր :

— Ձիերը ունի՞ն իրենց պէտք եղածը, հարցուց ան :

- Այո՛, տեղակալս :
- Իսկ զինուորները :
- Անո՞նք ալ, տեղակալս :
- Լա՛ւ, ըսաւ Իզգէթ պէյ :

Մինչեւ այն ժամանակ զիս նշմարած ըլլալու երեւոյթը չուներ : Բայց ես այն տարտամ զաղափարը ունէի թէ այդ երկու առաջին հարցումները կ'ընէր. երրորդի մը հասնելու համար :

— Ո՛ւր կը տանիս այդ աղջնակը, հարցուց վերջապէս :

Պահսպանս շուարած ժպիտ մը ունեցաւ :

— Աստուած վկայ, տեղակալս, շատ գոհ պիտի ըլլայի գիտնալով թէ ո՛ւր կը տանիմ զայն : Կը կարծէի թէ գայմագամը մտադիր էր... վերջապէս... իր մօտ պահել զայն... Ատիկա աւելի կուգար իմ գործիս : Բայց կը թուի թէ այդ չէ իր մտադրուած իւրերը : Ուստի չեմ գիտեր թէ ի՞նչպէս ելլեմ խնդրոյն :

մէջէն : Մանաւա՛նդ որ, հրաման ունիմ որ գլխուն բուն մը չկայ :

Իզգէթ պէյ թուեցաւ մտածել :

— Իմ վրանս ասար զայն, հրամայեց հեղինակաւոր շեշտով մը :

- Ձեր վրո՞ւր, տեղակալս :
- Այո՛, ի՞նչ կայ. չհասկցա՞ր ըսածս :
- Այդ չէ, տեղակալս :

Խեղճ մարդը կը քերէր ականջները : Իր վարանումը ծիծաղաշարժ բան մը ունէր :

— Ինչ կը վերաբերի հասկնալու, ընդհակառակը շատ լաւ հասկցայ :

- Ուրեմն, ի՞նչ կը նշանակէ այդ ընթացքդ :
- Ատիկա կը նշանակէ... Թող տեղակալս բարեհաճի ներողամտիւ ըլլալ : Բայց կը կարծեմ թէ ըսի իրեն թէ հրաման ունիմ որ պզտիկին գլխուն բան մը չգայ :

— Ապո՛ւշ, ըսաւ պօրզապէս Իզգէթ պէյ : Ան բռնեց բազուկէս : Ենթասպան թող տուաւ :

— Տեղակա՛լս, ջանաց ողորքել դճու տեղակալը :

— Բաւական է, ըսաւ այս վերջինը անհամբերութեամբ : Այլեւս այս խնդրոյն մի խառնուի՛ր :

Միւսը ժէսթ մը ունեցաւ, իբր թէ ըսելու համար՝

— Քանի որ այդպէս է, վերջ ի վերջոյ աւելի՛ լաւ...

Իզգէթի վրանը շատ մօտ էր : Հոն տարաւ զիս առանց բառ մը ըսելու : Շատ պիտի զարմանայի, եթէ նախորդ գիշերն ըսէին ինձի թէ յաջորդ օրը պիտի պառկէի օսմ. ժանտարմըրիի սպայի մը անկողնին մէջ :

Անկողնի՞նը : Պէտք չէ չափազանցել սակայն : Գորգ մը, պարզ գորգ մը գետնին վրայ, և իբր բարձ՝ Իզ-

զէթ պէյի ձիուն թամբը: Այս մանրամասնութիւնները զատորոշեցի արագ նշոյլովը լուցկիի մը, զոր վառեց:

— Երկնցի՛ր և ջանա՛ ջնանալ, հրամայեց տարօրինակ ձայնով մը՝ միանգամայն քաղցր և խոպոտ: Վաղուան օրն ալ դժնդակ պիտի ըլլայ, գիտես:

Նոյն ժամանակ զգացի որ կը փաթթէր զիս բուրդէ ծածկոցի մը մէջ: Կարծեմ թէ կեանքիս մէջ երբեք այդքան յուզուած չէի դեռ, բայց յուզում մը, որ այլեւս վախի յուզումը չէր: Իրարու բան չէինք ըսեր: Կարծեմ թէ ինքն ալ յուզուած էր:

Գիշերուան տմոյն լոյսը յանկարծ, քառակուսիի ձեւով լոյս մը: Վրանին շարժական դուռն էր որ կը բացուէր: Առանձին էի: Դուրս ելած էր անիկա:

— Անբա՛ն, ջորի՛, ի՛նչ կ'ըսես կոր:

Քնացած էի: Չեմ գիտեր: Իրողութիւնը այն է որ այդ զայրալից ձայնը ընդոստ ոտքի հանեց զիս: Ճանչցած էի գայմագամին ձայնը:

Տարտամ մրմունջ մը լսուեցաւ: Խեղճ ենթասպան էր որ կը ջանար արդարացնել ինքզինքը: Ապա երրորդ ձայն մը բարձրացաւ, այս վերջինը կշռութաւ որ և հանդարտ ձայն մը— ձայնը Իզզէթ պէյի:

— Ճշմարտութիւնը միայն կ'ըսէ ձեզի, Ձերդ Վսեմութիւն: Իմ հրամանովս է, և իմ հրամանովս միայն, որ գործած է:

— Ձեր հրամանով: Խնթեցած էք: Ո՛ւրկէ կը ստանաք այդպիսի հրամանի մը իրաւունքը: Ոչ իսկ վայրկեան մը թոյլ պիտի չտամ որ այդ պզտիկը...

Ինձմէ հօգիւ քանի մը մէթր անդին, երկու կամ երեքմէթր շատ շատեր, որ այդ խօսակցութիւնը տեղի կ'ունենար: Յանկարծ, վիճաբանութեան յաջորդեց խուլ աղմուկ մը, հրմշտուկի, ծեծկըւուքի պէս բան մը: Իզզէթ պէյ, հասկցայ ատիկա, ոտքի կեցած էր

իր վրանին մուտքին առջև, ուրկէ գայճագամը կ'ուզէր բռնի ներս մտնել:

— Կը հրամայեմ ձեզի...:

— Հոս, իմ տունս եմ, Ձերդ Վսեմութիւն: Ծառայութեան զուրո՛ հրաման տալու իրաւունք չունիք:

— Ծառայութիւն: Կը համարձակիք ծառայութեան մասի՞ս խօսիլ: Պիտի տեսնէք թէ այս ամէնը ինչպէս պիտի վերջանայ: Մինչ այդ, թոյլ տուէք որ անցնիմ, կամ, այլապէս...:

Այդ խուլ աղմուկը, այդ հրմշտուկները՝ դարձեալ: Իզզէթ պէյ շատ դժուարութիւն քաշելու չէր զսպելու համար իր հակառակորդը, որուն թեւը վիճաբանութեամբ էր: Լսեցի ցուի հեծեծանք մը:

— Բաղդ ունիք որ բազուկս այս վիճակին մէջ է, այլապէս...:

— Թոյլ տուէք ըսել ձեզի, Ձերդ Վսեմութիւն, որ ընդհակառակը դուք է որ բաղդաւոր էք, պատասխանեց Իզզէթ պէյ, կատարեալ քաղաքավարութեամբ մը...:

**

Աֆիօն-Գարահիսար: Ի՛նչ յստիւլուածական անձկութիւն համակեց զիս երբ սկսանք, գիշերը, մազըլ-ցիլ միջնաբերդն ի վեր: Միայն բաց խբիկ լոյսեր, որոնք կը մագլցէին մեզի հետ, խաւարն ի վեր, ցոյց կուտային ձեւը սև ապաստօթին:

Այնքան մեծ էր կուտակալին անապարտանքը գիտնալու Գարա թէ՛ քէթի վանքին խնդրոյն մանրամասնութիւնները, որ ոչ իսկ մէկ վայրկեան սպասեցի՛ք ընդունուելու համար անոր կողմէ: Կ'ըսեմ «սպասեցինք», որովհետեւ յոյս դնելով իմ ներկայութեանս ցիլք», որովհետեւ յոյս դնելով իմ ներկայութեանս վրայ՝ առաջին անգամ համար փութորկին որմէ վայսնալու ամէն պատճառ ունէր, իրեն հետ ասարած էր

զիս սրահը ուր իր պետը կը սպասէր իրենս :

Այդ սրահը՝ ընդարձակ և շատ գէշ լուսաւորուած , ունէր կամարածեւ ձեւըն մը , բռնուած բազմաթիւ և մռայլ սիւներու վրայ : Բնազդորէն , մարդ կը յառաջանար հոն զգուշաքայլ : Կարծես թէ՝ կը շրջափայտի իր հեկայական սուկերու անտառի մը մէջ :

Լուսթեամբ կ'անցնիմ բուռն յանդիմանութեան վրայէն , որով ընդունուեցաւ խեղճ գայմագամը : Հինգ վայրկեան շարունակ , ան չկրցաւ ոչ իսկ մէկ բառ արտասանել , սա պարզ պատճառով որ կուսակալը հարցում չըրաւ իրենս :

Լուրերը , որոնք մարդ բնաւ չէ գիտցած թէ ինչպէս , միշտ այնպէս մը կ'ընեն որ հասնին զանոնք տանելու որակուած անձերէն առաջ , անգամ մը ևս մեղմէ աւելի արագ գացած էին : Կուսակալը առաւօտէն ի վեր գիտէր թէ գործողութիւնը , որմէ այնքան առաւելութիւններ քաղել կ'ակնկալէր պալատին մէջ , վերջացած էր իբր ձախողութիւն մը :

— Պէտք էր ընտրել , եզրակացուց կուսակալը , վերջացնելով իր անողոք ամբաստանաճառը : Կամ ըլլալ բաւական ճարպիկ՝ այդ երկու ստահայիները ողջ ողջ բռնելու համար , ինչպէս հրամայած էի ձեզիս : Կամ գոնէ , կարողացած չըլլալով արգիլել անոնց բզիկ բզիկ ըլլալը , կեցընել դէպքերը և չընդգծել ձեր ձախողութիւնը ջարդով մը , որուն գլխաւոր թերութիւնը բանի մը ծառայած չըլլալն է , և որ , վաղն իսկ , պիտի չուշանայ Կ . Պալսոյ մէջ , հաւաքելու Մեծ Մպարքոսին նախասենեակին մէջ , իբր թէ հրաշքով , Տէրութեանց բոլոր դեպքանները՝ զինուած իրենց սովորական բողբոջիւններով : Այդ չէր ճշդիւ արդիւնքը զոր ձեռք բերելու պաշտօնը ունէինք , այնպէս չէ : Պէտք ունիմ ըսելու թէ ստիկա չի նշանակեր

յառաջացում ոչ ձեզի համար և ոչ ալ ինծի , որուն միակ սխալը եղած է սակայն այս ամբողջ պատմութեան մէջ , վստահիլ ստորագրաւ մը՝ նուազ խելացի — և քաղաքավար եմ — քան կ'ենթադրէի :

Այդպէս խօսելով հանդերձ , կուսակալը աչքէ չէր հեռացներ ազդեցութիւնը զոր իր խօսքերը առաջ կը բերէին տարիքոտ անձնաւորութեան մը վրայ , որ նստած էր իր մօտ , իր աշխատանքի գրասեղանին քիչ մը ետեւը : Խնդրոյ առարկայ անձնաւորութիւնը կըրնար ըլլալ 60 տարեկան մը : Ան հագած էր ֆէս մը և լայս սև չփակ մը՝ սիրելի Բարձրագոյն Դրան բարձրաստիճան պաշտօնատարներուն : Մեծարանքի արտայայտութիւնները զորս կուսակալը առիթ չէր փախցնէր չափելու անոր , կը յայտնէին թէ կարեւոր անձնաւորութիւն մըն էր անիկա :

Լուսթիւն արեւոյս Բարձրաստիճան պաշտօնատարը ձեռքը վերցուցած էր :

— Ի՞նչ է այդ , հարցուց մտաբ կարկառած , գրեթէ ցած ձայնով մը :

«Այդ»՝ ես էի պարզապէս : Մունջ , քաշուած ըստ լերին մէջ սիւնի մը ուր գայմագամը թողուցած էր զիս , բռնած էի շնչառութիւնս այդ ամբողջ տեսարանին ընթացքին : Բոպէն ուր իմ բախտս պիտի վճռուէր , ապահովապէս այլեւս շատ հեռու չէր հնչել :

— Մօտեցի՛ր , պղտիկ :
Հնազանդեցայ : Տեսակ մը պղտոր սարսուռ անցաւ :

— Աւելի՛ մօտ , հրամայեց ծերուկ պարոնը :
— Ի՞նչ է այս , հարցուց իր կարգին կուսակալը՝ անկարող աւելի երկար ժամանակ ծածկելու իր զարմացումը :

Որքան ալ անըմբռնելի ըլլար , այնքան ցնցուելէ

եաք, գայմազամը սկսաւ խօսիլ, ժպիտով մը զօր կը շանար անփոյթ ընծայել:

— Որբուհի մը, Ձերդ Վսեմութիւն, եթէ քողած տեղեկութիւններս ստոյգ են: Խեղճ պղտիկ լքեալ մը, որուն ծագումին մասին բացարձակապէս ոչինչ գիտէին, Գարա Թէքքէի վանքին մէջ: Միշտ հոն ապրած էր ցարդ: Մարդասիրական պարտականութիւն նկատեցի դէպքերէն եաք որոնք ծանօթ են ձեզի և որոնց համար կը ցաւիմ սրախ խորէն...:

Աչքէ չէի հեռացներ զայն, մինչ ինքզինքը կը բացարէր, կամ, աւելի ճիշդը, կը շփոթէր այդպէս: Կը ժպտէր, կը դողար ալ: Գարչելի' էր:

— Ապա, բոլորովին դիպուածով, նշմարած ըլլալով հրապարները զօր պղտիկը կը միացնէր իր վրայ, խորհեցայ որ չպիտի արհամարհէիք, Ձերդ Վսեմութիւն...:

Այդ խօսքերուն հետեւեցան գնահատումներ այն շահեկանութեան մասին զոր մարմինս կրնար ներկայացնել: Ըսե՛լ գոեհկութիւնը նման զովքերու: Միտ'կ պատճառք, աւա՛ղ, Աստուած իմ, որ դեռ այսօր ալ կ'արգիլէ զիս անոնց ամբողջ ստորնութիւնը խոստովանել, այն է որ այդ պահուն ինքզինքս տարտամօրէն փաղաքշուած զգացի: Ճիշդ 17 տարի առաջ էր: Անկէ ի վեր շատ «տաք և պող» տեսած եմ, բայց ոչ մէկ բան պօքալիութեան մէջ հաւասարած է հաւաքոյթին այդ երեք մարդոց, որոնց նայուածքներուն շրջիւր կը զգայի մանկական մարմնայս վրայ:

Տիկ. Հաճիլար լռեց: Թեթեւ հեծք մը լսուած էր: Ռոշ ձեռքին մէջ բռնած էր կիսովին շանբանիսով լեցուն բաժակ մը: Այդ բաժակն էր որ կոտորուած էր իր մատներուն մէջտեղ:

Արմէն և Ռոշ իրարու նայեցան:

— Պէ՞տք է շարունակեմ, հարցուց կինը:

— Շարունակէ՛, պատասխանեց Ռոշ ծանրութեամբ:

10.

Արմէն դանդաղութեամբ ձեռքը անցուց ճակատին վրայէն:

— Գայմազամը դուրս ելած էր, շարունակեց ան, հոն թողելով զիս հրամանին վրայ որ արուեցաւ իրեն: Երբ սե լայն չփակով ձերուկ պարոնը բան մը մըմընջեց կուսակալին ականջին: Գացած էր բարեւելով՝ ետ ետ քալելով: Անհետացած էր, կլանուած օրահին մթութենէն: Երբ իր քայլերուն աղմուկը սալարկներուն վրայ մտրեցաւ, անձնաւորութիւնը որուն անունը կ'անդիտանայի դեռ, նշան ըրած էր ինձի աւելի ևս մօտենալու: Այո՛, անտարակոյս, շատ կարեւոր մէկը ըլլալու էր: Կը թուէր թէ հոն իր տունն էր: Կուսակալը կը թուէր ոչինչ մերժել անոր:

— Ուղիղ կեցի՛ր, այո՛, այդպէս:

Աւելի լաւ տեսնելու համար զիս, առած էր կանաչ լուսամփոփով լամբարը, որ կը լուսաւորէր գրասեղանը: Պահ մը բռնած էր զայն օդին մէջ, իր բոլորովին կնճիռներով ծածկուած դէմքին վերև:

— Ուրիշ բան չեմ կրնար ընել, քան կրկնել քիչ առաջ ըսածս, ըսու, երբ լամբարը տեղը զետեղած էր: Խնդիրը զօր ձեր գլխուն բացիք, ամենանեղացողիչ է: Չափէն աւելի մեռեալներ՝ արդիւնքին բաղդատմամբ, ինչպէս շատ լաւ ընդունեցիք դուք իսկ: Ատիկա բաւական է որպէսզի ոչ մէկ միջոց չխնայեք,

ամէն բան կարգադրելու համար: Արդ, ահա առիկ միջոց մը, զոր նախախնամութիւնը ընծայած է ձեզի: — Կը կարծէ՞ք:

— Ոչինչ կրնամ երաշխաւորել, բայց այսուհանդերձ... Գրո՞ղ, պէտք է քիչ մը աւելի մօտէն նայիլ ընծաներուն որոնք կը բերուին ձեզի: Այսպիսի ընծայ մը հազուագիւտ է:

Մտիկ կ'ընէի, մտիկ կ'ընէի յափշտակուած ամբողջ յոյսերով և անձկութեամբ: Անշուշտ շատ պիտի զարմացնէին զիս այդ պահուն եթէ գային ըսել ինծի թէ ի՞նչ պիտի դառնար օր մը ինծի համար ձերուկը որ այդ կերպ խորհուրդներ կուտար կուսակալին և որ ուրիշ մարդ չէր բայց եթէ վեհ. Սուլթանին անձնական գանձուն նախարարը՝ Ն. Վ. Էլիաս-Հաճիլար փաշա, ապագայ ամուսինս՝ ամէն բան ըսած ըլլալու համար:

— Ծնորհակալ եմ, ըսաւ կուսակալը, որուն մօտ յոյսը կը թուէր վերածնիլ: Ձեր բարութիւնը գազաթնակէտին հասցուցէք: Գործնականապէս, ինչպէս կը տեսնէք խնդրոյն իրագործումը: Ի սէր Աստուծոյ, չէի՞ք կրնար հաւանիլ...

— Ի՞նչ բանի, ե՞ս իսկ զբաղելու խնդրով: Հը՛մ: Բաւական փափուկ խնդիր է: Թոյլ տուէ՞ք որ մտածեմ: Ինչո՞ւ չէ, վերջ ի վերջոյ: Շատ համակրելի էք ինծի և ոչ ոք կը տեսնեմ որ այդ խնդիրը կարենայ ինծի չափ լաւ կարգադրել:

Հաճիլար փաշա քիչ մը քթախոտ առաւ, դարձեալ վեր վերցուց լամբարը դիտելու համար զիս:

— Լաւ, համաձայն ենք ուրիմն: Միայն թէ տրւէք անհրաժեշտ հրահանգները որպէսզի մինչեւ վաղը երեկոյ հսկուի իր վրա ինչպէս պատշաճ է: Այս վայրկեանէն սկսեալ նուիրական է անիկա:

Նուիրական էի, նուիրականս Ի՞նչ կրնար նշանակել ատիկա: Գիշերուան առաջին ժամերուն մէկ մասը անցուցի այդ հարցումը ընելով ինքզինքիս: Ոչ երկար ժամանակ՝ անկեղծ ըլլալու համար: Պէտք չէ մոռնալ որ նման օրերէ ետք, իրաւունք ունէի յոգնելու: Ասկէ զատ, դեռ տասնևվեց տարու իսկ չկոյի: Այդ տարիքին, կը գնահատուի սենեակ մը ուր ամէկ բուն նախատեսուած է հանգստութեան համար, ինչպէս երեւցաւ ինծի սենեակը ուր առաջնորդուեցայ՝ փառաւոր ընթրիքէ մը ետք: Սուտ խօսած պիտի ըլլայի եթէ ըսէի թէ, արուած ըլլալով հետքերը թի՛ւն ալ, չէի ախորժար նոր կեանքէս:

Կը յիշե՛մ, Այնուհետեւ չեմ վերադարձած Աֆիօ՛ի միջնաբերդը: Բայց վստահ եմ թէ եթէ դէպքերը օր մը այն կողմը տանին զիս դարձեալ, վայրկեան մը իսկ պիտի չվարանիմ ճանչնալու համար այդ սենեակը: Տեսակ մը ընդունելութեան սրահ, կոթողական լապտերներով, որոնց բիւրեղէ պրիսմայները զարմանալիօրէն կը շողային խաւարին մէջ, գոյնզգոյն: Անիկա չէր անշուշտ, հակառակ հանգստաւէտութեան որուն մասին խօսեցայ, կիւն մը ընդունելու սահմանուած վայր մը: Իրաւ է թէ այդ կիւնը, ե՛ս՝ այդ պարագային, իրաւունք չունէր բողոքելու, եթէ իսկ բողոքեմ ունենար: Արդ, ընդհակառակը, հետզհետէ աւելի այն ապաւորութիւնը ունէի թէ կը քալէի երազներուն ամենէն դիւթանրաշին մէջ: Գոնէ պիտի ունենայի այդ ապաւորութիւնը, եթէ ի կարգ մը վայրկեաններու, չունենայի, հակառակ ամէն բանի, դուր մը որ գրաւած էր զիս յանկարծ և որմէ չէի կրնար ձերբազատուիլ:

Ներս մտաւ սեւեր հագած կին մը, որ վերցուց իր շարձափը (քօղ), ստուգելէ ետք թէ առանձին էի:

Կարուհի մըն էր: Առաւ չափս, առանց բարեհաճելու պատասխանել հարցումներուն զորս կ'ընէի իրեն: Նոյն իսկ գիշեր բարի չըսու, երբ կը հեռանար, բաւականա՛ւրով ծանուցանելու ինծի թէ յաջորդ առաւօտ կանուխ պետի ունենայի պարեգօտը զոր ինծի համար կարելու պաշտօն ունէր:

Եւնչ մը առիւ Հոգսմութիւնը զոր ունէին այդպէս ինծի համար, պերճանք չէր, կը վատանցնեմ քեզ: Գորշ պատտռուէ համեստ շրջազգեստը, զոր հագած էի վանքին վրայ յարձակման առաւօտը և զոր կը շարունակէի կրել այնուհետեւ երեք օրեր, կը գտնուէր վիճակի մը մէջ...: «Ի՞նչ հագցնել որոշած են ինծի այս մարդիկը, կը հարցնէի ինքզինքիս թեթեւ մտահոգութեամբ մը: Կը կարծե՛մ թէ այդ եղաւ վերջին մտածումս քնանալէ առաջ:

Յաջորդ առաւօտուն երբ արթնցայ, տեսայ պատասխանը պատրաստ իմ դիմացս: Կարուհին ապահովապէս չէր լքած աշխատանքը գիշերն ի բուն: Ինծի սահմանուած զգեստը հոն էր, տարածուած ոսկեզօծ փայտի և կարմիր թաւիչէ թիկնաթոռին վրայ, ոտքին տակ անկողնիս, որ Լուսուվիկոս ԺԴ. ոճով խոշոր բազմօց մըն էր, ինքն ալ կարմիր թաւիչէ և ոսկեզօծ փայտէ: Ակամայ սարսուացի, երբ նշմարեցի այդ զգեստը: Թուրք կիներու չարչամը, սեւ շրջազգեստը և վերարկուն էր: Դեռ չէի գիտեր թէ ի՞նչ կ'ուզեն ինձմէ: Բայց արդէն իսկ ունէի տպաւորութիւնը զայն գուշակելու: Ամէն պարագայի տակ իմ խորհուրդս հարցնելու տաղտուկը յանձն չէին առեր: Ողջ թողուիլ, լաւ ուտել, լաւ քնանալ... Կ'ըսէին թէ ատիկա կը բուէր ինծի: Սկիզբէն կը կարգադրէին՝ ինձմէ դուրս՝ զանազան ձեւերը իմ սպագայ կրօնուրացութեանս:

Այդ յայտնութիւնը պէտք էր ըլլար կեանքիս յոռեգոյն յայտնութիւններէն մէկը: Բայց միշտ այդ վայրկեաններուն կան մէկ կամ երկու մանրամասնութիւններ, կեանքին սէրը տալու համար մեզի, անոր կառչել տալու համար զմեզ, հակառակ մեզի, գրեթէ հակառակ իրենս... Կ'ակնարկեմ, երեւակայէ, երկու ծիծեռնակներու: Անոնք փակուած ըլլալու էին, երեկոյեան, ընդարձակ սրահին մէջ, որուն պատուհաններէն մէկը բաց էր երբ արթնցայ: Այժմ թռչտելով լայտերներուն բիւրեղեայ ակերուն մէջէն, կը հետապնդէին իրար պզտիկ ողբագին կանչերով:

* *

Բնաւ ոտքս չէի դրած կառախումբի մը մէջ, բնաւ չէի լսած վայրաշարժի մը սուլելը: Տօգունած ըլլալու եմ երբ այն որ պիտի քայէր զմեզ իր ետեւէն, եկաւ կապուիլ առաջին վակոնին, շոգիի և իրար ընդհարող երկաթեղէններու մեծ ժխորի մը մէջ: Բայց ո՞վ այսուհետեւ պիտի հասկնար իմ նուաղումներս: Ամրափակ բարակ ուրուական մըն էի հիմա այլեւս՝ սե քօղերու մէջ: Դիմքս այժմ անհետացած էր տեսակ մը սե ամբիրոյի տակ, որ կը ծածկէր զիս: Կուսակալը աւելորդ է ըսել, ընկերացած էր մեզի մինչև կայարան: Այն պահուն ուր ամբողջ անհրաժեշտ մեծարանքներով հրաժեշտ կ'առնէր իր այցելուին, ունեցաւ ժէօթ մը, որուն ոչ այս վերջինը և ոչ ալ ես չէինք սպասեր: Պահ մը վեր առաւ քօղը որ կը պահէր դէմքս: Արձակեց տեսակ մը սփոփանքի հառաչանք:

— Իրաւունք ունէիք, Ձերը վսեմութիւն, ըսաւ Հաճիլար փաշայի, վճռաբար կը կարծեմ թէ ատիկա հաճելի պիտի ըլլայ:

Յուրա էր: Արեւուն ճերմակ գունտը կը թաւա-
լէր անտեսանելէ՝ գորշագոյն մշուշներուն ետին, ո-
րոնք կը խառնուէին կառախուժին շոգիներուն հետ: Անցանք անսահման ամայի դաշտերէ: Մեր ճամբայ
ելլելէն անմիջապէս ետք, էլիսս Հսճիլար, որուն
հետ առաւ ձին էի իրեն վերապահած սալօն-վահօնին
մէջ, կարճ բառով մը արտօնութիւնը տուած էր ինծի
քորս վերցնելու: Արտօնութիւնը: Հրամայնը՝ աւելի
շիտակը: Եթէ համարձակէի, պիտի չհնազանդէի:
Անշուշտ, հաճելի չէր ինծի համար ունենալ մե-
տաքսի կտորի մը ետին խեղդուելու մինչև այն ժա-
մանակ անծանօթ զգայակրութիւնը: Բայց աւելի ևս
դժնդակ բան մը կար. առիկա՝ իմ վրաս ուղղուած
աչքեր էին, այնպիսի յամառութեամբ մը, որ կը
թուէր ինծի թէ ընդմիջտ այդպէս պիտի ըլլար,
նախազգացում մը որուն մէջ չէի սխալեր, այն-
պէս չէ՞:

Ինչքան զամեցի դանակին ապակիին: Բայց գրե-
թէ ոչինչ կը տեսնէի ընդնմարել ջանացածներէս,
մառախուղին պատճառով որ չէր դադրէր խտանալէ
և նայուածքին պատճառով որ ճամբուն ամբողջ եր-
կայնքին շարունակեց չձգել զիս:

Կառախուժմբ կ'ելլէր, ուժ տալով իր շոգիին,
բարձունքներ, ուրկէ կը տեսնուէին, աջ և ջախ,
տխուր դաշտեր՝ ձիւնով ծածկուած: Քանի գիշերը
կուգար, մառախուղը սկսած էր ջրուիլ: Լուսի՛ր
բարձրացաւ սև երկինքի մը վրայ, որ գետինը կը
ցուցնէր աւելի մեռելայինօրէն ճերմակ: Ուրուականա-
յին դաշտանկար մըն էր, զոր չէի դադրեր դիտելէ՝
սիրտս պրկուած: Իմ ճամբու ընկերս՝ միշտ անշարժ
և մուշկ իր անկեան մէջ, կէս մը վառած էր բա-
ժանեակին մէջ միակ լոյսը: Արթնու էր: Կը քնա-

նար: Չէի ուզեր զլուխս դարձնել, գիտնալ փորձե-
լու համար: Չէի լսեր նոյն իսկ իր շնչառութիւնը:
Ի վերջոյ վարժուած էի առանձնութեան և այդ մը-
թութեան: Կանգ առինք մօտ տասը վայրկեան կայա-
րանին մէջ քաղաքի մը, որ բաւական խաշոր երեւ-
ցաւ ինծի: Ստուերներ անցան, լապտերներ ի ձեռին:
«Էսկի Շէհիր» ազաղակեցին պաշտօնեաներ: Այդ ա-
նունը բան մը կը յիշեցնէր ինծի: Ի՞նչ, Անկարող էի
ճշդօրոշել: Շատ դժուարութիւն պիտի կրէի ըսելու
թէ Անաստուլուի ո՞ր մասին մէջ կը գտնուէր այդ քա-
ղաքը: Գարա-թէքքէի մէջ զբաղած էին մանաւանդ
իմ կրօնական դատարարակութեամբս: Ի՞նչ պէտք կ'սր
աշխարհագրութիւն սորվեցնելու մանկուհիի մը, որ
սահմանուած էր անկասկած կեանքին մէջ իր վանքէն
դուրս չելլելու:

Էսկի Շէհիրէն քիչ ետքն էր որ անշուշտ քունս
տարաւ: Երկու քուկէս տարի ետք անցնելով դարձնալ
նոյն գիծէն, այս անգամ արթուն վիճակի մէջ, ան-
կարող եղայ զայն ճանչնալու:

— Ա. Միւսուսը վրայ, ի՞նչ է այս ծրարը զոր
կը բերէք մեզի, վարպետ:

Ընդոստ արթնցան, շտկուեցայ նստարանին վրայ:
Մեր բութանեակին դանակը բաց էր: Կառախուժը
կանգ առած էր լուսավառ կայարանի մը մէջ, կայա-
րան մը որ առկուէօրէն աւելի կարեւոր էր բոլոր ա-
նոնցմէ ուրկէ անցած էինք:

Քարափին վրայ նշարեցի պատրաստ կեցած զին-
ւորներու ջոկատ մը: Գէր պաշտօնատար մը՝ չփա-
զանց զայդորուն համազգեստով, որ կայարանապետը
ըլլալու էր, կեցած էր մօր առջև, խոնարհութեամբ մը
երկուքի բաժնուած:

Երեք հոգի էինք բաժանակին միջ. ես՝ աչքերս չփեղու վրայ, Հաճիլար փսջս՝ ոտքի, իջնելու պատրաստ և երրորդ անձնաւորութիւն մը, շուրջ 40 տարու մարդ մը՝ Ֆէս մը գլխուն, և երազական ըզգեստներ հագած՝ քիչ մը պոռոտ վայելչութեամբ մը: Վերակացո՛ւն կամ թերեւս քարտուղարը Հաճիլար փսջայի, որուն հետ կը վարուէր սարկական յարգանքի և ընտանութեան տարօրինակ խառնուրդով մը: Ընդօստ արթննալուս, անոր դէմքը գտած էի հակած իմինիս վրայ, գրեթէ անոր հպելու աստիճան: Անոր աչքերուն մէջ կար այնպիսի զարմանք մը, որ, եթէ դեռ այնքան քնաթաթախ չըլլայի, պիտի չկարենայի արգիլել քրքիջներս:

— Ս. Միւռո՛նը վկայ, կը կրկնէր ան միշտ:

Էլիաս Հաճիլար կը ժպտէր:

— Զգէ՛, Եւրբի՛, ըսաւ մեղմօրէն: Մի՛ վախճընէր զայն: Պիտի բացատրեմ քեզի... Ըսէ ինծի միայն թէ ի՞նչպէս կը գտնես զայն: Աւ այժմ ուրիշ բան չեմ ուզեր քեզէ:

Եւ առանց սպասելու իր խօսակցին պատասխանին.

— Գեղեցիկ չէ՞, մրմնջեց:

Նորեկը իր ձեռքերը միացուցած էր բաւական փիծաղաչարժ շարժուձեւի մը մէջ:

— Գեղեցի՞կ: Աւելի՛՝ քան գեղեցիկ, բացագոնչեց, զմայլանքի երեւոյթով մը: Ի՛նչ պիտի ըլլայ, երբ պիտի տրուի ինծի հիանալ անոր վրայ արեգակին լոյսով:

Եւ աւելցուց, անդրադառնալով.

— Այո, արեգակի՛ լոյսով, որուն կը նմանի: Թերեւս, վստահ չեմ տակաւին, թերեւս քիչ մը նիհար է միայն:

Էլիաս Հաճիլար յօնքերը պուտեց.

— Բան չես գիտեր, ըսաւ չոր կերպով: Միշտ սխալ է տխմարներուն կարծիքին դիմելը: Աւելի լաւ կ'ընես օգնելով մեզի որ վար իջնենք: Մակոյկը նաւամատոյցն է. այնպէս չէ՞: Ծո՛քսն իրազեկ պիտի դարձնեմ զքեզ այն բանին զոր պէտք է գիտնաս, աւելի՛ ոչի՛նչ:

Հաճիլար փսջաւ նշան ըրած էր ինծի որ իջեցնեմ քոզս: Կայտարնապետը մինչև գետին խոնարհեցաւ, Սուրբանին անձնական Գանձուն ամենագոր նախարարին անցքին: Զինուորներու ջոկատը պատիւի պառաւ: Հաճիլար փսջա պատասխանեց ձեռքի յոյլ թարեւով մը:

Ես՝ դողահար սև սիւռէթ, կը հետեւի, չգիտնալով թէ ո՛ւր կ'երթամ: Է՛ն, ուրիշ ի՛նչ կրնայի ընել: Գիշերը ստգունելու կէտին վրայ կը թուէր: Բայց մեզ շրջապատող դիւթավառ լոյսերը դեռ կը շողային իրենց ամբողջ փայլովը: Եւ յանկարծ, կարծելով թէ կը խենթենամ, տեսայ ուրիշներ, հազար անգամ աւելի բազմաթիւ՝ դէ՛մ, յետոյ, դեռ ուրիշներ՝ ոտքերուս տակ: Այդ լոյսերը անշարժ չէին: Կ'երթային, կուգային, իրար կը խօսեցնէին, կը սոսնէին՝ ոմանք արագ, ուրիշներ յոյլ դանդաղութեամբ մը, ամէ՛ն ուղղութեամբ: Դեռ երբեք չէի տեսած մեծ գետ մը և ոչ ալ ծովը անշուշտ: Հասկըցայ թէ ի՛նչ որ ունէի դէ՛մ, միտնգամայն երկուքին պէս բան մըն էր... Վարժարը, Կ Պոլիսը, Կարելի՞ բան էր: Աստուած իմ, Աստուած իմ: Ահ, այսուամենայնիւ, անհրաժեշտ չէ շատ զօրաւոր ըլլալ աշխարհագրութեան մէջ զանոնք ճանչնալու համար, ապահով ըլլալու համար թէ չեմ սխալիր այդ հրաշալի տեսարանին իրականութեան վրայ,

անցքին վրայ չլսուած արկածին որ պատահելու վրայ էր ինծի:

Իջանք սանդուխտ մը, որուն վերջին աստիճանին վրայ կը շաչէին ալիքները: Զմայլելի մակոյկ մը կար հոն, ետին ունենալով մանիշակագոյն թաւիչէ ամպհովանի մը, նոյն կերպասով ներքնակներով ծածկուած նստարաններով: 12 թիւղարներ՝ մանիշակագոյն և ոսկեճամուկ հագուածներով, իրենց պաշտօնին գլուխն էին: Մօտ էր արշալոյսը:

— Քոնա՛քը, և շուտով:

Հագիւ թէ նստելու ժամանակ ունեցանք: Արդէն իսկ գայլը կը թռէր մակերեսին վրայ ծովու մը, որ վայրկեանէ վայրկեան աւելի տմոյն կը դառնոր: Բազմաթիւ նաւեր, որոնց մօտէն անցանք, այլեւս մարած էին իրենց լոյսը: Առաւօտը կուգար: Նստած էի քիչ մը քովտի, Հաճ/լար փշայի աջ կողը: Մարդը, զոր Եւրի կոչած էր, կը գտնուէր անոր ձախ կողմը: Երկուքը կը խօսակցէին ցած ձայնով: Հաւ գիտէի թէ իմ մասիս էր որ կը խօսակցէին: Բայց որքան ալ տարօրինակ թուի, չէի իսկ փորձեր ականջս լարելու, իմանալու համար թէ ի՞նչ կ'ըսէին անօնք: Այդ շրջանէն իսկ, ունէի յստակ և տխուր գիտակցութիւնը մեր ջանքերուն, մեր շարժումներուն անօգուտ բնոյթին, այն պայքարներուն մէջ որոնցմէ կրնայ կախում ունենալ մեր «պագան»: Այդ համոզումը հետեւած է ինծի ամբողջ կեանքիս ընթացքին: Ան կը բացատրէ իմ գոյութեանս երեւութական համակերպութիւնը: Այնքան քիչ չեղած եմ անկէ որ, այն վայրկեանին իսկ ուր կը խօսիմ քեզի, հանդէպ սպառնալիքի մը որ երբեք աւելի ստորին, աւելի անաւոր չէ եղած, հարցնելու վրայ եմ ինքզինքիս թէ սխալ չե՞մ ըրած պայքարի սկսե-

լով և աւելի սխալ՝ անոր մէջ մղելով քե՛զ ալ, իմ խեղճ բարեկամս:

Արեւածագը հեռու չէր՝ երբ հասանք միւս ափը: Գայլը եկաւ կանգ առնել մարմարեայ քարափի մը եզերքը: Հետզհետէ ճերմկող կիսամութին մէջ, կը նշմարուէր, նօճիներու և սմիգակներու պուրակներու միջև, իտալ. ոճով սպիտակ պալատ մը:

— Ահաւասիկ տունս հասանք, ըսաւ Հաճ/լար փաշա:

Ինքն իսկ ձեռքս բռնեց, օգնելու համար ինծի որ ցատկեմ քարափին վրայ:

— Շատ յոգնած չե՞ս, չէ՞, աւելի՛ լաւ: Վաղը, այսինքն՝ այսօր, պիտի ունենաս բաւական յոգնեցուցիչ աշխատանքներ: Ուրիմն, հանգստանալով սկսելու հաճոյքը ըրէ ինծի:

Մտաւորներու բանակ մը փութացած էր մեզ մօտ: Նշան ըրաւ հասուն Դարիճով խափշկուհիի մը՝ պերճօրէն հագած մանիշակագոյն թաւիչէ պարեգօտ մը, որուն ականջներն ու պարեգօտը կ'անհետանային ոսկեգօծ գոհարեղէններու շարօցի մը տակ:

— Տէնզիլէ՛, այս պղտիկ տիկինը պիտի հաստատես Բօնաֆին ձախ թեւին մէջ: Թո՛ղ քննայ գոնէ մինչև կէսօր: Օրուան ընթացքին, հրահանգներ պիտի տամ քեզի:

Դարձաւ իմ կողմս և հրաժեշտ առնելէ առաջ:

— Այս երեկոյ կը տեսնուինք ուրիմն, ըսաւ, և լա՛ւ քնացիր: Երբ ուէ բանի պէտք ունենաս, դիմէ Տէնզիլէի: Անիկա սպահովապէս գոհ պիտի թողու քեզ: Եթէ խնդիրը վերաբերի քիչ մը բացառիկ բանի մը, կը բաւէ որ հեռաձայնեօ քարտուղարիս, որ ահաւասիկ: Քիչ առաջ լսեցիր անունը, այնպէս չէ՞: Եւրի կը կոչուի, Եւրի Պիշարա:

11.

— Հետեւէ ինծի պզտիկ հանրմ, հետեւէ ինծի: Մունջ, առանց ուէ բացատրութիւն ուղղու, մտայ անոր հետ ճախակողմեան զաւիթին տակ: Պալատին այս ամբողջ մասը շրջապատուած էր պուրակներով: Կանաչ երկինքին մէջ կը թռչտէին ճեփ-ճերմակ ամառներ: Արդէն իսկ բաւական պայծառ էր որպէսզի ընդնմարուէին առաջին ծաղիկները, որոնք կը բացուէին:

Որքան ամէն տեսակէտով տարօրինակ եղաւ այդ օրը որուն ընթացքին պիտի յայտնուէր ինծի ճակատագիրս: Բնականաբար, հակառակ պահպանուելիս աղաչանքներուն չհաւանեցայ քնանալու: Ձէին կըրնար ստիպել զիս քնանալու, եթէ փափաք չունէի, այնպէս չէ՞: Բաւարար չափով հանգստացած էի վակոնին մէջ: Եւ յետոյ, կար հետաքրքրութիւնս, որ կը գուշակէր թէ բաւական նիւթ ունէր, փառք Աստուծոյ:

Ֆէնդիլէ ամէն բանէ առաջ հարցուցած էր թէ ո՛ւր էին գոյքերս: Ձարմացած չերեւցաւ, երբ ըսի իրեն թէ ուէ գոյք չունէի: Աֆիոն Գարահիսարի շըրջագրեստս և շարձածս ամբողջ ունեցածս էին: Որեւէ նուաստացում չէի զգար ատոր համար: Մնունդէս ի վեր այդքան հարուստ չէի եղած բնաւ: Եւ միաբանական կեանքը, զոր մինչև այն ժամանակ ուզած էի վանքին մէջ, չէր նպաստած իմ մէջս արթնցնելու սե-

փականութեան զգացումը, զգացում զոր անկէ յետոյ ալ չեմ ունեցած: Իրերէն որոնց ամենէն աւելի կապուած եմ, եթէ անհրաժեշտութիւնը ներկայանայ, կարծեմ թէ շատ դիւրութեամբ կրնամ հրաժարիլ մէկ օրէն միւսը:

— Աւելի հարուստ չէի ես սլ, երեսուն տարի առաջ, երբ հոս եկայ, պզտիկ համրմ, ըսաւ Ֆէնդիլէ, ապացուցանելու համար ինծի թէ չքաւոր ըլլալս կարեւորութիւն չունէր իրեն համար:

Այդ խորհրդածութիւնը կիսովին միայն հաճելի եկաւ ինծի, կը խոստովանիմ: Ատկէ հասկցայ անմիջապէս թէ եթէ չունէի սեփականութեան զգացումը՝ ընդոճին էր իմ մէջս տարբութեանց զգացումը: Զուգահեռականութիւնը զոր Ֆէնդիլէ իրաւունք ունենալ կը կարծէր հաստատելու մեր երկուքին ճակատագիրներուն միջև, խեղճ խափշկուելին ի կարգ հրաւիրելու որոշումը առնել տուաւ ինծի: Որեւէ ձեւով չէի կրնար նախատեսել ճակատագիրը որ կը սպասէր ինծի: Ինչ որ կը խոստանայի ինքզինքիս, այն էր թէ այդ ճակատագիրը որեւէ առնչութիւն պիտի չունենար ճակատագրին հետ այդ խեղճ սեւամորթ գերուհիին՝ որ իր հասունութեան տարիքին գլխաւոր աղախինի պաշտօնին բարձրացածէր: Պէտք է հասկնալ զիս, երբ կը խօսիմ համակերպութեան մասին: Իմ համակերպութիւնս իր սահմանները ունի և ամէն պարագայի տակ երբեք չէ շփոթուած համեստութեան հետ:

— Եթէ կը նախնորեմ չքնանալ, ապահովապէս քու պատմութիւններովդ տաղտկանալու համար չէ, ըսի սւրբնն հեղինակաւորութեամբ մը, զոր բնաւ զօրծածելու առիթը չէի ունեցած մինչև այն ժամանակ, բայց որուն չեչտը առած էի անմիջապէս: Առանձին թող զիս՝ եթէ կը հաճիս: Ա՛հ, հարցո՛ւմ մը

ազական. Հաճիլա փաշա ամուսնացած է:

— Այրի է, պատասխանեց խոփշկուհին, նեղացած երեւոյթով:

— Լա՛ւ: Ուրիշ բան մը: Պէտք է ցոյց տաս, երթալէ առաջ. թէ ի՛նչ պէտք է ընեմ՝ զքեզ կանչելու համար՝ եթէ պէտք ունենամ քեզի:

Ֆէնդիլէ ցոյց տուաւ ինծի զանգակը որ կը հազորդակցէր իր նախասենեակին հետ: Տարաւ զիս նոյնպէս հեռաձայնական գործիքին առջև և ասիկա այն պարագային համար ուր պէտք ունենայի փաշային քարտուղարին ծառայութեան, ինչպէս Հաճիլար արտօնութիւն շնորհած էր ինծի: Ես ինծի կ'երդուընայի բնաւ չդպչիլ այդ գործիքին, որևէ պարագայի տակ: Նա՛խ կար այն ծիծաղելիութիւնը որուն վտանգին կը դիմէի, եթէ չկարենայի մէկ անգամէն գործածել այդ գործիքը: Յետոյ, անձը որուն շուրջ կը դառնար խնդիրը, Եուրի Պիշարա ըսուածը, առաջին իսկ վայրկեանէն այնքան հակակրօութիւն ստեղծած էր իմ մէջըս, որ ինքզինքիս խոստացած էի հետագային կարելի եղածին չափ քիչ չփում ունենալ անոր հետ: Աւա՛ղ, մարդ կեանքին մէջ միշտ իր ուղածը չէ որ կ'ընէ: Խնդրոյ առարկայ անձին կապտակցութեամբ, դէպքերը ցոյց տուին ինծի այդ ճշմարտութիւնը: Այդ դէպքերը կը շարունակուին երկու օրէ ի վեր, աւելի քան երբեք:

Պիտի չզուարճանամ ժամանակ կորսնցնելով մամբաման շկարագրութեամբը պալատի մը, ուր պիտի վերադառնայի աւելի ուշ, և որ ոչ մէջ կապ ունի առ այժմ միակ դէպքերուն հետ որոնք կարեւորութիւն ունին հոս, միակ դէպքերուն զորս ձեզի պատմելու տխուր պաշտօնը պարտագրած եմ ինքզինքիս: Կը բաւականանամ ըսելով միայն թէ, անվիճելի պեր-

ճանքը — ոչ միշտ ճաշակաւոր — որով սարքուած էր, օգտակար եղաւ ինծի ապագային, եզական չափով մը: Անիկա ինծի ծառայեց իբր փոխանցում: Նուազ կօպիտ դարձուց հակադրութիւնը դիւթական այխարհին միջև, ուր պիտի խորճուէի անխնայ, և վանական խտամբեր շրջանակին, ուր կարծած էի թէ պիտի սահի ամբողջ կեանքս և ուր դեռ ապահով չէ թէ պիտի չվերադառնամ օր մը:

Արդուզարդի սքանչելի խուց մը՝ օժտուած ծորակներու ամբողջ բանակով մը, զորս կը բանայի և կը գոցէի մեծ զգուշութեամբ, միշտ իմ նոր կացութեանս բարձունքին վրայ չերեւալու մտահոգութեամբ: Այդ կացութիւնը ի՛նչ էր, ի՛նչ պիտի ըլլար ճշդիւ: Կը թուէր ինծի արդէն իսկ թէ կը նախագայի զայն: Առանց պատճառի չէր որ հորցուցած էի պահ մը առաջ Ֆէնդիլի թէ Հաճիլար փաշա կին ունէ՞ր ներկայիս: Մոռցած էի Աֆիօն-Գարահիսարի մէջ վալիին հետ իր խօսակցութեան կարգ մը երանգները, կարգ մը ակնարկութիւնները: Չէի կասկածեր այլեւս թէ այդ պիտի ըլլար ճակատագիրը որ պիտի վերապահուէր ինծի: Ի՛նչ որ մարդիկ կրնան նուազ ներելի նկատել իմ պարագայիս մէջ, այն էր որ բնաւ չէի յեղանար այդ ծերուկ մարդուն կինը ըլլալու հեռապատկերէս: Պէտք է հասկնալ զիս: Չիս դատողները պէտք է իմ տեղս դնեն ինքզինքնին: Պէտք է յիշել թէ ի՛նչ եղած էի, թէ ի՛նչ եղած էր իմ կեանքս մինչև այն ժամանակ, այն անուելի միօրինակութիւնը որուն մէջ անցած էր: Ի՛նչ ներկայիս ի՛նչ բանէ չինուած էր իմ վիճակս: Եթէ պահ մը առաջ նետած ըլլային զիս վոսփորի մէջ, ոչ ոք պիտի բողբէր, ոչ ոք պիտի յսեր երբ և իցէ իմ մասիս խօսուիլ: Ահա թէ ի՛նչ բաներ պէտք է հաշուի առնել ինծի քար

նետելէ առաջ: Գալով ինծի, եթէ ունեցած ըլլային ազնուութիւնը իմ կարծիքս հարցուցած ըլլալու, անտարակոյս ուրիշ ամուսին մը պիտի նախընտրէի, պիտի ուզէի, զարօրինակ, ըլլալ կինը ժանտարմըրիի տեղակային, սա Իզզէթ պէյին, որուն խոհուն և խիստ նայուածքը յիշելէ չէի դադարած: Բայց իմ ձեռքս չէր, ոչ ալ անո՛ր ձեռքը թերեւս, այդպէս կարգադրել իրաց շարայարուժը: Եթէ կարենայի, պիտի ընէի: Այդ մասին այնքան ալ վստահ չեմ: Արդէն իսկ չափազանց հետաքրքիր էի գիտնալու թէ ի՞նչ պիտի ըլլար շարունակութիւնը: Ֆէնդիլէ, հեռանալէ առաջ, մատուցանել տուած էր ինծի նախաճաշերուն ամենէն ախարժահամը: Մինչ կ'ուտէի, կը տեսնէի ինքզինքս դիմացի հայելիին մէջ: Ոչ մէկ տհաճութիւն զգացի ատկէ: Զվախցայ սրբապղծութենէ, ինչպէս Գարա-Թէքքէի մէջ, ուր առաջին անգամն ըլլալով սկիհը ցոյց տուած էր ինծի դէմքը հազիւ արբունքի հասած աղջնակի մը: Հակառակ թիր ու ցան մազորուս, ճմաթկուած շրջազգեստիս, ինքնագոհութեամբ ժպտեցայ ես ինծի: Դեռ շատ լաւ չհասկնալով հանդել ձ ինծի սպասող փորձութեան տեսակը, այն տպւորութիւնը ունէի թէ լաւ սարքաւորուած էի վաղուան ճակատամարտներուն համար:

— Ինչ կայ: Ըսած էի քեզի թէ զանգակը պիտի հնչեցնէի, եթէ պէտք ունենայի քեզի:

Նեղուած որ ան գտած էր զիս մրափելու վրայ, թէ և ըսած ըլլայի իրեն թէ պէտք չունէի քունի, Ֆէնդիլէի վրայ արձակեցի զայրալից նայուածք մը:

— Յանցանքը իմ չէ, հեծեց ան: Զսիտէ հանըր կուգայ: Խորհեցայ թէ լաւ կ'ընեմ զալ իմաց տալով:

— Զսիտէ հանըմ: Ո՞վ է ատիկա:

— Մեր տիրոջ քօնաքին վերակացուէին: Հաճիլար փաշան է որ հրամայած է իրեն գալ: Բայց, ահա՛ ինք:

Արդարև, բաց մնացած դուռնէն կը լսուէին քայլեր սանդուխին մարմարեայ սալարկներուն վըրայ: Նայուածք մը նետեցի պատի ժամացոյցի մը: Ժամը 12,30էն քիչ մը աւելի էր: Յոգնութենէն պարտուած մրափած ըլլալու էի ժամը 11էն ի վեր: Խօսքիս հակառակ շարժիլս շատ երկար ժամանակ չէր տեւած:

Զսիտէ հանըմ ներս կը մտնէր: Ոտքի ելայ, ընդունելու համար զայն: Դիւրին էր նշմարել իր կեցուածքէն թէ կարեւոր դեր մը կը կատարէր Հաճիլար փաշայի մօտ: Ամբողջովին սեւեր հագած, իր վեր վերցուած շարչաճով, որ կը նմանէր կրօնաւորուհի քօզի մը, ունէր Գարա-Թէքքէի մեր կրօնաւորուհիներուն մէկ կեղծ երեւոյթը:

Քաղաքավարական բարև մը փոխանակեցինք: Ան կը նայէր դէմքիս արտայայտութեամբ մը, որ շատ բարեացակամ չերեւցաւ ինծի:

— Հաճիլար փաշա, ըսաւ ան վերջապէս, մտադիր էր գալ ինք անձամբ խօսելու ձեզի: Բայց ըստիպուած է մնալ Երլալգի պալատը, Նորին Կայսերական Վեհափառութիւն Խալիֆային մօտ, զոր պէտք է իրազեկ դարձնէ իր ուղեւորութեան: Այս պայմաններուն մէջ, պարտք դրաւ վրաս յայտնել քեզի իր կամքը: Այս երեկոյ, ժամը ճիշտ տեսնենք հոս պիտի ըլլայ: Իրեն պիտի ընկերանայ շատ հզօր մէկը, մէկը որուն առջև պէտք է որ երեւնաս վայելուչ կերպարանքով մը:

Այս ակնարկութիւնը տակնուվրայ եղած խոսքոսներու և ճմաթկուած հագուստներուս, ընդգծուեցաւ

գէմքի ծամածռութեամբ մը, որ շիկնեցնել տուաւ զիս :

— Հաճիրար փաշա թերեւս առիթ ունեցաւ ըսելու ձեզի թէ ամբողջ այս վերջին օրերս ժամանակ չեմ ունեցած յամենալու հայելիին առջև, ըսի ձայնով մը որ կը դողար :

— Ինչ որ ըսաւ կամ չըսաւ ինձի նորին վսեմութիւնը, քու գործդ չէ՛, պատասխանեց ան չոր կերպով : Հիմա, զբաղէ քեզի ըսածովս : Խնդրոյ առարկայ տրկինը — տրկին մըն է — ժամը Յին հոս պիտի ըլլայ ուրեմն : Ատիկա, կ'երդնում քեզի, պէտք եղածէն աւելի ժամանակ չէ այն անձերուն համար որոնք պիտի գան հագուեցնել քեզ և վարսերդ յար դարել : Չեն ուզեր անոնք, ինչպէս չեմ ուզեր ես ալ, յաճիմանուիլ քու պատճառովդ :

Ատոր վրայ, հեզնական թեթև խոնարհութեամբ մը դարձաւ գնաց, ձգելով զիս աւելի քան ընկճուած, գրեթէ նեղութենէս լալու կէտին վրայ :

Երկինքէն, ուր խեղճ քոյր Իրէն, խեղճ քոյր Ստէֆանէ, խեղճ քոյր Թէոտորա և քանի՛ ուրիշներ, որոնց զգաստ մարմինները միշտ իմ սարսափած յիշողութեանս մէջ պիտի մնան տարածուած մեր վանքին նրբանցքներուն սալայատակներուն վրայ, երկինքէն ուրեմն, ուր անոնք կը սպասեն որ գան իրենց միանալու իրենց նուազ նպատաւորուած քոյրերը, որոնք կը յամենան այս աշխարհին վրայ, ի՞նչ կը խորհէին սուրբ անոնք, սիրելի ճերմակ հոգիները, երբ տրուեցաւ իրենց հանդիսատես ըլլալ թէ մարդիկ ի՞նչ ընելու վրայ էին պզտիկ աղջիկը, զոր անոնք հարկադրուած էին լքել հոս : Ես ալ լաւ գիտեմ թէ ի՞նչ ձեռով անոնց կարեկցութիւնը պիտի արտայայտուի — յաւելեալ աղօթքներով՝ իմ մասիս : Աւել-

լի քան բարիքը զոր կրցած եմ ընել, այդ աղօթքներուն վրայ է որ յոյս կը դնեմ, փոխարինելու համար, երբ հնչէ իմ կեանքիս լախճանը, ամբողջ չորիքը զոր յանգէտս կամ այլսպէս ըրած կրնամ ըլլալ :

Հազիւ թէ Ջօիտէ հանրմ դուրս ելած էր, քայլեր հնչեցին դարձեալ սանդուխին վրայ : Այս անգամ կիներու ճշմարիտ պարս մըն էր որ յարկաբաժինս կը խուժէր : Անոնք առնուազն ութը կամ տասը հատ էին և ազմուկ կ'ընէին քառասուն կիներու չափ : Տէնզիլէ, որ կը ջանար լռեցնել զանոնք, ուրիշ բան չէր ըներ իր սուր ճիչերով, քան աւելցնել ժխորը : Այդ ամէնքը կը ճռուողէին, կը ճռուէին ալպաներէնի և յունարէնի հետ խառնուած տեսակ մը թրքական կոճայով, զոր դժուարութիւն կը կրէի անմիջապէս հասկնալու : Ի վերջոյ հասկցայ թէ անոնք տրկնայք վարսայարդարուէիներն էին, ձեռախնամուէիները, կարուէիները և ըն և ըն : Հակառակ ակնկալութեանս, կարուէիները եղան որ ի վերջոյ լուութիւն պարտադրեցին միւսներուն, այսինքն՝ գրաւեցին զիս ամբողջովին : Այս տրկիները կ'ըսէին թէ ինչ կը վերաբերէր զիս լողցնելու, մազերս յարդարելու և ըն, որքան վերջին վայրկեանին ընէին առիկա, այնքան լուսա գոյն պիտի ըլլար : Գալով իրենց, այնպէս չէ՞, իրենց ապսպրուած հագուստները յաջորդ օր կէս օրէն առաջ յանձնելու պարտաւորութեամբ... :

— Ժայաւէնի տո՞ւն մը (պարեգոտի), հոչակեց պառոտ կերպով կարուէին : Լաւ կը հասկնա՞ք թէ ի՞նչ կը պահանջուի ինձմէ : Բնա՛ւ՛ երեք օրէն պակաս ժամանակ չեմ յատկացուցած նման շրջազգեստ մը շինելու համար : Երեք օր, առնուազն զօրս փոր ձերով... :

Ի՞նչ ըսել կ'ուզէր ան, իր ժապաւէնէ տտուենով : Նոյնիսկ շատ չարչարելով ուղեղս, առ այժմ անկարելիութեան մէջ կը գտնուէի գուշակելու ատիկայ : Ատոր համար, պէտք էր սպասէի յաջորդ օրուան : Ինչ որ հասկցայ սակայն, այն էր թէ այդ օրը ինծի համար պիտի ըլլար եղական կարեւորութեամբ և հանդիսութեամբ օր մը : Ատոր գիտակցութիւնը ունեցայ, երկիւղած յարգանքէն որով այդ կիները կը խօսէին իրենց միջև, կէս բառերով :

Շարունակելով հանդերձ արտնջալ, ամենէն տարեցը, հայելիի մը առջև կեցողցած ըլլալով զիս, չափս կ'առնէր : Ուրիշ մը, հազար զգուշաւորութեամբ կը բանար ծրար մը, զոր գլխուն վրայ կը կրէր, ներս մտած ատենը : Այդ ծրարը կը պարունակէր երկվեցեակ մը տունի մէջ հագնուելիք պարեգօտներ, որոնք ճոխութեամբ կը հաւասարէին անո՛ր զոր էլ Քապուրի Տիրամայրը կը կրէր, այն Տիրամայրը որուն առջև անցողցած էի իմ մանկութեանս մէկ ամբողջ ճասը : Շինուած էին պարսկական հրաշագեղ դիպակներէ, ոսկեճամուռկ, մուշտակով եզերուած, գահարեղէններով և ճարմանդներով դրուագուած : Կար հատ մը՝ որ բոց կապոյտ էր և վրան ունէր կերասնիի ծաղիկներ, ուրիշ մը՝ մոխրագոյն էր՝ պղտիկ մանիչակներով, որոնք մեղեսիկներ էին, ուրիշ մը՝ կարմիր, մարգրիտներով զարդարուած, ասեղնագործեալ արծաթ քրիզանթէմներով :

— Հրաման ունինք այս շրջագոստներէն երկուքը թողելու ձեզի, պղտիկ հասնմ, ըսաւ կինը : Մէկ հատը պէտք է հագնիք այս երեկոյ :

Դողահար բոլորովին, ընտրեցի կերասնիի ծաղիկներով պարեգօտը և մեղեսիկով պարեգօտը :

Երկու կարուհիները գլուխնին ցնցեցին, նայ-

ւածք մը փոխանակելով : Նուազ տարեցը ըսաւ .

— Լաւ ճաշակ ունի : Ուրիշ մը պիտի առնէր կարմիրը, որ աւելի սուղ է և աւելի տպաւորութիւն կը թողու : Բայց ինք, բնազդով գտաւ անիկա որ ամենէն աւելի պիտի վայելէ իրեն :

Որքա՛ն կ'ուզէի հիմա առանձին մնալ այս գանձերուն հետ, անոնցմով պճնազարդուելու համար : Աւա՛ղ, այդ երջանկութիւնը աւելի ուշի համար էր : Ժամը հինգին մօտ էր, երբ վերջապէս կարելիութիւն ունեցայ հագուել սկսելու : Զորս կիներէն որոնք մինչև այդ ժամանակ չէին դադրած շուրջս դառնալէ, դուրս հոնած ըլլալով զիս Արաբիոյ իւղերով բուրսւէտուած լողարանէս, մէկը կը զբաղէր ձեռքերուս եղունգներով, միւսը՝ օտքերովս, ուրիշ մը՝ յօնքերովս, վերջ սպէս չորորդը՝ վարսերովս, զմայլանք յայտնելով անոնց գեղեցիկ չէկ գոյնին համար : Ես, ամբողջ այդ արարողութեանց ընթացքին, ի՛նչ բանի կրնայի մտածել, կը հարցնե՛մ քեզի : Անցեալի՛ն հարկաւ, անցեալի՛ն : Ապագաս կ'ողողուէր այնպիսի խորհրդաւորութեամբ մը, որ կը մերժէի աւելի յոգնեցընել ուղեղս, փորձելով թափանցել անոր : Կը խորհի թէ ի՛նչ եղած էր ինծի այդ շաբաթը որ կը վերջանար, աղջնակի՛ս, որ, հինգ օր առաջ, ոչ մէ՛կ օր աւելի, կուգար առ խարխփ իր պղտիկ մատները և պղտիկ դէմքը մխրճել լուացարանի ծորակին տակ, երբ արշալոյսը չէր ցաթած դեռ և երբ չէր իմացուէր ուրիշ աղմուկ, բացի սեւ և սառուցիկ հովի մը աղմուկէն, որ կը շաչեցնէր դռները, ամայի ընդարձակ նրբանցքներուն խորը :

— Հազնէտա՛ր Ուսթա, Հազնէտա՛ր Ուսթա : Ժամը Յ-ն էր : Արդէն իսկ 10 վայրկեանէ ի վեր վայելչօրէն վարսերս յարդարուած, բրնձափոշի քսած,

բուրաւէտուած, և հազած մեղեսիկէ մանիչակներով մոխրագոյն պարեգօտս — այն զոր ընտրած էի — կը սպասէի, սարսուհար և անշարժ, հայելիիս առջև, հիացական բացազանչութեանց մէջ զիս շրջապատած կիներուն, որոնք կը ճռուողէին ոտքերուս տակ:

— Հազնէտար Ուսթան: Կորսուեցէ՛ք, թշուառնե՛ր:

Ամէնքն ալ անհետացան իբր թէ հրաշքով, սարսափահար փախուստի մը մէջ: Սենեակին մէջ մնացինք միայն ես և Ֆէնդիլէն, որ ինքն իսկ անաբեկած կ'երեւար: Անոր բարի դէմքը գրեթէ այնքան մոխրագոյն էր որքան իմ շրջազգեստս:

— Հազնէտար Ուսթան: Խնչ է այդ, կ'ուզե՞ս բացատրել ինձի:

Պատասխանի փոխարէն, Ֆէնդիլէ գետին փռուեցաւ և մնաց գետնամած, ճակատը տախտակամածին վրայ:

— Լա՛ւ, չափազանցե՛ր եմ: Այո՞ թէ ոչ: Խնչ է ձեր կարծիքը:

Հաճիլար փաշան էր որ արտասանած էր այդ նախադասութիւնը, արքունիքի հագուստով Հաճիլար փաշա մը, Մէճիտիէի կարմիր և կանաչ մեծ ժապուէնը իր սակեճամուկ չփակին վրայ: Անձը սրուն խօսք կ'ուղղէր այդպէս, յարգանքով մը որ չվրիպեցաւ ուշադրութեան, շուրջ 50 տարու կին մըն էր: Բարձրահասակ, կերպարանքի ուշադրաւ ազնուականութեամբ մը, կը կրէր ոչ թէ շարչաճ այլ եսումաւ, շատ աւելի թափանցիկ քող մը, և որ ընդնշմարել կուտար միանգամայն շատ գեղեցիկ և շատ խիստ դէմքի մը բրօճիլը:

Հաճիլար փաշայի մէկ նշանին վրայ, նշան զոր կէս մը միայն հասկցայ, անճարակ խոնարհութիւն մը ուրուազմեցի:

— Դեռ չի գիտեր, ներեցէք իրեն: Եսումաւով կիւր ուսերը վեր առաւ:

— Ծուտով պիտի գիտնայ, վստահ եղէք: Լաւագոյն է որ, փա՛նք Աստուծոյ, ունենայ ինչ որ ունի, այսինքն՝ ինչ որ ստացական չէ, ինչ որ ձեռք չի բերուիր: Օ՛հ, շնորհաւորութիւններ: Ժամանակ նիդ պարապ չէք անցուցեր, ձեր ճամբորդութեան մէջ: Չէի կարծեր թէ այդքան ճաշակ ունիք:

Երկուքն ալ խնդացին: Հաճիլար փաշա շատ ուրախ տրամադրութեան տակ կ'երեւէր: Առաւ ետալմուքով տիկնոջ ձեռնոցածածկ ձեռքը և համբուրեց զայն բարեպաշտիկ կերպով:

— Խնչ է այս կիւր, հարցուցի Ֆէնդիլէի, անմիջապէս որ մեր այցելուները, որոնք ընդամէնը հինգ վայրկեանէն աւելի չէին մնացած, դուրս ելան:

Խափշկուհին ոտքի ելած էր՝ դարձեալ երկրպագելու համար միայն, այս անգամ իմ առջև:

— Հանը՛մ, մեծարելի հանը՛մ, աղաչեց ան, հաճէ՛ ընդունիլ աղաչանքը անո՛ր որ միայն մէկ օր քու գերիդ եղաւ, բայց որ կ'ուզէ գերիդ մնալ իր կեանքին՝ ամբողջ տեւողութեան ընթացքին: Խորհէ անոր հանը՛մ, փառքին մէջ ուր պիտի նստիս վաղը:

— Խնչ կը խօսիս հիդ, ըսի յանկարծ բռնուած անհուն անձկութեանէ մը: Ո՞վ է այդ Հազնէտար Ուսթա ըսուածը:

Ֆէնդիլէն էր որ զիս կը դիտէր հիմա սարսափով:

— Խնչ, հանը՛մ, կարելի՞ բան է: Չո՞ս գիտեր: Դեռ չես հասկցած երջանկութիւնը որ կը պատահի քեցի: Հազնէտար Ուսթան գանձապահուհին է, վերակացուհին Սուլթանին հօրէմին՝ մեր վեհապետին՝ հուսամացեալներու կայսր, Աստուծոյ շո՛ւքը երկրի վրայ, Մարգարէին յաջորդը: . . .

— Ի՞նչ, աղաղակեցի դարձեալ:

Հարէ՛՛մը կ'ըռեմ քեզի, տեսնե՛նք: Հարէ՛՛մը, ուր վաղը կէսօրէն ետքն իսկ, մեր տիրոջ, Փատիշահին կամքով, պիտի մտնես... Բայց ի՛նչ կայ, պզտիկ հանրմ, յարգելի հանրմ, սիրելի հանրմ...

Չէ՛ր հոսկնար, խեղճ խափշկուհին: Ձուքը առած է բազուկներս, կը ծածկէր զանոնք խոշոր դողահար համբոյրներով:

Այլեւս չէի փորձեր իսկ պատասխանել: Պիտի չկարենայի պատասխանել: Կը հեկեկայի, կը հեկեկայի...

Տիկ. Հաճիլար ունեցաւ կարեկցութեան նայլածք մը Ռօշի համար:

— Դո՛ւն ալ կուլաւ, ըսաւ Տիկ. Հաճիլար:

Ռօշ թեթեւօրէն դողդղաց:

— Ե՛ս, չե՛մ գիտեր, ըսաւ Այո՛, թերեւս, վերջի վերջոյ: Բան մը թոյլ տուա՞ւ քեզի ենթադրել ատիկա:

— Այդպէս թուեցաւ ինծի, ըսաւ Տիկ. Հաճիլար քողցրութեամբ: Թո՛ղ որ, շատ բնական է ատիկա, եթէ միշտ կը սիրես զիս, ինչպէս կ'ըսես:

Սպան ունեցաւ ուսի թեթեւ ցնցում մը, որ կըրնար նշակակել. «Ուշադրութիւն մի՛ ըներ, կարեւորութիւն չունի»: Արմէն իրեններուն մէջ առաւ ըսպային ձեռքը: Այդպէս մնացին մէկ վայրչեան: Քվի սենեակին մէջ ժամացոյցի՝ անկարեկիր թիքթաքը կը մօտեցնէր զիրենք առաւօտեան: Լուսինը կը խողար ալիքներուն վրայ: Կը թուէր զանոնք ծածկել արծաթեայ հսկայական ուռկանով մը:

— Գնա՛ սա պահարանին մօտ, եթէ կը հաճիս, ըսաւ կինը:

Ռօշ հնազանդեցաւ: Խնդրոյ առարկայ պահարանը

հոլանտական գեղեցիկ կարասի մըն էր, որ կը գրտնուէր սենեակին մէկ անկիւնը, կիսամութին մէջ:

— Բա՛ց վերի դարակը: Ձոխ կողմը կայ կարմիր լաքիէ տուփ մը, հոս բեր զայն:

Այդ տուփէն, երբ իրեն բերուեցաւ անիկա, կինը դուրս հանեց ոսկեգօրշ մետօքսէ ժայռէն մը: Սպաս յին երկնցուց զայն:

— Նայէ՛ Ասիկա ժայռէնն է նշանաւոր տոունաւոր շրջագգեստին, որուն մասին կը խօսէի քեզի քիչ առաջ: Ձե՛մ գիտեր թէ տեղե՞՞կ ես թէ ի՛նչ էր, դեռ քսան տարի առաջ, Նորին Վեհափառութեան բոլոր Թուրքիսներուն տիրոջ հարէ՛մը: Անթելի և հեռաձայնի մեր դարուն սկիզբը, այդ հարէ՛մը կը շարունակէր ենթակայ մնալ այն վարչակարգին որուն տակ կը գտնուէր Սուլիմանի և Ռիթօէլանի տաննեբը: Կեցուր զիս, եթէ երբեք արդէն իսկ իրազեկ ես այն մանրամասնութեանց զոր հօճոյքիս համար չէ՛ որ կուտամ քեզի, կը վստահացնեմ քեզ:

Արմէն մտախոհ կերպով նետեց սիկարէթը, զոր դեռ հազիւ թէ վառած էր:

— Այն պահուն որ կը շահագրգռէ զձեզ, Սուլթան Համիտն էր որ կը գտնուէր գահուն վրայ: Ասիկա գոնէ գիտես: Քիչ մարդ կայ, որուն մասին նոյնքան դժուար ըլլայ խօսիլ առարկայական կերպով: Պիտի ջանամ սակայն, առարկայական ըլլալ միշտ, և պիտի տեսնես որ արժանիք մըն է ատիկա: Այն ժամանակ Յէ տարու էր ան, բայց մտառանջու թիւններն ու զեղխութիւնը առ նուազս տասը տարի աւելի ցոյց կուտային զայն: Երբեք գոյուլթիւն չէ ունեցած թրք. Արքունիքէն մէջ յայտարարեց կամ թագուհի: Այդ դերը կը կատարէր Սուլթանին մայրը, որ կը կրէր Վալիտէ Սուլթան տիտղոսը: Տարօրինակ

տերներով, մանիշակագոյն համազգեստով կառապան մը և ծառաներ, և վեցեակ մը շառուճներ, որոնք կը կենային շուրջը: Տանուտէրը կը բացակայէր, կա՛մ ուրիշ զբաղումներ ունենայուն և կամ ալ շատ հպարտ չըլլալով իմ վերաբերմամբ իր կատարած դերէն: Ի՛նչ ալ ըլլայ, երբ ֆօնաքէն դուրս ելայ ընկերակցութեամբ խեղճ Ծէնզիլէի, որ կ'արտասուէր, շատ պիտի զարմացնէին զիս եթէ երբեք յայտնէին ինծի թէ որ մը ի՛նչ պարագաներու տակ դարձեալ պիտի անցնէի այդ սեմէն:

Այդ ֆօնաքէն՝ կառուցուած, ինչպէս յիշեցի, Վոսփորի ափին, անմիջապէս յետոյ Զրաղանի կայսերական պալատէն, որ քանի մը տարի ետք պիտի քանդուէր հրդեհէ մը, կը գտնուէր Օրթաքէոյի բլուրին ստեփն: Մասլ և գորշ օդ մը կար, ճշմարիտ սեւ ծովեան օդ մը: Երկինքը՝ շատ ցած, լեցուն էր ձիւնի մօտալուտ սպառնալիքներով: Կը սառէի Արքունիքի շրջազգեստիս մէջ, հակառակ պերճ օալին զոր նետած էին ուսերուս վրան: Զգացումներս ինչ կրնային ըլլալ կեանքիս այդ եղբերական վայրկեանին: Շիտակն ըսելով, բարեբախտաբար, զգացումներ չունէի: Քանի կառքը կը բարձրանար բլուրին կողմէ վեր, և կը տեսնէի քաջուած վարագոյրներուն հոտէն զարդանալը շուրջս, ամէն կողմէ, վեհափառ դանդաղութեամբ մը, աշխարհի ամենէն սքանչելի դաշտանկարներէն մէկուն, կը զգայի անդաշտութեանս աւելնալը... Առանց բան տեսնելու, ուղղորդ և անթեք, կը դիտէի: Բոլորովին անկարող պիտի ըլլամ առանձին ընել այդպէս կարած ճամբան: Ինչո՞ւ հոգ ընեմ այդ մասին, քանի որ ատոր կարելիութիւնը պիտի չտրուի ինծի բնաւ:

Անցանք մզկիթի մը առջևէն, որուն դիմաց

կար ժամացոյցով աշտարակ մը: Հոգ էր որ քանի մը շաբաթ առաջ, Սէլամըքէն ելքին, նետուած էր ուռմբը, որ պատճառ պիտի ըլլար մեր վանքին կործանման: Յետոյ, գրեթէ անմիջապէս ետք, հսկայական պատեր երեւցան: Բացուեցաւ լայն դուռ մը, որուն մէջ մեր կառքը մտաւ արագասան: Հիմա առաջին շրջափակին մէջն էինք Սուլթանին ընկալայրին, այն ահարկու և լռակեաց Երլաքին: Այդ րոպէէն սկսեալ, այլևս գերուհի մըն էի միայն, այնքան ուրիշներու մէջտեղ: Իմ չոր և անայլայլ աչքերովս, կը շարունակէի դիտել:

Երկրորդ շրջափակ մը երեւցաւ, հոյակապ ոսկեզօծ դուռով մը: Անհաշուելի ծառուղիներ կը մեկնէին այդ տեղէն, անհետանալու համար ծառերու փունջերու մէջ: Կառապանը հազիւ թէ դանդաղեցուցած էր իր ընթացքը: Եւ յանկա՛րժ, տեսակ մը զարշանք ծնցեց զիս: Կառքին շուրջը, առջև, ետեւը, կը խոնրէր ժանտատեսիլ էակներու խումբ մը, արձակելով աղաղակներ, ճիչեր, որոնց մասին երբեք գաղափար չէի կրնար ունենալ: Այդ ցաւազին և անհեթեթ մարդիկը կը կրէին Վալիտէ Սուլթանին ծառայողներուն կարմիր և արծաթաթել համազգեստըներքինիներն էին, առաջին ներքինիները, զորս կը տեսնէի: Այլևս չտեսնելու համար զանոնք, փակեցի աչքերս, բայց կը շարունակէի լսել զանոնք: Եւ ատիկա նոյնքան օտոկալի էր:

Կօթողական վերնազաւթակի մը առջև, կատարեալ վարպետութեամբ մը, կառապանը կեցուց իր ձիերը: Եւ յանկարժ գտնուեցայ մէջտեղը այդ բոլոր դըժբախտ հրէշներուն, որոնք կը փութային շուրջս, օգնելու համար ինծի որ իջնեմ կառքէն: Մեռեալի մը չափ տոգոյն եղած ըլլալու էի երբ սկսայ վեր

բարձրանալ վերնագաւթակին աստիճաններէն: Վերջինին վրայ՝ սայթաքեցայ: Շատ մեղմ ձեռք մը բռնեց զիս: Տեսայ շատ գեղեցիկ կանաչ աչքեր, շատ գեղեցիկ դէմք մըն ալ՝ լուսաւորուած ժպիտներուն ամենէն գրաւիչովը: Երիտասարդ աղջիկ մըն էր, որ կը կրէր տարօրինակ և գեղեցիկ համազգեստը Վալիտէ Սուլթանի կին թիկնապահներուն: Ան մրմնջեց ինձի քանի մը բռնորոշ ձայնով մը որ այնքան քաղցր էր որքան իր աչքերը և իր դէմքը: Ականջներս կը բզզային: Բան մը չէի լսեր: Կարմիր չփակով երիտասարդ աղջիկը չէր ձգած բազուկս: Կը քալէր առջեւէս, առաջնորդելով զիս, և մերթ ընդ մերթ կը զզայի իմ հօլանի մարմնիս վրայ չփուժը աստղաձև զմրուխտին զոր կը կրէր իր ձախ մատնեմատին վրայ:

— Ինձի ձգէ զայն և դարձիր գործիչ:

Սպասման սրահին սեմին վրայ երեւցած էր սև սիւլուէթ մը: Այդ ձայնը կը ճանչնայի: Հագնէտար Ութթան էր:

Չմրուխտով աղջիկը հնազանդեցաւ, խոնարհութիւն մը ընելով:

— Մտի՛ր:

Դուռը փակուելով, առանձին մնացի հարէմին մեծ տիրուհիին հետ: Առանց բարեացակամութեան, կը վստահեցնեմ զձեզ, ան քննեց զիս ոտքէս մինչև գլուխս: Դժգոհ չերեւցաւ իր քննութենէն:

— Գէշ հագուած չես, գիտե՞ս: Շրջազգեստդ բուսական սիրուն է և ամէն պարագայի տակ՝ սքանչելիօրէն կը վայելէ քեզի:

Նշան ըրած էր ինձի որ հանեմ շալս: Ինքն իսկ հանեց եսեմախո գնդասեղը: Աւելի ուշ է միայն, երբ ծանօթացայ այդ տեղերուն սովորութիւններուն,

որ հասկցայ անհուն պատիւը որ եղած էր ինձի այդ պահուն:

Այդ վայրկեանին, կը յիշեմ թէ բոլոր ջանքերս ի գործ կը դնէի չդողալու համար, վախճ'սնախ, ցուրտէ'ն՝ յետոյ: Արքունիքի շրջազգեստս բաց կը թողուր ուսերս և կուրծքերուս ամբողջ վերի մասը: Այդ էր արարողական զգեստաւորումը, ընդունուելու համար Վալիտէ Սուլթանին ներկայութեան: Կայսերազուտոր իշխանուհիներն իսկ զերծ չէին այդ կանոնին կապանքներէն: Անոնք ունէին միայն առաձեւ շնորհուած իրենց ետին ազատօրէն բաց ձգելու իրենց շրջազգեստին տտուներ: Միւս բոլոր այցելուները պէտք էր զայն ժապաւէնով կապած պահէին իրենց մէջքին՝ ժապաւէնը զօր բերի ինձի լախ տուփի մը մէջ, այն է որ կը բռնէր իմ շրջազգեստիս տտուներ, այդ օրը: Անկէ ի վեր, նետած եմ, տուած եմ ասօր անոր, ծախած եմ ինչ որ անցած է ձեռքս կեանքիս այդ դժխեմ շրջանին: Այս ժապաւէնը միակ յիշատակն է զոր պահած եմ, չեմ գիտեր ի՛նչու: Ա՛ժմ, քեզմէ կախում ունի որ այլեւս ոչ մէկ բան չմնայ այդ շրջանէն: Առ զայն, եթէ կ'ուզես՝ Քուկը է:

Հագնէտար Ութթա չէր դադարէր, ամբողջ այդ ժամանակը, գիտելէ զիս:

— Հաճիլար փաշա բարեբախտ է, ըսաւ: Իր աստղը, անգամ մը եւս ծառայած է իրեն:

Հարցում չէի ըներ իրեն: Ի՞նչ կարեւորութիւն ունէր ինձի համար, այնպէս չէ՞, ինչ որ տեղի պիտի ունենար: Այսուհանդերձ, ինչպէս գայմազամը, Աֆիօն Գարահիսարի վալին ալ եղած էր և գէշ վաճառականը այս խնդրոյն մէջ: Ի վերջոյ, Հաճիլար փաշան էր որ գործը կարգադրած էր այնպիսի եղանակաւ մը որ իրեն վերագրուած էր ամբողջ արժանիքը նուէրին զոր կը կազմէի ես:

Հազնէտար Ուօթա կուտար ինծի իր վերջին խորհուրդները .

— Գիտես թէ որո՛ւ ներկայութեան պիտի գտնուիս : Արդէն ըսի քեզի սովորոյթները : Ոչ մէկ բառ պիտի արտասանես ընականաբար, եթէ հարցում չըլլայ քեզի : Եւ նոյնիսկ այդ պարագային, նայէ որ պատասխանես «այո»ով կամ «ոչ»ով : Գալով խոնարհութեանց, երեք են անոնք . երրորդին պէտք է ճակատով հպիլ վալիտէ Սուլթանին շրջազգեստին քրդանցքներուն : Կրնայ ըլլալ որ այս բոլոր յանձնարարութիւնները աւելորդ ըլլան : Պիտի տեսնես թէ ի՛նչու : Իմ պարտականութիւնս է սակայն ոչինչ զանց ընել : Հարէմին մէջ՝ որեւէ տեղէ աւելի՝ պէտք է ջանանք ըլլալ մեր դիրքին բարձրութեան վրայ, լաւ ընել ինչ որ կ'ընենք :

Գլխու մտախոհ ցնցում մը ունեցաւ :

— Միշտ ալ շատ դիւրին չէ : Ծուտով պիտի հասկնաս ատիկա : Բայց ի՛նչ կեցեր կը չատախօսեմ, մանաւանդ որ ժամը մօտ է . . .

Ու ձայնը խիստ դարձած էր նորէն :

— Հետեւէ՛ ինծի :



Հիմա, կէս գիշերէն շատ հեռու ըլլալու չէինք այլեւս : Ի՛նչ անվերջանալի օրավերջ : Յարկաբաժսին մէջ ուր Հազնէտար Ուօթա ուղած էր ինքն իսկ առաջնորդել զիս, վալիտէ Սուլթանին քովէն մեր հեռանալէն ետք, ընթրած էի առանձին : Ծառայած էին ինծի երկու չէրքէղ գերուհիներ, որոնք ընթրիքէն անմիջապէս յետոյ հեռացած էին : «Վաղը առաւօտ պիտի վերադառնամ» ըսած էր ինծի մեծ տիրուհին : Իրազեկ պիտի դարձնեմ ղքեզ թէ ի՛նչ պիտի ըլլայ կեանքդ այստեղ : Մինչ այն, կե՛ր, քնացի՛ր, հան-

զըստացի՛ր : Այս սենեակէն դժգոհ չես, այնպէս չէ : Եւ սակայն, հանգիստ եղիր, աղջի՛կս : Կա՛մ չատ կը սխալիմ, կամ կը կարծեմ գուշակել թէ պիտի չուշանաս բնակելէ ասկէ անհունօրէն լաւագոյն յարկաբաժին մը» :

Ո՛չ, այս մասին գոնէ դժգոհելու պատճառ չունէի, արդարեւ :

Հանգստաւէտութեան պակասէն չէր որ, կը զգայի ատիկա, պիտի տառապէի նոր կեսնցիս մէջ : Երկու չէրքէղ գերուհիներուն հեռանալէն ետք, ունեցած էի ամբողջ պարագուրդը ոգեկոչելու համար այդ տարօրինակ օրուան պարագաները : «Հաւանականութիւն կայ որ պէտք չունենաս յանձնարարութիւններուն զորս կ'ընեմ քեզի» ըսած էր ինծի Հազնէտար Ուօթա, վալիտէ Սուլթանի սրահին սեմին վրայ : Ինչ որ ատիկա կը նշանակէր՝ երկար ժամանակի պէտք չունեցայ գիտնալու համար ատիկա : Մեծ տիրուհիս մտած էր ինձմէ առաջ, յետոյ, ետև դառնալով, նշան ըրած իր ինծի որ տեղէս չչարժիմ : Թիկնաթուռի մը մէջ, պառաւ, շատ պառաւ ատիկին մը՝ ծածկուած թաւիչով և գոհ սրեղէններով՝ քնացած էր : Երիտասարդ աղջիկ մը, գրեթէ մանկուհի մը, նստած էր անոր դիմաց : Իր բթամառը և իր ցուցամատը, կը սեղմէին կիթառի մը մուկն թելերը : Նուագելու վերսկսելու համար, կը սպասէր որ իր տիրուհին արթննար և նուագելու հրամանը տար իրեն : Այդ սրահին կեդրոնական պատշգամը կը բացուէր վոսփորի և ասիական եզերքին վրայ, որ ճեփ ճերմակ էր նոր տեղացած եզերքին վրայ, որ ճեփ ճերմակ էր նոր տեղացած ձիւնով մը : Մարդ իր ակռաները կափկափեցնելու փափաք կ'ուսենար : Այդ մտայլ երկինքը, մանկութեան մէջ ինկած այդ պառաւը, այդ ցուրտը, այդ ամէնը այնքան ահռելիօրէն տխուր էին, որ չկրցայ արգի-

լել ինքզինքս Հազնէտար Ուստայի վրայ նետելէ պաղատագին նայուածք մը, գաղանթարս Անիկա բաւականացաւ մատը տանելով շրթունքին, վերադարձանք առանց բառ մը ըսելու, մեր ոտքերուն ծայրին վրայ կօխելով:

Նրբանցքներ, անհաշուելի սրահներ, անվերջանալի կալըրիներ՝ ամէնքը մռայլ և ամայի տիրել սկըտող գիշերին մէջ, ստուերներով որոնք հեռուէն հեռու կը խոնարհէին մեր անցքին վրայ, մեծ տիրուհիին մեկնումը, երկու լուռ չէրքէզուհիներուն կողմէ մեծարուած ընթրիքս, չէրքէզուհիներ որոնք մեկնած էին իրենց կարգին: Այլ չէր ձիւներ: Մշուշապատ լուսին մը բարձրացած էր: Փայտէ պատուհաններուն հազար շեղանկիւնները կը կտրատէին անօր տմոյն լոյսը գորգին վրայ: Ուրիշ աղմուկ չկար, բացի ժամանակ առ ժամանակ, մուճակի մը տարտամ ձայնէն, նըրբանցքներուն մէջ: Հաւանաբար ներքինի մը, որ կը կատարէր իր երթեւեկը, հսկելով: Կը քնանայի՞ արդէն իսկ, կամ արթնուն էի, երբ իմացայ դրան մը, իմ դրանս, բացուելը, փակուելը...

— Ո՞վ է, մըմնջեցի:

— Աղմուկ մի՛ ըներ, պառիկ քոյր, պատասխանեցաւ ինձի մեղմածայն:

Նոյն ժամանակ թեթև ձեռք մը դրուեցաւ շըրթունքիս: Բռնեցի զայն: Մատներս հանդիպեցան մատանիի մը՝ աստղաձև քարով մը: Տեսած պիտի ըլլայի, եթէ լոյս ըլլար, թէ այդ քարը զմրուխտ մըն էր:

— Սո՛ւս, ձայն մի՛ հաներ: Ես եմ, քոյրի՛կ:

Այսպէս եղաւ, թեթևցած ամէն աւելորդ մանրամասնութիւններէ, առաջին գիշերը զոր անցուցի, երեք հարիւր ներքինիներու հսկողութեան տակ, Սուլթանին հարէմին մէջ:

Յաջորդ օր առաւօտուն ուշ արթնցայ, սիրտս և մարմինս լեցուած տեսակ մը յոգնածութեամբ: Շատ լաւ չէի հասկնար թէ ո՛ւր էի: Բայց արեւ կար քիչ մը ամէն տեղ և արդէն իսկ վերսկսած էի համ առնել կեանքէն: Միշտ միեւնոյն բանն է: Գիշերները, այն պահուն ուր խաւարը կ'իջնէ դաշտանկարներուն և հողիին վրայ, մարդ կ'երեւակայէ թէ ամէն ինչ կոր սըւած է, ամէն ինչ վերջացած: Հիմա մարդ համոզւած է հակառակին: Ինչ որ շարժառիթ էր կասկածանքի յանկարծ դարձած է պատճառ յուսալու, վստաօրէն:

Դեռ անկողնէս չէի ելած, երբ Հազնէտար Ուստայի մտաւ սենեակս: Հեզնական արտայայտութիւն մը ունեցաւ, տեսնելով զիս:

— Բայց կեցցե՛ս: Հաւանաբար գործունէութիւնը չէ որ օրին մէկը պիտի մեռցնէ զքեզ, աղջի՛կս: Ունիս հարէմին համար ստեղծուած ըլլալու երեւոյթը, կարծածէ՞ք աւելի աստիճանով մը: Բնականոն ժամակարծածէ՞ք պառիկ քոյրս: Գետնի տակէն որ հաճելի է քեզի: Բայց այսօր ուրիշ օրերու պէս չէ: Պէտք է աշխատիս արհեստը սարվելու: Պատրաստ եղիր ժամը 11ին: Մարդ պիտի զրկեմ փրտուելու համար զքեզ: Կարմիր վարդ մը՝ սեւով եզերուած, կը պսակէր դետնին վրայ: Մեծ տիրուհիին աչքերը կանգ առին անօր վրայ: Մտեցաւ վերցնելու համար զայն: Իր հեզնական ժպիտը վերադարձած էր:

— Հէ՛, հէ՛, Սա՛ նայեցէք: Այսպիսի ծաղիկներ կը

ծաղկին միայն վարժապետ Մուրթապետին պարտեզին մէջ : Պէտք է որ հարցաքննեմ գերուհիներդ : Գողը պիտի պատժուի :

Գերուհիներս կանուխ մտած ըլլալու էին իմ սենեակս իրենց սպասարկութիւնը ընելու համար, առանց լսելու : Արդարև, կը գտնէի թէ բոլոր առարկաները որոնց կրնայի պէտք ունենալ, դրուած էին իրենց տեղը : Զարկի կոչնակի մը վրայ, սակայն : Երկու պզտիկ չէր քէղուհիներէն մէկը վազեց եկաւ :

— Օգնէ՛ ինձի որ հագուիմ, հրամայեցի :

Անշուշտ ես առանձին կրնայի ընել այդ գործը՝ Բայց ի՞նչ շրջազգեստ հագնիլ : Պահարանին մէջ կախուած բազմաթիւ շրջազգեստներէն չէի գիտեր թէ ո՞ր մէկը ընտրէի : Սպասուհին գիտնալու էր : Կը պահպանէի իմ արժանապատուութիւնս իր վրայ ձգելով այդ գործը : Փոխանակ հարցում մը ընելու իրեն, այդ կերպով հրաման մը տուած կ'ըլլայի : Հրաման մը : Հրամաններ ստանալու իմ կարգս անկասկած պիտի գար շուտով : Եւ ի՞նչ հրամաններ : Աստուած իմ թեթեւ սարսուռ մը ցնցեց զիս : Բայց շուտով քաջութիւնս վերստացայ : Պատուհանէն նետուած ակնարկ մը բաւական եղաւ հանդարտեցնելու համար զիս : Երէկուան ձիւնը հալած էր : Տեսակ մը փաղաւարը ուր կը բնակէի — առժամայ բնակութիւն մը, համաձայն մեծ տիրուհին խօսքին — շրջապատուած էր ծառերու ճիւղերով՝ գարնանային լրակատար ծաղկափթթումի մէջ — օսկի միմօզաներ, արծաթ լեւակներ կային :

— Քեզի գէշ վարժեցնելու վրայ եմ, գիտեմ : Այն ձեւով որ կը կը դբաղիմ քեզմով, ի վերջոյ պիտի չկարծաս թէ այդպէս եմ ամենուն հետ, 3 կամ 4 հարիւր աղջակներուն և կիներուն հետ, որոնք հոս

համբերահատելու վրայ են սպասելով ժամուան, որ իրենցմէ ինը տասներորդին համար պիտի չհնչէ բնաւ, — այն ժամը ուր մեր Տէրը քանի մը վայրկեան իր բարեհաճութիւնը պիտի յայտնէ իրենց հանդէպ : Կրնայի լսել քեզի թէ համակրութիւնն է որ քեզի քաջեց զիս անմիջապէս : Բայց, փա՛ռք Աստուծոյ, այդքան դիւրաւ ազդուող չեմ : Ի՞նչ է պատճառը, ուրեմն : Կ'ո՞ր, նախ, իբր բացատրութիւն, այն իրողութիւնը թէ դուն Նորին վեհափստութեան ընծայուած ես Հաճիլար փաշայի կողմէ : Կ'ուզեմ հաճելի ըլլալ այս վերջնոյս, լաւագոյնս արժեցնելով իր նուէրը : Վեհապետին անձնակսն Գանձուն նախարարը՝ շարունակ ունի ինձի հետ, հարէմին հաշիւներուն համար, յարաբերութիւններ որոնք պէտք է ըստ կարելոյն լաւ ըլլան, մեր երկօլքին հասարակաց շահուն համար : Յետոյ, հաճելի է ինձի հաստատել ինչ որ ըսի քեզի կրէկ : Այսինքն թէ հաւատք ունիմ քու սպագայիդ նկատմամբ : Եթէ շարունակես արժանի ըլլալ այդ վստահութեանս, պիտի աշխատիմ նպաստաւորել ըզքեզ, և ասիկա շատ բնական մտածումով որ շատ շուտով պիտի չմոռնաս օժանդակութիւնս, երբ բարձրանաս այն տեղը, զոր կը նախատես մ քեզի համար :

Հիմա, առ սա ստատափէ շունիճը և ձեռքիս վրայ ջուր լեցուր, որպէսզի հասկնամ թէ քիչ շատ հասկըցած ես դատդ :

Ականջներս սրած, բերանս բաց, ամբողջ ուշադրութեամբս մտիկ կ'ընէի Հագնէտար Ուսթան, մինչ այսպէս կը խօսէր ինձի հետ : Անշուշտ, շատ տարփամ գաղափար մը ունէի միայն այն սպագային մասին զոր կը շողացնէր իմ աչքիս և այն արագ վերելքին մասին, զոր կը մարգարէանար :

Իցի՛ւ թէ չսխալէր Ա՛հ, եթէ կարենայի՛ բարձրա-

նալ վե՛ր այս տխուր հօտէն, որուն մէջ, եկած դեռ
երէկ, արդէն իսկ կը վախճայի թէ մնամ յաւիտենա-
պէս: Ոչ մէկ զոհողութիւն, կը զդայի այդ, սուղ
պիտի չգար ինծի, այդ արդիւնքին հասնելու համար:

— Գէշ չէ, վերսկսէ այնուամենայնիւ: Շունիճի
պատաստարկութիւնը դիւրին չէ, գիտես: Բայց ա-
նոնցմէ է ուր մարդ ամենէն աւելի առիթ ունի ինք-
զինքը արժեցնելու: Դաւն իսկ անձամբ պիտի տեսնես
թէ ի՞նչ ըսել կ'ուզեմ: Շատ աւելի, ամէն պարա-
գայի տակ, քան թէ օշարակ և սիկարէթ հրամանե-
լով: Անգամ մը եւս: Այդպէս, աւելի լաւ է այս
անգամ, Երեւակայէ որ Նորին վեհափառութիւնը
այսօր հարէմը գայի՞նչ բախտ եթէ առաջին օրն իսկ,
մէկ անգամէն այսպէս ի վիճակի ըլլայիր...: Բայց
թերեւս նախընտրելի է շատ չւճապարել և աղէտի
մը չդիմել՝ չսփէն աւելի արագ երթալ ուղելով...:

Ժամը ճիշդ 11ին, ինչպէս ծանուցած էր, մարդ
զրկած էր կանչելու համար զիս: Յետ միջօրէի ամ-
բողջ սկզբնաւորութեան միասին չըջած էինք պարտ-
տին մէջ, այցելելով ամէն ինչ զոր ներելի է օտարը
մը ճանչնալ: Այսօր կարելի է ազատօրէն չըջիլ այդ
եղերական Երլաբղի պալատին մէջ, ուր անցած են
կեանքիս երկու տարիները՝ սահմանուած վերջնակա-
նապէս ապականելու կեանքիս ամբողջ մնացեալ մա-
տը: Եթէ, Աստուած մի՛ արասցէ, որ մը անցնիմ
կ. Պոլսէն, կը տարակուսիմ թէ Երլաբղ այցելելու
արտօնութիւնը պիտի երթամ խնդրելու թուրքիս
նոր տէրերուն թանգարաններու տնօրէնութիւնէն:
Բայց, եթէ հարկ սղորուած ըլլամ վերադառնալ հոն,
և պէտք ըլլայ որ փնտռեմ այն վայրերը ուր ապրած
եմ, զանոնք գտնելու համար մէկ ըրպէ իսկ պիտի չվա-
րանիմ: Ահո՛ն, պիտի ըսեմ, որքա՛ն լաթիւ Հոռ պա-

տահած է որ խնդամ, բայց խնդալ մը որ լալէ սուրի
տխուր էր: Հիս է որ հնչեց ազատմանս ժամը, հոն՝
ամօթիս ժամը»:

— Միհիրմա, ի՞նչի կը պարտիմ այս մեծ պա-
տիւը, հարցուց մեծ տիրուհին:

Կանդ առած էինք, այս վերջինը և ես, պալատին
չըջանը աւարտելէ ետք, մէկուն մէջ բազմաթիւ փոքր
հիւրասենեակներէն, քոնք կը բացուին կեդրոնակա՛ն
ընդարձակ հողին վրայ: Այս կեդրոնակա՛ն հողն է՝ հա-
րէմին ճշմարիտ սիրտը, որ երկարածիք, շատ երկա-
րածիք կալըրի՛վ մը կը հազորդակցի Մապիյնիս հետ,
կամ դեպպաններու տաղ սւարին, և Սէլամլըքին, այ
օինքն՝ Սուլթանին անձնակա՛ն յարկաբաժիններուն:
Այդ հողին, այդ կալըրիին, այդ Սէլամլըքին մասին,
փա՛ռք Աստուծոյ, շատ առիթ պիտի ունենամ խօսե-
լու դարձեալ:

— Ուրեմն, Միհիրմա, ի՛նչ հով կը բերէ զքեզ հոս:

Միհիրման կարմիր և ոսկեթել համազգեստով ե-
րիտասարդ աղջիկն էր, որ նախօրդ օր ընդունած էր
զիս վալիտէ Սուլթանին յարկաբաժնին սեմին վրայ:

— Տիրուհի՛դ իմ, վալիտէ Սուլթանը պաշտօն
յանձնած է ինծի յայտնելու ձեզի թէ ուրախ պիտի
ըլլայ այսօր հանդիպելու ձեզի մեծ հողին մէջ, ուր
միտք ունի երթալու ժամը 5ին:

Ձեռքը սիրտին վրայ՝ Հօզնէտար Ուսթա վերա-
դարձուց բարեւը վալիտէ Սուլթանին պատգամա
բերին:

— Նորին Կայսերական վեհափառութիւն Խալի-
ֆայէն ետք՝ այս աշխարհիս վրայ միայն վալիտէ
Սուլթանէն է որ հրամաններ կ'ընդունիմ հոս, ըսաւ
հանդիսաւորապէս: Ուստի ժամանմանս համար որոշ-

Լած ժամէն 10 վայրկեան առաջ պիտի գտնուիմ մեծ հողին մէջ:

Միհրիմա գրեթէ չոր բարև մը տուաւ: Դուրս ելլելու վրայ էր: Հազնէտար Ուսթա կանչեց զայն:

— Մտիկ ըրէ ըսաւ տարօրինակ ձեւով մը դիտելով զայն: Գիտես թէ չեմ սիրեր դիտողութիւններ ընել անհարկի տեղը: Կը կարծես սակայն թէ ասիկա սքանչելիօրէն կը վայելէ քուկինիդ պէս գրեթէ զին Լորական համազգեստի մը հետ:

«Ասիկա» ըսածը կարմիր վարդ մըն էր, սեւով եզերուած, զոր երիտասարդ աղջիկը իր գօտիին անցուցած էր:

Միհրիմա թուեցաւ վրդովուիլ:

— Կը յաւելում թէ ասիկա կրնայ ունենալ ուրիշ անպատեհութիւն մըն ալ, շարունակեց մեծ տիրուհին անայլայլ: Այս ծաղիկը կը բուսնի Վալիտէ Սուլթանին մասնաւոր ջերոցներուն մէջ միայն: Եթէ հատ մը գետին ձգես, կը դիմես վասնզին ամբաստանել տալու խեղճ գերուհի մը, որ քեզի պէս այդ ծաղիկներէն քաղելու իրաւունքը չունի: Չեմ ըսեր թէ այդ պէս բան մը պատահած է, բայց վերջապէս, կրնայ պատահիլ:

Միհրիմա դարձեալ խոնարհեցաւ, շատ տեղոյն: Հազիւ թէ հեռացած էր, Հազնէտար Ուսթա թեւս բռնեց:

— Եւ հիմա, այլեւս կորսնցնելիք մէկ րոպէ իսկ ժամանակ չունինք: Եկո՛ւր:

Իմ սենեակին մէջ, ուր վերադարձած էինք, տուաւ ինծի այդ անպարանքին բացատրութիւնը:

— Հարէմին մէջ, ըսաւ, բնաւ յանկարծակիի պէտք չէ գալ: Տասնի վրայ ութը անգամ, Սուլթանը կուգայ հոս յեղակարծօրէն: Բայց կրնայ ըլլալ որ մէկ կամ միւս ձեւով, Վալիտէ Սուլթանը տեղեկացած ըլ

լայ անոր ժամանումին: Ան չթերանար իր սզեկ դարձրնելու զիս, ծանուցանելով ինծի իր իսկ ժամանումը: Ատիկա առաւելութիւն մըն է, որմէ օգտուիլ պէտք է գիտնալ, վասնզի, սկսեալ Վալիտէ Սուլթանէն մինչեւ յետին հարձը՝ ամենուս համար ալ օգտակար է որ մեր տէրը գոհ մնայ: Ինչ կը վերաբերի ձեզի, ճշմարիտ բախտ մըն է ասիկա: Հարուարէպ չէ որ փատիչանը ամբողջ շաբաթ մը չերեւնայ հարէմին մէջ, և անաւասիկ որ հոս հաստատուելուդ առաջին օրն իսկ պիտի կարենաս ըմբոշխնել անոր ներկայութեան վայելքը: Մի՛ վրդովուիլ, երբ քիչ ետք պիտի ներկայացնես իրեն շանիճը (եպրըզ): Ջանա շատ չուշանալ, ջուրը հոսեցնելու համար: Ջանա՛ ջուրով չողողել զինքը նաև: Երբ հագուած ըլլաս պատշաճ պէս, ունիս դեռ առջևդ երկու ամբողջ ժամեր: Պիտի գործածես այդ ժամերը կրկնելու շարժումները զօրս ցուցուցի քեզի:

Ինքն իսկ, սոսկալի կիներ, խօսելով հանդերձ մէկ վայրկեան իսկ չէր կորսնցնէր: Բացաւ արկղերս, դարակներս, պահարաններս: Ինչ որ դուրս կը հանէր անոնց մէջէն, կը նետէր զանոնք բազմօցին վրայ:

— Այս է որ պէտք է հագնիլ, և ասիկա ալ: Էականը կարելի եղածին չափ պարզ հագնիլն է: Նորեկ մը պէտք չէ առաջին իսկ հարուածով ամենքը շլացնելու հետամուտ ըլլայ: Պզտիկ ընկերուհիներդ պիտի չներէին քեզի ասիկա: Եթէ ամէն ինչ լուրնթանայ, ինչպէս կը գուշակեմ, ասիկա զգուշաւորութիւն մըն է զոր կրնաս քիչ ժամանակէն հաշուի չառնել: Բայց, մինչ այն, պէտք է շարժիս այնպիսի եղանակու մը որ թշնամիներ չշահիս: Լա՛ւ: Ահա ամէն բան կորզին է: Շուտով կանչէ չէրքէզուհիներդ, որպէսզի օգնեն քեզի հագուելու և մազերդ յալդսրելու: Նորին Վեհափառութեան գալէն առաջ,

պիտի ջանամ գտնել վայրկեան մը՝ գալ քեզ առնելու համար: Է՛, լա՛ւ, Խ՛նչ կ'ըսես ասոր: Ինչ ալ ըլլայ, աղջիկօ, կայ բան մը զոր բնաւ չես կրնար ըսել. այն թէ օկզմնաւորութեան հօգ չեմ տարած քեզի:

Եւ արուած ըլլալով որ կը թօթովէի քանի մը երախտագիտական բառերը:

— Ծնորհակալութիւն մի՛ յայտներ ինձի, ըսաւ Ասիկա կ'ընեմ իմ անձնական հաճոյքիս համար, վա- օրնդի կը սիրեմ արհեստս, կը հասկնա՞ս: Այն անձերը որոնք կը սիրեն իրենց արհեստը, ուչ կամ կանուխ կը ստանան իրենց վարձատրութիւնը: Երախտագի օտութիւնդ պիտի յայտնես ինձի յուսախաբ չընելով զիս, չընդօրինակելով սա պզտիկ տխմար Միհիրման:

— Միհիրմա՞, չկրցայ արգիլել ինքզինքս մըր- մնջելէ դողդոջուն:

Սոսկալի ս:ւ ուրուականը տարօրինակ նայուածք մը նետեց վրաս:

— Այո՛, Միհիրմա ըսի, պատասխանեց Հազի- օտար Ուօթա: Կը ջանամ սորվեցնել քեզի կարգ մը օկզբունքներ, զորօ թերեւս բնաւ պէտք չունենաս ի գործ դնելու, և կը նշմարեմ որ զանց առեր եմ էականը: Գիտե՞ս, աղջիկօ, թէ Խ՛նչ է վայրը ուր մտած ես: Հանգիստ և ապահով վայր մը չէ հարէմը, կա- րեւոր է որ գիտնաս ասիկա: Պէտք է ետ կենալ հոս ամէն արարքէ և մտածումէ, որ Սուլթանին տհաճելի ըլլալու բնոյթը ունի: Որքան որ մեզիք անոնք որոնք կ'ընդունին հպատակիլ անոր կանոններուն վըս- օտան են գտնելու հոս ոսկի, յուլութիւն, պերճանք, գոհարեղէններ, ամէն տեսակ ուրախութիւններ, վեր- ջապէս ամէն տեսակ նիւթական գոհացումներ, այն քան միւսները...: Օ՛ն, կը նախընտրեմ չմտենալ այդ խնդրոյն: Ուրիշ անգամ մը պիտի խօսինք այդ

մասին: Իհարցիր սակայն թէ հոս կայ տեսակ մը հնա- զանդութիւն, որ անհրաժեշտ է բոլոր բաներէն ա- ոաջ: Օրինակի համար, գիշեր մը ուր քուրդ չի տանիր, եթէ պատահի քեզի լսել նրբանցքներուն մէջ քայլե- րու աղմուկ մը և շարունակ կրկնուող սա հրամանը. «Թօ՛ղ անոնք որոնք կապուած են իրենց կեանքին հաճին իրենց սենեակներէն դուրս չելլել այս վայր- կեանիս», լա՛ւ, ստոյգ է որ քեզի համար նա- խընտրելի է այդ պահուն չբանալ սենեակիդ դուռը: Եթովպացի ներքինիներ են ատոնք, որոնց մտրակին հետ կը մաղթեմ որ չծանօթանաս բնաւ: Եւ յետոյ, թօ՛ղ որ Խ՛նչ պիտի շահէիր դուռը բանալով և նա- յելով: Ի՞նչ օգուտ ունի, կը հարցնեմ քեզի, տեսնելդ անոնց անցնիլը, կէս մթութեան մէջ, մէջտեղի երկուքը անկիւններէն բռնած մտահոգիչ ձեւով պարկ մը: Ահ, ուրիշ հետաքրքրութիւն մը ևս զոր պէտք չէ ունենաս: Եթէ պատահի քեզի, երկար օրերէ ի վեր տեսած չըլլալով զանոնք, տեղեկութիւններ հարցնել այստեղի կիներէն մէկուն կամ միւսին մասին, շատ մի՛ պնդեր, եթէ երբեք չտան քեզի այդ բացակայու- թիւնը յստակօրէն բացատրող պատասխաններ: Մի՛ պնդեր, հասկցա՞ր:

Ան, դուրս ելլելու պատրաստ, ձեռքը դրան նի- զիս վրայ դրած էր:

— Ի՞նչ առիթով մղուեցայ այս բոլոր բաներուն մասին քեզի խօսելու: Ահ, այո՛, կը յիշեմ: Սօ՛ խեն- դուկ Միհիրմային առիթով: Հարէմին մէջ շատ հազ- ւադէպ է այդքան նպաստաւոր պայմաններու տակ իր ասպարէզը սկսիլ: Անիկա գեղեցիկ էր, անտարա- կոյս: Միշտ ալ գեղեցիկ է: Դուն անձամբ կրցած ես ստիկա հաստատել: Բայց պէտք է աւելցնեմ՝ որ ես ալ ամէն ինչ ըրած էի իր առաջին քայլերը առաջ-

նորդելու համար: Ի՞նչ շանթահարիչ սկզբնաւորութիւն մը, ամէն պարագայի մէջ, որ ամէն յոյս ներելի կ'ընէր: Իր հասնելէն ի վեր շարաթ մը չանցած՝ արդէն կեղծքէ էր ան: Յետոյ, յաջորդող ամսուան մէջ, իբր պալ: Իր բոլոր բարեկամութիւնները, իրեն Միհիրմա Գաթըն կ'ըսէին արդէն, շողորթութեան համար, ամէնքն ալ այն վախով որ շուտով իրականութիւն կ'ըլլայ ատիկա: Ահա՛ այն սքանչելի շէնքը զոր իր ձեռքովը քանդեց ան:

Կ'երեւի թէ աչքերս լայն լայն բացած էի, որովհետեւ Հաղնէտար Ուստան ժպտեցաւ:

— Այս բոլոր բառերը քեզի ոչինչ կ'ըսեն, այնպէս չէ՞: Բայց քու ճակատագիրդ է ասոնք միայն լսել հիմա, խեղճ աղջիկս: Հարէմին աստիճանապետութիւնն է որ ասով ես բացատրեցի քեզի: Կէօզտէները այն հարձերն են որոնց պարզապէս նայած է խալիֆան. իքպալները անոնք են որոնք զոնէ անգամ մը կայսերական ննջասենեակին պատուին արժանացած են. գատըները, վերջապէս, այն տարփուհիներն են որոնցմէ զաւակ մը ունեցած է թագաւորը: Եթէ այդ զաւակը մանչ է և եթէ ան օր մը կոչուի իշխելու, անա գատընը կը բարձրանայ Վալիոէ Սուլթանի ամենաբարձր աստիճանին: Այս յոյսը արածուած է սնուցասել հոս մտնող կիներէն իւրաքանչիւրը: Այդ հրաշալի կարելիութիւնն է զոր զոհած է Միհիրման թեթեւ սրտով, չեմ գիտեր ինչո՞ւ, այն պահուն ուր գործին ամենազօրուար մասը կատարուած էր արդէն: Գոհ պիտի ըլլամ եթէ այդ պատճառը գիտնայիր և ինձի իմացնէիր: Կը կրկնեմ, խենդութիւն մը: Կը հարցնես թէ ինչպէս կրցաւ գործել և հասնիլ իր նըպատակին: Վալիոէին ուշադրութիւնը գրաւած էր: Խնդրեց որ անօր հետեւորդներուն մաս կազմելու չը-

նորհը ընէ իրեն: Այդ վայրկեանէն սկսեալ ան դադրեցաւ, ինչպէս սովորութիւն է, բուն հարէմին պատկանելէ, որովհետեւ Սուլթանը միշտ կը զգուշանայ բան մը ընելէ որ կրնայ հեռուէն կամ ժօտէն, իր ժօրը հեղինակութեան դպելու երեւոյթն ունենալ: Բայց ատով իօկ, այն հրաշալի հեռանկարները որոնց կ'ակնարկէի քիչ առաջ, փակուեցան իր առջև: Ի՞նչ կ'ըսես ստոր: Ահա այն աղուսը արդինքը զոր ձեռք ձգեց այսպէսով մեր զբաղիլ բարեհաճած փոքրիկ էակը:

Հարցում մը չլիթունքներս կ'այրէր: Բայց սիրտս այնքան ուժով կը զարնէր՝ որ չեմ գիտեր ի՞նչպէս քաջութիւնը ունեցայ զայն ուղղելու:

— Վալիոէին ուշադրութիւնը գրաւել, իր ծառայութեանը մէջ ընդունուիլ, ասոնք այնքան դժուար բաներ են:

Վերակացուին այնպիսի նայուածք մը նետեց վրաս՝ որ երբեք այդքան խիստ եղած չէր:

— Երբեք դժուար չէ անմտութիւն մը ընել, պատասխանեց դանդաղօրէն: Ամէն պարագայի, իմ վրաս յոյս մի՛ դնէր ատոր համար: Այդ ճամբուն մէջ չէ որ ես որոշած եմ քու ճակատագրիդ կատարուել:

Իր խօսքին տէրն էր ան: Ըստ հանուր սարսափին և այն իրարանցումին մէջտեղ զօր ամէն անգամ կը ստեղծէր Նորին Վեհափառութեան տուած այցելութիւնը հարէմին, ան միջոցը գտաւ իմ սենեակս ելլելու: Ժամը հինգին տասը կ'ուզէր:

— Գոհ եմ, ըսաւ, զիս արագ նայուածքով մը քննելէ ետք:

Ձեռքի պզտիկ հարուած մը տուաւ ծնօտիս ներքեւը:

— Մեծ դահլիճը իջիր: Եւ աչքդ ինձմէ մի՛ հե-

առցներս կեանքիդ վճռական վայրկեանը պիտի ապրիս :

Միեւնոյն րօպէին, տեսակ մը անհուն ժխոր կարծես ցնցեց ամբողջ հարէմը : Վարի անցքին մէջ զանգակ մը սկսէր էր հնչել խելայեղօրէն :

14.

«Ահաւասիկ կուգայ մեր վեհապետը՝ հաւատացեալներու կայօրը, Աստուծոյ ստուե՛րը երկրի վրայ, տէրերու տէրը, ընտրեալներուն մէջ ընտի՛ր, մեր վեհափառութիւնը, մեր Թագաւորը : Թո՛ղ Աստուած երկար կեանք պարգեւէ իրեն : Եկէ՛ք հիանալ - անոր վրայ, որ Օսմանի ցեղին փառքն է» :

Մինչդեռ զանգակը չէր դադրեր հնչելէ, այս էր տեսակ մը սաղմոսերգութիւնը՝ ինքն ալ անընդհատ, որ կուգար յարածուն կերպով Մօպէյն և Սէլամլըգ տանող կալըրիին խօրէն : Կեդրոնական մեծ դահլիճը, որ քանի մը ժամ առաջ գրեթէ ամայի էր, վերածւած էր յանկարծ փեթակներուն ամենէն աղմկալիցին : Այլեւս ուրիշ քան չէր տեսնուեր քայքայեթէ երթեւեկը խելագարած կիներու և գերուհիներու, որոնք կը վաղվզէին ամէն ուղութեամբ, կ'իլլէին և կ'իջնէին բոլոր սանդուխներէն : Դահլիճին իշխող շրջանակաձև խոշոր պատշգամբ, իբր թէ կախարդանքով, լեցուած էր հարիւրեակ մը հարճերով : Դեռ կուգային հարճեր,

կուգային շարունակ : Ուշացողները կը հրմշտկէին առաջ եկածները, գործածելով արմուկ և ուս, առանց բարեացակամութեան որեւէ հօգի, շատ աւելի նուազ տեսնելու քան տեսնուելու համար :

Թէև խստիւ հաստատուած կանոնը այսօր չէր տար իրենց արածութիւնը ներկայ ըլլալու ընդունելութեան՝ վարը, գեանայարկին մէջ, ատիկա պատճառ մը չէր սակայն կանխու հրաժարելու ուշադրութիւն գրաւելու ամէն պատեհութենէ, այնպէս չէ՞, չփորձելու համար առինքնել օգոստօփառ նայւածքներէն մէկ քանին, որոնցմէ մէկը միայն բուական պիտի ըլլար փարթամութիւնը հաստատելու իրենցմէ իւրաքանչիւրին տան մէջ : Աւա՛ղ, — յիմարական յոյսերու այդ քանի մը կարճատե վայրկեանները քանի՞ մտայլ անձկութեան ժամերով պիտի չվճարէին անոնք յետոյ, երբ տէրը, անգամ մը ևս, պիտի հեռանար առանց նշմարած իսկ ըլլալու իրենց ներկայութիւնը անգամ : Օ՛հ, գիտեմ թէ ես միանգամայն դատաւոր եմ և կողմ, և թէ ամէն անգամ որ կ'ողբկոչեմ այդ ամօթալից յիշատակները, անայլայլ հօգիով չէ ատիկա, այլ գարշանքի սարսուռով մը : Այսուհանդերձ, բուականաչափ գերի չեմ ատելութիւններուս՝ ուրանալու համար ինչ որ եղած է ճշմարտութիւնը : Արդ, ճշմարտութիւնը այն է որ երբեք աշխարհիս վրայ գոյութիւն չէ ունեցած աւելի գեղեցիկ, աւելի կատարեալ տեսարան քան այն որ երեւցաւ աչքիս այդ պահուն : Կարելի է ըսել թէ ինչ որ կովկասը, Անատոլուն, Իրանը, Սուրիան, Հռոմը և Կիպրոսը արտագրած են իբր հոյաչէն ճարդկային արարածներ, կը գտնուէր աչքիս դիմաց այդ վայրկեանին : Եթէ ասոր վրայ աւելցնես ծածանումը, գունագեղութիւնը, և պաճուճանքը դիպակ-

ներուն, շղարչներուն, մարմաշներուն, զգլխիչ բոյ-
 րե՛րը ստաշխի, կինամոնի, կնդրուկի, մառյ կա՛մը
 մուշտակներուն որոնք կ'եզերէին ոսկի և արծաթ
 պարեգօտները բոլոր այդ Ռոքսէլաններուն, Աթա-
 լիտներուն, Չաիրներուն, գոհարեղէնները վերջա-
 պէս, այդ կիներուն ուսերուն, պարանոցներուն,
 թեւերուն վրայ շառլորէն ասարածուած գոհարեղէն-
 ները, Ասիոյ գանձե՛րը մէկ խօսքով, այդ մարդկա-
 յին, հանքային, կենդանական հրաշալիքնե՛րը՝ չորս
 ու կէս դարէ ի վեր մեծածախս կերպով զրկուած դէպի
 այս վիհը, այս շլտուած Մօլոխը, զոր չէր դադարած
 ըլլալէ մինչև իր վերջին օրը կայսերական հարէմը,
 լա՛ւ, այն ատեն պիտի ընդունիս անկասկած թէ,
 ամենէն երեւակայօտ մարդիկը, իրենց հեշտասիրա-
 կան ամենախօլ երազներուն մէջ իսկ, չեն կրնար
 յաւակնիլ թէ կրցած են յղանալ Նման որեւէ բան:
 Ասոր վստահ եմ, կ'երդնում ասոր վրայ, և կը թուի
 ինծի թէ այսպիսի երդման մը համար բաւական սուղ
 գին մը վճարած եմ, որպէսզի ո՛չ ոք չունենայ փա-
 փաքը վիճելի գտնելու զայն:

Վարը, դահլիճին մէջ, տեսարանը աւելի եւս
 այլազան էր, աւելի նկարագեղ: Հոն տեղ գրաւած
 էին, իւրաքանչիւրը սկիզբէն իրեն համար որոշուած
 տեղը, օրուան առանձնաշնորհեալները: Նա՛խ Նորին
 Վեհափառութեան շնորհին կանոնաւոր ախաղոսակի-
 ները՝ իհպալ և գասըն, իրարու հետ մրցելով հրա-
 պոյրներով, վայելազեղութեամբ, պչրասիրութեամբ:
 Յետոյ, գլխից իւրաքանչիւր այցելութեան նո՛ր
 խումբը դեռառօի աղջիկներու, որոնց պաշտօնն էր
 Օգոստօփառ հիւրին ներկայացնել օարբարքներ, օչ-
 րակներ, անուշեղէններ, ինչպէս նաև չոնիճը և լա-
 կանը, ուր ան պիտի բարեհաճէր թաթխել իր մատները՝

եթէ հաւանէր ընդունիլ միրգ մը կամ անուշեղէն մը:
 Այս սպասարկութիւնը ամենէն աւելի ըզճացուածն էր
 ինչպէս յայտնուած էր ինծի իմ հարէմ մուտքիս ա-
 ռաջին օրն իսկ, Հազնէտար Ուսթայի ամենազօր կամ-
 քովը: Դահլիճ մտնելուս պէս, դժուարութիւն չէի
 ունեցեր նշմարելու այս վերջինը: Անթեք կեցած իր
 գոռոզ սև քօղերուն մէջ՝ Վալիտէ Սուլթանին քովը,
 որ ինք փլած էր թիկն սթոռի մը մէջ, իր ութսուն
 տարիններուն բեռան տակ, մեծ տիրուհին ունէր տե-
 սակ մը չարաղէտ բարձր ջրազուաւի երեւոյթը: Հա-
 կառակ յարգանքի ցոյցերուն զօր ան չէր դադար
 շառլորէ վալիտէ Սուլթանին, կը զգացուէր որ իր
 կամքն էր միայն որ անվիճելիօրէն կ'իշխէր հարէմին
 վրայ: Ան կը գտնուէր սպիտակահեր պառաւ իշխա-
 նուհիին աջ կողմը: Այս վերջնոյս ձախակողմը կեցած
 էր Միհրիման՝ կանաչ աչուըններով, խորամանկ և զօ-
 րաւոր պղտիկ դէմքով, աւելի ճապուկ քան երեսք
 իր կարմիր զգեստին մէջ: Մեր նայուածքները
 իրարու հանդիպած ըլլալով, իմինս խօսարհեցաւ ան-
 միջապէս:

«Ահաւասիկ կուգոյ մեր վեհապետը՝ հաւատաց-
 եալներու կայսրը, Աստուծոյ ստուե՛րը երկրի վրայ,
 տէրերու տէ՛րը, ընտրեալներու մէջ ընտի՛ր, մեր Վե-
 հափառութիւնը, մեր թագաւորը: Թո՛ղ Աստուած եր-
 կար կեանք շնորհէ իրեն: Եկէք հիսնալ անոր վրայ,
 որ Օսմանի ցեղին փառքն է»:

Թափօրը կը մօտենար: Չայնը բոլորովին մօտ էր
 հիմա, ոնգային սուր ձայն մը, որ սարսուռ մը ան-
 ծուց կռնակիս սմբողջ երկայնքին, ձայնը Գլլար Ա-
 շաբըն, Նորին Վեհափառութեան ներքինապետին:
 Չուքիս մէջն էին ձոյլ ոսկիէ լականը և կիտուա-
 ծանկար շոնիճը: Հազնէտար Ուսթա, որ բոլոր այդ

իրարանցումին մէջ կը գտնէր միջոցը զիս աչքէ
չկորսնցնելու, նշան ըրած էր ինծի որ առնեմ դա-
նոնք: Պիտի ունենայի՞ ուժը զանոնք ձեռքերէս վար
չձգելու: Պիտի կարենայի՞ յաղթահարել չփոթու-
թեանս: Մեռած պիտի չըլլայի՞ տեսնելէ առաջ Զայն,
Մա՛րդը որ գալու վրայ էր: Դէպի պատշգամը ուղ-
ղեցի շփոթահար նայուածք մը: Ի՛նչ որ տեսայ հոն,
Աստուած իմ: Հարիւր յիսուս կիներու: Նայուածքները
յառած նո՛յն ուղղութեամբ, ամէնքն ալ յորդ պաշ-
տու՛մ, սրբազան հրճուանք, զմայլանք արտայայտող:
Տեսայ բոլոր բերաններուն միանգամայն բացուիլը
«կեցցէ՛» աղաղակելու համար...: Վերջապէս եկած
էր Ան:

«Փափօսհրմրզ չօգ ետա... երկա՛ր կեանք մեր
թագաւորին, միր տիրոջ...»:

Պէտք է լսած ըլլալ բոլոր այդ ձայներուն միան-
գամայն հսչելը, կիներու ունացող ձայնը նախ, յե-
տոյ՝ սուր և մղձաւանջային ձա՛յնը ներքինիներուն:
Այս ամէնը կը զարգանար, կը բարձրանար, իրար
կը խառնուէր դժօխային ժխորի մը մէջ: Առանց
գիտնալու՝ աչքերս գոցեցի: Երբ բացի զանոնք,
Թափօրին գլուխը կ'երեւէր նրբսնցքին մէջ: Ամենէն
առաջ՝ ներքինիները՝ հրէշային և անհեթեթ ծաղ-
րանկարնե՛ր, իմանք բարձրահասակ, նիհարակազմ,
իւրաքանչիւրը նման երկու խեղկատակներու որոնց-
մէ մին նստած ըլլար միւսին ուսին վրայ: Միւս-
ները աւելի՛ եւս սոսկալի, դաճաճնե՛ր այս վերջին-
ները, Հաւատացեալներու հրամանատարին ծաղրա-
ծուները, թշուառ կնո՛ւներ, խեղանդամ և կուզ,
որոնք կ'աղաղակէին, կ'ոռնային, իրար կը հրմշտը
կէին, իրար կը հալածէին: Ահարկու Գըզլար Աղա-
սըն կը փակէր թափօրը, հանդիսաւորապէս հագած

եր կլի վրայ Ալլահի նստուերին ծառայողներուն ասհ-
մանուած կապոյտ և արծաթ համազգեստը: Ապա, մի
ջոց մը ծանր լուռութիւն մը, ոչ մէկ աղաղակ... Ա
պա, վերջապէս, ի՛նքը...:

«Փափօսհրմրզ չօգ ետա...»:

Փափօսհը կը յառաջանար առաւձին, բոլորովին
առաւձին, նման գիշերուան տարտամ թռչունի մը:
Հագած էր շատ պարզ կերպով վերարկու մը, սր չա-
փազանց խոշոր երեւցաւ ինծի, հագած էր Ֆէն մը,
որ սոյնպէս շատ խոշոր էր, և կը հռէր իր ականջները:
Գլուխը և ծունկերը ցցուած էին դէպի առաջ, կռնա-
կը կքած էր, մօրուքը՝ ցած: Աւելի դրսդկելով քան
թէ քալելով, կը նմանէր այն շատ ձեր զինուորական-
ներուն որոնք երբ քաղաքայինի հագուստներ հագած
են, միշտ երեւոյթը ունին վախնալու թէ իրենց
սուրը պիտի բռնուի իրենց սրունքներուն մէջ: Մա-
նրկեկ մարդ մը, շատ մանրկեկ մարդ մը անվիճելիօ-
րէն: Բայց ապահովապէս ոչ գէշ մարդ մը, ամէն պա-
րագայի տակ: Ահաւասիկ տպաւորութիւնը զոր իր
առաջին երեւումը գործեց վրաս: Եւ, յանկարծ, չեմ
գիտեր թէ ի՛նչպէս եղաւ ատկկա, այս ամբօխին մէջ
պատահեցաւ որ տեսնեմ իր աչքերը, որ ունենամ զու-
նոնք — ա՛հ, ոչ երկար ժամանակ, փայլակի մը տե-
ւողութեան չափ, մէկ րոպէ միայն — իմ աչքերուս
գամուած: Ա՛հ, այն ատեն, այն ատեն, այդ րոպէ՛ն,
այդ փայլակը, կրնամ պատուոյ խօսքս տալ քեզի,
բուական եղան ինծի: Պզտիկ մարդուկը, բարեմիտ երե-
ւոյթով քաղքենին անհետացաւ: Այլեւ ուրիշ բոն
չտեսայ բայց եթէ Գարս-թէքէի իմ վանքս, արեամբ
կարճրած իր սալայատակներով: Այլեւ ուրիշ աղմուկ
չլսեցի բայց եթէ նրբանցքներուն շաչող դռները ա-
ռաւօտեան մշուշին մէջ, ուրիշ աղաղակ չլսեցի բայց

եթէ սպանեալներուն հեծքերը և սպաննողներուն հայհոյանքները...

— Չէ՞ր ըսած քեզի: Ամէն բան տեղի չունեցա՞ւ իմ գուշակածիս պէս: Նոյնիսկ քիչ մըն ալ աւելի լաւ, կը խոստովանիմ:

Այս է հարցումը զոր կ'ընէր ինծի քանի մը ժամ ետքը Հազնէտար Ուսթան, անտարբերութեամբ մը զոր կը հերքէր իր յաղթանակի շեշտը: Այո՛, անչուշտ, ամէն ն բոլոր անցած էր իր գուշակութեանց հա մոձայն: Բայց ինծի համար ցնցումը եղած էր չափազանց ուժգին: Անտարբեր կը պառկէի Եօրտի գորգով մը ծածկուած բազմօցի մը վրայ, առարկայ խը նամքներուն երեք կամ չորս աղախիններու, որոնք կը դառնային շուրջս, ամենքն ալ հագուած և պծնուած պերճութեամբ մը որ գրեթէ այնքան մեծազնի էր որքան իմինս: Այլևս ոչ իմ պզտիկ չէրքէզուհիներս էին անոնք և ոչ ալ իմ պզտիկ սենեակս կը գտնուէի ես: Այսպէս ուրեմն օրը դեռ չէր վերջացած երբ արդէն իսկ ձեռք անցուցած էի կայսերական ուշադրութեան առաւելութիւնները: Կեօզօն զոր դարձած էի Խալիֆային կողմէ նշմարուած ըլլալու միակ իրողութեամբ, հիմա իրաւունք ունէր անոր օտիւրէին, ինչպէս կ'ըսեն հարէմի բարբառով, այսինքն անոր ապրելու կերպին անոր մասնաւոր յարկաբաժիններուն՝ անջատուած հասարակ մանկանացուներէն: Իմ յարկաբաժինս, ուր մեծ փրօուհիներ եկած էր տեղաւորել զիս առանց վայրկեան մը իսկ կորսնցնելու՝ կը բաղկանար հինգ ընդարձակ սենեակներէ և կը գտնուէր առաջին յար կին վրայ քեօզի մը՝ երեք կողսերէն շրջապատուած ծառերով, որոնց արդէն իսկ ծլարձակ ճիւղերը, կը տարծուէին դէպի պատերը, անոնց դպնալու աստիճան: Սոխակը պիտի շուշանար ինքզինքը լսելի ընելու

այս հաճոյական բոյնին մէջ: Գալով իմ նոր հետեւորդուհիներուս, նոյնիսկ դեռ չէի իսկ գիտեր անոնց թիւը— վեցեո՛ւյ մը՝ առնուազն: Այս ամենը՝ առինքնուած ըլլալուս համար, առառաւելն կէս վայրկեան, Նորին Վեհափառութեան ուշադրութիւնը:

— Ի՞նչ է այս չէկ աղջնակը, որ շանիճը ներկայացուց ինծի: Վայրի այծի մը երեւոյթը ունէիր քիչ մը: Թո՞ղ ըտուի ինծի թէ օւրկէ՞ կուգայ: Յարդ դեռ չէի նշմարած զայն:

Նսխադասութիւնը, բախտորո՛շ նսխադասութիւնը: Այն զոր Հազնէտար Ուսթա գուշակած էր թէ պիտի լսէի: Լուրջ թէ շանիճը դրած էի գետինը: Բախտ մըն էր ատիկա: Շատ սաստիկ կը զողայի: Բնաւ պիտի չկարեւոյի շարունակել զայն բռնել:

Համաձայն հարէմին արարողական սովորոյթին վալիտէյին կ'իյնար, և միայն անո՛ր, պատասխանելը հարցմանց զոր իր որդին կրնար ընել նորեկի մը մասին: Բայց ալեհեր Սուլթանուհին բոլորովին անկարող էր նուազագոյն տեղեկութիւնը տալու իմ մասիս: Ինչպէս միշտ, յոյսը կը դնէր Հազնէտար Ուսթային վրայ: Այս վերջինը, միշտ հսկելու վրայ, ժամանակ ունեցած էր մրմնջելու իր ականջին:

— Այն պզտիկ աղջիկս է ասիկա, զոր մեր բարեկամը՝ Հաճիլար փոշա Անատուրի իր ճամբորդութեանէն բերած է Ձեր Վեհափառութեան համար: Կը կարծէի թէ Ձեր Վեհափառութիւնը տեղեկ է:

Վայրահակ ուսերով պզտիկ մարդը գլխու ցընցում մը ունեցած էր:

— Այո՛, այո՛, կը յիշեմ, արդարև: Այն պարսազային ուր մտնամ, յիշեցուցէք ինծի, որպէսզի գոհունակութիւնս յայտնեմ Հաճիլար փոշայի: Այս պզտիկը հաճելի է ինծի: Գոհ եմ անկէ:

Այդ ձայնը, այդ ձայնը, Աստուած իմ: Անիկա կը թուէր գերեզմանէն գալ: Կռնակը աւելի եւս կորացած էր: Խորշոմած և թոյլ կոպերը իջած էին: Ի՞նչ արտայայտութիւն մարող ցեղի, ճգմուածի, անդարմանելի՛ ծերութեան: Ի՞նչ, պիտի քնանա՞ր այդ տեղ իսկ: Բոլոր աղմուկները լուծ էին, բոլոր շունչերը կը մնային առկախ...: Եւ յանկա՛րժ, պզտիկ շշուկ մը: Այդ նոյն մարմինը կը շտկուէր յանկարժ: Այդ աչքերը կը փայլէին սարսափի և սպառնալիքի նշոյլով մը: Աջ ձեռքը չտեսնուած արագութեամբ անդրադարձ շարժումով մը մխրճուեցաւ բաճկոնին գլուխը, ատրճանակի մը կոթը երեւցաւ այդ ձեռքին մատներուն մէջ...:

— Ի՞նչ է, ի՞նչ կայ, ըսէ՛ք ինձի, ապա թէ ոչ...
Ոչինչ, նուազ քան ոչինչ: Պարզապէս ոսկի պընակ մը ինկած է դժբախտ պզտիկ հարճի մը ձեռքէն՝ սալայատակին վրայ...:

— Ըստ այժմանուոյն թո՛ղ պատժուի այդ տխմարը: Եւ այլեւս ընա՛ւ թող չերեւի աչքիս, բնա՛ւ:

Մեռելային լուսթիւն մը տիրած էր: Բոլոր աչքերը գետին յարած էին, բացի իմիններէս, չեմ գիտեր թէ ինչո՛ւ: Դարձեալ աչքերս հանդիպած էին իր նայուածքին: Անոնց սարսափը ժպտիլ տուած էր զինքը:

— Փառք կուտամ Աստուծոյ որ դուն չէիր, շատ մեղքե՞պիտի ըլլար, ըսած էր:



Տեսնելով զիս այդպէս ճգմուած և անուժ, մեծ տիրուհին զարմացած էր նախ. ապա՛ յօնքերը պոքոտած:

— Սխալա՞ծ եմ քու մասիդ, ըսաւ: Լա՛ւ մտիկ

ըրէ զիս: Բեզմէ չեմ ուզեր ոչ երախտագիտութիւն և ոչ ալ խանդավառութեան արտայայտութիւն, հասկըցի՛ր ասիկա: Կը խնդրեմ որ մէկ բան ըսես ինձի միայն. գիտա՞յ ես թէ 400 կիներէն որոնցմէ կը բողկանայ ներկայիս հարէմը, կան, այս պահուս, 350 հոգի որոնք կը նախանձին քեզի, 40՝ որոնք կը վախնան քեզմէ և 10՝ որոնք արդէն իսկ կ'ատեն քեզ: Ընդունէ որ առաջին օրուան մը համար արդի՛ւնք մըն է ասիկա...:

Մտեցած էր բազմոցիս, խստութեամբ բռնած էր բողուկս:

— Չեմ գիտեր թէ ի՞նչ չեչտ պէտք է գործածել քեզի հետ: Ես, գիտեմ թէ, երբ քու տարիքդ ունէի, երախտապարտ պիտի ըլլայի եթէ խօսուէր ինձի այս շեշտով: Բայց, վերջ ի վերջոյ, թերեւ վատ մըն ես միայն, վա՛տ՝ ճիգին առջեւ, վա՛տ՝ պայքարին առջեւ զոր ընդհնարել կուտամ քեզի, կարծելով ատով կորովդ արծարծել:

Այս անգամ, ճիշդ կէտին դպած էր, գտած էր բառը որ պէտք էր, այն բառը զոր եբբեք չեն արտասանած իմ ներկայութեանս՝ առանց որ իսկոյն տեղէս ցատկեմ:

— Ո՛չ, ըսի, ճիշդ չէ, հոսցնելով վերջապէս արցունքները զո՛ր երկար ժամանակ ի վեր բռնած էի: Որքան ալ երիտասարդ ըլլամ, կան բաներ որոնց համար կեանքս պիտի տայի, ուրիշներ, ընդհակառակը...:

Աւելի չկրցայ խօսիլ: Չեռքերովս գոցած էի աչքերս և սկսած հեկեկալ:

— Ինչո՞ւ կուլաս, ի՞նչի կը մտածես, ըսաւ շեշտով մը զոր կ'ուզէր շատ խիստ ընել և որ թուեցաւ ինձի սովորականէն նուազ խիստ:

— Ինչու կուլում, ինչի կը մտածե՞մ: Կ'ուզէ՞ք գիտնալ, պոռթկացի: Միհիրմային, Միհիրմայի'ն...: Լառութիւն մը տիրեց: Ձեռքերս դրած էի աչքերուս վրայ: Կը վախնայի ըսածներէս, կը վախնայի Հազնէտար ուսթայէն: Ոչ մէկ գնով պիտի չհամարձակէի նայիլ իրեն այդ պահուն:

— Միհիրմայի'ս, ըսաւ վերջապէս: Ի՞նչ կը նշանակէ ատիկա:

— Թէ ի՞նչ կը նշանակէ ատիկա. բարդ չէ: Այն ինչ որ ըսիք թէ ձեռք բերելու վրայ եմ, Միհիրման ալ ունեցած է: Եւ սակայն չէ կրցած շարժենակել, այնպէս չէ: Ձէ՛ կրցած: Ինչու՞ համար, հարցուցած էք ինքզինքնուդ: Ձէ՞ք գիտեր: Ձէ՞ք հասկնար: Ե՛ս՝ գիտե՛մ: Ե՛ս՝ հասկցա՛յ: Մէկ վայրկեանը բուռական եղաւ ատոր համար: Կ'ուզէ՞ք միշտ որ ըսեմ ձեզի, այնպէս չէ՞:

— Լռէ՛, հրամայեց Հազնէտար Ուսթա:

Իր ձայնին հնչումը այնպէս էր որ ստիպուեցայ նայիլ իրեն: Պազ սարսուռ մը անցաւ ամբողջ խամփէս: Իր դիմագիծները աւրուած էին: Իր ափերով՝ ծածկած էր ականջները: Գուշակե՛լը միայն իր իմացածը, իրեն համար առեւի սրբապղծութիւն մը պիտի ըլլար:

— Լռէ, կրկնեց ան խուլ կերպով:

Պիտի խօսէի. բան մը պիտի ըսէի. թէ ի՞նչ չեմ գիտեր: Մեծ քաղցրութեամբ մը իր մտը դրաւ շըրթունքիս:

— Սո՛ւս, ըսաւ անգամ մը ևս, լռէ՛:

Մեացինք այսպէս բուռական երկար ժամանակ, առանց բառ մը ըսելու իրարու: Յետոյ, կարծես թէ ցաւելով, մեծ տիրուհին օտքի ելաւ:

— Առանձին կը թողում զքեզ, ըսաւ: Զբաղումներս կը կանչեն զիս: Իսկն բախտաւոր ես որ ընելիք

գործ մը չունիս: Ի՞նչ տեղը եթէ ըլլայի, պիտի քնննայի: Իսկն մը լաւագոյն բան է քու պարագայիդ համար:

Հակառակ իր վերջին խօսքերուն, չէր կրնար հեռանալ: Կարծէք թէ ինձի ընելիք յաճնարարութիւն մը ունէր և չէր գիտեր թէ ի՞նչ ձեռով մէջէն ելլէր:

— Մտիկ ըրէ, ըսաւ վերջապէս: Հոս կայ սովորութիւն մը: Ես չեմ որ պիտի չեղիմ անկէ: Նոր կեօզօները միշտ ունին իրաւունք մը Սուլթանէն ընծայ մը ընդունելու: Պաշտօն ունիմ այդ ընծաները յանձնելու անոնց, իրենց հետ խորհրդակցելէ ետք իրենց նախընտրութեանց վրայ: Շրջագգեստներ, մուշտակներ, գոհարեղէններ, ինչ բան հաճելի է քեզի: Հաճոյքով խորհուրդ մը պիտի տամ քեզի, եթէ որոշ գաղափար մը չունիս այդ ընծաներուն մասին:

Եւ՝ որովհետեւ կը շարունակէի լռել:

— Օ՛ս, խօսէ՛ ըսաւ համբերահատած:

— Ներեցէք, ըսի դանդաղութեամբ: Կը մտածէի: Եթէ ձեզի ներկայացնելիք փոփոքս անիրակունանալի է, կանխաւ ներում կը խնդրեմ:

— Լա՛ւ, ըսէ՛ նայինք:

— Ահաւասիկ. թերեւս զիտէք թէ ուրկէ՛ կուգամ: Հաճիլար փաշա կրնայ պատմած ըլլալ ձեզի: Քրիստոնեայ վանքէ՛ մը, հեռուն, շատ հեռուն Տաւրոսի մէջ, Գոնեայի հարաւը:

— Արդարեւ, ըսաւ ան, նեղուած և զարմացած միանգամայն: Կը թուի ինձի թէ լսած եմ այդպէս բան մը:

— Հոն է որ բնակած եմ մանկութենէս ի վեր: Հոն էր որ կը խորհէի նաև թէ կեանքս պիտի վեր-

ջանար: Կը թուի թէ Աստուած այլ կերպ կարգաօրէց: Պիտի փափաքէի գիտնալ թէ ի՞նչ եղած է իմ խեղճ վանքս, ի՞նչ եղած են իմ բարերարութիւներո՛ կրօնաւորութիւնները, գէթ անոնք որոնք կ'ապրին դեռ: Ահաւասի՛կ: Ա՛յս է բոլորը:

Մեծ տիրութիւն անշարժ կը մնար: Մթութիւնը տիրել սկսած էր սենեակին մէջ: Անոր բարձր սե սիլուեթը լուծուած էր այդ մթութեան մէջ:

— Դուն զարմանալի փօքրիկ աղջիկ մըն ես, ըսաւ վերջապէս: Ատիկա պատճառ մը չէ որ որեւէ բան զեղչեմ իմ գուշակութենէս: Յաջողութիւնդ ապահով է, ուզես կամ ոչ: Դալով ինձմէ ուզածիդ... Պահ մը կեցաւ:

— Անհոգ եղիր, անհրաժեշտը պիտի ընեմ: Պիտի գիտնաւ ինչ որ կը փափաքես գիտնալ: Կը խոստա նամ քեզի ատիկա:

Զեռնավերջի անօթխած լուսինը կը ճերմկցնէր իմ սենեակիս խորերը: Կա՞յ, աշխարհի մէջ աւելի ըղձալի բան մը քան այն անկողինը ուր ժարդ պիտի հանգստանայ առանձին:

Իմ նոր յարկաբաժինին դուռը նուազ աղմուկ ընելու էր քան նախորդինը: Նուազագոյն ճախը չէր ազդարարած ինձի, երբ զգացի զմրուխտակիր ձեռքին շրթունքներուս դրուիլը, ինչպէս երէկ գիշեր:

— Սո՛ւս, սո՛ւս, նորէն ես եմ, պզտիկ ջոյրիկ:

— Տիրութիւն, այս երեկոյեան համար է, աղաղակեց Մէճիլէ, խուժելով սենեակս և ծափ զարնելով: Մէճիլէ Ռաշայացի տիւրգէ աղջիկ մըն էր, Հէրմոնի մօտերէն, որ 15 օրէ ի վեր կը ծառայէր ինձի մեծ անձնութեանը և որ հետու էր սպորտ մը ըլլալէ: Դարձած էր տեսակ մը գլխաւոր սենեակապանութիւն և քարտուղարութիւն միանգամայն: Այլեւս միակ փառասիրութիւն մը ունէր, այն էր որ, երբ իջալ ըլլայի, շարունակէի վատհուսութիւնս շնորհել իրեն և ինքն ալ մասնակից ըլլար բոլոր այն պատիւներուն որոնք ամէն կողմէ պիտի շրջապատէին զիս:

— Ա՛յս երեկոյ, ի՛նչն գիտես:

— Վատն եմ: Իւրացայ փոխ գանձապետութիւն հրամայելը՝ յանուն Հոգնէտար Ո սթային, որ վարդի լոգանք ընել տուող կինը հոս ըլլայ ժամը 5ին: Անիկա սուելցուց թէ քեզի համար կ'ունչել կուտար զայն:

— Կա՛ւ, քանի որ այդպէս է սուելի ժամանակ արգելք մի՛ ըլլար քնանալուս: Կ'աղաչեմ որ հանգիստ թուողուն զիս մինչև սյ՛ առեն:

այլեւս Կրօնաւորութեան բարեկամութիւններէն անոնք որոնք կ'ապրին դեռ — բարեբախտաբար կարծածէ՞ք շատ աւելի է անոնց թիւը — ցրուած են հոս ու հոն ։ Այս ամէնը արդար է ։ Փոխանակ հայհոյելու՝ մեր տէրը խօսութեամբ մեղադրելով, պէտք է գ'վել, վստահ եղիր այդ մասին, իր ներողամտութիւնը ։ Մի' մոռնար որ այդ վանքէն եկած են և յետոյ հոն ապաստանած են անոնք որոնք եղեռնափորձ ըրին իր կեանքին դէմ ։ Կանգ առաւ ան, իր թաշկինակով սրբերու համար արցունքով ողողուած աչքերս ։

— Մի' լար Ոչ մէկ բան բոլորովին չի կորսուիր այս աշխարհիս մէջ ։ Արդորոյ առարկայ վանքը ցր մը թերեւս վերաբանայ իր դռները ։ Թերեւս նոյնիսկ քեզի' պիտի պարտի առիկայ ։

Գործ մըն է առիկա, որուն հեռապատկերը պէտք է բաւական ըլլայ քաջութիւն տալու համար քեզի ։ Ոչ մէկ բան արգելք պիտի չըլլայ այն ժամանակ այս արձանին վերսգրաւելու այն տեղը ուր հանչցած ես զայն ։ Մինչ այն, քեզի կը պատկանի անիշաբայց կարելի չէ, ոչ մէկ պարագայի տակ, որ հոս միայն Մարգարէին օրէնքը կ'արգիլէ, գիտես, մարդկային դէմքերու վերաբարձութիւնը ։ Դուն իսկ, միւս կողմէն, հանգուած եմ թէ կեանքիդ ներկայ վայրկեանին պիտի խորշիս նման իր մը պահելէ քու մօտդ ։ Կ'ուզե՞ս որ զայն ապահով տեղ մը պահելու հոգը վրաս առնեմ ։

Հաստատական նշան մը ըրի ։

— Սքանչելի' ։ Այն անձը որուն պիտի վստահիմ զայն, ինչ ալ ըլլայ, տրամադրութեանդ տակ պիտի պահէ զայն միշտ ։

Կ'ուզէի երախտագիտութեան նախադասութիւն մը մ'իջնել ։ Կեցուց զիս անմիջապէս ։

— Այդ ցոյցերուն տեղի չկայ ինք միջև ։ Գիտես շարժաւիթները որոնցմով կը գործեմ ։ Անշահախընդրական չեն անոնք ։ Եթէ սակայն այս խնդրոյն մէջ կայ մէկը որուն շնորհակալ պէտք է ըլլալ, Հսճիւար փաշան է դարձեալ ։ Անհիշապէս որ փափաքը յայտնեցի իրեն, այնպէս մը կարգադրեց որ իրապարծուի անիկա անյապաղ ։ Բայց, այո', աղջիկս, այս այսպէս է ։ Իր զրկած վստահելի դործակատարն է որ բերած է հոնկէ բացի տեղեկութիւններէն զոր գիտես, այս արձանը եւս ։ Չեմ անգիտանար թէ ինչ պիտի կարենաս պատասխանել ինձի ։ Հսճիւար փաշար իր պարտակասութիւնը միայն կ'ընէ ։ Եթէ վարկի յաւելումը զոր ունենալու վրայ է քու շնորհիդ Նորին վեհափառութեան քով, այդքան մը կ'ալօժի ։ Հասկնալի է այդ, բայց վերջապէս...

Պատելով հանդերձ, Հազիտար Ոստան զբաղած էր իր եփենոսէ սնտուկին մէջ վերազետեղել նուիրական արձանը ։ Քանի' շաքսթէն, քանի' տարիէն պիտի տրուէր ինձի վերատեսնել զայն ։ Մի'չև այն ժամանակ, մարդերն ու իրերը ի'նչ տեսակ էակ մը դարձուցած պիտի ըլլային զիս ։

— Եւ այժմ, եզրակացուց Հազիտար Ոսթա, պէտք է քիչ մը իրականութեան վերադառնալ ։ Ժամը Ծին, կինները որոնք պաշտօն ունին զքեզ պատրաստելու մեծ պատիւին, հոս պիտի ըլլան ։ Պիտի հըս կեմ որ ամէն ոք իր պարտականութեան բարձունքին վրայ ըլլայ ։ Նորին վեհափառութիւնը բաղձանք յայտնած է քու ներկայութիւնդ ունենալու ժամը Ծին ։ Հասկնալի է որ ոչ ոքի պիտի յաւձնեմ զքեզ իրեն մօտ առաջնորդելու հոգը ։ Ես անձամբ պիտի ընեմ այդ ։ Մնացեալին համար, կը կարծեմ թէ 15 օրէ ի վեր բաւարար չափով դաս տուած եմ քեզի ։

Այսուհանդերձ, եթէ ունիս ինծի ընելիք ունէ հարցում... Մի՛ քաշուիր: Ճիշդ ատենն է:

— Որեւէ հարցում չունիմ, մրմնջեցի տխրութեամբ:

— Ուրեմն ուրիշ բան պիտի չընեմ բայց եթէ կրկնել քեզի ինչ որ ըսած եմ քանիցս: Կը նախընտրեմ վստահիլ քեզի: Բան մը սակայն, որուն վրայ կ'ուզեմ դեռ ծանրանալ: Մեր վեհապետը այնքան յաճախ պատճառներ ունեցած է իր կեանքին համար վախճալու: Ասկէ առջ կուգայ իր մօտ, ատեն ատեն, շատ բնական ջղայնութիւն մը: Քեզի կը մնայ զգուշանալ ամէն բանէ — բարձր ձայն, յեղակարծ ժէսթեր — որ իր մօտ այդ ջղայնութիւնը արթնցնելու բնոյթը ունենայ: Այլապէս դուն իսկ է որ վտանգին պիտի դիմես թերեւս...

— Այո՛, ըսի հեռաւոր ձայնով մը, Զիւլմային ճակատագիրը ունենալու:

Ինչո՞ւ համար այդ վայրկեանին արտասանեցի այդ նախադասութիւնը: Ամէն բանի համակերպած ինչպէս էի, դեռ հիմա ալ լաւ չեմ հասկցած պատճառը: Մեծ տիրուհին տեղէն ցատկած էր:

— Ինչ, ըսաւ, ի՞նչ ըսիր:

— Խօսեցայ Զիւլմային մասին, պատասխանեցի նոյն հաշտասէր ձայնով: Եւ յետո՛յ: Տեսնե՛սք: Ամէն բան մտիկ կ'ընեմ: Ամէն բանի կը հնազանդիմ: Որեւէ հարցում չեմ ըներ: Դարձած եմ աշխարհի անտէնն հլու աղջիկը: Ատիկա պատճառ մը չէ սակայն որ անգիտանամ Զիւլմայի պատմութիւնը:

— Ո՞վ կրցած է ըսել քեզի, յանդիմանեց Հազնետար Ուսթա, չփոթահար: Կը լսե՞ս, կը հրամայեմ քեզի...

— Ի՞նչ կը հրամայէք: Եւ ի՞նչ օգուտ ունի:

Էականը այն է որ ճշմարտութիւնն է ատիկա: Մեծ ներքինապետին՝ Գըզլար Աղասըին, սուղ արժած էր անիկա (Զիւլման), շատ աւելի սուղ քան ինչ որ եղարժած եմ Հաճիլար փաշայի — փոխադրութեանս ծախսը միայն: Հարէ՛մը, ուր ազաջնորդուեցաւ անիկա, Նորին վեհափառութեան հաճելի եղաւ շուտով, շատ աւելի շուտով քան ես: Հոս գալուսն երրորդ կամ չորրորդ օրը պատիւն ունեցաւ Սելամլիգ առաջնորդուելու: Միայն թէ, սխալը գործուած էր բաւարար չափով չտալու թէֆլիգցի այդ լեռնականին այն դասերէն որոնք տրուեցան ինծի: Այնպէս որ, գիշերուան մէջտեղ ատրճանակի հարուած մը հնչեց կայսերական յարկաբաժիններուն մէջ: Ծափարը, հաւատարիմ ծափարը՝ Նորին վեհափառութեան նախասիրած գերին, հոն վազեց խելայել: Գտաւ Սուլթանը, ատրճանակը ի ձեռին և իր ոտքերուն առջև տարածուած պզտիկ վրացուհին՝ մեռած: «Վախցուց զիս, բացատրեց մեր տէրը քիչ մը նեղուած: Ամէն բան լաւ կ'երթար երբ յանկարծ մեծ շարժումէ մը ունեցաւ այս աղջիկը...: Կարծեցի թէ դաշոյն մը ունի ձեռքին մէջ: Զափուանց աճապորեցի՝ հրազենս պարպելու: Մե՛ղք: Բայց, ի՛նչ փոյթ, կիները չեն պակտիր»: Ահաւասի՛կ, ամէնը այս է: Բայց, կը հարցընեմ ձեզի, ի՞նչու կ'ուզէք որ ամբողջ հարէ՛մին մէջ ես միակը ըլլալի Զիւլմայի պատմութիւնը չգիտցող:

— Ո՞վ ըսաւ քեզի, ո՞վ թոյլ տուաւ ինքզինքին կրկնեց Հազնետար Ուսթա ինքզինքէն ելած:

— Ո՞վ թոյլ տուաւ ինքզինքին, ե՛ս, ըսաւ խուլ ձայն մը մեր ետեւէն:

Մեծ տիրուհին և ես նոյն թափով ետե դարձանք: Մոռենչ մը արձակեցի, նշմարելով Միհրման: Զէր հագած իր կարմիր համազգեստը, կը ծածկէր

զինքը միայն թափանցիկ մետաքօէ երկար պարեգօտ մը, որուն վրայ արտորնօք նետած էր ռալ մը: Իր վարտերը, զոր նոյն իսկ հիւսելու ասնձրոյթը յանձն չէր առած, կ'աւլէին իր ուսերը: Իր աչքերը, իրենց կապուտացած անհուն կոպերուն մէջ, կը նայէին անթարթ կերպով իրենց առջև: Գեղեցիկ, անշուշտ թէ գեղեցիկ էր այդպէս: Երբեք հաւատօրէն այդքան գեղեցիկ եղած չէր: Բայց գեղեցկութեամբ մը որ երկիւղ պատճառեց ինծի: Ընկրկեցայ:

— Ի՞նչ գործ ունիս այստեղ, գոռաց մեծ տիրուհին, զարմացման գաղաթնակէտին հասած: Վալիտէին իմաց պիտի տրուի:

Միհիրմա սակայն նոյնիսկ իր ներկայութիւնը նշմարած ըլլալու երեւոյթը չ'ունէր: Ուղիղ դէպի ինծի եկած էր: Բռնած էր թեւէս:

— Ի՞նչ կը լսեմ, ըսաւ և իր ձայնը յանկարծ դարձած էր խապօտ, խապօտ՝ փշրուելու աստիճան: Ծիլոյ է թէ հոն պիտի երթաս այս երեկոյ, Ո՛չ, կուրելի բան չէ, այնպէս չէ: Ըսէ՛ ինծի, կը հրամայեմ քեզի, կ'ուզե՛մ: Ըսէ՛ ինծի:

— Միհիրմա՛, խենթեցած ես արդեօք, ըսաւ Հազնէտար Ուսթա ատամները սեղմած:

Մեր երկուքին միջև կեցած էր ան: Միհիրմա հրեց զինքը բուռն կերպով: Հիմա գրկած էր զիս իր թեւերուն մէջ: Իր շրթունքները փակցուցած էր իմ ինքններուս: Կը հեւար և կը սպառնար միանգամայն:

— Հո՞ն երթալ, դո՞ւն: Ո՛չ, ոչ, կ'աղաչեմ քեզի, կը պողատիմ: Թո՛ղ որ պիտի չթոյլատրեմ, եթէ հարկ ըլլայ նոյնիսկ ձեռքերովս... Կ'ըմբռնե՞ս արդեօք ըլլալիքը: Կը կարծէի սակայն թէ ամէն բան ըսած եմ քեզի, նոյնիսկ ամենագարշելի բաները... Ի՞նչ, նման ահաւոր բան մը, անկարելի՛ է, անկա-

րելի է: Բու մարմինդ իր ձեռքերուն մէջ, ո՛չ, ո՛չ, ո՛չ:

— Միհիրմա՛, վերջին անգամ մըն ալ, հրամայեց մեծ տիրուհին՝ տարօրինապէս հանդարտ դարձած:

Միհիրմա կը հեկեկար հիմա: Սարսափէս նուազկոտ՝ այլեւս ոչինչ չէի տեսներ, բանտարկուած այդ մարմինին մէջ որ կը սեղմուէր իմինիս դէմ, ցնցուելով անկարգ գիրկընդխառնումներէ, եսթակայ այդ ամբողջ ջղաձիգ յիմարութեան: Յանկարծ, չեմ գիտեր թէ ինչպէս, զգացի ինքզինքս անջատուած այդ մարմինէն, պոկուած անկէ՝ անանուն կոպտութեամբ մը: Փլայ բարձրուս մէջ՝ ցաւագին և հիւանդ: Նոյն ժամանակ լսելի եղաւ ահարկու աղմուկ մը, անփայլ և թոյլ աղմուկ մը միանգամայն, մարմինի մը անկուճը գետնին վրայ:

— Ծէմի՛լ, հրամայած էր մեծ տիրուհին:

Արիւնս սառեցաւ: Այսպիսի ոռնում մը ի՛նչ կրնար նշանակել ուրեմն: Մանկական և անասնական բան մը. աղաղակը կենդանիի մը զոր կը սպաննեն: Նայեցայ մատներուս մէջէն և ինչ որ տեսայ լեցուց զիս սարսափով, օտրսափով մը զոր չեմ կրնար պատմել: Անմիջապէս, դարձեալ փակեցի աչքերս: Այո՛, բայց ականջներս: Ա՛հ, սպաննուող անասունի այդ ողաղակը և այդ տուլո՛ցը, եզան ջիղերէ մտրակին այդ սուլո՛ցը... և Հազնէտար Ուսթային հետըզհետէ հանդարտ ձայնը, որ կը համրէր մտրակին հարուածները... չորս, հինգ, վեց...

— Մինչև տա՛սը, Ծէմի՛լ:

Ութը, ինը: Ահաւելի հոնդիւնը դադարած էր: Ո՛չ, շատ վատ բան էր իմ կողմէս՝ ի վերջոյ: Ուրեմն ուղեցի տեսնել և տեսայ: Միհիրմա պառկած իր ամբողջ երկայնքին, պարեգօտը ծուէն ծուէն եղած: Իր

մերկացած կռնակը ամէն ուղղութեամբ կը կրէր տմոյն ահօսներ, կապոյտ ահօսներ, արիւնալից ահօսներ...

— Դարմանատուն, ըսաւ պարզապէս մեծ տիրուհին:

Նուպիացին հնազանդեցաւ Երկուքի ծալլուած մարմինը նետեց իր աջ թեւին վրայ, իր ձախ թեւին տակ առաւ եփենոտէ ցնտուկը, Սիթ-էլ-Քապուրի արձանը պարունակող սնտուկը: Ապա դուրս ելաւ:

— Նման տեսարաններ, ըսաւ մեծ տիրուհին, կատարելապէս անտեղի են: Ասանկ բաներ պէտք չէ որ տեղի ունենան ապագային: Պիտի հսկեմ...

Այդ օրէն ի վեր այլեւս երբեք չեմ տեսած Միհրման:

Ժամը 5ին, ինչպէս հրամայուած էր, վարդերով լողանք ընել տուող կինը եկաւ: Անիկա սուամարացի գերուհի մըն էր, որ խորապէս գիտէր իր արհեստը: Իրմէ առաջ եկած էին ուրիշ կիներ՝ զիս մարձելու, բուրաւէտելու, Արեւելքի բոլոր բոյրերով օծանելու պաշտօնով: Գիտնի գորգին վրայ վուչէ մեծ սաւան մը տարածուած էր: Հոն է որ պտուկեցուց զիս, վարսերս քակուած ուսերուս շուրջ: Երկու խափչկուհիներ, օրօնք կ'ընկերանային իրեն, ունէին երկու խոշոր կողովներ, վարդի շափրակներով լեցուն: Այդ վարդերը՝ աւելի բուրումնաւէտ քան ինչ որ կարելի է երեւակայել, սկսան անձրեւել վրաս: Երբ բոլորովին ծածկուեցայ անոնցմով, սաւանին շորս ծայրերը փաթթուեցան մարմինիս, պտտանքի մը պէս: Ժամ մը ամբողջ թողուցին զիս այդ բուրեան զովութեան մէջտեղ:

— Սքանչելի՛, ըսաւ մեծ տիրուհին, որ ներս մտած էր:

Ինքն իսկ անձամբ կարգադրեց արդու զարդիս միւս բոլոր մանրամասնութիւնները: Անթիւ անհամար շրջազգեստներու մէջէն, որոնցմով պահարաններս կը յորդէին արդէն իսկ, ընտրեց մէկը՝ կապոյտ և արծաթ, աւելի գիշերուան քան թէ ցերեկուան հագուստ, առանց որեւէ տեսակ ճարմանդի, միայն կոնքերուն վրայ կապուած նոյն գոյնով ժապաւէնով մը: Այդ ժապաւէնը անգամ մը որ քակուած ըլլար, ամբողջ մնացեալը մէկ անգամէն կ'իյնար ոտքերուս տակ: Ոչ գոհարեղէններ և ոչ ալ գուլպայ, միայն արծաթ կրուկներով մուճակներ և կնկուղ մը, որուն մէջ, ելր երթալու ժամը եկաւ, փաթթեց զիս Հազնէտար Ուսթա:

— Հաւ ծածկուէ, հրամայեց ինծի:

Նկատած էր թէ ակռաներս կը կափկափեն. կարծած էր թէ ցուրտէն էր առիկա:

— Միայն սա անիծեալ մեծ նրբանցքը պէտք է անցնիլ, ըսաւ: Երբեք կարելի չէ եղած օդի հոսանքներէ պահպանել զայն: Բայց հո՛ն, վստահ եղիր, աւելի քան լաւ տաքցուած է:

Մեր առջեւն ունենալով ճիւղիւր՝ որուն մտրակը բազուկին շուրջը փաթուած էր միշտ, մտանք մեծ նրբանցքը՝ ամայի, ինչպէս սովորաբար կ'ըլլար այդ ժամուն: Ուրիշ ազմուկ չկար բայց եթէ կարճ կանչեր, հրացանի կռթի ձայնը սալայտակներուն վրայ, զանազան անձնապահ պահակներուն փոփոխութիւնն էր որ կը կատարուէր: Վիթխարի բեւեռաւոր դուռ մը, երկրորդ մը, կեցուց մեզ. Մագէյնին և Սէլամլըքին մո՛ւտքը: Մեծ տիրուհին իր չարչափը բերաւ իր ճակատին վրայ և ինծի ալ նշան ըրաւ որ նոյնը ընեմ: Արագօրէն անցանք զինավառ զօրքի պահականոցի մը առջեւ: Եւ յանկարծ, հայելիներով ու ջա-

հերով լեցուն նրբանցքները սկսան փալփիլի :

Այսպէս հասանք պղտիկ դրան մը առջեւ, ուրկէ ներս մտնելու համար պէտք էր ծռիլ :

— Հո՛ս է, ըսաւ Հազնէտար Ուսթա :

Եւ դուռը զարկաւ :

Դուռը բացուեցաւ : Տեսայ հսկայ խափշիկ մը, աւելի բարձրահասակ քան ձէմիլը : Ան կը կրէր կայսերական Արքունիքին արծաթ և կապոյտ համազգեստը :

— Ահաւասիկ բերի, ծափա՛ր, ըսաւ Հազնէտար Ուսթա :

Առանձին էի հիմա, բոլորովին առանձին, ըս թոնտի պէս յարդարուած տարօրինակ սենեակի մը մէջ, տկար կերպով լուսաւորուած՝ լամբարներով որոնք չէին նշմարուիր : Թանձր գորգեր և վարազոյրներ : Բազմոց մը ուր մարդ կը հասնէր երկու սանդխամատ բարձրանալով, կը կազմէր կեղբոնը այս տարօրինակ սենեակին : Եւ իբր գոյն, միշտ այդ կապոյտը, միշտ այդ արծաթը :

Ա՛հ, տնչուշտ, տաք կ'ընէր : Գրեթէ կը խեղդուէի : Այսուհանդերձ, ակռաներս կը շարունակէին կափկափելի ջեցուցի կնքուղս, քակեցի պորթգոտիս ժապսէնը : Մարմինս քրտինքներու մէջ էր : Տասը վայրկեանէ ի վեր հոն էի նստի՞լ, այս՝ եթէ համարձակած ըլլայի :

«Դեռ երկար պիտի տեւէ՞ ասիկա : Ա՛հ, վերջացնենք կարելի եղածին չափ շուտով» :

Բարձրաձայն չէ՞ի խօսած : Սուրսուացի այս գազափարէն : Տեսակ մը խեղդուած հռուշանք լսուեցաւ անկիւնէ մը : Այսպէս ուրեմն, քառորդ ժամէ ի վեր ինքզինքս առանձին կը կարծէի հոս : Արդ, ահաւասիկ որ ճիշդ չէր ասիկա : Կար մէկը, զիս լրտեսելու վրայ : Կա՛ր մէկը :

Նախ հակառակ բոլոր ջանքերուս, ոչինչ տեսայ : Ստուեր, ստուեր միշտ, ստուե՛ր : Ապա, այդ ստուերը սկսաւ պայծառանալ : Այն ժամանակ, սոսկալի բան մը երեւցաւ ինձի, կծկուած բան մը, արմուկները ծունկերուն, ձեռքը մօրուքին, բազմոցին վրայ, տխրո՞ւ, վրան-բաց բան մը, ՚ման տեսակ մը ահարկու մազոտ մամուկի : Յետոյ, ահաւասիկ որ այդ բանը սկսաւ շարժիլ, յառաջանալ հաշուուած, սպառնալից սարսափելի դանդաղութեամբ մը : Գորշա՛նք : Կապոյտ և արծաթ տեսակ մը ծածկոցին տակ ինքն ալ մերկ էր, մե՛րկ էր :

Եթէ մարդ չի մեռնիր այդպիսի վայրկեաններու մէջ, պատճառը այն է որ մեր խեղճ մարմինը լուսաւորուած է, որ կը դիմանայ բոլոր ամօթներուն, բոլոր պժգանքներուն, բոլոր վէրքերուն, բոլոր շարունակներուն : Բանը կը շարունակէր յառաջանալ : Կը հանէր թեթև հեւքի ձայներ : Լեզուի անկիւն մը դուրս կ'ելլէր իր ակռաներէն, ուր կը պղպչար տեսակ մը գորշագոյն շողիք : Բարեբախտաբար շնորհի վրձակներ կան ՚ման վայրկեաններու մէջ : Ես, լուսալտեմ թէ սո՛չալժ և անհոգի իր մըն էի միայն, երբ սոսկալի մազոտ մամուկը ինկաւ վրաս :

— Խեղճ Արմէն, ըսաւ Ռոյ պարզապէս :

Տիկ. Հաճիլար սարսուաց : Ուսի թեթև ցնցում մը ունեցաւ : Եւ յետոյ : Այսպէս է որ իրերը անցած էին : Ի՞նչ օգուտ ունէր այդ մասին գրեթ յայտնելը : Ատով՝ ոչինչ փոխուած կ'ըլլար, այնպէս չէ՞ : Թող որ

Ռօշի ազդարարած էր թէ գութ հրաւիրելու համար
չէր որ պատմած էր իրեն այդ ամէնը:

— Կը հասկնամ, մրմնջեց սպան, քանի մը վայր-
կեան ետք:

— Ի՞նչ բան կը հասկնաս:

— Բայց վախերդ, անձկութիւններդ՝ նման
յայտնութեան մը կարելիութեան հանդէպ: Շատ զօ-
րաւոր հաւանականութիւններ կան արդարեւ...

— Ի՞նչ բանի հաւանականութիւններ:

— Բայց հաւանականութիւններ որ այն պարա-
գային ուր ինքը՝ Մէնէթրիէն վերջապէս՝ գիտնայ,
իրազեկ դառնայ... Քու ամուսնական ծրագիրներդ,
ինչպէս երկիւղ կը յայտնէիր ինծի քիչ առաջ, կըր-
նան վտանգուիլ:

— Ի՞նչ բան կ'ապացուցանէ ատիկա, ըսաւ Ար-
մէն կիներուն զմայելի անգիտակցութեամբը:

Եւ, գրեթէ յարձակողական՝ ան շարունակեց.

— Ատիկա բաւարար պիտի ըլլա՞ր կեցընելու
զքեզ:

Երիտասարդը ունեցաւ տխուր յանդիմանութեան
նայուածք մը.

— Ե՛ս, ... բոլորովին նոյն բանը չէ, ես կը
սիրեմ քեզ, Արմէ՛ն, կը հասկնաս:

— Շատ շնորհակալ եմ. ուրեմն ատիկա կը նշա
նակէ՞ թէ ինք չի սիրեր զիս:

— Ըսել մի՛ տար ինծի՝ ի՞նչ որ չլսի: Կը սիրէ
քեզ, վստահ եմ այդ մասին, բայց կը սիրէ քեզ մա-
նաւանդ ինքզինքին համար:

— Ա՛ն, իսկ դո՞ւն:

— Օ՛հ, ես ալ անշուշտ կը սիրեմ զքեզ ինք-
զինքիս համար: Բաւց իմացի՛ր, և ստո՛ր՝ մէջ է որ

կը կայանայ տարբերութիւնը, կը սիրեմ զքեզ շատ
աւելի՛ քեզի համար:

Արմէն ոչինչ ըսաւ: Միայն թէ յօգնած ժէսթ մը
ունեցաւ: Այլեւս ջուրերուն վրայ չէին նշմարուեր
ցոլքերը լուսինին, որ դարձած էր: Մթութեան մէջ
տարամտօրէն կը կարմրէին, անգութ բիբերու պէս,
Սիթ-էլ-Քօպուրի արձանին սուտակները:

Ռօշ ունեցաւ երկչոտ ժպիտ մը:

— Եւ յետո՛յ, ըսաւ:

Կինը հասկցած ըլլալու երեւոյթը չունէր: Աչքե-
րը մեծաբաց՝ կը նայէր սպային:

— Յետո՛յ կ'ըսես:

— Այո՛, պ'ըզեց ան նոյն ցուազին ժպիտով մը:
Կանգ պիտի չառնես հարկաւ կէս ճամբան: Պատմու-
թիւնդ հող չվերջանար, կ'ենթադրեմ:

— Ա՛ն, ըսաւ Արմէն գարշանքի աղտոյկով մը,
թերեւս կը գտնես թէ ատիկա բաւական չէ՞ դեռ:



Գլուխը հակելու կարգը Ռօշինն էր: Այդպէս մը-
նացին երկար պահ մը՝ առանց իրարու հետ խօսակ-
ցելու, աւելի դժբախտ քան ինչ որ եղած էին երթ-
եւիցէ մինչև այն ժամանակ: Ի՞նչ բանի կրնային մը-
տածել երկուքն ալ, այդ անաւոր վայրկեաններուն
ընթացքին: Ա՛ն, անկասկած, թէ ջնջելու համար այդ
դժբախտութիւնը, երկուքն ալ րոպէսպէս լեցնելու
համար անհարուածելի երանութեամբ մը, միա՛կ պայ-
ման մը բաւական էր, մէ՛կ պայման՝ և ամէն ինչ
պիտի կարգադրուէր: — Արմէնը զինքը՝ Ռօշ՛ը՝ սի-
րէր, և ոչ թէ միւսը:

Ռօշ խզեց լուսթիւնը:

— Ինծի բոլոր յայտնածներուդ, ըսաւ ան ճիգով

այս ամենուն իրողեկ է անշուշտ մարդը որ ներկայիս մեզմէ երկու քայլ հեռու կը գտնուի, սս Եուրի Պիշարան, այնպէս չէ՞:

Կինը բաւականացաւ դարձեալ ուսերը բարձրացնելով: Ինչպէս Պիշարա կրնար իրազեկ չըլլար այդ բոլորին:

— Լա՛ւ: Ներէ որ վերջին հարցում մըն ալ ընեմ քեզի: Եթէ խօսելու ուժ չես ղգ սր մէջդ, անիկա գունէ պիտի ունենայ առաւելութիւնը միւս լուրի հարցումները ամփոփելու իր մէջ: Տառապիլու դստն պէտքը չէ, կը վստահեցնեմ զքեզ, որ կը մզէ զիս քեզ չարչրկելու այդպէս: Բայց այսուհանդերձ, պէտք է լուսաբանուիմ շատ մը կէտերու մասին, եթէ ուզեմ լաւ կատարել այն դերը զոր քսնի մը ժամէն հաւանաբար պիտի կոչուիմ խաղալ:

Արմէն նայեցաւ երիտասարդին իր աչքերուն տակէն՝ պաշտպանողական դիրքի մէջ գտնուող անուրի մը պէս:

Անայլայլ՝ Ռոշ շարունակեց.

— Հարցումը զոր պիտի ընեմ, արդէն իսկ ընելու առիթը ունեցայ անգամ մը, այս գիշերուս: մեր խօսակցութեան սկիզբը:

— Որ՞ն է այդ հարցումը:

— Հարցուցի թէ Եուրի Պիշարա տարփութիւնը եղած է:

Կինը եւս մնաց անայլայլ:

— Կը կարծէի թէ պատասխանեցի քեզի, ըսաւ Այո՛, եղած է: Բայց կ'ընեմ թէ իր սուտը ուրիշ: Կը մնան կեանքէս ուրիշ մանրամասնութիւններ զորս գիտնալու պէտք ունիս: Պարագասերը, եթէ չկարենան իսկ արդարացնել, յաճախ կը ծառայեն բացատրելու շատ բաներ: Այժմ, ամենէն դժուարը

կատարուած է քեզի որքան ինծի համար: Այսուհանդերձ, անօգուտ է որ իմ մասին երեւակայես աւելի ցեխ քան ինչ որ գոյութիւն ունեցած է, այնպէս չէ՞:

— Մտիկ կ'ընեմ, ըսաւ Ռոշ:

Արմէն մարեց ձեռքի սիկարէթը, որ կը շոգացնէր իր եղունգներուն արիւնոտ կիտուածը, և միայլար ձայնով մը շարունակեց:

— Օսմանեան արքունիքին ամենանետաքրքրական սովորոյթներէն մէկը այն էր որ Սուլթանը իր կիներէն մէկը կ'ընծայէր բարձրաստիճան պաշտօնատարի մը, որուն կ'ուզէր յայտնել իր շնորհին մէկ մասնաւոր վկայութիւնը: Կ'ընծայէր ինչպալ մը, գասրընները, այսինքն այն հարձերը որոնցմէ Սուլթանը զաւակ մը ունեցած էր, չկարենալով երբեք հեռանալ պալատէն՝ համաձայն կայսրութեան մէկ օրէնքին: Այդ մայրութեան պատիւը, փառք Աստուծոյ, զլացուած ըլլալով ինծի՝ պատահեցաւ որ 1908ին, այսինքն հարէմ մտնելէս երկու տարի վերջ, այդ սովորոյթէն օգտուեցայ: Անիկա զործեց ի նպատակ ինծի և վերագտայ ազատութիւնս, ինչպէս պիտի տեսնես՝ մասնաւոր բնոյթով ազատութիւն մը, որ օկիզբը շատ յարաբերական խանդավառութիւն մը միայն պատճառեց ինծի, այն ապրութեան վիճակին մէջ ուր հասած էի երկու տարուան ընթացքին:

«Սուլթանին շնորհին մէկ մասնաւոր վկայութիւնը»՝ Շատ մասնաւոր, արդարեւ Տասնի վրայ ութը անգամ, լաւագոյն պիտի ըլլար շահագրգռեալին համար առարկայ չըլլալ այդ շնորհին Ասոր յայտնութիւնը ունեցայ նոյն ժամանակ անուանը հետ երջանիկ մահկանացուին որուն կը սահմանէր զիս մեր ամենագորտիրոջ վեհանձնութիւնը:

1908 տարուան սկիզբը առաւել մը, Հազնէտար Ուսթա մտաւ սենեակս: Թէև դեռ բերած չըլլայի իրեն ոչ մէկը այն գոհունակութիւններէն զորս կ'ա- կընկալէր ինձմէ՝ իմ կարողութիւններուս մասին իր ունեցած շատ փաղաքշական գնահատումներէն մեկնե- լով, որ չէր պահած ինձի դէմ և կը շարունակէր վրաս իր ամբողջ պաշտպանութիւնը: Վերջարունակեմ վըս- տահ ըլլալ, կ'ըսէր ինձի, թէ օրին մէկը պիտի յա- ջողիս կատարել քեզի արժանի դեր մը: Այդ դերը գտնել ինձի կ'իյնայ, քանի որ ստոր համար չունիս ոչ բաւականաչափ կամք և ոչ ալ փառասիրութիւն»:

Այդ առաւել երբ սենեակս մուտք գործեց, ունէր իր մեծ առիթներու միանգամայն ճառագայթող և վե- հապանձ երեւոյթը: Հասկցայ թէ կարեւոր բան մը կատարուելու վրայ էր:

— Նսխ, շնորհակալութիւն յայտնելու հաճոյքը պիտի պատճառես ինձի, պղտիկս, ըսաւ: Քիւ ապո- գադ հարէմին մէջ չէ, յայտնապէս: Երկա՞ր ժամանա- կի պէտք ունեցայ հասկնալու համար ատիկա, պիտի ըսես: Բայց կը տեսնես թէ հող հասայ, այսուհանդերձ: Հոս, հակառակ արմ ստացած կարծիքին, բունի մարդը վար չեն դներ: Մեր ամենասիրելի վեհապետը, իր բարութեամբ և իմաստութեամբ, գտած է միջոցը միանգամայն երկու շնչինք երջանիկ դարձնելու: Ազատութիւն կը շնորհէ քեզի և նոյն առթիւ կը բարեհաճի իր գոհունակութիւնը յայտնել իր ամենա- հաւատարիմ հպատակներէն մէկուն:

Աւելցուց, ժպիտով մը որուն իմաստը պիտի հաս- կընայի աւելի ուշ միայն:

— Իմ հպարտութիւնս, ճիշդ ըլլալ շարունակելու համար, օտար չէ եղած այս վերջնոյս նշանակումին: Կ'ուզե՞ս գիտնալ թէ որո՞ւ վրայ կը դառնայ հար-

ցը, ըսաւ Արմէն: Գուշակած ես՝ կը յուսամ: Էլիաս Հաճիլար փաշայի, պարզապէս:

Ըսի՝ պարզապէս: Արդ-սրև, հակառակ երեւոյթին ստիկա տմենաճակատագրական, ամենատրամբանա- կան, դէպքերուն ամենէն աւելի համապատասխան բանն էր: Հարէմին մէջ, բաւակ սն գէշ տեղ էի իրա- զեկ ըլլալու համար այդ դէպքերուն ընթացքին: Թո՞ղ որ անոնք չէին գրգռէր հետաքրքրութիւնս: Կ'ան- գիտանայի ուրեմն թէ ժամանակէ մը ի վեր յարաբե- րութիւնները եզականօրէն ձգտեալ էին Հոս իլա փաշայի և Հազնէտար Ուսթայի միջև: Դժուարեւ մեծ ընդդիմամարտութիւններ չէին կրնար արդարև ես կե- նալ օրին մէկը իրարու դէմ հանելէ: Կայսերական գանձուն պետը և հարէմին գերագոյն գանձապետու- հին: Այդ պայքարին մէջ իրենցմէ մէկը պէտք էր յաղթուէր: Յսթութեանը չեղաւ, սկիզբը գէթ, Հազ- նէտար Ուսթայ: Հաճիլար փաշայի շնորհազրկումը երբեք իրական չեղաւ անկասկած: Սուլթանը ուզեց ինքզինքին տալ այն երեւոյթը թէ մինչև վերջ կը պահէ իր շնորհները անոր հանդէպ: Բայց 1908 տար- ւան առաջին ամիսներէն սկսեալ, Հաճիլար փաշա գիտէր արդէն իսկ թէ ի՞նչ էին Սուլթան Համիտի բուն զգացումները իրեն հանդէպ: Այդ մարդը, ա- մուսինս, քանի որ պէտք պիտի ըլլայ որ այդպէս կոչեմ զինքը այսուհետև, կրնայ ունեցած ըլլալ բո- լոր թերութիւնները զորս կ'ընդնշմարես և զորս կը ճանչնամ ես: Կարելի չէ սակայն ժխտել իր քաղա- քական հոտառութիւնը, որ թոյլ տուած է իրեն հազ- ւադիպօրէն սխալիլ: 1908ի դարձա՞ գիտէր թէ բան մը կատարուելու վրայ էր: Կը տեսնէր յեղափոխութեան գալը և իր գործերը ըստ այնմ առաջնորդել կը պատ- րաստուէր: Կրնար առանց մի ստի ենթարկուելու:

ինքզինքին ընծայել պերճանքը կառչած չմնալու իշխանութեան որոն անկման մտալու ա ըլլալուն վրասան էր:

Այս պարագաներուն տակ, իմ վերադարձս իր մօտ, ո՛չ նեղացուց և ոչ ալ ուրախացուց զինքը: Այս գործին մէջ, ամէն ոք ամենէն ճարպիկը կը կարծէր ինքզինքը: Հաճիլար փաշա, ինչպէս պէտք էր, ջերմ Երախտագիտութեան արտայայտութիւններ ունեցաւ հանդէպ Սուլթանին: Ոչ իսկ մէկ վայրկեան չտուաւ այն ապաւորութիւնը թէ հասկցած է որ զինքը պատուելու այդ կերպը՝ իր իսկ ընծան նուիրելով իրեն, կը կազմէր, լաւատեղեակ անձերու աչքին, նախատինքներուն ամենէն անարգականը: Միւս կողմէն, երբ վերադարձայ իր տունը, երկար ժամանակի պէտք չունեցաւ հասկնալու համար թէ՛ ո՛չ երախտագիտութենէ և ոչ ալ հաւատարմութենէ այլ անտարբերութենէ մղուած, անկարող էի իր մօտ կատարելու լրտեսուհիի պղտիկ դերը: որուն սահմանած էր զիս Պալատը: Ամուսնացանք Ապրիլին, հրաշալի պերճանքի մը մէջտեղ, չլսուած ճախութեամբ ընծաներու մէջտեղ որոնք կուգային ամէն կողմէ: Ինչպէս լա՛ւ կը զգացուէր թէ աշխարհ մըն էր որ կը վերջանար: Երբե՛ք, երբեք չեմ տեսած ոչ այնքան գարգեր, ոչ այնքան թանկագին քարեր, ոչ այնքան չինական յախճապակիներ, ոչ այնքան ոսկեղէն սպասաներ...: Բայց երբեք չեմ տեսած նաև, կրնաս հաւատալ ինձի, ամուսին մը որ իմինէս նուազ փութկոտ ըլլար վայելելու իմ վրաս այն առանձնաշնորհումները զորս օրէնքը կ'ընծայէր իրեն:

Մօտ երեք ամիս ետք՝ Յեղափոխութիւնը կը պայթէր: Միութիւն և Յառաջդիմութիւն (իթթիհատ վէթէրագգը) կուսակցութիւնը իշխանութիւնը կը գրա-

ւէր: Եւ Օգոստոսի գաղջ իրիկնաղէմի մը, կառախուժքը կ'առնէի այն նոյն Հայտար փաշայի կայարանին մէջ, ուրկէ եկած էի երկու և կէս տարի առաջ: Տասնեակ մը գերուհիներ և սպասուհիներ կ'ընկերանային ինձի: Մարդու մը յանձնուած էր պղտիկ կարաւանին ղեկավարութիւնը, ամուսնոյս վաստակութիւնը վայելող գործակատարին՝ Եօլերի Պիշարոյի:

••

1908ի տեսնները, պղտիկ աղջկան մը յարմար ճամբորդութիւն մը չէր ճամբորդութիւնը դէպի Մալթիա՝ Քիւրտիստանի կարեւոր քաղաքներէն մէկը և Էլիաս Հաճիլար փաշայի ծննդավայրը: Կառախուժքը չէր երթար Աֆիոնէն անդին, ուրկէ առած էինք զայն իմ վանքիս կոտորածէն ետք: Անկէ ետք՝ կը սկսէին Գոնիայի գրեթէ անպատային տափաստանը, Տաւրոսի անեղի անցքը և մուտքը քրտական երկիր, որ երբեք իբր շատ հիւրընկալ չէ ճանչցուած: Ընդամէնը մօտ 1,300 քիլօմէթր ճամբայ, որուն միայն հարիւր քիլօմէթրը երկաթուղիով: Երեք շաբթուան ճամբայ մը՝ առանց չափազանցելու: Ի՞նչ կրնային ըլլալ պատճառները որոնք մղած էին ամուսինս այդ փորձութիւնը պարտադրելու ինձի: Անունք այլապէս բարդ էին քան բաւական բնական մտահոգութիւնը, տրուած ըլլալով տեղի տեսակը զոր կը դրաւէի իր կեանքին մէջ, պարագաներէն օգտուելու՝ կարելի եղածին չափ շուտով օձիքը ազատելու համար ինձմէ:

Իր շարժառիթները բազմատեսակ էին: Թուրքիոյ մէջ ռամկավարական կեղծ-կառավարութեան մը իշխանութեան գլուխ գալը, կը մղէր Հաճիլար փաշան հիմնովին փոխելու իր ապրելակերպը, եթէ կ'ուզէր, եթէ ոչ ինքզինքը մոռցնել տալ բոլորովին, գէթ շատ

անմիջական կերպով չհրաւիրել իր վրայ նոր ռէժի-
մին տէրերուն ուշադրութիւնը: Արդէն իսկ կը յառա-
ջանար դէպի այդ նպատակը, սկսելով արքունիքէն
շատ հեռու շրջելով, կորսուած նահանգի մը մէջ տեղ,
երիտասարդ կին մը, որուն վերաբերմամբ չափէն ա-
ւելի շատ զբաղած էին իրմով, և ոչ բոլորովին՝
նոր ձգտումներուն պահանջած ուղղութեամբ: Վտան-
գաւոր պիտի ըլլար որ խնդրոյ առարկայ ուղեւորու-
թիւնը ստանար գոյնը արձակումի մը կամ նոյնիսկ
աքսորի մը: Այսօր գիտենք թէ 1908ի դէպքերը կը
նշանակէին համիտեան մենատիրութեան կործանումը:
Բայց այն ժամանակ ոչինչ ատկէ նուազ ստոյգ էր:
Ահարկու ծերուկը զէնքերը վաղ չէր դրած, իր վեր-
ջին բառը չէր ըսած դեռ: Կրնար շատ լաւ վերադար-
ակել իշխանութիւնը և այն ժամանակ, վո՛ւր այն ան-
ճարակին, այն շատ արտօրացողին որ գործած պիտի
ըլլար յիմարութիւնը նման վերաբերմունքի մը են-
թարկելու Սուլթանին կողմէ ընծայուած կին մը:

Ընդհակառակը, գործելով ինչպէս կ'ընէր, Հաճի-
լար ինքզինքը պատասխարած կ'ըլլար բոցերուն յեղա-
կարծ վերադարձին դէմ: Ուղեկիցներու յարաբերա-
բար մեծ թիւը, զոր կը դնէր իմ տրամադրութեանս
տակ, կենդանի խորհրդանշաններն էին պատիւներուն
զորս յաւակնութիւնը ունէր շարունակելու աւելի
քան երբեք: Ասկէ զատ, որո՞ւն կը վստահէր, այդ
բացակայութեան միջոցին, իմ հանգիստիս և ապահո-
վութեանս հոգը, հոգը հսկելու որ ոչինչ և ոչ ոք պակ-
սէր ինծի: Իր ամենահսկատարիմ քարտուղարին, ա-
նո՛ր որ յաչս ամենուն իր երկրորդ «ես»ը կը նկատ-
ւէր: Ճշմարիտ կերպին մասին, որով վերջ ի վերջոյ
այս վերջինը պիտի կատարէր ինծի հանդէպ իր առա-
քելութիւնը, հաւանական է որ Հաճիլար փաշա հոգի

նշոյլն իսկ չունենար: Ըսի արդէն քեզի թէ ինծի
հանդէպ ծայրայեղ կիրքով մը չէր այրեր: Իրեն հա-
մար էականը այն էր որ երեւոյթները խօսիւ պս-
ւէին: Գիտէր թէ այդ զանազան խնդիրներուն մա-
սին կրնար վստահիլ իր մտերմին ուշիմութեան: Թո՛ղ
որ աւելի ետք պիտի իմանայի թէ ես չէի միակ գան-
ձը զոր Փոքր Ասիոյ ղժուարանցանելի արահետներուն
վրայ առաջնորդելու պաշտօնը վստահած էր անոր:
Մեզի ընկերացող սնտուկներէն կար որոշ քանակու-
թիւն մը, որոնք կը պարունակէին իմ իրերս և հա-
գուստներս. բայց կային ուրիշներ ալ, իմ սնտուկ-
ներէս ոչ նուազ թիւով, որոնց իմիսներս կը ծառա-
յէին իբր տեսակ մը երաշխիք: Եւ անոնք լեցուած
էին արժեթուղթերով, որոնք ոչ մէկ կապ ունէին
Տիկ. Հաճիլարի բոյրերուն և սիրուն սնտուկութեանց
հետ:

Մալաթիա հասանք Սեպտեմբերի սկիզբները:
Պարտէզներով շրջապատուած քաղաք մըն է ատիկա,
գեղեցիկ և լռամած գերեզմանատունով մը, որ կը
կը տիրապետէ անոր: Մարդ երջանիկ պիտի կարենար
ըլլալ հոն, այդ տուններուն և գերեզմաններուն միջև:
Հաճիլար մեկնած էր հոնկէ յիսուն տարի առաջ, հա-
մեստ պայմաններու մէջ հարկաւ, իր բախտը փորձե-
լու համար բոլոր Թուրքիաներուն մայրաքաղաքին մէջ:
Մինչև այն ժամանակ, պզտիկ գործակատար մը եղած
էր Գրիգոր Պիշարայի առեւտրական տունին մէջ: Այ-
սօր դերերը շրջուած էին: Բոլոր այդ մարդիկը պաշտ-
պանութիւն կ'ընծայեն իրարու ձեռով մը որուն մա-
սին գաղափար իսկ չունիք ձեր երկրին մէջ: Ամուս-
նոյս առաջին գործերէն մէկը եղաւ, երբ բախտը սկը-
տաւ ժպտիլ իրեն, Կ. Պոլիս կանչել Գրիգոր Պիշա-
րայի թողը՝ Եւրին և անոր տալ այն դիրքը որ

յայտնի է քեզիս Ահաւասի'կ, հասկցած ըլլալու ետ
Ամէն ինչ յօտակ է հիմա :

Արմէն խօսքը ընդհատեց և Ռօշը դիտելով շեշ-
տակի :

— Ամէն ինչ, Աչքիդ մէջ կը կարդամ թէ ոչ :
Հարցումը զոր գիշերուան սկիզբը և քիչ առաջ ընե-
լէ չկրցար արգիլել ինքզինքդ, ահաւասիկ որ
դարձեալ կ'այրէ շրթներդ : Խեղճ սիրտ որ ծարաւի է
չարչարանքի : Կը կարծե՞ս թէ կը վախնամ մտ նելէ
այս արկածին մանրամասնութեանց մէջ, որոնք որ-
քան խորացուին, այնքան կը չքմեղանամ : Այո՛ ե-
ղած եմ Եսերի Պիշարայի տարփուհին : Եւ յետո՛յ, Այ-
րերը տարօրինակ են : Կը կարծեն թէ ուրիշ ընելիք
չունինք, բացի սպասելէ, մեր ամբողջ կեանքին տե-
ւողութեան, վիճակահանութեան թիւի մը, որ թե-
րեւ երբեք պիտի չելլէ : Ոչ յանցաւոր և ոչ ալ ոչ-
յանցաւոր կը դաւանիմ ինքզինքս : Կը բաւականանամ
ըսելով ինչ որ պատահած է : Այն ատեն 18 տարեկան
մը ըլլալու էի : Գիշերները տարապայմանօրէն անուշ
էին Ասիոյ մէջ այդ ուղեւորութեան ամբողջ երկայն-
քին, դիպուածներովը և անակնկալներովը Արեւելքի
այդ պզտիկ պանդոկներուն՝ լեցուն ջրցայտքերու և
նառուբաներու (ջրանիւ) աղմուկներովը, այն կիսա-
փուլ քարվանսէրայներով՝ կոնկենիի (ժեբաքիում) դաշ-
տերու մէջտեղ : 18 տարու, կը կրկնեմ :

Պէտք է տաս ինքզինքիդ յիշելու, հաշուե-
լու տաղտուկը : Աւելի քան երկու և կէս տարի ա-
ռաջուան այն ամօթալի փորձութենէն ետք (ծերուկի
մը թեւերուն մէջ), և ոչ նուազ ողբական կրկնումէն
վերջ որ հետեւեցաւ (ուրիշ ծերուկի մը թեւերուն մէջ),
առաջին անգամը ըլլալով կը գտնուէի թեւերուն մէջ
մէկուն զոր չեմ սիրած, զոր չէի կրնար սիրել ան-

չուշտ, զոր կարգ մը տեսակէտներով ատելու պիտի
մղուէի նոյնիսկ, բայց որ վերջապէս — քանի որ
պէտք է ընեմ տխուր խօստովանութիւնը, Աստուած
իմ—հազիւ քառասուն տարեկան կար և վանողական
չէր :

17.

Ռօշ ոտքի ելած էր : Ուղղուեցաւ դէպի պատշ-
գամը :

- Ո՛ւր կերթաս հարցուց Արմէն : Ի՞նչ ունիս :
- Ե՞ս, բան մը չունիմ, ըսաւ Ռօշ : Քիչ մը օդ
առնել պէտք է թերեւս : Վարժուած չեմ երկար ժա-
մանակ նստած մնալու :

Թեթեւ զեփիւռ մը ելած էր : Ապահովարար ար-
շալոյսը շատ պիտի չուշանար այլևս : Ինչպէս միշտ
այդ պահուն, խաւարը աւելի խիտ կը դառնար : Բո-
լոր աստղերը անհետացած էին : Մէկ հատ միայն
կար՝ հեղուկ փայլով մը, Ռուստ կղզիին վերեւ—թե-
րեւս Արուսեակը : Թո՛ղ որ ի՞նչ կարեւորութիւն ու-
նէր : Իո՞՞՞՞՞ն հոտ մը պատքէր : Ալիքները կը մրմնջէին
մեղմիւ :

Ռօշ սնրսուռ մը ունեցաւ : Իր կոկորդը կը փու-
կէր բան մը, զոր կուլ տուաւ : Վերադարձաւ Տիկ .
Հաճիլարի ձօս :

— Ներէ ինձի, ըսաւ : Այս ամէնը ապուշ բան է :
Գիտե՞ս թէ զուրաբ գրեթէ ցուրտ կ'ընէ :

Այլևս չէին խօսիր : Այժմ, այլևս սխալելու կա-
րելիութիւն չկար : Յերեկն էր որ կը սկսէր : Եթէ

ըլլային վիլլային միւս կողմը գտնուող սենեակներէն մէկուն մէջ, պիտի կարենային տեսնել Անսարիի լեռներուն գագաթները՝ արդէն իսկ վարդազոյն։ Ծովը դեռ շատ տմոյն գորշագոյն մըն էր, ուր երթալով լեռակի գոյնը ստացաւ։ Եւ յանկարծ, մերձակայ պարտէզներուն մէջ բոլոր թռչունները միանգամայն սկըսան երգել։

— Այսպէս ամէնքը մէկ կը սկսէին երգել Մալաթիայի մեր տունը շրջապատող պարտէզներուն մէջ, ըսաւ Տիկ. Հաճիլար։

Ելեքտրականութիւնը դեռ կը փայլէր սենեակին մէջ։ Արմէն մարեց զայն։ Մարեց դարձեալ Աստուածամօր պատկերին առջև պլպլացող կանդղը։ Եւ բաւական երկար ժամանակ, շատ դժուարութեամբ տեսան սենեակին ներքնամասը, շրացած՝ միւս կողմէն՝ անսահման հլոգեհէն ուր վառելու վրայ էր երկինքը՝ այն տեղի արշալոյսներուն անհաւատալի արագութեամբը։ Տիկ. Հաճիլար ոչինչ փոխած էր իր կեցւածքէն և ոչ ալ շարժած այն տեղէն ուր քանի մը ժամ առաջ համակերպած էր խօսելու։ Արեգակին անողոք լոյսը, որ այժմ ամէն կողմէ կը մտնէր՝ դեռ քիչ մը առաջ քողարկեալ լամբարներու լոյսը միայն ունեցող սենեակին մէջ, կը քանդէր հոն խաւարի մեծ զանգուածներ՝ մէկ առջամէն։ Այդ արեգակնային լոյսը կ'աւելցնէր, եթէ կարելի է, Արմէնի գեղեցկութիւնը, թոյլ տալով աւելի լաւ դիտել զինքը։ Այն ատեն, այո՛, այն ատեն միայն, Ռօշի, որ կարծած էր այնքան սիրել զինքը, թուեցաւ թէ երբեք այդ աստիճան չէր ունեցած յայտնութիւնը անո՛ր զոր ունեցած էր և ապա կորսնցուցած։ Եղբոր սկսած հեկեկանք մը խեղդեց զիւքը։ Յուսահատօրէն թեւերը երկարեց Արմէնի կողմը։ Կինը ունեցաւ յայտնատեսութիւ-

նը վտանգին, որուն կը դիմէին երկուքն ալ, սպան ապահովապէս տւելի քան ինքը՝ Արմէն։ Այս վերջինը միացուց իր ձեռքերը։ Բնագրմամբ ունեցաւ պաշտանքի անուշ ժպիտը, առանց որուն ոչ մէկը և ոչ միւսը պիտի չկարենային սնցընել այդ վտանգալից պահը։

— Ի՞նչ ըսելու վրայ էի, ըսաւ Տիկ. Հաճիլար, հազիւ թէ փոխուած ձայնով մը։ Այո՛, թէ Մալաթիայի մէջ տունը ուր հաստատուեցայ, այս տունէն աւելի շրջապատուած էր հիանալիօրէն ոռոգուած պարտէզներով, լեցո՛ւն՝ թռչուններու բազմութեամբ մը։ Այդ երկիրը շատ հեռու չէ, այնպէս չէ՞, նախկին երկրային դրախտէս։ Մի նեղուիր այդքան խեղճ մանրամասնութեանց համար։ Այոնք ընաւ կարեւորութիւն չեն ունեցած ինձի համար։ Այս ամենուն մասին կը խօսիմ այնպիսի անտարբերութեամբ մը որ իբր թէ հարցը ուրիշ կնոջ մը վերաբերէր։ Եւ թըշուառահանի մը զայն վերապրեցնելու համար ըրած ձեռքն է որ արգելք կ'ըլլայ այս անցեալին բոլորովին մեռած ըլլալուն իմ աչքիս։ Այդ տունը ուրեմն շատ գեղեցիկ տուն մըն էր։ Էլիսս Հաճիլար գնած էր զայն իր միւս բոլոր տուներէն առաջ։ Ծերուկ Գրիգոր Պիշարայի նախկին պղտիկ պաշտօնեան կ'ուզէր որ իր ծննդավայր քաղաքին մարդիկը իրազեկ ըլլան իր դիրքին բարձրացումին։ Անթիւ անհամար կան կարասիներու մէջ զոր գիզած էր հոն, անկարելի չէր գրտնել մաս մը, որ շատ անճաշակ չէր։ Ես իսկ Մալաթիա հասած էի շրջապատուած բազմաթիւ գոյքերով որոնց օգտակարութեան մասին իմ կարծիքս չէին հարցուցած։ Նախատեսելով դէպքերուն շարունակութիւնը և քիչ հաւանականութիւնը թէ ժէօնթուրք կառավարութեան հետ աւարաբերութեան մէջ պիտի կարենայ

մնալ, ամուսինս այդ կերպով նախագրուելով իւրեններ ձեռք կ'առնէր և կը ձեռնարկէր իր ինչքերուն մէկ խոհեմ տեղափոխութեան: Ինչզղինքին կ'ըսէր թէ Կ. Պոլսոյ իր փոխակիւն մէջ, իր հարստութիւնները շատ աւելի աչքի կը զարնէին և կը գրգռէին ընչսքաղ-ցութիւններ քան թէ Տիարպէքիւրի, Մալաթիոյ և Թարթուսի մէջ, — Կայսրութեան բոլոր քաղաքներէն ուր ինք կալուածներ ունէր՝ հեռաւորագոյնն էր Կ. Պոլսէն: Բոլոր այդ պատմութիւնները, որոնք դեռ շատ չեն շահագրգռեր զիս հիմա ալ, երբ այսօր սակայն միակ տիրուհին իմ այդ աւելի քան կոկիկ հարստութենէն բոլոր մնացորդներուն, այդ շրջանին ոչ մէկ կերպով ուշադրութիւնս չէին գրաւեր:

Երբ հարկ եղած էր մեկնիլ մայրաքաղաքէն, ըստ պատուիրակներու յանձնած էիր որոշուու հոգը թէ հագուստներէս և գոհարեղէններէս ի՛նչ պէտք էր տանէին միասին: Մէկ բանի համար միայն բացառութիւն ըրած էի, դժուար չէ գուշակել թէ ինչ ի՛նչ բան էլ-Քոպուրի Տիրամօր արձանը:

Կարելի է մեղադրել իմ ճակատագրապաշտութիւնս, իմ համակերպութիւնս: Պէտք չէ զիս մոռացկոտ կարծել սակայն: Կը դարձրիմ մոռացկոտ ըլլալէ երբ իմ շահերս չեն այլեւս որ խնդրոյ առարկայ են, այլ անձերը որոնց կապուած ըլլալու պատճառներ ունիմ: Պիտի զարմացնե՞մ զքեզ երբ ըսեմ թէ այդ ամբողջ պիգալի տարիներուն ապրած եմ միայն մէ՛կ գաղափարի համար — կին դարձած աղջնակի մը մտասեւեռում — մէ՛կ մտածումի, էլ-Քոպուրի տիրամօր արձանը վերադարձնել և Գարա թէքքէի վանքը, վերաբանալով դայն: Իրծի կը թուէր թէ, եթէ յաջողէի, նոյնհետայն քաւած պիտի ըլլայի անմաքրութեանց կեանք մը, որոնց բոլորն ալ կամաւոր չեն

եղած: Այն պահերուն ուր զիս ունեցած ես թեւորուդ մէջ և զորս չեմ մոռցած ես ալ՝ կրցած ես րօպէ մը մտքէդ անցնել թէ Արմէն այդ տեսակ գաղանիք մը ունէր: Պարագաները որոնք կը ստիպեն զիս գաղանիքս յայտնել, այնպէս մը կ'ընեն որ դուն ըլլաս այդ գաղանիքը միա՛կ գիտցողը: Այս գերագանցութիւնը անկասկած աննշան պիտի թուէ՛ քեզի: Աննշան չէ սակայն, կ'երգնու՛մ քեզի, և ինչ ալ պատահի՝ պիտի ունենաս միշտ այդ գերագանցութիւնը մարդուն վրայ, որուն նախանձելու պատճառներ ունենալ կը կարծես (Մէնէթրի):

Գծբախտաբար, վերադառնալու համար իմ ծրագրիս, երբեք հարց չէր եղած վերականգնելու խեղճ վանքը: Կ. Պոլսէն Մալաթիա ուղեւորութեանս ժամանակ, շատ հեռուէն չէի անցած այն վայրէն ուր կանգնած էր անիկա: Կրնայի, եթէ ուզէի բացարձակապէս, սաանց դժուարութեան ձեռք բերել Պիշարայէն որ մեր պզտիկ կարուանը ընէ շեղում մը՝ թոյլատրող ինծի այդ ուխտագնացութիւնը կատարել: Այո՛, բայց աւերակներու վրայ ողբալը սքոր մըն է, որուն օգտակարութիւնը չեմ ըմբռնած երբեք: 1908ի տրամէն ետք՝ ողջ մնացած կրօնաւորուհիները ցրուած էին հոս հոն, ուրիշ վանքեր Անատոլուի, Հայաստանի և Պարսկաստանի մէջ, վայրե՛ր, ուր, որքան ալ անմատոյց ըլլան անոնք, վստահ չեմ թէ օր մը պիտի չերթամ անհետանալու ես ալ: Լքուած իրենց բախտին, չէնքերուն աւերակները շուտով դարձած էին ո՞րչ շնագայլերու և լուսաններու: Սուլթան Ապտիւլ Համիտի վրէժխնդրութիւնը զինաթափ չէր եղած և իր յաջորդներուն իշխանութեան տակ չէր, որոնց մօտ իսլամական հիւ՛ մուսուլմանութիւնը տեղի տուած էր ստորին տեսակէ հա-

կազմակերպմանը մը առջև, որ պէտք էր ակունկալի վանքին վերահաստատումը նպաստաւորելու որեւէ տրամադրութիւն: Եւ, ինչպէս կանոն է այդ տարաբախտ երկրին մէջ, ուրիշ պատերազմներ, միջոտ ուրիշ պատերազմներ: Ուտի Ս. Գերեզմանատան Տիրամօր արձանը մնաց հոն ուր կը տեսնես զայն և իմ կեանքիս ամենաքիչ արտակարգ արկածը չէ նման հրաշքի մը կապուած ըլլալը: «Ի՞նչ հրաշքի մասին կը խօսիս», պիտի հարցնես: Ի՞նչ կարգիս պիտի հարցնեմ քեզի թէ քիչ մը տարօրինակ չէ՞ որ 1291ին Նէսթորիոսի նաւակին վրայ Թարթուսէն փոխած Ս. արձանը հոն բերուի 620 տարի ետք, օամ. շնոր հազրկուած բարձրաստիճան պաշտօնատարի մը կառքին մէջ:

Կ'ըսեմ 620 տարի ետք: Արդարև, 1911ի սկիզբն էր որ ամուսինս հարկադրուեցաւ զալ բնակիլ Թարթուսի մէջ: Իրեն հետ էի, այս ալ ուրիշ հրաշք մը: Արդարև, այդ վերջին երկու տարիներուն ընթացքին կատարուած էր իրողութիւն մը, զոր ոչ ես և ոչ ալ Հաճիլար փաշա կարելի բաներուն կարգը չէին քննկատեր մեր ամուսնութեան օրը. ամուսինս սիրահարուած էր ինձի: Մալաթիա ժամանեց 1909ի վերջերը, հոն մնալու գիտաւորութեամբ՝ որքան ժամանակ որ իշխանութեան գլուխ մնար քաղաքական խմբակցութիւնը, որ կը տիրէր երկրին: Գահընկէց Սուլթանը աքսորուած էր Սելանիկ: Էլիաս Հաճիլար այլեւս տածելիք ոչ մէկ վերապահութիւն ունէր անկեալ տիրող հանդէպ: Ծիշդ է թէ հակառակ իր բոլոր առաջումներուն, հակառակ նոյնիսկ ծառայութեանց զօրս կը թուի թէ մատուցած էր էնվէրի և Թալէաթի, այս վերջինները աւելի յարգանք չէին ունեցած իրեն հանդէպ: Իր հարստութիւնները միայն բաւա-

կան էին իր կորստեան համար, այդ պարօններուն տալով այդ հարստութիւնները իւրացնելու փափօքը: Զսնոնք ծածկելու համար իր ըրած առաւել կամ նըւազ ճարպիկ ճիգերը հայթայթեցին էնվէրի և Թալէաթի անհրաժեշտ պատուակները: Արտասահմանի պանքաներուն իր տուած հրահանգները իմացուեցան էլ Պուրտիի հռչակաւոր սե գրասենեակին կողմէ և բոլորովին իր ազատ կամքով չէր որ Կոստանթնուպոլիս գանձուն նախկին նախարարը հեռացաւ Կ. Պոլսէն՝ զալ զիս գտնելու համար Մալաթիայի մէջ:

Ունեցայ այն տպաւորութիւնը թէ լմ ճակատագիրս որոշուած էր արդէն իսկ իր մտքին մէջ, երբ եկաւ Մալաթիա: Ապտիւլ Համիտ իշխանութեան զլուխ եթէ ըլլար, պիտի չթերանար սուղի նստեցնել իրեն գէշ վարձուէքը որուն կրնար ենթարկել իր նախկին սիրականներէն մէկը: Բայց Էլիաս Հաճիլար այլեւս ոչ մէկ պատրանք չէր սնուցաներ Սուլթանին վերադարձին մասին: Այդ պայմաններուն տակ, ինչո՞ւ համար իր երդիքին տակ պահէր այդ ինքնամուտը, որուն հետ ամուսնանալ հարկադրուած էր Սուլթանին կամքով և որ կրնար բոլորովին վտանգել զինքը յաջս նոր կառավարողներուն: Կ'առաջադրէր ուրեմն «այձակեղ» զիս: Ան ատեն է որ աննախատեսելի տեղի ունեցաւ: Իր աքսորը ամուսնոյս տուած էր բռնադատեալ պարապուրդ: Գործածեց այդ պարապուրդը ձեւով մը, որ ամենէն նուազ հաճելին կրար ըլլալ ինձի համար, գործածեց զայն զիս սիրելու:

Ըսի քեզի, պատմութիւնս սկսելու ատեն, թէ կան ձերուկներու համար կիներ: Իմ ողբալի ճակատագիրս եղած է պատկանիլը այդ դասակարգին: Ինչպէս կը տեսնես, կը շարունակուի անիկա:

Իր դայուն առաջին երեկոն իսկ, Էլիաս Հաճի-

լար խօսքն ուղղելով Եւուտի Պիշարայի, ըսաւ մօտաւորապէս հետեւեալը.

— Միակ նայուածք մը բուժական եղաւ ինծի համոզելու համար զիս թէ հոս ամէն բան կ'ընթանայ ինչպէս որ պէտք է: Բեզմէ աօկէ պակասը չէի սպասեր: Այս երեկոյ երեքս միասին պիտի ընթրենք և ատեն ատեն պիտի գաս մեզի հետ սեզանակից ըլլալու: Այժմ, պիտի ըսեմ քեզի բան մը, որ հաճոյք պիտի պատճառէ քեզի: Այլեւս պետական պաշտօններս չունենալով, աւա՛ղ, պէտք եղածէն աւելի ժամանակ պիտի ունենամ անձնական պզտիկ գործերս յանձնածելու համար: Դուն պիտի կարենաս ամբողջ ժամանակդ տրամադրել Գրիգոր Պիշարա Տ սն գործերուն բարւոք ընթացքին: Վաղեմի և յարգելի տուն մըն է անիկա: Շատ երախտապարտ եմ անոր, թոյլ տալու համար որ իմ պատճառովս անոր ժառանգորդը ձգէ որ անիկա նսեմանայ:

Գաղտնածածուկ կերպով շրջանակելով զիս ակնարկով մը որ գարշանքս առաջացուցած էր, ան աւելցուցած էր.

— Ասկէ զատ, պէտք չէ զսրմանաս, տղա՛ս, թէ այնքան երկար ժամանակ բժշուած մնալէ ետք իրմէ այժմ պէտքը կը զգամ առանձին մնալու սիրուն պզտիկ կնօջս հետ: Այնքան ալ հին այր ու կին չենք, հի՛, հի՛, հի՛

Ի՞նչ կրնար պատասխանել Պիշարա, ի՛նչ կեցւածք կրնար ունենալ: Դիմադրէ՞ր: Բայց ամուսինս, մանաւանդ իր ծննդավայրին մէջ, հակառակ իր շնորհազրկումին, դեռ բաւական զօրաւոր էր խիստ կերպով վրէժ լուծելու համար ամէն անարգական ժեսթէ: Այն ակնարկէն սակայն զոր միւսը արձակեց՝ հասկցայ թէ ի՛նչ բան էր ատելութիւնը և ի՛նչ էր ուրախու-

թեան տեսակը զոր ստորադասին կրնար պատճառել իր տիրոջ վերադարձը:

Կը կարծեմ թէ Պիշարա կը յուսար թէ պիտի պահէր զիս միշտ, թէ Հաճիլար փաշա իրեն պիտի թողուր զիս: Կը տեսնեմ հարցումը զոր պիտի ընես ինծի: Ես փակ ինքզինքիս ըրած եմ այդ հարցումը շատ յաճախ: Պիշարա կը սիրէ՞ր զիս: Բնաւ չեմ դիտցած: Սիրել, նման մարդու մը համար, այնպէս չէ՞, ըսաւ մըն է որ կը համապատասխանէ այնքան բարդ մտահոգութեանց, այնքան տարբեր ամէն բանէ որուն մենք կը խորհինք իսկոյն: Միայն կիրքը չէ, միայն ցանկութիւնը չէ, սնապարծութիւնն է նաև, դրամը, ջնջուած ընկերային անջրպետը . . . Սիրած է զիս: Չեմ գիտեր, ոչ:

Ներկայ պայմաններուն մէջ, հաստատական պատասխան մը, ամէն պարագայի տակ իրերը դիւրացրնելու բնոյթը պիտի չունենար: Բայց այդ ցած հոգիներուն մէջ, ինչպէս է իրենը, ինչպէս եղած են գրեթէ բոլոր այն էակներունը որոնց հետ յարօքերիլ եղած է ճակատագիրս, կան թերեւս անկիւններ նուազ խաւարմած քան միւսները, անկիւննե՛ր՝ ողողուած նշոյլներով, որոնք որքան ալ ամոյն ըլլան, նշոյլնե՛ր են այսուհանդերձ: Ինչ որ կ'ըսեմ ուրիշ շարժառիթ չունի քան թէ ինքզինքս հանդիստ զգալ ինքզինքիս հետ: Եթէ կարենայի այս պահուս Եուրի Պիշարան տեսնել մեռած ոտքերուս տակ՝ գիտցիր թէ պիտի ըլլայի աշխարհի ամենաերջանիկ կիներ: . . . Չէք կըրնար երեւակայել թէ որքան հրէշայնօրէն ճարպիկ և նենգ է անիկա:

Տիկ. Հաճիլար սարսուաց: Պատկից սենեակներէն մէկուն մէջ գանձող ժամացոյցին թէքթաքը կանգ առաւ. ժամացոյցը կէս զարկաւ:

— Ժամը քանի՞ն է, հարցուց Արմէն:

— Վեց ու կէս:

— Վեց ու կէ՞ս: Ժամը ութնի՞ն է որ կը բացուի հեռաձայնական գրասենեակը:

— Այո՛:

Անձկութեան դող մը անցաւ կնոջ դիմագիծերէն:

Ան ինքզինքը զսպեց և շարունակեց.

— Ինչ որ պիտի կարենամ աւելցնել հիմա, մեծ կարեւորութիւն մը չունի: Էականը ըսուած է: Ձեւի համար է որ կը խօսիմ, որպէսզի գոյութիւն չունենայ մանրամասնութիւն մը, որքան ալ փոքր ըլլայ անիկա, որ ընտանի չըլլայ քեզի: 1910էն սկսեալ, քրտական ապստամբութիւն մը ծագած ըլլալով Տիարպէքիւրի վիլայէթին մէջ, Ժէօն-Թուրքերը հասկցան վտանգը զոր կրնար նոր ռէժիմին գլխուն բանալ համիտեան նախկին բարձր պաշտօնատարի մը շնորհւած Թոյտուութիւնը՝ իր ծննդավայր նահանգին մէջ բնակելու: Այդ արտօնութիւնը ջնջուեցաւ: Մալաթիայի մեր տունը կնքուեցաւ և ամուսինս հրաման ստացաւ քաշուելու Սուրիա, Թարթուս, ուր կը մընար իր տուներէն միակը որ չէր բռնագրաւուած: Մեկնեցանք 1911ի սկիզբը: Պէտք է երեւակայել թէ ի՞նչ եղաւ այդ ճամբորդութիւնը այդ եղանակին, ձիւնածածկ լեռներու մէջէն: Այսօր Մալաթիայէն Թարթուս կուգան 2 օրէն՝ ինքնաշարժով: Այն ատեն մե՛ք 12 օրուան պէտք ունեցանք, ճամբորդելով կառքով: Հաճիլար շատ տկարացած էր, շատ յօգնած: Ես կը ծիծաղէի ամէն բանի վրայ որ կրնար պատահիլ. ոչ մէկ բան հոգս չէր: Օրուան ընթացքին, մինչ անիկա կը մրափէր, մինչ կը խռկար, կը դիտէի անընդհատ նորոգուող զարմացման և գարշանքի զգացումով մը այդ շատ ծեր մարդը, որուն գլուխը, ա-

մէն անգամ որ կառքը ցնցուէր, կուգար շարժիլ ուսիս վրայ: «Ամուսի՛նս» կը կրկնէի ծիծաղով մը որ երբեմն ընդոստ կ'արթնցնէր զայն: Կը բանար կիտովին իր ուռած կոպերը, կը տեսնէր խնդալօ, երջանիկ կը կարծէր զիս և կը ժպտէր: Երջանիկ, թերևս շատ է այդ բառը: Ճշմարտութիւնը այն է թէ դժգոհ չէի ուղեւորութենէ մը, որով կը խզուէի, կերպով մը զօր վերջնական կը կարծէի, ատուած անցեալի մը հետ կապերէս:

Դէպի 12րդ օրուան երեկոն, նշմարեցինք չէկ զանգուած մը, որ դանդաղութեամբ և վեհութեամբ կը մօտենար մեզի: Թորթոզայի Տիրամօր մայր-եկեղեցին էր անիկա: Նայեցայ կառքին մէջ գտնուող սընտուկի մը: Անիկա կը պարունակէր արձանը Աստուածամօր որ այդ օր կը վերադառնար իր քաղաքը: Ս. եկեղեցւոյ առջևէն անցած ժամանակնիս՝ խաչակնքեցի: 1911 Փետր. 23ն էր: Այնուհետև՝ Պատերազմը, ապա՝ դո՛ւն, ապա՝ ինք... Լմեցաւ, ամէն բան դիտես հիմա:



Այդ վայրկեանէն սկսեալ, Արմէն խօսեցաւ ընդհատ ընդհատ միայն, ընդոստ ցատկելով ցաւագնորէն՝ ամէն անգամ որ սոսկալի ժամացոյցին քիֆ-քաֆը բուպէ մը կանգ կ'առնէր ժամերու քայլը ծանուցանելու համար: Իրենց հանդիպակաց Ռուստ կղզին կաւիճի ճերմկութիւն մը ունէր հիմա: Ծովուն կապոյտը հետըզհետէ աւելի խորունկ կը դառնար: Թռչուններուն ճռուողիւնին հետզհետէ աւելի կը տիրապետէին պղտիկ քաղաքին զուարթութեամբ առլցուն ձայները — նաւավարներու կանչեր, ձկնավաճառներու, ջրկիրներու, մրգավաճառներու կանչեր, հաւերու կրկուռք:

ուղտերու ճիչեր, ամբողջ խայտացող և նկարագրել
կեանք մը, որուն մէջ ի՛նչ լաւ պիտի ըլլար իրա-
նուիլ, լուծուիլ...

Ժամը զարկաւ կէս, եօթնէն վերջ:

— Ժամը Տի՛ն է, վստա՞հ ես:

— Վստա՛հ, երէկ երեկոյ Քաղէլլային հարցուցի:
Տեսնենք, քանի որ դեռ ժամանակ ունինք, քեզի ը-
սելիք բան մը ևս ունէի դեռ: Ա՛հ, այո՛, օանքաժը
զոր այդ պժգալի մարդուկը կը փորձէ վրադ այսօր,
ինչո՞ւ չէ փորձած աւելի կանուխ:

— Ո՞վ ըսաւ թէ չէ փորձած, ըսաւ կինը տա-
րորինակ ձայնով մը:

— Ուստի՞...

Արմէն ուսերը վեր վերցուց.

— Ուստի՞ ի՛նչ: Ի՛նչ ալ ըլլայ, պիտի չսպառ-
նար ինձի ամուսնոյս յայտնել բաներ զորս անիկա իր-
մէ աղէկ դիտէր:

— Հասկնալի է: Բայց ինձի՞: Տրուած ըլլալով
որ միշտ վրադ հսկած ըլլալ կը թուի, իրազեկ-ե-
զած ըլլալու է իմ գոյութեանս, այնպէս չէ՞:

— Ո՞վ ըսաւ թէ չէ փորձած:

— Է՛հ...

— Աւելի չէ ծանրացած ատոր վրայ, վասնզի ես
իրմէ առաջ կ'ընէի իրեն թէ ամէն ինչ պիտի յայտնեմ
քեզի:

— Ամէ՛ն ինչ:

— Այո՛, ըսաւ կինը գլուխը խոնարհեցնելով:

— Ամէն ինչ, կրկնեց երիտասարդը անհուն
քաղցրութեամբ մը: Այսինքն այն ամէնը զոր Մէ-
նէթրիէն պէտք չէ իմանայ երբեք: Շատ դժբախտ եմ,
Արմէն: Համբուրէ զիս:

Արմէն հնազանդեցաւ: Սպան եկաւ նստիլ լռու-

թեամբ: Այդ րոպէէն սկսեալ այլեւս խօսք չուղղե-
ցին իրարու: Տիկ. Հաճիլար աչքերը փակած էր: Ռօ-
շի աչքերը շրջան կ'ընէին սենեակին մէջ՝ ըստ դիպ-
ւածի: Անոնք կանգ առին զարդասեղանի մը վրայ,
ուր շամբանիայի շիշին քով, կար հեռաձայնական
գործիք մը շատ նիքէլափայլ, շատ փայլուն, փղոս-
կրէ ընկալուչով մը, շատ ճերմակ ու փայլուն նոյն-
պէս: Ծիծեռնակ մը մտաւ սենեակը, պահ մը շրջան
ըրաւ և ապա դուրս ելաւ: Ռօշ մտածեց Աֆիոն Գա-
րահիսարի ծիծեռնակներուն: Ինչո՞ւ Արմէն՝ այն ա-
տեն այնքան հլու, չէր թողուր ամէն բան, չէր մեկ-
նեցիր իրեն հետ...

Ժամացոյցին զա՛րկը:

Ռօշ նայեցաւ Տիկ. Հաճիլարի և զգաց թէ կը
սարսռար յանկալի՞: Արմէնի աչքերը, սեւեռուն
էին կէտի մը: Անոր աչքերուն հետեւած ուղղու-
թեան հետեւեցան իր աչքերը եւս: Ինչ որ նըշ-
մարեց, արտակարգօրէն պարզ բան մըն էր, պարզ և
անարկու միանգամայն: Հեռախօսն էր...

Յետոյ, յանկարծ, անոր զանգակը սկսաւ հնչել՝
սուր, անողոք:

— Քաջութի՛ւն, Արմէն, մրմնջեց Ռօշ:

Ան ուղղուեցաւ դէպի զարդասեղանը: Այն զգու-
շաւորութեամբ որով պիտի ձեռնէր ուսմբ մը, բըռ-
նեց հեռաձայնական անարկու գործիքը: Ապա, դառ-
նալով Արմէնին.

— Քաջութի՛ւն, կրկնեց կիսաձայն:

Խեղճ նայուածքը զոր Արմէն արձակեց իր վրան՝
երկիւղ պատճառեց իրեն: Հարցուց ինքզինքին թէ
պիտի կարենա՞ր խօսիլ:

— Այո՛, Այո՛, ես եմ: — Այո՛, կը ճանչնամ
ձեզ. — կատարելապէս, այո՛, զտացայ զայն. — Զար-

մացած, ո՛չ, ոչ չափազանց: Այսինքն՝ այսուհանդերձ
... — Թէ հիւանդ եմ: Ո՛չ, ինչո՞ւ այդ հարցումը:—
Քիչ մը յուզում թերեւս՝ անակնկալին պատճառաւ:
Կը հասկնաք զիս, այո՛, ինչ և է...

Իր ձայնը, ամէն վանկի կը սպառնար փշրուելու
տառաջիօրէն:

— Թէ գիտէ՞ք որ վաղը ան Թարթուս պիտի
գայ: Անշուշտ: Ի՞նչ կ'ուզէք իրմէ: — Ի՞նչ ըսիք,
— Օհ, բայց ստորին բան է ատիկա: Այդ հետապըն-
դումնիդ պիտի չվերջանայ բնաւ: Գու՞թ պիտի
չունենա՞ք երբեք...: Նա՛խ, ինչպէ՞ս լուր ունե-
ցաք:

Վախէց բոլորովին այլայլած դէմք մը, մերկ
վախ մը, ահռելի վախ մը: Ռոշ չյիշեց նման դէմք մը
տեսած ըլլալը երբեւիցէ: Բռնեց անոր ձեռքը: Նոյն
ատեն, իր մատը կը դնէր շրթունքներուն: Պէտք չէր
որ Արմէն այդպէս մղուէր վիճաբանութեան մէջ, մտ-
նաւանդ պէտք չէր տար անոր այն տպաւորութիւնը
թէ կը վախնայ իրմէ, թէ որսն է սկիզբէն իսկ՝
այդ թշուառական անտեսանելի խօսակիցին: Յուսա-
հափօրէն Ռոշ նայուածքովը կ'աղերսէր, կը ջանար
տալ կնոջ քիչ մը քաջութիւն, որուն այնքան պէտք
ունէր անիկա:

— Ի՞նչ — Նախ կ'արգելեմ ձեզի ինծի խօսիլ այդ
կերպով: Ահ, ամուսինս կ'անխաւ ըսած էր ինծի...:
Ձեր ձեռքերուն մէջ, ըսիք: Ընդհակառակը, դո՛ւք էք
աւելի՛ որ...: Ձէք գիտեր թէ ի՞նչ կրնամ ընել այս-
տեղ...: Օհ, խնդալու հարկ չկայ: Կ'աղբարարեմ
ձեզի թէ միտ'կ բառով մը կրնամ... — Ի՞նչ կ'ըսէք:
Թէ ատիկա պիտի ըլլայ ամենէն ապահով միջոցը
աւելի շուտով իմացնելու իրեն... — Օ՛հ, պիտի չը-
նէք այդ բանը: Յիշեցէ՛ք, կը պաղատիմ... — Ի՞նչ

ըրած եմ ձեզի: Երբեք դէչ չեմ եղած ձեզի համար:
Ընդհակառակը, կ'ըսէք: Հարցը ատիկա չէ — Ի՞նչ —
Բաւական է: Լռեցէ՛ք: Անգամ մը եւս կ'ըսեմ, կ'ար-
գելեմ ձեզի...:

Արմէն խեղդուած հառաչանք մը արձակեց: Ռոշ,
այլեւս չկարենալով զսպել ինքզինքը, յափշտակեց
գործիքը: Արմէն ունեցաւ խելայեղ ժէսթ մը՝ ետ
մղելու համար սպան, ձեռքէն առնելու համար գոր-
ծիքը: Անկարեկիր՝ Ռոշ անշարժացուց անոր դաս-
տակը:

— Շարժում մը եւս, ըսաւ, և կ'աղբարարեմ
քեզի թէ ե՛ս է որ պիտի խօսիմ իրեն, պիտի մտնեմ
խնդրոյն մէջ: Օ՛ն, օն, շարունակէ՛: Քիչկ մը քա-
ջութիւն, տեսնե՞ք: Քու երջանկութիւնդ է որ
խնդրոյ առարկայ է և ոչ թէ իմինս, չէ՞:

Տիրակալուած Ռոշի կողմէ՝ Արմէն ձեռք առած
էր դարձեալ գործիքը: Կարծես թէ իր ձայնը զօրա-
ցած էր քիչ մը:

— Ես ալ կը կարծէի թէ ընդհատած են հաղոր-
դակցութիւնը: — Այո՛, այնպէս չէ՞, անտանելի է ա-
սիկա: — Ծշղիւ ատիկա պիտի ըսէի ձեզի: Այս խըն-
դիրը հեռախօսով չէ որ պիտի կարգադրենք այս-
պէս: Ձիս տեսնե՛լ կ'ուզէք: Կրնաք գալ երբ որ
ուզէք: Ամբողջ օրը տունէն դուրս պիտի չել-
լեմ: Ի՞նչպէս. չէ՞ք ուզեր տունս գալ: — Քիչ
մը առաջ ձեզի ըսածիս համար է: — Չափէն աւելի
ուշադրութիւն պէտք չէ ընել այդպիսի խօս-
քերու, գիտէ՞ք: — Լա՛ւ, լաւ, չեմ պնդեր: Ինչ-
պէս որ կ'ուզէք: Բայց ո՛ր ուրեմն: — Ա՛յո, գիտեմ
թէ ո՛ւր է: Երկու անգամ բարձրացած եմ հոն:
— Լա՛ւ: Ես իմ մասիս՝ անպատեհութիւն մը չեմ
տեսներ: — Եւ ժամը քանի՞ին: — Ժամը 7ին: Ինչո՞ւ ոչ

աւելի կանուխ: — Օ՛հ, կ'ուզէ՞ք որ գիշեր ըլլայ: Նոյնն է: Ամբողջ օրը սպասել: — Ի՛նչ: — Այո՛, այո՛: — Բաւական է: Կը կարծէի թէ արդէն իսկ խնդրած եմ ձեզմէ: — Յտեսութիւն ուրեմն, և այս երեկոյ: Լա՛ւ:

Արմէն գահավիժօրէն տեղը կախեց ընկալուելը: Ռօշ գունաթափ էր:

— Լա՛ւ ըրիր հոգ մնալով, կմկմաց: Շատ լաւ ըրիր: Առանց ատոր, կը կարծեմ թէ, պիտի, խօսքս վկայ...: Այդ ստահակը քեզի խօսելու ի՛նչ ձև մը ունի: Անդրադարձա՞ր թէ րոպէ մը չդադրեցաւ եզակի դէմքով խօսելէ հետդ: Իրա՛ւ է թէ, խորքին մէջ, ամենէն յանցաւորը ինքը չէ:

Արմէն ունեցաւ մեղադրական այնքան ցաւագին նայուածք մը, որ Ռօշ չկրցաւ դիմանալ: Աչքերը արցունքով լեցուեցան:

— Ներողութի՛ւն, ներողութի՛ւն, մըմնջեց:

Եւ երիտասարդը համբուրեց մանկամարդ կնոջ ձեռքերը:

— Այժմ, խնդիրը ի՛նչի՞ վրայ կը դառնայ, տեսնենք: Այս ամենէն հստակ գործիական եզրակացութիւնը: Իրականութեան մէջ, նեղացած չեմ բարկութեան շարժումէն որ մղեց զիս մտիկ ընելու ձեր խօսակցութիւնը: Այս կերպով, շատ աւելի իրազեկ եմ այդ բարեկիրթ սրիկային դիտաւորութեանց: Ամփոփենք, եթէ կը հաճիս, տեսակէտներու փոխանակումը որ տեղի ունեցաւ:

Առաջի՛ն. խնդրոյ առարկայ մարդուկը մանրամասնօրէն գիտէ ամուսնական դիտաւորութիւնդ, ինչպէս նաև թուականը ուր կ'ուզես իրականացնել զայն: Եւկր՛ո՞ղ. Հօլեպէն իր անցքին՝ հասկցած է ճշգրիտ ժամը ուր Մէնէթրիէն պիտի մեկնի և ուստի վեր ի վերոյ գիտէ թէ ե՛րբ պիտի հասնի Թարթուս:

Չանդիտանար ճաճաճ օրուն պիտի հետեւի անիկա: Եւ կը յաւակնի թէ կրնայ իր կողմէն տոմս մը հասցընել անոր՝ ճամբուն վրայ իսկ, շատ դիւրութեամբ: Երբ՛ո՞ղ. գիտէ նաև — և, ա՛յդ է ամենէն ծանրակրօնը — թէ ի յառաջագունէ արամադիր ես ընդունելու ունէ բան՝ քան տեսնել Մէնէթրիէի իրազեկ դառնալը կեսնքիդ կարգ մը պարագաներուն: Այսպէս չէ՞:

Արմէն բաւականացաւ հաստատական նշան մը ընելով:

— Լա՛ւ: Չարբ՛ո՞ղ վերջապէս. կ'ուզէ ժամադրութիւն մը, բանակցելու համար այն զոհողութեանց շուրջ օրոնց յանձնառու պիտի ըլլաս, գաղտնիքիդ յայտնութիւնը արգելելու համար: Կա՛մ նախընտրելով չտեսնուել կամ ալ շատ կասկածելով որ շատ չես ուզեր նշմարուել իր ընկերակցութեամբ,, կը փափաքի որ այդ տեսակցութիւնը տեղի ունենայ գիշերը: Աւելին, արուած ըլլալով որ մոռցած է տխմարին մէկը ըլլալը և կը կասկածի թէ կրնաս ունենալ իր ծրագիրներուն արգելք հանդիսանալու կարող բարեկամներ, կը պահանջէ որ խնդրոյ առարկայ ժամադրութիւնը տեղի չունենայ տունդ և — ինչ որ ամենէն աւելի խելացութիւն է — կ'առաջարկէ քեզի միանգամայն հանրային և խորհրդապահ վայր մը, ուր պիտի չտեսնուիք և ուր ոչինչ կարելի պիտի ըլլայ փորձել իրեն դէմ բացէ ի բաց, այօրնքն՝ Թարթուսի մայր եկեղեցին, կամ, աւելի ճիշդը, այդ մայր եկեղեցիին տանիքը:

Երէկ երեկոյ, երբ քանի մը վայրկեան կորսնցնելու համար հոն բարձրացայ՝ չէի երեւակայեր անշուշտ թէ...: Փակագծի մէջ ըսեմ թէ Հայր Ասկըլպէոսն է որ պիտի փաղաքաշուէր՝ եթէ գիտնար թէ ի՛նչ տեսակ

ծառայութիւն մատուցանելու ատակ է իր ամենաօր-
րելի մայր եկեղեցին՝ կարգ մը անձեքու համարս Հա-
ւատարիմ է գոնէ՝ ըսէ ինծի՝ վերադառնալու համար
մեր նիւթին, ձեր խօսակցութեան ամփոփումը զոր
կատարեցի:

— Այո՛, ըսաւ Արմէն: Այդպէս է: Այսուհանդերձ,
կը յայտնեմ թէ բան մը մոռցար: Եւ սակայն շատ
ծանրացաւ այդ բանին վրայ:

— Ի՞նչ բան:

— Այնքան կը կասկածի թէ կրնամ իրեն դէմ
դիմում ընել բարեկամներու՝ որ՝ երբ իրեն սպառնալու
օխալը գործեցի, իսկոյն պատասխանեց ինծի...

— Այո՛, ի՞նչ պատասխանեց քեզի, շատ կարե-
ւոր է, այդ պահուն դեռ ընկալուչը ձեռք չէի առած:

— Ըսաւ թէ շատ հանդարտ է այդ կողմէն: Թէ
ձեռք առած է ամէն կանխազգուշութիւն: Եթէ գէշ
բան մը պատահէր իրեն՝ Պիշարայի, հետեւող առա-
ջին ժամերուն ժամ ամէն բանի իրազեկ պիտի դառ-
նար: Նոյ՛ իսկ ատոր համար է որ աւելցուց թէ ի
վիճակի էր անոր մարդ զրկելու ճամբուն ուէ կէտին,
նոյնիսկ նախ քան Թարթուս հասնիլը: Յիշէ այս ևս:
Ռոջ Թերահաւատութեան ժէսթ մը ունեցաւ:

— Այդ պարոնը թերեւ շատ կը պարծենայ: Երե-
ւոյթն ունի ինքզինքը աւելի հզօր ցոյց տալու քան
ինչ որ է իրականութեան մէջ:

Տիկ. Հաճիլար ցնցեց գլուխը:

— Մի՛ կարծեր, ըսաւ, մի՛ կարծերս Նա՛խ, քաջ
է: Երկրորդ, բնաւ չեմ տեսած անոր սպառնալը ու-
նայն տեղը: Ո՛չ, համոզուած եմ թէ մեծագոյն դժ-
բախտութէնը որ կրնայ պատահիլ ինծի, դժբախտու-
թեան մը պատահիլն է իրեն:

— Է՛, ո՞վ կը խօսի այդ սիրելի տղուն վրայ

դժբախտութիւն մը բերելու մասին, ըսաւ Ռոջ, աւե-
լի շինծու քան անկեղծ զուարթամտութեամբ մը:

Բայց, ճակատամարտի կ'երթամ առանց օժտուած
ըլլալու գլխաւոր պայմանով...

— Ճակատամարտի երթա՛լ, ընդմիջեց Արմէն:

— Ի՞նչպէս կ'ուզես որ ըսեմ քեզի: Գիտես թէ
դուն չէ որ պիտի երթաս այդ ժամադրութեան: Եթէ
հոս եկած ըլլար, զիս պիտի գտնէր և ոչ թէ քեզ՝
իր դիմաց: Նոյնպէս, երբ շրջագայելու վրայ ըլլայ
մայր եկեղեցոյ տանիքը, զիս է, և ոչ թէ քեզ, որ
պիտի տեսնէ, զի՛ս՝ որ պիտի ելլեմ յանկարծ իր դի-
մաց ինծի քաջածանօթ պտուտակաձև պզտիկ սանդու-
խէ մը:

Կի՛նը բռնեց սպային ձեռքը և մեղմովին մրմնջեց.

— Ծնորհակալ եմ:

— Կ'ըսէի ուրեմն, շարունակեց Ռոջ, հազացած
ըլլալով՝ իր յուզումը ծածկելու համար, թէ մոռցած
ենք խօսելու մէկ բանի մասին միայն: Այդ գարչելի
առաւփախաւը կը հետապնդէ անշուշտ նպատակ մը:
Ի՞նչ է այդ նպատակը: Հարստութիւնը մասամբ կամ
ամբողջութեամբ, այնպէս չէ՞, հարստութիւն մը ո-
րուն քանակութիւնը որեւէ մէկէն աւելի լաւ դիտէ:

Տիկ. Հաճիլար շտկուած էր:

— Ամբողջը, ըսաւ տարօրինապէս զօրացած ձայ-
նով մը, ամբողջ հարստութիւնս պիտի տայի՝ եթէ
հաւատայի թէ արիկա բաւական պիտի ըլլար: Պէտք
չունիմ այդ հարստութեան: Դրամիս համար չէ, վըս-
տահ եմ, որ ժամ սիրած է զիս:

— Ես ալ վստահ եմ, ըսաւ Ռոջ ծանրօրէն:

— Այո՛, ամբողջը. կրկնեց Արմէն: Բայց պէտք
էր ունենայի վստահութիւնը թէ միանգամ ընդ միշտ

պիտի ձերբազատուէի այդ մարդէն: Արդ, ոչինչ ատկէ նուազ ստոյգ է:

— Ի՞նչ կ'ուզէ ուրեմն, հարցուց Ռոջ՝ դիտելով կինը շեշտակի:

— Է՛հ, ըսաւ անիկա, ես գիտե՞մ: Ձի՛ս թերեւ, պարզապէս: Մէկ անգամէն ամէն բան պիտի ունենար: Վայրկեան մը լուսթիւն պահեցին:

— Ատիկա պիտի գիտնանք այս երեկոյ իսկ, ըսաւ Ռոջ ի վերջոյ: Եւ եթէ ունենա՞ր ժպրոսթիւնը, այդ յաւակնութիւնը յայտնելու: Չեմ կարծեր թէ պիտի հաւանէիր:

— Ատիկա իմ գիտնալիք բանս է, ըսաւ Արմէն մռայլ դէմքով մը:

— Իրա՞ւ: Պէտք է ըսես ինձի: Այլապէս՝ ոչ մէկ բանի չեմ խառնուիր:

— Լս՛ւ: Կ'ուզե՞ս անպատճառ, ըսու Արմէն, յոգաւորելով բառերը: Ըսի թեզի արդէն և կը կրկնեմ թէ պատրաստ եմ ամէն բանի, չտեսնելու համար որ ժան իրազեկ կը դարձուի թէ ի՞նչ եղած եմ անցեալին մէջ: Ինչ ալ ըլլայ, երբ ժամանակը գայ, պիտի ունենամ անհետանալու իրաւունքը:

— Դեռ լաւ չեմ տեսներ վարքագիծս ըսաւ Իրաւ է թէ ամբողջ օրը ունիմ տրամադրութեանս տակ՝ ատիկա որոշելու համար:

— Ո՞ւր կ'երթաս, աղաղակեց կինը դողահար, ինչպէս ամէն անգամ կ'ընէր երբ կը տեսնէր սպային իր քովէն հեռանալու վրայ ըլլալը:

— Արտօնութեամբդ, պատասխանեց Ռոջ, հանգըստանալու կ'երթամ:

Ապա իր դէմքին վրայ կը զգար անքուն գիշերներու հետեւանք այն կ'զեւը, բաւական անհաճոյ ասպաւորութիւն, զոր միշտ կը ծանրացնէ արեգակին

լոյսը: Ռոջի կը թուէր թէ բոլոր մարդիկը որոնց կը հանդիպէր, կը դիտէին զինքը, հասկնալով թէ չէր քնացած:

Ան շեղում մը ունեցաւ իր ճամբէն, չանցնելու համար Պէլվիւ պաւլոկին առջևէն և առջևէն այն կառածին, ուր կը գտնուէր Մալաթիոյ մարդուն ինքնաշարժը: Ներս մտնելով պզտիկ պարտէզէն որ կը գտնուէր Քաղէլլայի տան ետեւը, կը յուսար չհանդիպիլ այս վերջնոյս: Ունա՛յն կանխազգուշութիւն: Երկուքին ալ սենեակները կը գտնուէին առաջին յարկին վրայ: Ծիշք այդ պահուն Քաղէլլա իր գրասենեակը երթալու համար դուրս ելլելու վրայ էր: Ռոջ իր ընկերոջ հանդիպեցաւ սանդուխին գլուխը:

— Արթնցե՞ր ես արդէն, ըսաւ այս վերջինը: Ռոջ զսպեց սրտնեղութեան շարժում մը: 24 ժամուան իր մօրուքը, փա՞ռք Աստուծոյ, բաւական ակնբեր էր: Քաղէլլան կը ծաղրէր զինքը:

— Այս առաւօտ այցելու մը ունեցար, շարունակեց Քաղէլլա անայլայլ: Պատասխանեցի թէ առտու կանուխ ելար՝ ձիով պտոյտ մը ընելու համար: Լաւ ըրի՞:

— Բնականաբար: Եսորհակալ եմ: Ո՞վ եկաւ:

— Ո՞վ: Հայր Անկլպէս: Իր վաղուան հանդիսաւոր արարողութիւններով ինքզինքէն ելած է: Ստիպւեցայ խոստանալ իրեն թէ ներկայ պիտի ըլլամ իր մեծ պատարագին: Հազի՛ւ թէ չստիպեց զիս երթալ իր նառջին պատարագին և հաղորդութիւն առնել...: Խօսքը մեր մէջ, ատիկա կը տաղտկացնէ զիս քիչ մը: Չեմ գիտեր թէ ի՞նչպէս պիտի նային այդ հանդիսութեանի Պէյրութ, Բարձր Բաժնէրութեան: մէջ Բայց ի՞նչ ընես, այնքան բարի ծերուկ մըն է որ...: Նոյն ժամանակ կ'ուզէր տեսնել թեզ, հարցնել որպիսո՞ւ

Թիւնդ: Ուրիշ ի՞նչ. ա՛հ, այո՛, կ'ուզէր գիտնալ նաև թէ առիթը ունեցա՞ր Տիկ. Հաճիւարի երթալու:

— Ի՞նչ ածելի, մալտաց Ռոջ կատղած:

— Կը չափազանցե՞ս, ըսաւ Քաղէլլա: Գիտե՞ս թէ որո՞ւ գովեստն ալ հիւսեց: Այն թիփին, որուն համար երէկ հեռաձայնել տուիր ինձի Պէլվիւ պանդոկը:

— Լաւէն՝ լաւ: Իրար տեսե՞ր են. ե՞րբ և ու՞ր:

— Այսօր իսկ, առաւօտուն շատ կանուխ, մայր եկեղեցիին մէջ, ուր խնդրոյ առարկայ մարդը իր բարեպաշտակոն պարտականութիւնը կատարելու վերայ է եղեր: Հարիւր թրք. սկի տուեր է մեր բարի կրօնաւորին, իր եկեղեցւոյն համար:

— Կ'աճապարե՞ս

— Այո՛, ո՛չ, քիչ մը՝ ինչ ալ ըլլայ:

— Ներս մտիր, խնդրեմ, քեզի խօսելիք ունիմ: Նոյն տան Ռոջ կը մտնէր իր սենեակը, Քաղէլլան անցուցած ըլլալով իրմէ առաջ: Դուռը փակած էր զգուշաւորութեամբ: Քաղէլլա կը դիտէր զինքը ուշադիր:

— Գէ՛շ, մրմնջեց Քաղէլլա գլուխը ճօճելով:

— Ոչ՝ շատ լաւ, արդարեւ, ըսաւ Ռոջ:

Այս վերջինը հանած էր թիկնոցը և ճակատէն կ'անցնէր օ քր օլօներյով թրջուած սրբիչ մը:

— Իմացնեմ քեզի անմիջապէս, ըսաւ Քաղէլլա, որ կը շարունակէր աչքէ չհեռացնել Ռոջը մէկ րոպէ իսկ: Թերեւս պիտի ըսես թէ կը խառնուէ՞մ ինձի չվերաբերող գործերու: Գիտե՞ս թէ Մէնէթրիէ հոս պիտի ըլլայ վաղն առաւօտ:

Ռոջ ցնցուեցաւ:

— Այո՛, գիտեմ, ըսաւ, տիրելով ինքզինքին: Բայց դուն ուրկէ՞ գիտես:

— Օհ, գաղտնիք մը չէ: Ժէրպոյի՝ Սաֆիթայի

մեր ընկերոջ միջոցաւ: Այսօր հանդիպում մը պիտի ունենայի իրեն հետ և քու երէկուան խնդրանքիդ վրայ, հեռաձայնեցի իրեն որ աղատ կացուցանէ զիս ժամադրութենէս: Է՛հ, է՛հ, երեւոյթէդ դատելով տուած տեղեկութիւնս անտարբեր չի թողուր քեզ:

— Ո՛չ այն պատճառներուն համար զոր կ'երեւակայես, պատասխանեց Ռոջ: Ուրեմն ժէրպօ կ'ըսէր...

— Ժէրպօ այս երեկոյ կ'երթայ Համա, ուր մեծ հանդէս մը կազմակերպուած է Աժորժի մօտ, այս գիշեր և վաղը: Աժորժն է որ իմացուցեր է իրեն՝ միշտ հեռաձայնով, թէ Հալէպէն կը սպասէ 1904ի Բօմբըրի սնտուկ մը՝ արդիւնք Պարոն պանդօկի մէկ Յոյնէն իր շահած գրաւին: Մէնէթրիէն է որ խընդրոյ առարկայ սնտուկը Համայի մէջ իրեն յանձնելու պարտականութիւնը ստանձներ է: Կը ծանուցուի թէ Համայն պիտի անցնի վաղը առաւօտեան ժամը 7ին: Ուրեմն կարելի է ակնկալել թէ հոս պիտի ըլլայ վաղը կէսօրէն առաջ:

— Ծնորհակալ եմ, ըսաւ Ռոջ ճիգով մը:

— Չարժեր: Թող որ այս պատմութիւնը որեւէ կապ չունի անօր հետ որուն մասին պիտի խօսիս ինձի:

— Ո՛վ գիտէ: Չես մոռցած մեր երէկուան խօսակցութիւնը, այնպէս չէ՞:

— Պէլվիւ պանդօկին ուղեւորի՞ս մասին: Դեռ չի շողութիւնս այդ աստիճան չէ տկարացած: Բայց կ'իմացնեմ քեզի թէ իր մասին քսողած տեղեկութիւններս շատ լաւ են: Կատարեա՛լ պատուաւորութիւն: Անցադիր մը, որմէ կանոնաւորը չի կրնար գոյութիւն ունենալ: Պէլվիւի օնփականատէրը՝ Պ. Պաքոս հօսկէ քիչ առաջ դուրս ելաւ. ինքն է որ

հարկ եղած տեղեկութիւնները հայթայթեց ինծի : Յետոյ, կայ հայր Անկլլըպէռի կարծիքն ալ : Կը կըրկնեմ թէ տրամադրութեանդ տակն եմ : Այսուհանդերձ, եթէ խնդրոյ առարկայ մարդուկին վերաբերմամբ է որ կը սպասես ինձմէ իշխանութեան պղտիկ և սիրուն չարաչար գործածումի մը, կը վախնամ թէ շատ դիւրին պիտի չըլլայ : Օսմ. քաղաքացի է, գիտես : Այդ կողմէն գլխացաւ կրնանք ունենալ, բարդութիւննե՛ր :

— Դեռ նման բան մը չեմ խնդրեր քեզմէ, ըսաւ Ռոյ, բաւական ջղայնօրէն ուտերը վեր առնելով : Թող որ, հիմակու հիմա ինք չէ որ կը շահագրգռէ զիս աւելի : Շարժավար մը ունի. ըսի՞ն քեզի տակա :

— Այո՞, փառաւոր անասուն մը, որմէ բոլոր մը իսկ կորզել կարելի չէ : Չեմ սպասած որ խօսիս ինծի իր մասին, իր մօտ զրկելու համար Մուսթաֆան՝ ամենէն պերճախօս մարդերէս մէկը, ամենէն ճարպիկ մարդ խօսեցնողը՝ օղիի միջոցաւ : Մուսթաֆայի ջանքերը ունայն եղած են : Միւսը կը պատասխանէ այն ժամանակ միայն ուր խօսք կ'օւղղուի իրեն : Միայն ջուր կը խմէ :

— Թող Մուսթաֆան շարունակէ աչքէ չհեռացնել զինքը : Անոնց ինքնաշարժը արկած մը ունեցած էր : Նորոգած են զայն :

— Բաւականաչափ : Առած են իրենց պէնդինի պաշարը՝ ամէն պարագայի տակ : Իրաւ է թէ Պիշարա ըսուածը կ'ուզէր մեկնիլ այս առաւօտ իսկ՝ կարելի եղածին չափ շուտով Երուսաղէմ հասնելու համար : Հայր Անկլլպէռն է որ փոխել տուած է անոր միտքը : Համոզած է զայն որ հոս մնայ, իր մեծ պատարագին ներկայ ըլլալու համար : Ներողամտու-

եանց և այլ երկնային առաւելութեանց տեսակէտով՝ Թորթօղայի Տիրամայրը ոչ մէկ բանի և ոչ ոքի մըր ցակցութենէն չի վախնար, ըսեր է անոր :

Ռոյ սրտնեղութեան շարժուածեւ մը ունեցաւ :

— Կ'օւզեմ ընդունիլ թէ այդպէս է, քրթմնչեց : Ամէն պարագայի տակ, հայր Անկլլըպէռ շատ լաւ ըրած է եկեղեցական ասպօրէզը ընտրելով : Եթէ տեղեկաբու սպայ ըլլար՝ կը կարծեմ թէ իր յսուջացումը շատ ջուր պիտի վերցնէր :

— Ես ալ կը կարծեմ, ըսաւ Քսէլլա փիլիսոփայօրէն : Բայց ի՞նչ ընենք, ս'յնքան բարի ձերուկ մըն է :

Ամբողջ օրը, Ռոյ ունայն տեղը վազեց քունին ետեւէն : Օ՛հ, անշուշտ, ոչ երկարատե և ոչ ալ խորունկ քուն մը : Այնքան փստաւէր չէր : Պիտի գոհանար քանի մը վայրկեանի թմրութեամբ, մօռացումով՝ որոնք կարող ըլլային պահ մը նուազեցնելու սաստիկութիւնը ցնցումներուն, որոնց իր ջիղերը չէին դադրած ենթարկուելէ երէկուընէ ի վեր : Սկիզբէն կը դողար այն խաղէն զոր քանի մը ժամէն պիտի խաղար : Պիտի ունենա՞ր պաղարիւնութեան և հանդարտութեան նուազագոյնը որուն կարօտ պիտի ըլլար այդ պահուն : Հետզհետէ նուազ ապահով էր այդ մասին :

Քանիցս երկնցաւ իր անկօղնին վրայ բօլորովին փակուած պատուհաններով իր սենեակին մէջ : Ունայն ջանք : Դուրսի աղմուկները աւելի ևս նեղացուցիչ էին : Առաւօտուն երբ Ռոյ հեռացած էր Արէնի քովէն, Քսէլլայի տունը վերադառնալու համար, Տիկ. Հաճիլար և ինք համաձայնած էին իրենց միջև թէ օրուան մնացեալ մասը իրարմէ բաժնուած պիտի անցընէին : Տրուած ըլլալով գերագրգռութեան վիճակը

ուր հասած էին երկուքն ալ, առիկա անշուշտ միակ միջոցն էր յուսալու քիչ մը հանգիստ, որուն այնքան պէտք ունէին երկուքն ալ: Ռոջ շատ դժուարութիւն քաշեց իր խոստումը յարգել կարենալու համար: Չորս կամ հինգ անգամ հեռաձայնեց Արմէնի, զանազան պատրուակներով, հարցնելու համար թէ լա՞ւ էր, թէ նոր բան մը չէ՞ր պատահած: Սպան նեղացած էր Արմէնի դէմ, անոր այնքան ինքզինքին տէր եղած ըլլալուն համար և չխնդրելուն համար իրմէ որ զինքը տեսնելու երթայ: Անմիջապէս գացած պիտի ըլլար:

Ամբողջ օրը, Ռոջ տունէն դուրս չելաւ: Գիտէր թէ Պիշարա՝ լաւ քաղքենիի մը պէս, պտտելու վրայ էր Թարթուսի մէջ: Տեսած էին զայն նամակատունը, Պանօ ֆի Ռումա, Կարկուրի սրճարանը, զբաղած բարեկամներու քարթ-բոսթալներ գրելու քաղաքացիներուն խմիչք ապսպրելու: Լաւագոյն էր անոր հոն-դիպելու վտանգին չենթարկուիլ:

Անիկա պիտի չթերանար անմիջապէս անսովոր բան մը նշմարելու Ռոջի կերպարանքին մէջ: Այնքան լաւ գծուած գեղեցիկ ծրագիրը կրնար տակն ու վրայ ըլլալ այդ կերպով: Ան թերեւս պիտի կասկածէր և պիտի չգար ժամադրութեան: Երեկոյեան, մայր եկեղեցւոյ տանիքին վրայ՝ խնդիրը կը փոխուէր: Երբ մթութեան մէջ երկուքը պիտի գտնէին իրար քիթ քիթէ՝ շատ աւել պիտի ըլլար: Պիշարա այլեւս պիտի չկարենար խուսափիլ կռիւէն:

Ժամը 11ին, Ռոջ ունեցաւ Հայր Անկլըպէռի այցելութեան ազդուակը: Կրօնաւորը, ինչպէս տեսնուեցաւ, հետապնդող գաղափար մը ունէր գլխուն մէջ: Ռոջ քիչ մնաց որ բարկանար՝ երբ լազարիատը հազորդեց իրեն առաքելութիւնը զոր կը սպասէր իրմէ:

Ձեռք անցուցած էր դաշնակ մը: Կ'ուզէր գիտնալ որ տիկ: Հաճիլար, որ սքանչելիօրէն կը նուագէր այդ գործիքը: Կ'ընդունէ՞ր նուագել յաջորդ օրուան պատարագին, զոնէ հանդիսաւոր Օ Ֆիլիբի և Ֆիլիպայի ժամանակ: Ռոջ շատ դժուարութիւն ունեցաւ հնարելու համար պատճառներ (որպէսզի չըսէ բուն պատճառները), որոնք կը բացատրէին թէ այդպիսի դիմում մը չէր կրնար ընդունուիլ այդ օրը:

Քիչէլլան վեր ելաւ տեսնելու զինքը՝ կառավարական պալատ երթալէ առաջ: Իր սկզբունքն էր, բնաւ հարցում չընել բարեկամի մը: Բայց Ռոջի ընթացքը կը սկսէր լրջօրէն մտահոգել զինքը: Կարելի է Անտիոքէն մինչև Թարթուս ճամբորդել առանց յայտնի պատճառի և Աւագ շաբաթ օրը անցընել առանձին բանտարկուած սենեակի մը մէջ:

— Բեզի պէս հիւրերը, ինչ բարեբախտութիւն, բաւականացաւ ըսելով: Սուղի չեն նստիր քեզի պէս հիւրերը...: Չնս փափաքիր որ Ահմէտ բան մը բերէ քեզի, գինի, միրգեր:

— Ծնորհակալ եմ, եթէ փափաքիմ՝ զանգակը պիտի զարնեմ:

— Ինձի հետ պիտի ընթրե՞ս այս երեկոյ:

— Դեռ չեմ կրնար ըսել քեզի: Ժամը քանիին պիտի վերադառնաս:

— Ոչ շատ կանուխ: Ամսուան վերջին օրն է: Ահագին տրուելիք ստորադրութիւններ և վիզաներ կան: Յետոյ, պիտի վճարեմ սուրիացի ժանտարմաներուն ռոճիկները:

Երբ Քիչէլլա մեկնեցաւ, Ռոջ վերստին ընկզմեցաւ իր երազանքին մէջ: Պատահեցաւ իրեն արկած մը զոր կարելի էր բարեբախտիկ նկատել: Կրցաւ մոռնալ այդ երեկոյեան իր ժամանակացոյցը և խորհիլ

Արմէնին, այն տեսակ մը անձամօթ էակին որ դարձած էր ան իրեն համար այնքան կարճ ժամանակի մէջ: Ըսել թէ առտնց սա Պիշարային և իր Եանք Եանք փորձին, միշտ անգիտացած պիտի ըլլար ինք գաղտնիքը որուն մօտէն անցած էր, անգիտացած թէ ինչ կնոջ մը տարփաւորը եղած էր ինք: Ոչ, բնաւ տարօրինակ չէին թուիր իրեն այդ արկածները: Լաւ եթէ մտածէր, տարօրինակը այն պիտի ըլլար որ անոր անցեալ կեանքը եղած ըլլար աննշան բան մը: Զարմանալին, շփոթեցուցիչը, նուաստացուցիչը այն պիտի ըլլար որ ինք այդ մասին սեէ կասկած իսկ ունեցած պիտի չըլլար: «Արմէն Հաճիլար, Արմէն Հաճիլար»: Կը ջանար կրկնել այդ անունը այն անտարբերութեամբ որ իբր թէ օտար անձի մը վրայ դառնար խնդիրը: Եւ յետոյ, ի վերջոյ, ամէն բան մէկէն վանեց: Ինչ օգուտ ունէին այդ արամաբանութիւնները, ինքզինքը խաբելու այդ պէտքը, քսնի որ այդ բոլորէն քաղուելիք միակ եզրակացութիւնն էր հետեւեալը. այդ վայրկեանին եթէ Արմէն մտնէր իր սենեակը, ինքը՝ Ռօշ, անոր ոտքին նետուած պիտի ըլլար անմիջապէս: Իրականութիւնը շատ պարզ էր: Բնաւ այդքան չէր սիրած զայն:

Այսուհանդերձ, կոկորդը քիչ մը չօր կը զգար: Պէտք չէր որ այդ չորութիւնը աւելնար: Քսնի մը ժամէն, այնպէս չէ՞ պէտք պիտի ըլլար որ խօսէր, թերեւս ձայնը բարձրացնէր: Վար իջաւ: Անմէտ՝ Սէնէկալցի մը՝ կը խռկար, պակած սալայատակին վերայ: Այդ մարդը ուէ հոգ չունէր: Երջանիկ էր: Ռօշ բացաւ ճաշասենեակին դուռը: Բաժակները չէին գտնուէր այն պահարանին մէջ ուր կը գետեղուէին իր ատեն: Ծաշասենեակէն անցաւ խոհանոցը: Այդ պղզտիկ փնտառուքը կը զուարճացնէր զինքը: Սառնա-

րանը նոյն տեղն էր: Եանքանեա՛, ուխտքի՛: Լաւ էր: Ընտրեց ուխտքին: Այո՛, բայց ինչպէս 10 ի վրայ 9 անգամ կը պատահի, անկարելի եղաւ դսնել սօտայի շիշին խցանը բացող բանսին: Ուրմն, շամբանեա՛: Եիշ մը շամբանեա դրաւ թեւին տակ և կամաց մը սանդուխներէն վեր բարձրացաւ:

Երեկոն, հակառակ ամէն սկսկալութեան, շատ չուշացաւ: Ռօշ բացած ըլլալով իր պատուհաններէն մէկուն փեղկերը, բոլորովին զարմացաւ երկինքի վարդագոյն երանգէն: Յետ միջօրէն այդքան յառաջացած չէր կործեր: Ժամը 5.30: Է՛, ժամ մը եւս և գրեթէ ժամանակ պիտի ըլլայ երթալու...:

Հարց մը, զոր կարգադրելու մտեցած էր, պահ մը գրաւեց իր ուշադրութիւնը: Հոն պիտի երթար զինեա՛լ թէ ոչ: Որքան ալ վարժ ըլլար գրեթէ բոլոր մարդանքներուն մէջ, գրեթէ միշտ իր վրայ կը կրէր ատրճանակ մը: Ոչ մէկ պատճառ ունէր զայն տունը ձգելու այդ օրը: Ըսել չէ թէ մտադիր էր գործածելու զայն, բայց այդ պզտիկ պաղ շփումը միշտ ալ խրախոյս մը կ'ըլլայ մարդու համար:

Թուչուններուն երգերուն, որոնց արթնալը լսած էր, մէկիկ մէկիկ մեռելիւ լսեց: Մթութիւնը կ'իջնէր արագօրէն: Ռօշ վար իջաւ: Մուտքի հանդերձ կալին վրայ էր իր վերարկուն: Հագաւ զայն իր զին. գլխարկը հոն ձգեց: Կրնար դուրս ելլել գլխաբաց: Ոչինչ այլեւս իր վրայ չէր մտնէր սպան:

Գրեթէ այլեւս բան չէր տեսներ: Վայրկեան մը վառեց իր ելեգորական լապտերը և բացաւ պարտէզին դուռը: Գիշեր էր արդէն:

Ժամը 7ին 20 կար: Կրնար երթալ հոն:

Ռօշ քանի մը քայլ առած էր: Յետոյ, յանկարծ, միտքը փոխեց և վերադառնալով սանդուխէն վեր

բարձրացաւ չորս առ չորս: Յեղակարծ գողափոր մը ծագած էր իր մտքին մէջ: Եթէ Պիշարայի խելքին փչէր մինչև քառորդ ժամ հեռաձայնել Արմէնի, պէտք չէր որ գտնէր զայն թելին ծայրը: Հակառակ պարագային, անիկա պատճառներ կրնար ունենալ եզրակացընելու թէ Տիկ. Հաճիլար ճամբայ չէր ելած ժամադրութեան երթալու համար և թէ, հետեւաբար, դաւ մը լարուած է իրեն դէմ:

Տիկ. Հաճիլար նախատեսած էր այդ պարագան բարեբախտաբար: Բաթպէն եղաւ որ եկաւ նսխ հեռախօսին: Որոշուեցաւ որ այդ բաթպէն սկսեալ վիլլային հեռախօսը մուսջ պիտի մնայ:

Մէրային արտաքին կողմին շրջանն ընելով՝ Ռօշ առջի օրուան պէս մտաւ ձիթենիներու պուրակին մէջ: Իր ծրագիրն էր Մայր եկեղեցիէ հասնիլ ժամը 7էն վերջ միայն: Տանիքին վրայ պիտի ելլէր ժամը 7ը 5 անցած կամ 10 անցած: Ենախընտրելի էր այդպէս: Այդ կերպով իր հակառակորդին նահանջի ամէն ճամբայ կը կտրէր: Այս վերջինը չէր կրնար առնուիլ քիչ մը սպասելուն համար: Երբէ՞ս ի վեր, ըսէ՞ք խնդրեմ, կին մը իրաւունք չունի 5 կամ 10 վայրկեան ուշացումի:

Մեծ ամբօխ մը կար եկեղեցիին մէջը և առջեւը: Թարթուռի համար ամբօխ մը կը նշանակէ երեք կամ չորս հարիւր անձ: Ասիկա բաւական էր որպէսզի մարդ այն տպաւորութիւնը ունենայ որ ամբողջ քաղաքին մէջ, մէջն ըլլալով իսլամները եւս, ժամադրուած էին հոն: Հայր Անկլըպէռի փորձը հետզհետէ կը ստանար յաղթանակի մը համեմատութիւնը: Ռօշ նախ սարսափ այդքան մարդ տեսնելով: Բայց շուտով հասկցաւ թէ ատոր մէջ կար իրեն համար առաւելութիւն մը: Իր շահը կը պահանջէր, նոյնիսկ աւելի՛

քան Պիշարայինը, անշմար անցնիլ: Փոխանակ մնասելու իրեն, խնդրոյ առարկայ խոնուած կը նպաստաւորէր իր ծրագիրը:

Պատերուէն տակէն անցնելով Ռօշ մտաւ յիշատակարանէն ներս: ... Աշտարակը՝ իր դիմաց՝ կը բանար իր սանդուխին սև բերանը: Փութով մխրճուեցաւ անոր մէջ: Այժմ, խաւարին մէջ, վեր կը բարձրանար ոտքերուն մատներուն ծայրին վրայ: Գոհուեալ կուլթեան հառաչ մը ունեցաւ: Դարձած էր շատ հանդարտ, ինքզինքին շատ տէր:

Կը սպասէր անմիջապէս բախիլ իր հակառակորդին: Նախ ունեցաւ դժգոհութիւնը ոչինչ չտեսնելու: Տանիքին երկայն մակերեսը կը տարածուէր իր գիմաց պարագ, այն աղօտ պայծառութեամբ զոր ունի գիշերը՝ լուսնի ծագումէն անմիջապէս առաջ: Մալաթիայի մարդը կասկածած էր: Ուշացած էր պարզապէս:

Ռօշ անցուց մահացու մտահոգութեան քանի մը վայրկեաններ: Բոլոր պարագաները նախատեսած էր, ի բացառեալ ասկէ: Եւ յանկարծ հանդարտեցաւ: Հասկըցած էր: Պէտք էր անմիջապէս խորհէր ատոր: Հո՞ն էր որ կը գտնուէր միւսը:

Ետքէն աւելցուած միակ կառուցուածքը որ կը գտնուէր տանիքին վրայ, տեսակ մը գէշ մինարէ էր, զոր մինչև այդ օր ոչ ժամանակ և ոչ ալ միջոց ունեցած էին վարնտելու, մնացորդ այն ժամանակամիջոցէն ուր դարաւոր եկեղեցին դեռ մզկիթի վերածուած էր: Ապահովապէս, այդ մինարէին կռթած էր որ կը սպասէր իրեն իր հակառակորդը: Հոնկէ, առանց ինքն իսկ տեսնուելու, կրնար տեսնել ամէն նորեկի գալոյ, անոր ուրուագծուիլը երկինքին վրայ: Խնդրոյ առարկայ միւսին կը գտնուէր տանիքին հիւսիսարեւմտեան

անկիւնը: Ռոշ ուղղութեամբ գէպի հոն հաստատուն քայլերով:

— Է՛հ, բայց կա՛մ այն է որ շատ կը սխալիմ, կամ այն է որ սիրելի Պ. Պիշարան է այսօր ի՞նչ բարի դիպուածով...:

Եթէ Պ. Պիշարա մէկ վայրկեան փորձուած ըլլար դիպուածին վերագրել այս հանդիպումը, Ռոշի շեշտը բաւական պիտի ըլլար ուղղելու իր սխալը իսկոյն: Որքան ալ ամէն բանի պատրաստ ըլլար ան եւս, քիչ մը չփոթանար էր սակայն:

— Ճշմարիտ ուրախութիւն մըն է ինծի համար, հարիւրապետ... սկսաւ Պիշարա:

— Որեւէ մէկուն, պատուո՛յ խօսք, այո՛, որեւէ մէկուն կը սպասէի հանդիպիլ հոս, ի բացառեալ ձեզ մէ, շարունակեց Ռոշ չուզելով ձեռքէ հանել իր ունեցած սկզբնական առաւելութիւնը: Արդարեւ, ներկայիս պէտք չէ՞ր Ս. քաղաքը ըլլայիք, ձեր բարեպաշտական պարտականութիւնը կատարելու վրայ:

— Ատիկա հարցուցէք ձեր արժանապատիւ ճամբու ընկերոջ, հարիւրապետ, ըսաւ Պիշարա որ արդէն իսկ հաւաքած էր ինքզինքը: Այո՛, Հայր Անկլըպէան է որ պնդեց որպէսզի հոս անցընեմ Ս. Զատկի օրը: Բայց, կը կարծէի թէ իմացուցած է ձեզի: Այս պահուս, այնպէս չէ՞, սուրբ մարդը այնքան բան ունի գլխուն մէջ: Ամէն պարագայի տակ, պիտի չհաւանէի թարթուսէն մեկնելու, առանց գալ այցաքարտս ձգելու ձեր տունը:

— Շատ ազնիւ էք, ըսաւ Ռոշ հեզնաբար: Կարծեմ թէ իմացայ այդպէս բան մը, այո՛: Յոյս դրած էի ձեր թարթուս այցելութեան վրայ, ինքզինքնուղապահովելու համար արժանիքներ ձեր ապագայ կեանքին առաջադրութեամբ: Ատիկա մտահոգութիւն մըն

է որ երբեք կանխահաս չէ: Բայց կը կարծէի թէ այդ արժանիքները աւելի բնական է գտնել շէնքերու ներսը, քան թէ ելլել փնտռել զանոնք տանիքներու վրայ:

— Աստուածային շունչը կը փչէ ո՛ւր որ ուղէ, հարիւրապետ: Ամէն պարագայի տակ չեմ ցաւեր պտոյտի մը համար որ ձեզի հանդիպելու պատեհութիւնը ընծայեց ինծի, հարիւրապետ: Ասիկա ըսելէ ետք, կրնանք թերեւս...:

— Է՛հ, լա՛, է՛հ, լա՛ւ, ըրաւ Ռոշ: Ուշադրութիւն՝ եթէ կը բարեհաճիք: Ինծի հանդիպելու հաճո՞քը՝ կ'ըսէք: Կ'ընդունի՛մ: Բայց ի՞նչու ուրեմն, այդ պարագային տակ, կը փորձէք փախչիլ ինձմէ:

Այդ ըլլար կամ ոչ անոր բուն դիտաւորութիւնը՝ այդ պահուն Պիշարայի կողմէ ուրուագծուած շարժումը լիակատար կերպով կ'արդարացնէր Ռոշի այդ կոչականը: Առանց ընդմիջելու իրենց խօսակցութիւնը ըրած էր պզտիկ ժէսթ մը, որուն յաջողութիւնը մեծապէս պիտի մտեցնէր զինքը սանդուխին բացուածքին: Այդ ժէսթն էր որ Ռոշ ուզած էր արգելիլ: Կողմնակի պզտիկ ոստում մը թոյլ տուած էր իրեն կացութիւնը վերահաստատել իր նախկին վիճակին մէջ: Դարձեա՛լ, կը գտնուէր սանդուխին և Պիշարայի միջեւ: Միակ տարբերութիւնը այն եղած էր որ երկու մարդերը բաժնող հեռաւորութիւնը երեք չորրորդ համեմատութեամբ նուազած էր:

— Օ՛հ, օ՛հ, մեծ միջոցներո՞ւն կը դիմէք ուրեմն: Բան մը, ատրճանակ մը, փայլած էր Պիշարայի ձեռքերուն մէջ: Ակնթարթի մը մէջ Ռոշ ձեռքին մէջ առած էր իր ատրճանակը:

— Ե՛տ, հրամայեց: Եւ մալտաց:

— Ձիս աւելի մանուկ կը կարծէք քան ինչ որ եմ:

Այսպէս անշարժ մնացին քանի մը վայրկեան, իրար քննելով: Ապա, Պիշարա ուսը վեր առաւ և իր զէնքը դրաւ գրպանը:

— Ծիծաղելի է այս ամէնը, ըսաւ: Եթէ հոս էք, հարիւրապետ, ինծի հաղորդելիք բան ունենալու էք: Մտիկ կ'ընեմ:

— Հրաշալի', ըսաւ Ռոշ: Գիտէ՞ք թէ որո՞ւ կողմէ կուգամ:

— Եթէ պտտաօխանեմ թէ նուազագոյն չափով իսկ գաղափար չունիմ...

— Ձեր իրաւունքը պիտի ըլլար այդպէս պտտաօխանելը: Այս առաւօտ կը գտնուէի այն անձին քով որուն հեռաձայնեցիք:

— Ս. Միւռնը վկայ, ի՞նչ վաղազարթոյց էք, հարիւրապետ: Տիկ. Հաճիլարի քով, այնպէս չէ՞: Միայն անոր հեռաձայնած եմ: Եւ յետո՞յ:

— Անոր կողմէ է որ կուգամ:

— Կ'ուզեմ հաւատալ: Բայց կրնայի՞ք ապացոյց մը տալ ինծի:

— Ատկէ դիւրին բան չկայ:

Եւ Ռոշ բերնուց արտասանեց այն նամակը որով Պիշարա կը սպառնար Արմէնի Մէնէթրիէի հետ խօսակցութեամբ մը:

— Ասիկա կը բաւէ՞ ձեզի:

Միւսը նեղուած ժէօթ մը ունեցաւ:

— Հէ՛օ, այո՛: Ատիկա կ'ապացուցանէ մանաւանդ թէ կին մը միշտ անկարող պիտի ըլլայ գաղտնիք մը պահելու: Ասիկա բնաւ պիտի չակնկալէի Տիկ. Հաճիլարէն, զոր միշտ ալ նկատած եմ բարեկամուհի մը: Որպէսզի նման խօստովանութիւն մը ընէ ձեզի,

պէտք է որ իրեն համար ուէ մէկը եղած չըլլաք: Հէ', հէ', շնորհաւորութիւններս... Օ'ն, օ'ն, տղայութիւն չուզեր, հարիւրապետ:

Անկարող ինքզինքը զսպելու աւելի երկար ժամանակ՝ Ռոշ կը քալէր իր վրայ:

— Ի՞նչ կը պահանջէք, ի՞նչ կ'ուզէք իրմէ, որոտաց, որպէզի միանգամընդմիշտ ազատուի ձեզմէ:

— Օհ, օհ, ըրաւ վաճառականը, որ քիչ մը նահանջած էր: Բոլորովին այդ կերպով չէ որ հարցը կը ներկայանայ: Կը տեսնէք, հարիւրապետ, երբ կ'ըսեմ թէ Տիկ. Հաճիլարի համար կատարեալ բարեկամ մը եղած եմ միշտ, չեմ չափազանցեր: Արդ, ընդունեցէք թէ բարեկամութիւնը կարգ մը իրաւունքներ կուտայ մեզի էակներուն վրայ: Հանգ. Հաճիլար փաշա, իր ամուսինը, որ պաշտօն յանձնած էր ինծի հսկելու իր վրայ, պիտի հաւանէր այսպէս գործելու: Ի՞նչ է սա ամուսնական ծրագիրը, խնդրեմ ըսէք, երիտասարդ տեղակալի մը հետ: Իրազեկ էք, կ'ենթադրեմ: Հարիւրապետ, անհրաժեշտ է որ ըսեմ ձեզի սա՛: Պատիւը չունիմ անձնապէս ճանչնալու այդ պարոնը: Բայց կը խորհիմ թէ իրարու համար յարմար չենս 'իժուար է, իրաւ, զիս համոզել հակառակին: Լա՛ւ մտիկ ըրէք: Աստուած չընէ որ դաւաճանեմ վրաս դրուած վստահութեան: Պարտականութիւնս է սակայն ըսել ձեզի թէ թերեւ պիտի չիյնայիք նման արկածի մը մէջ, եթէ իրազեկ ըլլայիք Արմէնի, ներեցէ՛ք, Տիկ. Հաճիլարի պիտի ըսէի, կեանքին կարգ մը մանրամասնութեանց: Կնօջ մը կեանքը Արեւելքի մէջ յաճախ առարկայ է այնպիսի դրուագներու զորս երեւակայել դժուար է ձեզի համար: Ձեր արեւմտեան մտայնութեամբ, չփոթաւթեան պիտի մատնուէիք անոնցմէ, պիտի ամչնայիք նոյնիսկ...

— Մարդերուն ամենէն ստորինն էք դուք, ըսաւ Ռոյ գարշանքի ժպիտով մը: Կը վստահեցնեմ ձեզ սակայն թէ Տիկ. Հաճիլար ամէն բան ըսած է ինծի: Զարմանքէն Պիշարա ընկրկած էր:

— Ի՞նչ, կ'սկսեմ: Օն ուրեմն: Կարելի բան չէ: Ճիշդ չէ:

— Ամէ՛ն բան, կ'ըսեմ ձեզի: Ե՛ւ Կ. Պոլիսը, ե՛ւ հարէ՛մը, և՛ ձեր ընկերակցութեամբ իր Մալաթիա ուղեւորութիւնը, ստորի՛ն արարած: Գո՞չ էք, ասիկա կը բաւէ՞ ձեզի:

Պիշարա քիչ մը եւս ընկրկեցաւ: Ռոյ ունեցաւ անպատմելի ուրախութիւնը տեսնելու թէ իր հակառակորդը դեղեւած էր:

— Թէ ըսած ըլլայ ատիկա, թէ վստահած ըլլայ այդ գաղտնիքը մէկուն ըսաւ Պիշարա՝ ցնցելով գլուխը և ինքզինքին տիրապետել փորձելով, ասիկա կը սակամանազանցէ ըմբռնողութիւնս, կը խոստովանիմ: Բնաւ չէի սպասեր ատոր: Ի՛նչ ալ ըսէք սակայն, զգուշացած է ըսելու զայն միւսին, անոր զօր կը սիրէ, այնպէս չէ՞: Այդ մասին վստահ եմ: Զեզի եթէ խօսած է այդ մասին, պատճառն այն է որ չի սիրեր ձեզ, պատճառն այն է որ անտարբեր է ձեզի հանդէպ:

— Թշուառական, լռեցէ՛ք, որոտաց Ռոյ, որ չէր գիտեր թէ ի՛նչպէս չէր նետուած արդէն իսկ անոր վրայ: Վերջին անգամ ըլլալով կը հարցնեմ. Ի՞նչ է ուղածնիդ: Դեռ ժամանակ է ըսելու, այլապէս...

Պիշարա գէշ քրքիչ մը ունեցաւ:

— Կ'ուզէ՛ք անպատճառ որ ըսեմ: Զի՛նքը, հասկըցա՞ք, զի՛նքը և իր հարստութիւնը: Իմացա՞ք ըսածս:

— Իրա՞ւ, ըրաւ Ռոյ ինքն ալ քրքիչ մը արձակելով: Ատիկա պիտի տեսնենք անմիջապէս, մա՛նչս:

Ռոյ ցատկած էր: Ճիշդ այդ րոպէին, Պիշարա այն տպաւորութիւնը ունեցաւ թէ կորսուած էր: Կը հասկընա՞ր նոյն ժամանակ իր սխալը: Մինչև այդ ատեն կարծած էր թէ ուրիշին երջանկութեան համար է և ոչ թէ՛ յանգէտս՝ իր իսկ երջանկութեան համար էր որ Ռոյ կը պայքարէր:

Արդէն իսկ իր թշնամին իր վրան էր: Շատ ուշ էր դիմում ընելու համար ատրճանակին: Միայն փրկութեան մէկ պատեհութիւն կը մնար իրեն—սպառնալիքը, միշտ սպառնալի՛քը:

— Մէկ վայրկեան, դեռ մէ՛կ վայրկեան, կը տեսնէք թէ ձեզի ըսելիք ունիմ, յանուն Աստուծոյ: Բան մը... Մտիկ ըրէք... Այս առաւօտ հոն էիք, իր հեռախօսին գլուխը: Ուրեմն գիտնալու էք... Ինքն իսկ ըսած ըլլալու է ձեզի թէ երբեք չեմ խօսիր պարապ տեղը: Գիտէ՞ք նաև, և այս մասին կ'երդնու՞մ հոգեոյս վրայ, թէ յեռեգոյն չարիքը որ կրնայ պատահիլ իրեն, այն է որ չարիք մը պատահի ինծի... Ուրեմն իմացէ՛ք. բոլոր կանխագուշակութիւնները ձեռք տանուած են: Ոչ թէ չորս օրուան մէջ, ոչ թէ երեք, ոչ թէ երկու, այլ վաղն իսկ իր տարփաւորը պիտի գիտնայ...

Աւա՛ղ, Պիշարա երբեք պիտի չկրնար աւարտել այդ նախադասութիւնը, ոչ ալ ուրեք ուրիշ նախադասութիւն:

Եթէ կ'ուզէք գիտնալ թէ ինչո՞ւ, պէտք պիտի ըլլայ վերադառնալ այս տեսարանին սկիզբը: Յոնկարծ, Ռոյ, ճշտելով զայն միշտ, մրմնջեց ինքնիրեն. «Պի Դի իյնայ»: «Ուշադրութիւն, ո՛վ խօսի»: Նշմարած էր ի՞նչ բուն: Պարզապէս, քանի մը քայլ հեռուն այն տեղը դէպի ուր Պիշարա կը շարունակէր նաճանջել, պէթոնին մէջտեղ խոշոր ծակը ուր ինքն իսկ՝

Ռօշ, քիչ մնացած էր որ իյնար առջի գիշեր, նոյն ժամուհն: Եթէ Պիշարա իր խելայեզ ընկրկուսին մէջ քանի մը քայլ եւս ետ երթար, ստոյգ էր թէ լմնցած էր, մտ'նը կը սպասէր իրեն: Ոչ իսկ մէկ վայրկեան սակայն Ռօշ չմեղմացուց իր սեղմուսը: Եւ յետոյ, ինչ պիտի ըլլար եթէ Պիշարա իյնար:

Եթէ իյնար, ինչ որ մէկ րոպէէն միւսը անխուսափելի էր, ահա՛ թէ ի'նչ պիտի պատահէր անհրաժեշտաբար: Պիշարա կանխազգուշութիւններ ձեռք չառնող մարդ չէր, ինչպէս ինք կ'ըսէր: Եթէ իյնար, լա՛ւ, Մէնէթրիէն պիտի գիտնար: Եւ յետոյ, ինչ կ'ըլլար որ...: Ռօշ լաւ գիտէր: Այո՛, բայց ահաւասիկ ամբողջ հարցը: Ռօշ բաւական խորհած էր այդ մասին՝ գիշերուածն է ի վեր: Մէնէթրիէ եթէ գիտնար՝ պիտի չընդունէր, պիտի չսերէր: Պիտի վերջանար Արմէնի հանդէպ իր սէրը: Գեղեցի'կ դժբախտութիւնը՝ լաւ մտածելով այդ մասին...

Պիշարա կը շարունակէր նահանջել, Ռօշ՝ յառաջանալ: Պէտք չէ կարծել թէ վերեւի ամբողջ տրամաբանութիւնը այնքան յստակ էր իր գլխուն մէջ որքան ըսուեցաւ: Երբ խորհի'նք թէ եղեւնադատ դատաւորները կը պահանջեն մեզմէ ճշգրիտ կարգը որուն մէջ անցած են մեր մտածումները, ոճիրի մը պահուէ՛...: Այդ է որ յետոյ գերերջանիկ կերպով կ'որակեն «կանխամտածում»: Ինքը՝ Ռօշ, որ սակայն ուրիշէ մը ոչ աւելի տխմար էր և ոչ ալ աւելի յառի, չէր գիտեր, ոչինչ չէր գիտեր: Աւելի ետք պիտի յիշէր մէկ բան միայն. այն է թէ, յառաջանալով միշտ, յանկարծ այլեւս ոչինչ չէր տեսած:

Ռօշ չէր յիշեր այդքան լաւ քնացած ըլլալը երբ և իցէ: Ուշ արթնցաւ, շատ ուշ նոյնիսկ, դէպի ժամը ԹԱՆՄԻՋՏԱՊԷՍ վերապրեցաւ նախորդ օրուան դէպո

քերը: Իր հորիզոնը, ի մեծ զարմացում նաև ի յամօթ իրեն՝ չմայլեցաւ ատկէ:

Ինչ ալ ըլլայ, ընելիք ուրիշ գործ ունէր քան թէ ծուլանալ, յամենալ անկողնին մէջ: Զատկի ի'նչ հոյակապ առաւօտ: Արեգակը կը ճառագայթէր ամբողջ տան մէջ: Տեղէն ելաւ, անխուսափ սուլելով, հագուեցաւ: Նոյն ժամանակ, իր մտքին մէջ կը դժէր նախորդ օրուան հաշուեկշիռը: Որքան ալ աշխատէր՝ անօգուտ էր. չէր յաջողէր յուզուիլ միջադեպերէն որոնք տեղի ունեցած էին: Ի վերջոյ, ինքզինքին հետ համաձայնած էր թէ եթէ նոյնիսկ կարողութիւն մը ունենար պատահած դէպքերուն վրայ, կէտ մը իսկ պիտի չփոխուէր անոնց մէջ:

Երէկ երեկոյ ուրեմն, ժամը Գին ժօտ, ճաշատենս եակին մէջ, կարդալու վրայ էր Բարիդի թերթերը, որոնք նոր եկած էին: Ինչպէս նախատեսել տուած էր, Բարիդը չէր վերադարձած դեռ: Երբ վերադարձաւ և նշմարեց զինքը՝ Ռօշ տեսաւ անոր սարսուռ մը զսպելը:

- Ներէ ուշացմանս համար. շատօնց եկած ես:
- Ժամէ մը ի վեր:
- Իրազեկ ես տեղի ունեցածին անկասկած:
- Տեղի ունեցածին: Ա՛հ, այո՛, խեղճ մարդուն մահը: Անշուշտ: Ամբողջ Թարթուսը ուրիշ բանի մասին խօսած չունի: Տիկ. Հաճիլարի քով էի, երբ եկան ծանուցանել այդ մահը: Գիտե՞ս թէ ի'նչ կ'ապացուցանէ ատիկա:
- Ի՞նչ:
- Ինչ որ կ'ըսէի քեզի երէկ երեկոյ: Թէ շատ լաւ է պէքօնէ ընել մայր եկեղեցոյն տունիքը՝ շրջագայողները հրապուրելու համար՝ հոն գալու, բայց պայմանաւ որ ծակեր չի ձգուին հոն: Պատաս

հաճը կը տեսնեմ՝ իբր թէ հոն եղած ըլլայի: Այդ ծակէն քիչ մնաց որ ես իսկ ինչայի:

Երկուքը մէկ ընթրած էին՝ շատ զուարթօրէն, Աստուած վկայ: Ընթրիքի ժամանակ՝ Սիւզան հեռաձայնած էր Պէյրութէն: Շատ գէշ արամադրութեան մէջ էր Սիւզան: Յաջորդ օրուան համար սպասարար իր շրջագրեացը չէր վերջացած դեռ:

Ուրիշ պատմութիւն մըն ալ. այն պահուն ուր կը պատրաստուէին սեղանէն ելլելու՝ Հայր Անկլըպէս ներս մտաւ հովի պէս:

- Ահաւո՛ր բան է, օարսօփելի՛ է:
- Հանդարտեցէք, հա՛յր, հանդարտեցէ՛ք:
- Ի՞նչ կ'ըսէք: Նա՛խ, ի՞նչ բանի մասին կը կարծէք թէ կը խօսիմ: Սա տարաբախտ Պիշարայի եղբրական մահուան մասին անշուշտ: Կրնամ ըսել թէ առաջիններէն մէկը եղայ իր մօտ: Ամէն ինչ լմնացած էր: Վերջին շունչը փչած էր: Քամակի ոսկորները ջախջախուած էին: Ուղեղը՝ դուրս թափած: Բայց այդ մահը միայն չէ որ կը յուսահատեցնէ զիս: Դժբախտաբար այդ մահը չէ զիս ամենէն աւելի յուզողը: Կայ իմ մայր եկեղեցիս: Կան ծուխերս: Կայ վաղուան արարողութիւնը: Այդ առամին պարսպաները որոշապէս ստուգուած են:

— Ինչո՞ւ համար այդ հարցումը:

— Ինչպէս թէ ինչու համար: Շատ պարզ է: Ձէ՞ք գիտեր ուրեմն թէ եկեղեցի մը, ուր սրբապղծութիւն մը գործուած է, պէտք է ենթարկուի սրբապղծութեան արարողութեանց, որոնք ծայրաստիճան բարձր և երկարատե են: Արդ, բոլոր կարելի սրբապղծութիւններէն ամենէն ահաւելին է անկասկած անձնասպանութիւնը: Թէ այդ դժբախտը կամաւորապէս վերջ տուած ըլլայ իր կեանքին, ահաւասի՛կ որ

եկեղեցիս սրբապղծուած է՝ բացուելէն իսկ առաջ պաշտամունքի համար: Ատիկա պիտի նշանակէր իմ ճիգերու քանդումը, ինծի համար՝ անկարելիութիւնը վաղը պատարագ մատուցանելու: Անկախաբար գուցէ ամէն նկատումէ՝ կրնաք դատել թէ այդ հարցը որքան կը չարչարէ զիս:

Քաղէլլա՝ պատասխանելէ առաջ՝ նայուածք մը արձակած էր Ռօշի կողմը: Այս վերջինը անայլայլ մընացած էր:

— Կրնաք հանգիստ ըլլալ, հա՛յր: Եթէ կարծիքս ճիշդ է՝ Պիշարա անձնասպան չէ եղած:

— Տէր Աստուած, եթէ ճի՛շդ ըլլայիք: Ի՛նչ բեռ կը վերցնէիք խղճիս վրայէն: Կրնամ ուրեմն, ըստ ձեզի, առանց այլ և այլի շարունակել գործս: Ուրեմն քնական մահու մը վրայ դարձած պիտի ըլլայ հարցը: Կրնա՞ք վստահեցնել զիս: Արկած մը, պարզ արկած մը:

Քաղէլլա յօնքերը պոստած էր և նոյն իսկ ինքզինքին պարտադրած չըլլալով իր համբերահատութիւնը ծածկելու ձա՛նձրոյթը, պատասխանած էր:

— Անձնասպանութիւն չկայ, ըսի ձեզի, մնացեալը ի՞նչ կարեւորութիւն կրնայ ունենալ ձեզի համար: Եւ յետոյ, եթէ իմ խօսքս չի բուեր ձեզի համար, հարցուցէք հարիւրապետ Քաղէլլայի: Իմ կարծիքս է անիկա, այնպէս չէ՞:

Ռօշ լուծութիւն պահած էր: Ձէր ուզեր սուտ մը աւելի խօսած ըլլալ: Արդէն իսկ ծածկած էր ճշմարտութիւնը, պահ մը առաջ ըսելով Քաղէլլայի թէ Պիշարայի մահը իմացած էր Արմէնի տունը: Ճշմարտութիւնը այն է թէ, ինքն էր որ մայր եկեղեցւոյ առամէն անմիջապէս ետքը՝ լուրը տարած էր Տիկ. Հաճիլարի: Դիւրին եղած էր իրեն եկեղեցիէն դուրս

ելլել այնքան աննշմար կերպով որքան մտած էր հոն, այն իրարանցումին և աղմուկին մէջ որ հետեւած էր իր թշնամիին ատեանին մէջտեղը ինչալուսն: Անգամ մը որ դուրս ելած էր, հասկնալի է թէ Արմէնի մօտ էր որ վազած էր նախ և առաջ: Հոն հասած էր հեւահար, սարսուհար այն վայրկեաններէն զորս ապրած էր: Բան ըսելու պէտք չէր ունեցած: Ձեռքը տանելով իր սիրտին՝ Արմէն ոտքի ելած էր բալորովին դալկահար:

— Մեռած է, Մեռած է, այնպէս չէ՞:

— Իմ սխալովս չէ՛, փորձած էր բացատրել Ռօշ՝ յանկարծական սարսուռէ մը բռնուած ինք եւս, արդէն իսկ տարտամօրէն հասկցած ըլլալով ինք ևս՝ թէ դժուարագոյն բանը Արմէնը ուրիշներէն ազատելը չէր, այլ ինքնիրմէն, և յետո՛յ թէ պէտք էր կարենալ պահել զայն: Իմ սխալովս չէ՛, ես որևէ դեր չունիմ ատոր մէջ: Ահա՛ ճշգրիտ կերպով թէ ի՛նչպէս անցան դէպքերը: Կարելի է նոյն իսկ ըսել թէ արգիւլելով զիս գործելէ արարք մը, զոր այդ թշուառականին դէմ բարկութեանս մէջ պիտի մղուէի թերևս գործելու՝ Աստուած, այսինքն՝ Նախախնամութիւնը, ուզած է...

Արմէն մտիկ չէր ընել: Աչքերը փակած՝ ան կը բաւականանար մրմնջելով. «Ամէն բան կորսուած է»: Ինքը՝ Ռօշ նախ արեւոյցաւ, յետոյ զգաց որ կատաղութիւնը կը տիրապետէ իրեն հետզհետէ՝ այդքան անգիտակցութեան, այդքան անարդարութեան հանդէպ: Վերջ ի վերջոյ, իր կեանքը վտանգի մէջ դրած էր: Ահա թէ ի՛նչ կերպով շնորհակալ կ'ըլլային իրեն: Յանկարծ, ոտքի ելած էր, քալած էր դէպի գուռը:

— Կ'երթամ, ըսած էր: Պիտի վերադառնամ այն ժամանակ միայն ուր ի վիճակի պիտի ըլլաս քիչ մը ա-

ւելի արդար վերաբերմունք ունենալու ինծի հանդէպ: Մեկնած էր: Արմէն վար չէր դրած զայն:

Հիմա, ա՛լ, այնպէս չէ՞, դէպքերը սահմանուած էին գահավիժիլ համաձայն կշռոյթի մը, զոր կեցնել, դանդաղեցնել՝ ո՛չ ոքի կարողութեան սահմաններուն մէջ էր: Ռօշ վերադարձած էր Քաղէլլայի տունը: Ամբողջ երեկոյեան եղած էր շատ հանդարտ, շատ տէր ինքզինքին՝ ինչպէս տեսնուեցաւ: Յետ միջօրէի արկածը ինքզինքը չէր պարտադրած իրենց խօսակցութեան՝ պէտք եղածէն աւելի չափով: Անշուշտ, Քաղէլլայէն նուազ հետաքրքիր մէկը ետ պիտի չի կենար իր ընկերոջ ուղղելու կարգ մը չփոթեցուցիչ հարցումներ, բայց, անգամ մը ևս կը կրկնենք, Քաղէլլա հարցում ընելու սովորութիւն չունէր:

— Կը ներքս ինծի՛ եթէ երթամ քնանալու, ըսած էր Քաղէլլա ժամը 10ին ատենները: Յոգնեցուցիչ օր մը ունեցայ: Ուրեմն, գիշեր բարի՛:

— Պիտի չուշանամ օրինակիդ հետեւելու ի դէպս, ըսէ ինծի, Մուսթաֆայէն լուրեր ունիս:

— Մուսթաֆայէն՝ ինչո՞ւ համար: Ահ, հասկցա՛յ: Բնականաբար ինքնաշարժ և շարժավար միշտ հասնէ: Իր երկիրը վերադառնալէ առաջ՝ շարժավարը կ'ուզէ անկասկած ներկայ ըլլալ իր տիրոջ յուզարկաւորութեան: Կը տեսնեմ թէ այդ պատմութիւնը կը շարունակէ շահագրգռելքեզ: Հստիարտ եղիր, իրազեկ պիտի պահեմ զքեզ:

Ատոր վրայ՝ Քաղէլլա բարձրացած էր իր սենեակը: Գալով Ռօշի, գլխու ցաւ մը պատրուակելով, փափաք յայտնած էր երթալ քանի մը վայրկեանի պրտոյտ մը ընելու:

Դարձեալ, դէպի տիկ. Հսճիլսրի վիլլան էր որ իր քայլերը ուղղուած էին: Որոշ խղճի խայթ մը կը զգար անոր հանդէպ: Քիչ առաջ, այն զգացումը ու-

նէր թէ չափօջանց խիստ գտնուած էր: Անարդարու-
թեամբ մեղադրել խեղճ կինը այդպիսի վայրկեանի
մը մէջ: Այդ էր որ անարդարութիւն էր: Շատ ա-
րագ կը քալէր: Քիչ ետք հասաւ վիլլան: Քաթպէն
էր որ եկաւ դուռը բանալու:

Պառաւ աղախինը ժպտեցաւ իրեն՝ մէկ մտաւ շեր-
թունքին տարած.

— Սո՛ւս, կը քնանայ:

— Աւելի աղէ՞կ է հիմա:

— Շատ մտառանջութիւն պատճառեց ինծի ձեր
մեկնումէն ետք, Պ. հարիւրապետ: Այո՛, արցունքի
մեծ տաքնապ մը: Լաւ խնամեցի զինքը: Ուղեց եր-
թալ քիչ մը օդ առնել: Միասին դուրս ելանք: Ա-
տիկա օգտակար եղաւ իրեն: Հիմա՝ անցած է:

Ռօշ սփոփանքի հառօչանք մը արձակած էր: Քու-
նը ամենապահովիչ նշանն էր զօր կրնար ակնկալել:

— Կրնամ տեսնել զինքը առանց արթնցնելու,
առանց աղմուկ ընելու: Քաթպէ մ/շտ ալ համակրանք
մը ունեցած էր Ռօշի նկատմամբ: Առանց շտտ վարա-
նելու այո՛ ըսած էր: Առաջնորդուած պառաւ սպա-
սուհիին կողմէ, Ռօշ մտած էր քնացած Տիկ. Հաճի-
լարի սենեակը՝ ոտքին մատներուն վրայ կոխելով:
Սիրտը յուզումով առլցուն՝ համբոյր մը դրօշմած էր
անոր վարսերուն վրայ:

Ժամը 10 30ին վերադարձաւ իր բարեկամին
տունը: Զարմացաւ լոյս տեսնելով ճաշասենեակին մէջ:
Քաղէլլա հոն էր՝ յանդիմանելու վրայ մէկը: Ռօշ ճանչ-
ցաւ Մուսթաֆան:

— Մտի՛ր, ըսաւ Քաղէլլա, և թոյլ տուր որ ներ-
կայացնեմ քեզի ապուշներու թագաւորը: Պարոնը, որ
ահաւաստիկ, ունէր հրահանգ մը որ շտտ բարդ չէր:
Պարզապէս, խնդիրը կը դառնար ժամ առ ժամ նշե-

լու ինծի գործերն ու շարժումները մէկու մը: Արդ,
այդ մէկը փախած էր երկու ժամ առաջ, իր ինքնա-
շարժով միասին: Եւ հիմա է միայն որ նշմարեր է ա-
տիկա:

— Ինչպէ՞ս, մեռնողին շարժավարը մեկնած է:

— Այո՛, ինչպէս պատիւն ունեցայ ըսելու քեզի:
Եւ տրուած ըլլալով իր մակնելու ձեւը, քիչ հաւա-
նականութիւն կայ որ վերստին տեսնեմ զայն, գոնէ
թարթուսի մէջ:

Ռօշ զուարթօրէն ուսերը վեր վերցուց:

— Էհ, լա՛ւ, աւելի՛ գէշ, կամ, աւելի՛ լաւ՝ ի
վերջոյ: Ան զիս կը շահագրգռէր իր տիրօջ ողջու-
թեանը միայն:

Ահաւաստիկ որ աղատուեցանք ունկէ:

Քաղէլլա զարմանքէն խօշոր խօշոր կը բանար
աչքերը:

— Պրավօ՛, քանի որ այդպէս կը գտնես: Ինչ որ
կ'ընէի, գիտես, քեզի հաճելի ըլլալու համար էր
միայն: Այս պայմաններուն տակ, մեզի ուրիշ բան չի
մնար ընելիք բայց եթէ շնորհաւորել Մուսթաֆան:

Այս վերջնոյս ճամբուելէն ետք, մնացած էին դեռ
քանի մը վայրկեան ալ՝ խօսելով ասկէ անկէ: Քա-
ղէլլա հարցուցած էր իր ընկերօջ թէ խորհուրդ կու-
տա՞ր իրեն իր հանդիսաւոր առիթներու համազգեստը
հագնիլ՝ ներկայ ըլլալու համար յաջորդ օրուան հան-
դիսաւոր պատարագին:

— Այո՛, Հայր Անկլըպէս այնքան երջանիկ պի-
տի ըլլար...: Գալով ինծի, աւելցուցած էր, հարցը
չի ներկայանար: Անիկա պէտք է ընդունի զիս ինչ-
պէս որ եմ:

Պառկած ժամը 11ին, Ռօշ անցուցած էր լաւ գի-
շեր մը՝ ինչպէս յիշատակուեցաւ վերեւ: Դեռ ժամը

Յը չկար: Մինչ հագուած դուրս կ'ելլէր իր սենեակէն, հանդիպած էր Քաղէլլայի:

— Բարիլոյս, քովս կուգայիր: Ի՞նչ կայ:

Քաղգէլլա մտազբաղ կ'երեւէր:

— Մտիկ ըրէ, բարեկամս: Պիտի ընդունիս թէ, յաճախ չեմ զբաղիր ուրիշներու գործերով: Բայց կան պարագաներ... Այսպէս է որ կարծեցի լաւ ընել ծանուցանելով քեզի թէ Մէնէթրիէ Թարթուս պիտի ըլլայ այս առաւօտ:

— Այո՛, և յետո՛յ, ի՞նչ, այլևս չի՞ գար:

— Ընդհակառակը, կը թուի թէ հոս պիտի ըլլայ աւելի կանուխ քան ինչ որ կը կարծուէր:

— Ահ, ի՞նչպէս գիտցար տախկա:

— Հեռաձայնի հարուած մը Աժորթի կողմէ: Մէնէթրիէն ասուպի պէս անցած է Համայէն ժամը Յին: Կեցած է այնքան ժամանակ միայն որքան պէտք էր իր շանբանիայի սնտուկը ձգելու համար: Աժորթ և իր բարեկամները որոնք արդէն իսկ ելած էին կամ աւելի ճիշդը դեռ չէին պառկած, տեսած են զայն: Կը թուի թէ տարօրինակ դէմք մը ունէր, պրկուած դէմք մը, «խենթի մը երեւոյթը», ըսաւ ինծի Աժորթ, որ ուզած է իմացնել ինծի:

Ռոջ պահ մը լուռ մնաց: Քաղգէլլա կը դիտէր զայն մտատանջութեամբ:

— Ծանրակշիռ բան մը չկա՞յ, հարցուց:

— Բայց ոչ, ոչ: Ի՞նչ ծանրակշիռ բան կ'ուզես որ ըլլայ, բարեկամս: Պիտի երթամ ընել առաւօտեան պզտիկ պտոյտս, եթէ կը թոյլատրես: Իրար պիտի գտնենք մեծ պատարագի՛ն, ժամը 10.30ին, մի՛ մոռնար: Պիտի գտնուիս պատուոյ տեղը: Կը յուսամ թէ հայր Անկլըպէն քեզմէ շատ հեռու չպիտի կեցնէ զի ս:

Մօտ 10 վայրկեանի ճամբայ մը կը բաժնէր զինքը վիլլա Հաճիլարէն: Ռոջ դործածեց այդ վայրկեանները տենդագին հաշուելով իր մատներուն վերայ: Ժամը Յին Համա եղած ըլլալու համար Մէնէթրիէի Հալէպէն մեկնած ըլլալու էր առաւօտեան ժամը 2ի և 3ի միջև: Ասոր փոխարէն, երէկ երկուցսն ժամը Տին Թարթուսէն ինքնաշարժով մեկնած մէկը՝ կրնար շատ լաւ Հալէպ հասնիլ այդ ժամէն առաջ, պայմանաւ որ ճամբան չի զուարճանար անշուշտ: Օ՛ն, օ՛ն, այսուհետև այլևս չէր կրնար կասկած գոյութիւն ունենալ: Մէնէթրիէ գիտէր: Լա՛ւ, ահա բան մը որ նախատեսել կուտար արկածալից օր մը: Եւ յետոյ, ի՞նչ: Այսպէս աւելի լաւ է: Կեցցե՛ն յստակ կացութիւնները՝ ինչ ալ ըլլայ: Ռոջ փութացուց քայլերը և յանկարծ հայհոյալ ք մը զօպեց:

Կը գտնուէր վիլլային դրան առջև: Այդ դուռը երեւցաւ իրեն մեծաբաց: Արդ, Ռոջ գիտէր, լաւ գիտէր, թէ այդ դուռը երբեք այդպէս չէր ձգուէր: Երկու դուռները կը բացուէին միայն թոյլ տալու համար Տիկ: Հաճիլարի ինքնաշարժին ներս մտնել կամ դուրս ելլել: Յաջորդող վայրկեանին՝ նախանձախնդրօրէն կը փակուէին:

Ռոջ ունեցաւ խելայեղ շարժում մը և ճակատը սեղմեց երկու ձեռքերով:

— Կայծակնե՛ր, մրմնջեց, արդե՞ք անիկա...

Եւ խենդի մը պէս խոյացաւ ծառուղիին մէջ, դէպի սանդուխները: Անոր աստիճաններէն բարձրացաւ չորս առ չորս: Անբրէին մէջ՝ ո՛չ ոք: Բոլոր դուռները բաց էին ուրեմն այս տան մէջ: Մեծ սըրբահին մէջ եւս մարդ չկար: Պարագան նոյն էր

Արմէնի օննեակին մէջ: Տեսարանը որ կը պարզուէր իր առջև, այլևս պատրանք չէր թողուր իրեն:

Պարապ պահարաններ, քաջուած դարակներ, ճերմակեղէններ բազմոցներուն վրայ՝ կարծես հազճեպով բան մը փնտռելու համար: Հիշտադարանի մը վրայ՝ եփենոտէ երկար սնտուկ մը, ուր այցաքարտ մը — Տիկ. Հաճիլարի այցաքարտը — փակցուած էր: Կը կրէր ու քանի մը բառերը՝ արձանագրուած Արմէնի իսկ ձեռքով: «Յանձնելի Արժ. հայր Անկլըպէտի»: Ուրիշ ոչինչ: Ամէնը այդ է:

Ռոջ ականջները տնկեց. ընդհատ հեկեկանքներ կուգային մօտի օննեակէն: Սպան հոն փութաց: Փըլած՝ աթոռակի մը վրայ, գտաւ հոն Քաթպէն, որ կուլար:

Բռնեց ուսերէն, ցնցեց զայն անխնայ: Պառաւ սպասուէին վերցուց արցունքէն ուռած դէմք մը:

— Տիրուէի՞դ, ո՞ւր է անիկա:

Պառաւը յուսահատական ժէսթ մը ուրուադժեց:

— Մեկնած է, այնպէս չէ՞, ո՞ւր, ե՞րբ:

— Այս առաւօտ շատ կանուխ, հեկեկաց անիկա, արշալոյսէն շատ առաջ՝ ամէն պարագայի տակ: Երէկ երեկոյ, ձեր մեկնումէն անմիջապէս ետք, Պ. հարիւրապետ, արթնցաւ և կանչեց զիս: Նոյնիսկ այն ժամանակ այն ապաւորութիւնը ունեցայ թէ երբ դուք եկաք, չէր քնացած, այլ քնացած կը ձեւացնէր: Անմիջապէս սկսաւ պատրաստել իր պայտասակները: Օգնեցի իրեն: Փորձեցի հարցափորձել զինքը, բայց չպատասխանեց: Բերանը՝ բացաւ միայն հրամայելու համար ինծի որ երթամ շարժավարը կանչեմ: Ահա-լասի՛կ:

Եղբրական կասկած մը անցաւ Ռոջի ուղեղէն:

— Երէկ երեկոյ չըսի՞ր ինծի թէ երկուքդ միասին դուրս ելած էիք:

Քաթպէ ուղղեց անոր մեղադրական նայուածք մը: Նման պահու մը խռովել իր անդորրութիւնը և այդպիսի հարցումներով:

— Պատասխանէ՛, պիտի պատասխանե՞ս ինծի: Ո՞ւր գտցիք:

— Ո՞ւր գտցինք: Սէրային կողմը, Պ. հարիւրապետ:

— Ա՛յդ է, Տէ՛ր վկայ: Ժամը 9ին մօտ էր: Եւ անցաք կառաժին առջեւէն: Իսք մտաւ հոն: Ամենքէս աւելի յատկատես եղաւ անիկա: Հարցուց թէ Պ. Պիշարայի կառքը և շարժավարը հո՞ն էին միշտ: Պատասխանուեցաւ իրեն թէ մեկնած էին աւելի քան երկու ժամէ ի վեր...:

Պառաւը կը նայէր սպային զարմացմամբ:

— Այո՛, այնպէս չէ՞, գուշակեցի: Ուրեմն պարզ է, կ'իմանա՞ս: Այլ ընելիք ոչինչ կը մնայ: Այլևս երբեք, երբե՛ք պիտի չվերադառնայ...:

Պահէ մը ի վեր խորհրդապահ հազ մը կը լսուէր սրունէն:

— Ի՞նչ է ասիկա, աղաղակեց Ռոջ ինքզինքէն ելած: Ի՞նչ է այս տուէր, ուր կը մտնեն ինչպէս ջըրաղացի մէջ: Օ՛հ, ներեցէք, հայր, չէի գիտեր...:

Հայր Անկլըպէտ մէջտեղ ելած էր՝ նեղուած և մըտատանջ երեւոյթով: Զեռքին մէջ ունէր նամակ մը:

— Ես եմ որ ներողամտութեան պէտք ունիմ: Երկու պտտամուռնքներուս միջեւ՝ վագցի եկայ, ուղեցի գիտնալ...: Արդարեւ, քիչ առաջ յանձնուեցաւ ինծի նամակ մը Տիկ. Հաճիլարի կողմէ: Արդէն իսկ այս առաւօտ, երբ չտեսայ զինքը՝ մտածեցի...: Հա-

րիւրապե՛տ, ի՞նչ կայ: Ի՞նչ կ'անցնի կը դառնայ
ճշդիւ...:

Ամէն պատասխանի փոխարէն, Ռօշ խլեց նամակը:
Իր մատները կը դողային՝ մինչ պահարանէն դուրս կը
քաշէր զայն: Սիրեցեալ գիրը կը պարէր իր աչքերուն
առջեւ: Թող որ կարճ էր այդ նամակը, ահաւիժօրէն
կարճ:

«Արժանապատիւ հայր, կը գրէր Արմէն, կը ցա-
ւիւմ որ իմ կամքէս անկախ պատճառներ կը ստիպեն
զիս մեկնիլ այսքան փութով: հաւանականութիւն
չկայ որ Թարթուս վերադառնամ երբեք: Եթէ ու-
զէք այսօր իմ տունէս անցնիլ, հոն պիտի գտնէք ան-
կասկած հարիւրապետ Ռօշը: Զեզի պիտի յանձնէ բան
մը, զոր աւելի երկար ժամանակ քովս պահելու իրա-
ւունք չունիմ: Թերեւս կեանքիս չքմեղանքը և ու-
րախութիւնը պիտի ըլլայ Թորթոզայի Տիրամօր վե-
րադարձնել զանձ մը որ բնաւ պէտք չէր անկէ դուրս
ելած ըլլար...»: Ասկէ զստ կային քանի մը քաղա-
քավարական նախադասութիւններ՝ շատ պարզ և ան-
շահեկան:

— Խ: դիրը ի՞նչ է: Կրնա՞ք բացատրել ինձի թէ
ի՞նչ կը նշանակէ ասիկա, չէր դադար կրկնելէ կրօ-
նուորը

— Աւելի ուշ, հա՛յր, եթէ կը հաճիք: Ո՛չ այսօր,
կ'աղաչեմ: Մինչ այն, տարէք ասիկա, ձե՛րն է:

Ռօշ Հայր Անկլըպէօի թեւերուն մէջ դրած էր
եփենսօսի սնտուկը: Մեղմովին կը հրէր զայն դէպի
դուռ: Այդ պահուն, վարը, ծառուղիին մէջ արա-
գօրէն եկող ինքնաշարժի մը փողը որոտաց: Քաթպէ
յոյսի պզտիկ աղաղակ մը արձակեց:

Ռօշ դիտեց զայն գթածութեամբ:

— Ո՛չ, Արմէնը չէ, իմ բարի Քաթպէս: Զի կըր-

նար Արմէնը ըլլալ, լա՛ւ գիտես:
Գնա տես թէ ո՛վ է: Եթէ ինքն է (Մէնէթրիէն)
ներս բեր զայն:

..

Առանձին մնացած, Ռօշ խնամով փակեց դուռ-
ները: Հայելի մը կար հոն, հեշտադարանի մը վերեւ:
Ինքզինքը քննեց անոր մէջ և քիչ մը շտկրտեց իր
հագուստները, իր մազերը:

- Սրահին դուռը բացուեցաւ և Քաթպէ երեւցաւ:
- Տեղակալ Մէնէթրիէ, ծանոյց անիկա:
- Խեղճ մարդ, մրմնջեց Ռօշ և հրամայեց:
- Ներս առաջնորդէ:

Վ Ե Ր Զ

7-504.

but
Ray



-4480-

ՀՀ Ազգային ցուցանիշ



NLO814574

IF

18311